269

ԽԱՄՍԱՅԻ

ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го ноября 1894 года.

ՍԵՐԻ ԱՆՆԱ
ՐԱՖՖԻ
ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(1600—1827)

ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

ՍԵՐԻ ԱՆՆԱ
ՐԱՖՖԻ
ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ

2003

ԹԻՖԼԻԶ
Типографія И. Мартиросіанца, Орб. ул., д. № 1—2.
1895

[illegible] 1895 [illegible]

[illegible]

[illegible]

ԱՅՐԻ ԱՆՆԱ
ՐԱՖՖԻ
ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ

ԻՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀԱՅՐ

ՄԵԼԻՔ-ՄԻՐԶԱ-ԲԷԿԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

Նուիրում է որդին

ՆՐԱ ԴԱՍԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

66670-ան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գ/4194-Է8

269-2014

կ 268

I

Հայաստանը իւր անկման զանազան շրջաններում, կորցնելով իւր գահը, ամեն անգամ թողել է իւր ներկայացուցիչներին, որպէս դեռ չմարած կայծեր, պահպանուած նախկին փառքի մոխիրի մէջ: Հայկազանց թագաւորող տունը վերջանալուց յետոյ, թողեց իւր ետեւից մի շարք իշխողներ, որ կոչվում էին կուսակալներ: Արշակունիք թողին մարզպաններին, կիւրապաղատներին, պատրիկներին և ոստիկաններին. իսկ Բագրատունիները և Ռուբինեանները թողին զանազան, միմեանցից բաժանուած, անկախ իշխանութիւններ:

Յիշեալ իշխանութիւնների ներկայացուցիչներն ըստ մեծի մասին եղել են Հայոց հին նախարարական տների ժառանգները: Դրանք Հայոց թագաւորութեան մի շրջանի վերջանալուց յետոյ պահպանում էին նրա իշխանութիւնը մինչև մի նոր շրջանի ստեղծուելը և այդպիսով ծառայում էին որպէս օղակներ, որոնք անխզելի կերպով պահպանում էին հայկական անկախութեան շարունակութիւնը մինչև կործանուած գահի կրկին վերականգնելը: Այդ իշխանութիւնները թէև երբեմն օտարներից նշանակուած և օտարների հարկատու են եղել, բայց երբէք չեն կորցրել իրանց ինքնավարութեան իրաւունքները:

Վերջին դարերում նախարարական հին տների փոխարէն երևան եկան մելիքները, որոնց իշխանութիւնն աւելի կանոնաւոր ձև ստացաւ Շահ-Աբբաս մեծի օրերից (1603):

Պարսից այդ աշխարհաշէն թագաւորը՝ որի քաղաքական հայեացքները օտարազգիների վերաբերութեամբ բոլորովին տարբեր էին իւր նախորդներից, աւելի բարւոք էր համարում իւր հպատակ այլասեռ ժողովուրդներին կառավարել հէնց իրանց ներկայացուցիչների ձեռքով և դրանով ամրացնել ամբողջ պետութեան մէջ համերաշխութեան կապերը: Նա առաջինը եղաւ, որ հաստատեց հայոց իշխանների «մելիք» *) տիտղոսը, որ կրում էին աւելի հին ժամանակներից: Դրանով Շահ-Աբբասը կամեցաւ վարձատրել այն մեծ ծառայութիւնները **), որ հայոց մելիքները կատարեցին իւր՝ օսմանցիների դէմ ունեցած յաղթութիւնների մէջ:

Մելիքների իշխանութիւնը տևեց շատ երկար, իսկ Անդրկովկասում՝ մինչև ռուսների տիրապետութեան օրերը: Ես պիտի խօսեմ այդ իշխանութիւններից միայն մի խմբի վրայ, որ ընդհանուր անունով կոչվում էր Խ ա մ ս ա յ ի մ ե լ ի ք ու թ ի ւ ն ն ե ր ***):

Խամսայի մելիքութիւնները բաղկանում էին հինգ փոքրիկ գաւառներից, որոնք միմեանց սահմանակից լինելով, կազմում էին մի ամբողջ նահանգ, որ այժմ կոչվում է Ղարաբաղ, իսկ մեր պատմութեան մէջ յայտնի է Արցախ կամ Փոքր-Սիւնիք անունով: Դա աւելի հին ժամանակներում Աղուանից աշխարհի մի մասն էր ներկայացնում:

Յիշեալ հինգ գաւառները հետևեալներն են.

1) Գ ի ւ լ ի ս տ ա ն կամ Թալիշ, որ սկսվում է Քիւրակ-

*) Մ ե լ ի ք կամ մալիք նշանակում է իշխող, տիրապետող, այլև արքայ:

**) Սիւնեաց աշխարհի հայոց մելիքները և Էջմիածնի կաթողիկոսը մի քանի եպիսկոպոսների հետ, օսմանցիների լծից ազատուելու համար, իրանք դիմեցին Սպահան և հրաւիրեցին Շահ-Աբբասին Հայաստանը տիրելու համար:

***) Խամսա արաբերէն նշ. հինգ, իսկ Խամսայի մելիքութիւններ նշ. հինգ մելիքութիւններ:

չայ գետից, այսինքն Գանձակի սահմաններից, և տարածվում է մինչև Թարթառ գետը:

2) Ջ ր ա բ ե ր դ կամ Չարաբերդ, որ սկսվում է Թարթառ գետից և տարածվում է մինչև Խաչէնի գետը:

3) Խ ա չ է ն, որ սկսվում է նոյն անունով գետից և տարածվում է մինչև Բալլու-չայ գետը:

4) Վ ա ր ա ն դ ա, որ սկսվում է այդ գետից և տարածվում է մինչև Գիզախայտի լեռնային զօտին:

5) Տ ի զ ա կ կամ Դուզախ, որ սկսվում է այդ լեռներից և տարածվում է մինչև Երասխ գետը:

Այդ երկրները՝ ինչպէս վերևում յիշեցի որ մի ժամանակ Աղուանից թագաւորութեան մի մասն էին կազմում, յետոյ ապաստան դարձան հայոց մելիքների: Երկրի անմատչելի դիրքը նպաստում էր այստեղ հայոց իշխանութեան պահպանուելուն դառն ժամանակների փոթորիկներից: Վայրենի բնութիւնը, դարևոր խուլ անտառներով պատած ահագին լեռները, անդնդախոր ձորերի մթութիւնը ստեղծել էին այստեղ մի մթին ժողովուրդ, որ իւր շրջապատող ժայռերի նման ամուր կուրծք և իւր ծմակների վագրների նման աներկիւղ սիրտ ունէր: Այդ ժողովուրդն ապրում էր իւր սիրելի լեռների այրերի մէջ, քարանձաւների խորքում, ապրում էր գետնի տակ, կերակրվում էր իւր անտառների պտուղներով, իւր անասունների բարիքներով, և որպէս մի գազանամուտ գազան, իւր թագստի միջից յարձակումներ էր գործում, երբ թշնամին յանդգնում էր վրդովել նրա խաղաղութիւնը:

Իւրաքանչիւր մելիք իւր գաւառի տէրն էր. Նա ունէր իւր առանձին բերդը և իւր ամրոցները: Գիւլիստանի մելիքի ամրոցը գտնվում էր Գիւլիստան գիւղի մօտ *), մի անմատչելի

*) Ղարաբաղի մելիքների բերդերը, ամրոցները՝ միքանիսը

սարի գագաթի վրայ. մի այլ ամրոց նոյն գաւառում գտնվում էր Թալիշ աւանի մօտ, Հոռեկայ վանքի հանդէպ։ Ջրաբերդի մելիքի ամրոցը գտնվում էր Թարթար գետի ափի մօտ, Երիցմանկանց վանքի հանդէպ։ Այդ բերդի անունով ամբողջ գաւառը կոչվում է Ջրաբերդ, որովհետև բերդը կանգնած է համարեա թէ ջրի մէջ, մի ահագին, սեպաձև ժայռի գագաթի վրայ, որի ստորոտը քերելով, անցնում են կատաղի Թարթարը և Թրղին։ Այդ երկու գետերը, կտրելով միմեանց, բերդին թերակղզու ձև են տալիս։ Խաչէնի մելիքների բերդերը գտնվում են Խաչէն գետի մօտ. Նրանցից մէկը կանգնած է Գանձասարի Հուչավոր վանքի հանդէպ, բարձր, անառատապատ լեռան գլխի վրայ, և կոչվում է Թարխանա-բերդ (Խօխանաբերդ)։ Այս բերդում տասնևերրորդ դարու սկզբներում պաշտպանվում էր Հասան-Ջալալ իշխանը թաթարների արշաւանքների դէմ։ Մի այլ բերդ, դարձեալ Խաչէն գաւառում, գտնվում է մի քանի ժամ ճանապարհով հեռու, սուրբ Յակոբայ վանքի հանդէպ։ Այդ բերդը արժանի է իւր անուանը. նա կոչվում է Կաչաղակաբերդ (Սաղսաղանի կալսի), որովհետև սրաթռիչ կաչաղակները միայն կարող են բարձրանալ մինչև նրա սրածայր գագաթը, որ կորչում է ամպերի մէջ։ Վարանդայի մելիքի ամրոցը գտնվում էր Չանախչի (Աւետարանոց) աւանում, կուսանաց անապատի հանդէպ։ Տիզակի մելիքի ամրոցը գտնվում էր Տող աւանում, Գտչի վանքի հանդէպ, որ բարձրացել է մինչև երկինքը։

աւերակ, մի քանիսը ամբողջ դրութեան մէջ, գոյութիւն ունին մինչև այսօր։ Բայց պէտք է ի նկատի առնել, որ այդ ամրոցներից շատերը Աղուանից թագաւորների և իշխանների ժամանակներից մնացած են, մելիքները միայն նորոգեցին իրանց գործածութեան համար։

Այդ երկրում աշխարհից հրաժարուած աբեղաների վանքերի հանդէպ կանգնած էին իշխանական ամրոցները, նրանց սարսափելի բերդերը, խաչի հետ միացրած էր սուրը։

Մելիքների իշխանութիւնը ժառանգական էր. հօր մահից յետոյ տիրում էր անդրանիկ որդին և կոչվում էր մ ե լ ի ք, իսկ միւս եղբայրները կոչվում էին բ է կ։ Օրէնքի փոխարէն կառավարում էր տիրողի կամքը և ժողովրդական սովորութիւնները, որոնք դեռ պահպանուած էին իրանց նահապետական ձևերի մէջ։ Մելիքներին անսահման իրաւունք ունէին իրանց հպատակների վրայ՝ նրանց դատելու, պատժելու և մինչև անգամ մահուան դատապարտելու։

Մելիքները թէ քաղաքական շահերով և թէ խնամութեան կապերով միացած էին միմեանց հետ, և այդպիսով Խամսայի բոլոր հինգ իշխանութիւնները կազմում էին մի ամբողջ դաշնակցական միութիւն։ Պատսպարուած իրանց անմատչելի լեռների և մթին անտառների մէջ, նրանք ոչ մի մահմեդականի թոյլ չէին տալիս բնակութիւն հաստատել իրանց երկրներում և ամբողջ Ղարաբաղի ազգաբնակութիւնը բաղկացած էր միայն հայերից, որոնց քանակութիւնը բազմաթիւ էր։

Այժմ դառնանք Խամսայի հինգ գաւառների տիրապետող մելիքների ծագմանը։

II

1. Գիւլիստանի Մելիք-Բէգլարեանների ծագումը *).

Մելիք-Բէգլարեանները բնիկ ուտէացիներ են, Նիժ գիւղից։ Թէ ինչ հանգամանքներ ստիպեցին նրանց թողնել իրանց հայրենիքը և գաղթելով Ղարաբաղի կողմերը, Գիւլիստան գաւառում նոր բնակութիւն հաստատել, այդ մասին լռում է պատմութիւնը։ Միայն այսքանը յայտնի է որ առաջին գաղթականը,—որին թուրքերը կոչում էին «Ղարա-խըզբաշի» (սև-հարիւրապետ), իսկ հայերի մէջ յայտնի էր անունով՝ սև-Աբով,—հասարակ մարդ չէր **). Նա իւր հայրենիքում ժողովրդի կառավարիչ էր, հարուստ էր։

Տասնևվեցերորդ դարու սկզբներում յանկարծ այդ «սև-հարիւրապետը» յայտնվում է Ղարաբաղի կողմերում, բոլորովին աղքատ, իւր հետ ունենալով միայն եօթն ընտանիք և մի քանի անասուն, որ կրում էին նրանց ճանապարհի ծանրութիւնները։ Երևում էր որ իրանց հայրենիքում մի աղէտալի դէպք պէտք է պատահած լինէր նրանց հետ, որով թէ կողոպտուել էին և թէ տարագրուել։

Գալով մի անծանօթ աշխարհ, նրանք ոչ բնակութեան

---

*) Մեր ձեռքում գտնուած մի գրչագիր պատմութիւն Մելիք-Բէգլարեանների ծագումը դուրս է բերում Ազուանից ամենահին թագաւորների մէկից՝ Առանից, որ ապրում էր Քրիստոսից շատ առաջ։ Այդ ենթադրութիւնը կարօտ է խիստ ստուգութեան։

**) Ղարաբաղի բոլոր մելիքների նախնիքը կրում էին ‹իւզ-բաշի› տիտղոսը. այդ տիտղոսը տրվում էր այն անձանց, որոնք սեպհական երկրների տէր էին և իրաւունք ունէին զօրքեր պահելու։

տեղ ունէին և ոչ պատսպարան։ Թէև աշնան ցրտերն արդէն սկսուել էին, բայց նրանք դեռ բնակվում էին իրանց չատրներում, Թարթառ գետի ձախ ափերի մօտ, այժմեան Թալիշ գիւղից փոքր ինչ հեռու։

Գուցէ «սև-հարիւրապետը» կցանկանար իւր նոր եկած աշխարհում առժամանակ անյայտութեան մէջ ծածկուած մնալ, բայց մի դէպք երևան հանեց նրան։ Մի օր նրա գրաստները դաշտում արածելու ժամանակ վրայ հասան մի խումբ աւազակներ և աւարի առան անասունները։ Այդ միջոցին դուրս եկաւ «սև-հարիւրապետը» և նրա հետ մի քանի երիտասարդ, նետուեցան աւազակների ետևից։ Մի քանի ժամից յետոյ վերադարձան նրանք, բերելով իրանց հետ ոչ միայն կողոպտած անասուններին, այլև կողոպտող աւազակներին, որոնց բոլորին կալանաւորել էին։

Միւս օրը յայտնուեցան մի այլ խումբ ձիաւորներ, որոնք դիմելով «սև-հարիւրապետին», ասացին նրան, թէ իրանք Բարդայի խանի մարդիկն են, թէ իրանց հրամայուած էր այդ աւազակներին բռնելու, որովհետև դրանք մեծ վնասներ են հասցրել երկրին, և այժմ շատ ուրախ են, որ աւազակները կալանաւորուած են առանց իրանց աշխատութեան։ Այդ խօսքերով առնում են աւազակներին և տանում են Բարդայի խանի մօտ, առանց յայտնելու նրան թէ ով եղաւ աւազակների բռնողը, որպէսզի խանի պարգևներն իրանք ստանան։

Խանը հրամայում է աւազակներին գլխատել, իսկ իւր մարդկանց պարգևներով վարձատրել նրանց քաջութեան համար։ Այդ միջոցին աւազակապետն ասում է խանին. «Պատժեցէք մեզ, որպէս ձեր կամքն է, որովհետև մենք քո երկրները աւերակ դարձրինք։ Բայց մի՛ անպատուեցէք մեզ՝ այդ ողորմելի մարդկանց չկատարած քաջու-

թիւնները վարձատրելով, իբր թէ դրանք են եղել մեզ յաղթողները»...:

Խանն ստուգելով իմանում է, որ իւր մարդիկը խաբել են իրան, ուստի կանչել է տալիս «սև-հարիւրապետին», որ մի այլ վարձատրութիւն չի պահանջում իւր մատուցած ծառայութեան համար, այլ միայն՝ որպէս գաղթական մարդ, խնդրում է որ իրան բնակութեան տեղ տայ: Խանը որոշում է նրա համար որպէս մշտական սեպհականութիւն հին Թալիշ կամ Թարիջ գիւղը Գիւլիստանի գաւառում, Հոռեկայ վանքի մօտ: Ահա այսքանը միայն յայտնի է «սև-հարիւրապետի» կեանքից: Նրա գերեզմանաքարի վրայ, որ գտնվում է յիշեալ վանքի մօտ, փորագրուած է մի տող միայն, որից երևում է, թէ նա վախճանուեցաւ հայոց ռ. ձ. ա. (1081) թուականին, իսկ Փրկչական 1632 թուականին:

Սև-Աբովն ունէր մի քանի որդի, որոնցից երէցը՝ Մելիք-Բէգլարը, յաջորդում է հօրը:

Մելիք-Բէգլար I-ը իւր նախնիքների քաջասրտութեան հետ ունէր և խելք: Նա հիմք դրեց Գիւլիստանի մելիքների իշխանութեանը, և տիրապետելով նոր երկրներ, աւելի ընդարձակեց իւր իշխանութիւնը: Նա խլեց լեռնային նախկին տիրապետողից, որ կոչվում էր Աբրահամ-խուրբաշի *) (Իբրահիմ գաւուր), մի քանի գիւղ, որպէս էին՝ Վերի-շէնը, Ներքի-շէնը, Երքէջը, և այլն: Եւ տիրապետելով Գիւլիստան բերդին, նորոգեց այդ անմատչելի ամրոցը և իւր բնակութիւնն այնտեղ հաստատեց: Նա թողեց երկու որդի. երէցը կոչվում էր իւր պապի անունով Աբով, իսկ կրտսերը՝ Թամրազ (Թէյմուրազ):

*) Աբրահամ-խուրբաշու ժառանգներն այժմ բնակվում են Գիւլիստան գիւղում որպէս հասարակ շինականներ:

Հօր մահից յետոյ յաջորդեց երէց որդին՝ Աբով II-ը, որի մի ոտքը հրացանի գնդակից վնասուած լինելով, յայտնի էր անունով կաղ-Աբով:

Կաղ-Աբովը իւր անպարտելի քաջագործութիւններով շատ նման էր իւր պապին՝ սև-Աբովին: Յափշտակութիւնը, աւարառութիւնը և յանդուգն ասպատակութիւնները նրա ժամանակում երկրների իշխողների համար ոչ միայն անբարոյականութիւն չէին համարվում, այլ ընդունվում էին որպէս քաջագնական արժանաւորութիւններ, որոնց անպատճառ պէտք է ունենար երկրի իշխողը՝ իւր շրջակայ թշնամիներին երկիւղի մէջ պահելու համար: Այդ յատկութիւններից զուրկ չէր կաղ-Աբովը: Նա ամեն ինչ ձեռք էր բերում յափշտակութիւնով. նա յափշտակեց մինչև անգամ իւր կնոջը՝ գեղեցիկ Ղամար-սոլթանին:

Մի անգամ երբ իւր խմբով գնում էր Գանձակի կողմերում աւարառութիւններ անելու, Գետաշէն գիւղից բարձր, Գուլասլու գիւղի մօտ, լեռների վրայ հանդիպում է Գանձակի Մամադ-խանի օբաներին: Յարձակման միջոցին տեսնում է խանի աղջկան, որ իւր «քառասուն» աղախինների հետ եկել էր այնտեղ իւր հօր հովիւների մօտ ամառն անցկացնելու: Օրիորդի գեղեցկութիւնն այն աստիճան յափշտակում է Աբովին, որ նա մոռանում է Մամադ-խանի հօտերի հարուստ աւարը և առևանգում է միայն նրա դստերը: Աբովն այդ ժամանակ ազապ երիտասարդ էր, բայց գեղեցիկ երիտասարդ, թէև ոչ այնքան յաղթանդամ և դէմքով բաւական թուխ, որպէս էին առհասարակ սև-Աբովի ժառանգները: Բերելով իւր չքնաղագեղ աւարը Գիւլիստանի բերդի մօտ գտնուած Ամենափրկչի վանքը, այնտեղ քրիստոնեայ է մկրտել տալիս և ամուսնանում նրա հետ:

Այդ առևանգութիւնն առիթ տուեց Աբովի և Գանձակի խանի մէջ մի քանի արիւնահեղ կռիւների, որոնք

վերջացան խանի պարտութիւնով: Խանը միշտ անհաշտ մնաց թէ իր դստեր և թէ իր ինքնակոչ փեսայի հետ. բայց ծերութեան հասակում հաշտուեցաւ: Եւ որովհետև նա մի այլ ժառանգ չունէր բացի միակ աղջկանից, այդ պատճառով իր բոլոր գիւղերը, հարստութիւնը կտակով նրան թողեց: Կնոջ միջոցով Աբովը տէր եղաւ ահագին ժառանգութեան:

Աբով II-ը վախճանուեցաւ 1728 թուին. նրա մահից յետոյ, մելիքների սովորութեան համեմատ, պիտի յաջորդէր որդին՝ Մելիք-Իւսուբը: Բայց որովհետև Մելիք-Իւսուբը դեռ անփորձ պատանի էր, այդ պատճառով երկրի կառավարութիւնը յանձնուեցաւ հանգուցեալի եղբայր Թամրազին, և պատանի Իւսուբը մնաց նրա հոգաբարձութեան ներքոյ մինչև չափահաս դառնալը:

Մելիք-Թամրազը իր բնակութեան տեղ ընտրեց Հոռեկայ վանքի մօտ գտնուած պալատը *) և վարում էր իր իշխանութիւնը ոչ իբրև ժամանակաւոր հոգաբարձու, այլ որպէս երկրի լիակատար տէրը: Նա խիստ դաժան մարդ էր և անգութ: Մտադրուած լինելով խլել պատանի Իւսուբին հօր ժառանգութիւնից, նա սկսեց հետզհետէ ճնշել, հարստահարել նրան, մինչև անգամ մտածում էր իր եղբօր որդու կեանքի դէմ որոգայթ լարել, որ իշխանութիւնը միանգամայն իրան մնայ: Պատանի Իւսուբն ապրում էր Գիւլիստանի բերդում իր մօր հետ, աննախանձելի վիճակի մէջ:

Այդ միջոցներում Շահ-Սուլթան-Յուսէինի հարկահաններից մէկը, որ կոչւում էր Միրզա-Թահիր, և որ տիրապատականի վէզիր էր, Դերբէնդից սկսեալ արքունի

*) Այդ հոյակապ պալատը կիսաւեր դրութեան մէջ մնում է մինչև այսօր. դա մի խօսուն վկայ է Գիւլիստանի մելիքների աղեմի փառքի և զօրութեան:

հարկերը հաւաքելով, գալիս հասնում է Գանձակի և Ղարաբաղի կողմերը: Մելիք-Թամրազն ընդունում է նրան իր տանը, և կամենալով շողոքորթել պարսից կառավարութեանը, հրամայում է՝ իր ժողովրդից ևս աւելորդութեամբ հաւաքել հարկերը, որ մինչև այնօր վճարելու սովորութիւն չունէին: Այդ բաւական չէ, նա կամենում է մի արժանաւոր ընծայ տալ իր հիւրին՝ նրա սիրտը գրաւելու համար:

«Իմ եղբօր հրացանը, ասում է նրան, գտնվում է իմ եղբօրորդի Իւսուբի ձեռքում, այդ զէնքը մի հազուագիւտ բան է և շահի գանձարանին վայել»:

Պարսիկը խաբէութեամբ կանչել է տալիս Իւսուբին և խնդրում է, որ հօր հրացանը բերէ տեսնելու համար: Երբ նա բերում է, ձեռքիցն առնելով, ասում է նրան. «Այս հրացանը շահի գանձարանին է վայել և ոչ թէ քեզ», և այլ ևս յետ չէ տալիս:

Մանկահասակ Իւսուբը բարկութեան արտասուքն աչքերում վերադառնում է մօր մօտ, պատմում է նրան այդ անցքը: Մայրը սաստիկ վշտանում է. նրան մնացել էր իր ամուսնու ժառանգութիւնից այդ նուիրական զէնքը միայն, որ մի թանկագին յիշատակ էր նրա քաջագործութիւնների: Որդու սրտմտութիւնն աւելի սաստկանում է, երբ լսում է մօր յանդիմանութիւնը. «քաջ հօր անարժան որդի, լաւ էր, թէ քո սպանուած գլուխն ինձ մօտ բերէին և ասէին, որ դու կռուեցար քո հօր յիշատակը չկորցնելու համար»:

—Ես կվերադարձնեմ հօրս հրացանը..., ասում է որդին և խնդրում մօրից, որ իրան փող տայ մի քանի զէնքեր գնելու համար: Մայրը տալիս է նրան իր գլխի ոսկիներից մի քանիսը:

Պարսիկ հարկահանը, հաւաքելով տեղային հարկերը

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР
(4194-78)
269-2014

բռնում է ջորիների վրայ և իւր նօքարների հետ ճանապարհ է ընկնում: Այդ ժամանակ մանկահասակ Իւսուբը, մի խումբ կազմելով իւր բարեկամ երիտասարդներից, ծածուկ հետևում է հարկահանին: Յարձակման պայմանական նշանը որոշվում է «ծկլոր» բառը, իսկ դադարման նշանը՝ «մկլոր» բառը: Երբ հարկահանը մտնում է Թարթար գետի նեղ ձորի մէջ, «ծկլոր» կոչելով, Իւսուբը տալիս է յարձակման նշանը: Նա իւր ձեռքով կտրում է պարսկի գլուխը և և խլում է նրանից իւր հօր հրացանը *):

Նրա՛ ջորիների բեռները, որ բովանդակում էին իրանց մէջ ամբողջ գաւառներից հաւաքած ոսկիները, աւար դարձան մանկահասակ Իւսուբի և նրա քաջ ընկերների ձեռքով: Նրա նօքարների մի մասը կոտորեցին, իսկ փախչողներն ազատուեցան:

Երիտասարդ Իւսուբը իւր յափշտակած գանձն առնելով ամրացաւ Գիւլիստանի բերդում: Նրա վարմունքը մնաց անպատիժ, որովհետև, ինչպէս յետոյ կըտեսնենք, այդ միջոցներին Պարսկաստանում մեծ խռովութիւններ ու փոփոխութիւններ պատահեցան: Շահ-Սուլթան-Յուսէինը գահընկէց եղաւ, աւղանները տիրեցին պարսից մայրաքաղաքին, էլ այդ ժամանակուայ պատերազմական շփոթութիւնների մէջ ո՞վ պիտի մտածէր, թէ Ղարաբաղի կողմերում մի այդպիսի անցք էր պատահել:

Երիտասարդ Իւսուբը հարստութեան տէր դառնալով, սկսեց օր ըստ օրէ զօրացնել իւր ուժերը: Նա դաշնակցութիւն կապեց Ջրաբերդի Մելիք-Աթամի հետ, որի յարաբերութիւնները իւր հօրեղբայր Մելիք-Թամրազի հետ բարեկամական չէին: Այժմ մտածում էր ո՛չ միայն խլել նրա-

*) Այդ հրացանը յետոյ Մելիք-Բէգլարեանների ժառանգները վաճառեցին 1,000 ռուբլով գեներալ Երմօլովին և նա ուղարկեց Ս. Պետերբուրգի Արուժէյնի պալատը:

նից Գիւլիստանի իշխանութիւնը, որ նա բռնութեամբ յափշտակել էր, այլ ցանկանում էր վրէժխնդիր լինել այն բոլոր անիրաւութիւնների և զրկանքների համար, որ իւր անգութ հոգաբարձուն, Մելիք-Թամրազը, կատարել էր, երբ ինքը դեռ անչափահաս էր: Միանալով Մելիք-Աթամի հետ, երիտասարդ Իւսուբը յարձակուեցաւ Մելիք-Թամրազի ամրոցի վրայ: Մի քանի օրուայ սաստիկ կռուներից յետոյ ամրոցը գրաւուեցաւ և Մելիք-Թամրազը գերի բռնուեցաւ: Իւսուբը հրամայեց նրան կախ տալ մի չինարի ծառից *), և ինքն այնուհետև սկսեց կառավարել Գիւլիստանի իշխանութիւնը: Մելիք-Թամրազից մնաց մի որդի Սարուխան-բէգ անունով, որ 1723 թուականի հայոց գնդերի չորս քաջ զօրապետներից մէկն էր:

Մելիք-Իւսուբի մայրը, խելացի Ղամար-սօլթանը, որ իւր խորհուրդներով ոչ սակաւ օգնեց որդու բարձրանալուն, վախճանուեցաւ 1753 թուին: Նրա մարմինը թաղուեցաւ Մելիք-Բէգլարեանների տոհմային գերեզմանատանը, Հոռեկայ վանքի հանդէպ:

Մելիք-Բէգլարեանների մնացած պատմութիւնը ժամանակագրական կարգով կըտեսնենք աշխատութեանս շարունակութեան մէջ:

2. *Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեանների ծագումը.*

Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեանների ծագման մասին մենք շատ փոքր տեղեկութիւններ ունինք: Մի գրչագիր

*) Այդ հինաւուրց չինարի ծառը մինչև այսօր էլ ցոյց են տալիս Գիւլիստանի և Ջրաբերդի սահմանի վրայ և կոչվում է «Ղանլու-չինար», որ նշանակում է արիւնոտ չինարի:

պատմութիւնից իմանում ենք այսքանը միայն, թէ Մելիք-Խորայէլի որդի Մելիք-Եսային Սիւնեաց աշխարհի գլխաւոր խանին (?) սպանելու համար, որ անբարոյական նպատակներ ունէր նրա քրոջ վերաբերութեամբ, 1687 թուին գաղթում է Ղարաբաղ, բերելով իւր հետ բազմաթիւ ընտանիքներ: Խանի զօրքերը հետամուտ են լինում նրան, բայց Մելիք-Եսային Մռաւ լեռան ձորերի մէջ ջարդում է նրանց և սպանում խանի եօթն որդիներին, յափշտակելով նրանցից ահագին պատերազմական աւար, իսկ մնացածներին Հանդաբերդի և Ծար գաւառի կողմից փախցնում է:

Այնուհետև Մռաւ սարի լեռնաբնակներին և վրանաբնակներին հետզհետէ դէպի ինքը գրաւելով, Մելիք-Եսային աւելի զօրանում է, տիրում է Կռանք կոչուած ձորին, և սկսեալ Թմբստեան լեռներից մինչև Գիւլթական գիւղը, որ այժմ կոչվում է Կաթուղկասար, տարածում է իւր տիրապետութիւնը:

Մելիք-Եսայու մահից յետոյ նրան յաջորդում են միւս եղբայրները՝ նախ Ալլահ-Ղուլի-սուլթանը, յետոյ Մելիք-Աթամը: Դրանք աւելի զօրանալով, տիրում են վերին Խաչէնին, Հաւքախաղացին, Հանդաբերդին, Հաթերքին, Ականային և Ջրաբերդին, և այդպիսով աւելի ևս ընդարձակում են իրանց իշխանութիւնը:

Ալլահ-Ղուլի-սուլթանը, որպէս յետոյ կտեսնենք, դաւաճանութեամբ սպանուեցաւ Շուշի բերդի Փանահ-խանի ձեռքով, իսկ Մելիք-Աթամը երկար պատերազմեց այդ խանի հետ:

Մելիք-Աթամը իւր բնակութեան համար նորոգեց «քաղաքատեղ» կամ «մայրաքաղաք» կոչուած աւերակների մօտ մի հոյակապ պալատ, որի մէջ տասնևերկուերորդ դարու վերջերում բնակվում էր Խաչէնի և Ջամքորի իշխան Վահրամ-շահը, իսկ որպէս ամրոց ընտրեց իւր համար անմատչելի Ջրաբերդը *):

3. Խաչէնի Հասան-Ջալալեան մելիքների ծագումը.

Ղարաբաղի տիրապետող հինգ մելիքական տներից միայն Խաչէնի իշխողները բնիկներ են եղել, իսկ մնացած չորսը, որպէս տեսանք և որպէս յետոյ ևս պիտի տեսնենք, օտար երկրներից գաղթականներ էին:

Խաչէնի մելիքների ծագումը շատ հին պէտք է համարել. նրանք առաջ են եկել Հասան-Ջալալեան իշխաններից: Դարերի ընթացքում այնքան բազմացել և ճիւղաւորուել էին նրանք, որ Խաչէնի փոքրիկ գաւառը ամենամանր կտորներով բաժանուած էր այդ տոհմի ներկայացուցիչների ձեռքում, որոնք բնականաբար շատ հաշտ չէին կարող լինել միմեանց հետ: Այդ էր պատճառը նրանց վերջին ժամանակների թուլութեան, որ չէին կազմում մի զօրեղ, միացեալ իշխանութիւն: Բացի դրանից, միևնոյն տոհմից ընտրվում էին Գանձասարի վանքի կաթողիկոսները, որոնց ճնշման ներքոյ այս երկրի մելիքները շատ չէին զօրանում:

Տասնևվեցերորդ դարում Հասան-Ջալալեան իշխաններից նշանաւոր էին երեք եղբայրներ՝ Երեմիա կաթողիկոսը, Վելիջան-բէկ III-ը և Մուլքի-բէկը:

Երեմիա կաթողիկոսը վախճանուեցաւ 1700 թուին:

---

*) Մելիք-Աթամն ունէր մի քանի ամրոց, որոնցից մէկըն այժմ ամբողջութեամբ մնում է Կսապատ և Հին-Մոխրաթաղ գիւղերի մօտ, Իննմասանց անապատի հանդէպ: Այդ գեղեցիկ շէնքը կարող է բաւական լոյս ձգել մեր նախնիքների ճարտարապետական ճաշակի վերաբերութեամբ:

Վելիջան-բէկը վախճանուեցաւ 1686 թուին և նրա որդի Եսային Երեմիայի փոխարէն կաթողիկոս դարձաւ: (Դա միևնոյն Եսայի կաթողիկոսն է, որ ինչպէս յետոյ պիտի տեսնենք, Պետրոս մեծի ժամանակ սկսեց ռուսաց կառավարութեան հետ բանակցութիւններ անել Ղարաբաղում հայոց անկախ իշխանութիւն հիմնելու համար, ռուսաց հովանաւորութեան ներքոյ:) Իսկ Մուլքի-բէկը վախճանուեցաւ 1716 թուին և թողեց երկու որդի. երէցը կոչւում էր Մելիք-Գրիգոր, կրտսերը՝ Մելիք-Ալլահվերդի:

Մելիք-Գրիգորը խելացի և ճարտարախօս մարդ էր. իւր շէկութեան համար պարսիկներից և օսմանցիներից մականուն ստացաւ «սարի-մելիք» որ նշանակում է շէկ-մելիք: Զանազան քաջագործութիւններից յետոյ նա հեռացաւ աշխարհից և մտնելով Գանձասարի վանքը, վարդապետ ձեռնադրուեցաւ: Մելիք-Գրիգորից յետոյ նրա եղբայր Մելիք-Ալլահվերդին վարեց Խաչէնի իշխանութիւնը, իսկ այդ վերջինի մահից յետոյ նրա որդի Մելիք-բէկը, որ ութը որդի թողեց: Նրա որդիներից մէկն էր Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը, որ սպանուեցաւ Շուշի բերդի Իբրահիմ-խանից:

4. *Վարանդայի Մելիք-Շահնազարեանների ծագումը.*

Առաքել պատմագրի մէջ կարդում ենք հետևեալը. «Թիֆլիզից դուրս գալով շահը (Աբբաս մեծը) գնաց Գեղամայ գաւառը, և այնտեղ դրեց իւր արքունի բանակը. իսկ ինքը Շահ-Աբբասը իջևանեց Մելիք-Շահնազարի տանը, որ գտնվում էր Մազրա գիւղում և ինքը (մելիքը) բնիկ նոյն գիւղացի էր: Եւ այս Մելիք-Շահնազարը հայոց ազգից էր, հաւատով քրիստոնեայ. նա փառաւոր և հզօր

իշխան էր, որ այնպիսի հիւրընկալութիւն արեց շահին, որպէս վայել էր մի թագաւորի: Եւ նա ինքը թագաւորի մտերիմն ու բարեկամն էր, և յարգելի էր նրա առջև: Դրա համար թագաւորը պատուական ու ազնիւ զգեստներով շքեղացրեց նրան, և խ ա լ ա թ ն ե ր տուեց. այլև պարգևեց նրան այն գաւառի մելիքութեան իշխանութիւնը, և ուրիշ դաստակերտներ և գիւղեր ընծայեց նրան ու նրա եղբայրներին: Եւ հաստատուն ռ ա գ ա մ (հրովարտակ) գրեց և կնքեց թագաւորական կնքով և տուեց նրանց, որ այդ ժառանգութիւններն անփոփոխ լինին թէ նրանց համար և թէ նրանց զաւակների համար, սերունդից սերունդ մինչև յաւիտեան:

1682 թուին երբ Կովկասեան լեռնաբնակների փոթորկալից արշաւանքները Գեղարքունեաց երկիրն աւերակ դարձրին, այդ ժամանակ վերոյիշեալ Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Յուսէփնը և նրա եղբօր (Մելիք-Միրզա-բէկի)-որդի Մելիք-Բաղին թողին Գեղամայ լճի եզերքը և գաղթեցին իրանց ժողովրդի մի մասի հետ դէպի Ղարաբաղի կողմերը: Վարանդայ գաւառի Աւետարանոց (Չանախչի) գիւղն ընտրեցին նրանք իրանց բնակութեան համար: Այստեղ կառուցին եկեղեցի, կուսանաց անապատ և Աւետարանոցը շրջապատեցին ամուր պարիսպներով և նրան բերդի ձև տուին: Նոյն բերդում հիմնեցին իրանց համար ամրոցներ, որոնց հոյակապ շէնքերը կիսաւեր դրութեան մէջ մինչև այսօր էլ մնում են:

1721 թուին երբ Կովկասեան լեռնաբնակները դարձեալ հեղեղի նման թափուեցան, ապստամբեցին Շաքին, Շիրվանը, Գանձակը և անցան մինչև Երասխ գետը, այդ ժամանակ, երբ մօտեցան Վարանդային, նրանց առջև դուրս եկաւ Մելիք-Բաղին և ազատեց երկիրն աւերմունքից: Այդ և դրա նման մի քանի անցքեր այն ատեհան

գրաւեցին տեղային ժողովրդի համակրութիւնը դէպի Մելիք-Շահնազարեանները, որ ամբողջ Վարանդան ընդունեց իւր վրայ այդ տոհմի իշխանութիւնը։

5. Տիզակի Մելիք-Աւանեանների ծագումը.

Մելիք-Աւանեանները նոյնպէս գաղթականներ են Լօռւի գաւառի Արատ անունով գիւղից։ Տասնեւվեցերորդ դարում այդ գաւառում զօրացան Լօռւ-Մելիքեանները. այդ տոհմից էր Մելիք-Աւանը (Եգանը), որ Ղուկաս վարդապետի որդին էր։

Մելիք-Աւանն անընդհատ կռիւներ ունէր իւր տոհմակից Մելիք-Էլիզբարի հետ, որ բռնութեամբ խլել էր Մելիք-Աւանից նրա հայրենի ժառանգութիւնը՝ Փամբակի ձորը և Լօռւի մի մասը։ Չկարողանալով յաղթել իւր թշնամուն և հալածուած նրանից, Մելիք-Աւանը իւր հայր Ղուկաս վարդապետի հետ և իւր ժողովրդով գաղթեց Ղարաբաղի Տիզակ գաւառի Տող գիւղը։ Այստեղ նրա հայրը նորոգեց Գտչի վանքը, միաբանութիւն հաստատեց և բնակուեցաւ նոյն վանքում։ Իսկ որդին՝ Մելիք-Աւանը, Տող գիւղում հիմնեց հոյակապ եկեղեցի և ամրացրեց այդ գիւղը շրջապարիսպներով։ Նրա փառաւոր պալատը նոյն գիւղում մինչև այսօր էլ մնում է հայկական արձանագրութիւններով, որի մէջ բնակվում են նրա ժառանգներից այն մնացորդները միայն, որոնք Շուշի բերդի Իբրահիմ-խանի հալածանքների ժամանակ ընդունեցին մահմեդականութիւն։ Այդ մահմեդականներն ազնուականներ են և պարծանքով են յիշում իրանց նախահօր՝ Մելիք-Աւանի անունը, նրա գերեզմանը օրհնել են տալիս ամեն մի տօն օրերում և ամեն տարի Զատկի աւագ կիւրակէի պատա-

րագը տեղային եկեղեցում նրանց հաշուով է կատարվում *)։

Մենք համառօտ կերպով ցոյց տուինք Ղարաբաղի հինգ գաւառների՝ Գիւլիստան, Ջրաբերդ, Խաչէն, Վարանդայ և Տիզակ, տիրապետող մելիքների ծագումը։ Տեսանք որ այդ մելիքական տներից միայն Խաչէնի իշխողները բնիկներ են եղել, իսկ միւս բոլորը օտար երկրներից գաղթականներ, որոնք համարեա միօրինակ պատմական հանգամանքներից ստիպուած, ապաստան են գտել Ղարաբաղի անտառների ու անմատչելի լեռների մէջ և հիմնել են իրանց հզօր իշխանութիւնը։ Այժմ դառնանք դէպի այդ մելիքների ապագայ գործունէութիւնը, որոնք նշանաւոր տեղ են բռնում մեր նոր պատմութեան մէջ։

III

Տասնեւութերորդ դարու սկզբներին Պարսկաստանում պատահեցան նշանաւոր փոփոխութիւններ, որոնք Ղարաբաղի մելիքների դրութեան վրայ ոչ սակաւ ազդեցութիւն ունեցան։ Շահ-Սուլթան-Յուսէյինի թոյլ կառավարութիւնն ամեն կողմից հրաւիրեց Պարսկաստանի վրայ նրա թշնամիներին։

---

*) 1881 թուին Սիւնեաց աշխարհում ճանապարհորդելու ժամանակ մի գիշեր մնացի Տող գիւղում. այստեղ ինձ պատմեցին, թէ յիշեալ մահմեդականների գլխաւոր ներկայացուցիչը իւր երկու որդիներին յանձնեց Սարգիս եպիսկոպոս Ջալալեանցին, որ նա հայկական ոգով կրթել տար, յետոյ քրիստոնէութիւն ընդունէին և շարունակէին Մելիք-Աւանեանների ժառանգութիւնը իբրև հայեր։ Բայց բարեհոգի եպիսկոպոսը, փոխանակ նրանց դպրոց տանելու, սկսեց ծառայացնել իւր մօտ որպէս սպասաւորներ։ Նրա խոհանոցում մանուկները լրբացան, և գողացան եպիսկոպոսի թէյի դգալները։ Եպիսկոպոսն այնուհետև ստիպուեցաւ նրանց վռնդել իւր տնից։ Ջալալեանն այդ ժամանակ Շուշուայ առաջնորդն էր։

Աւղաններն ապստամբուեցան, Ղանդահարի Միր-Մահմուդ խանը՝ արշաւանք գործելով, տիրեց պարսից մայրաքաղաք Սպահանը և շահին գահընկէց անելով, ինքը թագաւոր դարձաւ (1722)։ Կովկասեան լեռնաբնակները, Դաղըստանի Ալի-սօլթանի և Սուրխէյ-խանի առաջնորդութեամբ, հեղեղի նման թափուեցան, աւերակ դարձրին Վրաստանը և պարսկական այլ նահանգները՝ սկսած Սևանայ լճից մինչև Երասխ գետը (1721—22—23)։ Միևնոյն ժամանակներում, Պետրոս մեծի կայսրութեան օրերում (1722—1723) ռուսները տիրեցին Կասպից ծովեզրեայ պարսկական գաւառները, որպէս էին՝ Դերբէնդը, Բագուն, Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը։ Հէնց այդ միջոցներում (1722—1723) օսմանցիք՝ տեսնելով ռուսների իրանց սահմաններին մօտենալը և մանաւանդ տեղեակ լինելով Պետրոս մեծի աշխարհակալական ձգտումներին դէպի արևելք, գրաւեցին իրանց սահմանակից բոլոր պարսկական նահանգները։ Երկու տարուայ մէջ՝ մինը միւսից յետոյ տիրեցին նրանք ամբողջ Ատրպատականը, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիզը, Գանձակը և այլ պարսկական երկիրներ, մինչև հասան Ղարաբաղի մելիքների իշխանութիւններին։

Տեսնելով որ քայքայուած Պարսկաստանը բաժան-բաժան է դառնում, Ղարաբաղի մելիքները ևս մտածեցին մի մեծ պատառ իրանց ձեռքը ձգելու։ Մինչև այնօր մելիքները համարվում էին պարսից աւատական իշխաններ, իսկ այժմ կամենում էին բոլորովին թօթափել պարսկական լուծը, և հայոց անկախ պետութիւն հիմնել։ Իրանց գլխաւորութիւնների մասին խորհելու և կարգադրութիւններ անելու համար նրանք գաղտնի ժողովներ էին կազմում Գանձասարի վանքում, նոյն ժամանակուայ Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ։

Այդ ժամանակներում Ղարաբաղի հինգ մելիքները հետևեալ անձինքն էին.

1) Գիլիստանում տիրում էր Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբով II-ը։

2) Ջրաբերդում տիրում էր Մելիք-Իսրայէլեան Մելիք-Եսային։

3) Խաչէնում տիրում էր Հասան-Ջալալեան Մելիք-Ալլահվերդին։

4) Վարանդայում տիրում էր Մելիք-Շահնազարեան Մելիք-Յուսէֆը։

5) Տիզակում տիրում էր Ղուկաս վարդապետի որդի Մելիք-Եգանը (Աւանը)։

IV

Ղարաբաղի մելիքների ձգտումները՝ իրանց հայրենիքում մի անկախ հայկական իշխանութիւն հիմնելու վերաբերութեամբ, նոր մտածութիւններ չէին։ Դեռ 1701 թուին նրանք ուղարկեցին Պետրոս մեծի մօտ որպէս պատգամաւոր Իսրայէլ Օրի անունով հնդկաստանցի հային Մինաս վարդապետի և մի քանի այլ անձինքների հետ։ Նրանք ներկայացան կայսրին Սմօլենսկի մէջ։ Այդ դեսպանութեան նպատակն այն էր, որ նրանք համոզէին կայսրին ընդունելու հայերին իւր պաշտպանութեան ներքոյ, և հայերը այն ժամանակ իրանց սեպհական ուժերով կըպատերազմէին պարսիկների հետ, կըթօթափէին իրանցից մահմեդական լուծը և կ'ընդունէին իրանց վրայ ռուսաց քրիստոնեայ պետութեան հովանաւորութիւնը։ Իրանց հայրենիքի փրկութեան գործն առաջ տանելու համար Օրին յայտնեց, որ հայերն արդէն պատրաստած ունին Շամախու ողմերում 17 հազար զինուոր, Ղարաբաղում 60 հա-

դար, իսկ Հայաստանի պարսկական 17 նահանգներից կարելի է հաւաքել աւելի քան 100 հազար հոգի։ Եւ եթէ կայսրի զօրքերն այդ կողմերը գան, Հայերը յանձն են առնում իրանց ծախքով պահպանել նրանց։

Որպէս արեւելքի հետ լաւ ծանօթ մարդ, Օրին ցոյց տուեց կայսրին Հայաստանի քարտէզը, ծանօթացրեց նրան Հայոց հին պատմութեան և թագաւորների *) հետ, և բացատրեց այն օգուտները, որ կայսրը կարող էր ունենալ Հայաստանը իւր հովանաւորութեան ներքոյ առնելով։ Նա յայտնեց, որ ինքը դիմել է եւրոպական այլ պետութիւններին և արդէն ստացել է Աւստրիայի կայսրի ու Բաւարիայի կուրֆիւրստի հաճութիւնը՝ իրանց ուժերը միացնելու ռուսների հետ, Հայաստանի վերականգման գործը յաջողեցնելու համար։

Մեծ կայսրի արծուի աչքերն իսկոյն նախատեսեցին այն մեծ շահերը, որ նա կարող էր քաղել՝ ձեռք առնելով մի ճարպիկ առեւտրական և միեւնոյն ժամանակ պատերազմող ժողովուրդ, որի հետ ծանօթ էր նա դեռ իւր երիտասարդական հասակում **)։ Նրա աշխարհակալական ցանկութիւնների համար դէպի արեւելք, նրա հեռաւոր նպատակների համար՝ կապելու Հնդկաստանը Ռուսաստանի հետ առեւտրական յարաբերութիւններով, հարկաւոր էին հմուտ միջնորդներ և լաւ առաջնորդներ,—այդ գործիչնե-

*) Մինչեւ այսօր Գանձասարի վանքի գրադարանում կարելի է տեսնել հայոց թագաւորների ձիթանկար պատկերների մնացորդները, որ պատրաստուեցան այն ժամանակ Եւրոպայի թագաւորներին ներկայացնելու համար։

**) Մեծն Պետրոսը արտասահմանում գտնուած ժամանակ Հօլլանդիայում ծանօթացաւ Աբրօ անունով մի զմիւռնիացի վաճառականի հետ, որին յետոյ հրաւիրեց Ռուսաստանում առեւտուր անելու։

րին նա գտնում էր հայերի մէջ։ Այդ էր պատճառը որ նա խիստ սիրով ընդունեց Հայոց պատգամաւորների առաջարկութիւնը և խոստացաւ չխնայել իւր օգնութիւնը հայերին՝ իրանց հայրենիքի վերաբերութեամբ ունեցած դիտաւորութիւնների իրագործելու համար։

Բայց արեւելքում մի վճռական գործ սկսելու համար Պետրոս մեծը ժամանակ չունէր, որովհետեւ նա զբաղուած էր շվեդական պատերազմով, որ այդ միջոցներում աւելի սաստիկ կերպով բորբոքուած էր։ Բացի դրանից նա հարկաւոր համարեց աւելի լաւ ծանօթանալ Պարսկաստանի նոյն ժամանակուայ դրութեան և քաղաքական հանգամանքների հետ։ Այդ մտքով Պետրոս մեծը կազմեց մի դեսպանութիւն, որի լիազօրը կարգուեցաւ նոյն ինքն Իսրայէլ Օրին *), և ճանապարհ դրեց դէպի Պարսկաստան (1707) Շահ-Սուլթան-Յուսէինի մօտ։

Նրա ընկեր Մինաս վարդապետը մնաց Ռուսաստանում և շարունակում էր բանակցութիւնները Գանձասարի վանքի «Հայոց ժողովի» կողմից ռուսաց արքունիքի հետ։

Օրին իւր Պարսկաստանի ճանապարհորդութիւնը կատարեց Հայաստանի վրայով, անցաւ Շամախու, Ղարաբաղի, Նախիջեւանի կողմերով, որպէսզի աւելի մօտիկից տեսնէ Հայոց պատրաստութիւնները, խրախուսէ նրանց և զգուշէ պարսից դէմ յօգուտ Ռուսաստանի։

Բայց չնայելով որ նրա դեսպանախումբը ծածկուած էր Հռոմի պապի դեսպանութեան անմեղ անունով, որ արեւելքում որեւէ քաղաքական շահեր ունենալ չէր կարող, այսուամենայնիւ մինչեւ Օրիի պարսից մայրաքաղաք հասնելը, Շամախու կառավարիչ Մուսաբէկեան Յիւսէին-

*) Իսրայէլ Օրին այդ ժամանակ գնդապետի (պօլկովնիկ) աստիճան էր ստացել կայսրից։

խանը *) իմացում տուեց Շահին, որ այդ Օրին աշխատում է հայոց թագաւորութիւն հիմնել, պարսիկներին իշխանութիւնը ոչնչացնել, ևայլն։ Այդ տեղեկութիւններն ստանալուց յետոյ Շահն այն աստիճան վրդովուեցաւ, որ մինչև անգամ չէր կամենում ընդունել պապի պատուակեալ դեսպանութիւնը։ Բայց Օրին մի լաւ քաղաքագէտի (դիպլոմատ) յատուկ ճարպկութեամբ կարողացաւ փարատել Շահի տարակուսանքները և Սպահանում փառաւոր ընդունելութիւն գտաւ։

Օրին մնաց Սպահանում մի քանի տարի։ Այդ միջոցներում նրան յաջողուեցաւ կատարել կայսրի զանազան յանձնարարութիւնները, յաջողուեցաւ հաւաքել նրա ցանկացած բոլոր տեղեկութիւնները և գաղտնի ուղարկել Ռուսաստան իւր ընկեր Մինաս վարդապետին, որ իւր կողմից ներկայացնում էր կայսրին։

Իւր դեսպանութեան խորհուրդը յաջողութեամբ կատարելուց յետոյ, Օրին վերադարձաւ Ռուսաստան, տանելով իւր հետ 200,000 ռուբլու արժէք ունեցող ընծաներ պարսից Շահի կողմից Պետրոս մեծին։

Կայսրը այնքան գոհ մնաց դեսպանի գործակատարութեան համար, որ խոստացաւ տալ նրան 40 հազար զինուոր իւր հայրենիքն ազատելու համար, իսկ նրա

---

*) Այդ Յուսէին-խանն ագուլեցի էր, ազգով հայ, Մուսաբէկեան տանից։ Նրա մի եղբայրը, որ կոչվում էր Մեհմէդ-Ղուլիխան, նոյն ժամանակ Երևանում պարսից փոխարքայ էր։ Այդ վերջինը մեծ տուգանքի ենթարկեց Ս. Էջմիածնի վանքը, երբ կասկածեց, որ Աստուածատուր կաթողիկոսը գաղտնի բանակցութիւններ ունի վրաց իշխանների հետ և կամենում է միանալ նրանց հետ Հայաստանը պարսից լծից ազատելու համար։ Առհասարակ մահմեդականութիւն ընդունած Մուսաբէկեան եղբայրները մեծ վնաս տուեցին հայոց ապստամբութեան գործին։

Պարսկաստանից բերած ընծաները հրամայեց գործ դնել պատերազմական ծախքերի վրայ։ Բայց Օրին ազնիւ մարդու յատուկ մեծահոգութեամբ հրաժարուեցաւ կայսրի ընծաներից, յայտնելով թէ հայերը կարօտութիւն ունին նրա ողորմածութեանը միայն, իսկ զօրքեր իրանք պատրաստ ունին, և որքան էլ հարկաւոր լինի, կարող են պատրաստել։

Բայց Ղարաբաղի մելիքները շուտով զրկուեցան այդ եռանդոտ հայրենասէրից, որովհետև Օրին, կայսրի մի այլ յանձնարարութեամբ Հաշտարխանից անցնելու ժամանակ, այնտեղ հիւանդացաւ և Հայաստանի վերականգման բոլոր ցանկութիւնները իւր հետ գերեզման տարաւ (1711) *)։ Սակայն նրա սկսած գործը չմեռաւ։

V.

Օրիի մահից յետոյ նրա ընկեր Մինաս վարդապետը շարունակեց նրա սկսած գործը։ Նա Ռուսաստանից չհեռացաւ և կատարում էր միջնորդի պաշտօն կայսրի և Գանձասարի վանքի «հայոց ժողովի» մէջ, ուր խմբվում էին խորհրդի համար Ղարաբաղի մելիքները։ Այդ եռանդոտ վարդապետը, թէև նշանակուած էր այն ժամանակ Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս, բայց նա աւելի քաղաքական գործերով էր զբաղուած, քան թէ եկեղեցական։ Նա իւր գաղտնի գործակատարները տարածել էր Պարս-

---

*) Օրիի մահից յետոյ Հաշտարխանի ռուս աստիճանաւորները կողոպտեցին նրա կայքը և սկսեցին զրպարտել նրան զանազան խարդախութիւնների մէջ։ Մեծ ջանք հարկաւոր եղաւ նրա ընկեր Մինաս վարդապետին, մինչև կարողացաւ ձեռք բերել յափշտակուած կայքի մի մասը և վերականգնել իւր հանգուցեալ ընկերոջ պատիւը։

կատանի բոլոր նշանաւոր տեղերում, որոնք ամեն կողմից նրան տեղեկութիւններ էին հաղորդում *)։ Նրա գործակատարներից ոմանք արժանացան կայսրի առանձին ողորմածութեանը **)։

Այդ միջոցներին Պարսկաստանում հեղհեղէ կատարուեցան 1721, 22, 23 թուերի անցքերը, որ նկարագրեցինք III-րդ գլխում։ Շահ-Սուլթան-Յուսէֆինը գահընկէց եղաւ, աւղանները տիրեցին պարսից մայրաքաղաքին, օսմանցիք սկսեցին գրաւել իրանց սահմանակից պարսկական նահանգները։ Սէֆէվիների պետութիւնը իւր կատարեալ քայքայման վիճակի մէջն էր գտնվում, բայց ռուսները փոխանակ Հայաստանի վրայ ուշադրութիւն դարձնելու, տիրում էին Կասպից ծովեզերեայ պարսկական գաւառները։

---

*) Այդ գործակատարներից մէկն էր Սարգիս Գիլանենցը, որի հետաքրքիր օրագրութիւնը՝ Պարսկաստանի այն ժամանակուայ անցքերի վերաբերութեամբ տպուեցաւ «Կռունկ» ամսագրում։ Իսկ 1870 թուին պրօֆեսօր Ք. Պատկանեանը ռուսերէն թարգմանելով, որպէս հարուստ պատմական նիւթ, ներկայացրեց Ս. Պետերբուրգի կայսերական ակադեմիային։

**) Դրանցից մէկն էր Նաւասարդ անունով մի հայ, որի մատուցած ծառայութիւնների համար երբ կայսրը կամեցաւ վարձատրել նրան, Նաւասարդին գտան Պարսկաստանում վախճանուած, առանց ժառանգ անգամ թողնելու։ Մնացել էր միայն Ղազար անունով մի հայ, որ ծառայում էր հանգուցեալի մօտ և ծանօթ էր նրա գործերի հետ։ Կայսրը կանչել տուեց այդ Ղազարին և արժանացրեց զօրապետի (գեներալ) աստիճանի։ Դա միևնոյն զօրապետ Լազար Խրիստաֆօրովիչն էր, որ հայերից կազմուած մի առանձին զօրախմբի հրամանատար դառնալով, բաւական նշանաւոր գործեր կատարեց Պետրոս մեծի պարսկական արշաւանքների ժամանակ։ Յետոյ (1736) իւր զօրքով և հայ սպաներով (օֆիցէր) տեղափոխուեցաւ Ղզլար։

Մելիքները կրկին սկսեցին դիմել դէպի ռուսաց արքունիքը։ Նրանց պատուիրակները, որպէս էին՝ Յովհաննէս երէցը, Տէր-Անտօնը, Տէր-Պետրոսը, Չելէբի-քեօխվան, Սիմօն Պապովը, անդադար դիմում էին դէպի Ռուսաստան և Մինաս վարդապետի միջնորդութեամբ հայոց մելիքների, Եսայի և Ներսէս կաթողիկոսների խնդիրքները ներկայացնում էին կայսրին։ Պետրոս մեծը միշտ պատասխանում էր նրանց իւր ամենառողորմած խոստումներով, խորհուրդ էր տալիս սպասել, յուսադրելով, թէ նրանց բոլոր բաղձանքները կատարուած կլինին։ Այդ բանակցութիւնները տևեցին մի քանի տարի։ Եւ որովհետև Վրաստանն էլ այդ ժամանակ միևնոյն դրութեան մէջն էր ինչպէս Հայաստանը, այսինքն օսմանցիք այնտեղ էլ էին տիրել, այդ պատճառով վրացիները ևս հայերի նման միևնոյն խնդիրքներով դիմում էին կայսրին։ Վերջը հայերը պատասխան ստացան, որ իրանց ուժերը միացնեն վրացիների հետ և սպասեն մինչև այն ժամանակ, երբ կայսրը ինքն անձամբ ռուսաց զօրքերով կըգայ պարսկական նոր գրաւած երկրները տեսնելու համար,—այն ժամանակ հայերը և վրացիները, միանալով ռուսաց զօրքերի հետ, կարող են սկսել ազատութեան գործը։

VI

Վերջին խոստումնքը սաստիկ ուրախութիւն պատճառեց թէ՛ հայերին և թէ վրացիներին։ Երկու վիճակակից քրիստոնեայ ազգեր՝ ձեռք ձեռքի տուած քրիստոնեայ՝ մեծ կայսրի պաշտպանութեան ներքոյ, պիտի պատերազմէին մահմեդական բռնակալութեան դէմ, պիտի կռուէին իրանց հայրենիքի փրկութեան համար։

Ղարաբաղի մելիքներն այդ ժամանակ դիմեցին վրաց թագաւոր Գիօրգի-Շահնաւազին, խնդրելով որ տայ իրանց

մի հմուտ և ընդունակ զօրավար հայոց զօրքերին առաջնորդելու համար։ Թագաւորն ընտրեց հայազգի իշխան Դաւիթ-բէկին *), որ այդ ժամանակ վրաց ծառայութեան մէջ էր գտնվում։ Դաւիթ-բէկն եկաւ Ղարաբաղ (1722) և ժողովեց մինչև 60 հազար զօրք, որոնց վրայ զօրապետներ կարգեց Մելիք-Աւան-խանին (Մելիք-Եգանին) և Աւան-Միրզային (Աւան-իւզբաշուն), իսկ ինքը իւր գլխաւոր զօրաբաժնի հետ գնաց դէպի Ղափանի նահանգը, Զանգուր կոչուած տեղը, որ իշխանի հայրենիքն էր։

Պետրոս մեծի նոր արշաւանքի նշանաւոր պատրաստութիւնները դէպի Պարսկաստան մի կողմից, և Դաւիթ-բէկի գործողութիւնները միւս կողմից, առիթ տուին Էրզրումի օսմանցոց փաշային բէկից բացատրութիւններ պահանջել Ղարաբաղի հայ զօրքերի հաւաքման մասին։ Գործն այն աստիճան ակներև ձև էր ստացել և ռուսների խոստմունքներն այն աստիճան անկասկած էին համարվում, որ Դաւիթ-բէկը, որքան էլ ցանկանար, ծածկել չէր կարող։ Նա համարձակ պատասխանեց, թէ այդ բոլորը կատարում է թագաւոր Պետրոս մեծի հրամանով. այն ժամանակ օսմանցիները փութապէս սկսեցին գրաւել իրանց սահմանակից պարսկական երկիրները և տիրեցին Երևանից սկսած մինչև Թաւրէզ, որպէսզի արգելք դնեն մեծ թագաւորի արշաւանքի յաջողութիւնների դէմ։

Դաւիթ-բէկը և հայոց միւս մելիքները,—տեսնելով օսմանցոց ուժերի մօտենալը, որ իրանց նպատակներին միանգամայն վտանգ էր սպառնում,—շտապով այդ մասին տեղեկութիւն տուին Պետրոս մեծին, խնդրելով որ չուշանայ, այլ փութացնէ իւր արշաւանքը։ Կայսրն այս ան-

*) Դա միևնոյն անձնաւորութիւնն է, որ մեր «Դաւիթ-բէկ» անունով վէպի մէջ ներկայանում է որպէս հերոս։

գամ չուշացաւ. նա իսկոյն հրամայեց իւր զօրքերին (թւով 30,000) յառաջ խաղալ դէպի պարսից սահմանը, իսկ ինքը, զօրքերի ճանապարհ ընկնելուց յետոյ, անձամբ գնաց Դերբէնդ (1722 թ. օգոստոսի 23)։

Մինչև Պետրոս մեծի Դերբէնդ հասնելը, հայերն ու վրացիները, առաջուց բանակ դրած Գանձակ քաղաքի մօտ, սպասում էին ընդունելու կայսրին։ Վրաց զօրքերը գտնվում էին Ճահնաւազ-Գիօրգիի երկրորդ յաջորդ Վախթանգի հրամանատարութեան ներքոյ, իսկ հայոց զօրքերը Դաւիթ-բէկի հրամանատարութեան ներքոյ։ Երկու կողմերի զօրքերի թիւը հասնում էր 52,000 հոգու։ Հայոց բանակի մէջ գտնվում էր հայոց շարժման պարագլուխ Գանձասարի Եսայի կաթողիկոսը *)։ Բայց այդ փառաւոր պատրաստութիւնը՝ թէ հայոց և թէ վրաց կողմից, մնաց անգործադրելի, որովհետև յանկարծ մի տխուր լուր ստացւեցաւ, որ կայսրը Դերբէնդից վերադարձել է Հաշտարխան և այնտեղից Ռուսաստան։

Կայսրի անակնկալ վերադարձի պատճառները բացատրում էին նրանով, որ մրրիկը Կասպից ծովի վրայ մեծ

*) Այդ երևելի հոգևորականը, որ իւր ժամանակի անցքերի ոչ միայն ականատեսը, այլև գլխաւոր գործիչն էր, օրագրութեան ձևով գրեց բոլոր անցքերի մանրամասն և ընդարձակ պատմութիւնը։ 1839 թուին Բաղդասար միտրապօլիտը Շուշի քաղաքում տպագրել տուեց այդ պատմութիւնը, բայց սաստիկ համառօտած և անխնայ կերպով կրճատած։ Մենք այժմ աւելորդ ենք համարում բացատրել, թէ ինչ նպատակով է կատարել հանգուցեալ միտրապօլիտը այդ գրականական սպանութիւնը, միայն այսքանը կ'ասենք, որ Եսայի կաթողիկոսի պատմութեան իսկականը շատ ընդարձակ է եղել, ինչպէս երևում է այդ մեր ձեռքը հասած մի գրչագիր օրինակից, որ դժբաղդաբար կիսով չափ փտած է։ Ցանկալի կլինէր, որ գտնուէր այդ աշխատութեան ամբողջը, և դա առատ նիւթ կտար մեր նոր պատմութեան։

մասամբ ոչնչացրեց նրա նաւերը, որոնք զօրքերի համար պաշար էին կրում. և կայսրը վախեցաւ իւր զօրքերի ապահով լինելուց, եթէ նրանց դուրս բերէր Հայաստանի կողմերի ցամաքի վրայ։ Բայց այսքանը ճիշտ է, որ նա Հաշտարխանից ուղարկեց մի քանի գունդ, որոնք գնդապետ Ձիպովի և զօրապետ Մատիւշկինի առաջնորդութեամբ ոտք կոխեցին Կասպից ծովի հարաւային եզերքի վրայ և գրաւեցին մի քանի պարսկական գաւառներ, որպէս էին՝ Գիլանը, Մազանդարանը, Աստրաբադը և Բագուն։

Հայոց և վրաց զօրքերը՝ տխուր, սրտաբեկ, խաբուած իրանց յոյսերի մէջ, վերադարձան իրանց տեղերը։ Վախթանգը գնաց Թիֆլիզ և աղէտալի դէպքերի պատահեց *), իսկ Դաւիթ-բէկը գնաց դէպի Սիւնեաց աշխարհը։

VII

Այդ անյաջողութիւնը սաստիկ վատթարացրեց հայերի սկսած գործը։ Մինչև այնօր նրանք պարծենում էին ռուսներով, սպառնալիքներ էին կարդում մահմեդականներին մեծ թագաւորի անունով, բայց հէնց որ մահմեդականները

*) Նազար-Ալի-խանի (Հերակլ I) որդի Մահմադ-Ղուլի-խանը (Կոստանդին II), որ իւր հօր և եղբօր Իմամ-Ղուլի-խանի (Դաւիթ III) նման մահմեդականութիւն ընդունելով, ստացել էր պարսից շահից Կախէթիայի իշխանութիւնը,—այդ չարագործը, գնաց լէզգիների գլխաւոր Ալի-սոլթանին, խոստանալով նրա զօրքերի իւրաքանչիւրին 3 թուման վարձ տալ, եթէ նրանք կ՚օգնեն իրան Թիֆլիզին տիրելու և Վախթանգին սպանելու գործում։ Լէզգիները կատարեցին նրա խնդիրքը, Թիֆլիզը գրաւեցին, և Վախթանգը փախաւ դէպի Իմերէթիայի կողմերը։ Բայց Մահմադ-Ղուլի-խանը չկարողանալով վճարել իւր խոստացած վարձատրութիւնը, թոյլ տուեց որ լէզգիները դրա փոխարէն կողոպտեն Թիֆլիզը, և ամբողջ քաղաքը բարբարոսների աւարառութեան զոհ դարձաւ։

նկատեցին, թէ այդ բոլորը երևակայական ցնորք էր, ըսկսեցին աւելի կատաղութեամբ բռնանալ քրիստոնեաների վրայ։

Հէնց միևնոյն ժամանակ (1723), երբ ռուսները տիրեցին պարսից ծովեզերեայ գաւառները, օսմանցիք սկսեցին յառաջ խաղալ դէպի Հայաստանի խորքը։ Տիրելով Նախիջևանը, Երևանը, Թիֆլիզը և Գանձակը, նրանք հասան Ղարաբաղին։

Սարի-Մուստաֆա փաշան, որ դէպի Ղարաբաղի կողմերն ուղարկուած օսմանցոց գնդերի հրամանատարն էր, նստել էր Գանձակ քաղաքում և իւր զօրքերը տարածել էր դէպի ամեն կողմ։ Հայոց մելիքներն այժմ սարսափելով տեսան, որ թուլացած, ուժից ընկած պարսիկների փոխարէն յայտնուեցաւ մի նոր և աւելի զօրաւոր թշնամի, որ կարող էր ոչնչացնել իրանց բոլոր յոյսերը։

Նրանք իրանց դաշնակից Վախթանգի *) հետ փորձեցին երրորդ անգամ դիմել կայսրին՝ օգնութիւն խնդրելով օսմանցիների դէմ։ Բայց կայսրն այդ ժամանակ այլևս վերականգնեալ Հայաստանի անկախութեան վրայ չէր մտածում, այլ մտածում էր աւելի նրա վրայ, որ իւր նոր գրաւած պարսկական ծովեզերեայ երկրները՝ Գիլանը և Մազանդարանը բնակեցնէ մի քրիստոնեայ և հաւատարիմ ժողովրդով, որպէս էին հայերը։ Այդ ժողովրդի ընտիր զօրապետները իրանց հայկական գնդերով նպաստեցի նրան յիշեալ երկրները տիրապետելու ժամանակ, այդ ժողովրդից դուրս եկած խելացի քաղաքագէտները ճանապարհ ցոյց տուին նրան, առաջնորդեցին և համարեա առանց պա-

*) Թիֆլիզը գրաւուած լինելով օսմանցիներից, Վախթանգը այդ ժամանակ հալածուած էր իւր հայրենիքից և գտնվում էր Իմերէթիայի կողմերում, յետոյ բոլորովին յուսահատուած՝ իւր ընտանիքով գնաց Մոսկուա (1724)։

տերազմի գրաւեցան յիշեալ երկրները,— այժմ կայսրը յանկանում էր, որ նոյն ժողովուրդը թողնէր իւր սիրելի հայրենիքը, որի վերածնելութեան մասին այնքան ոգևորուած էր, և գաղթէր մի անծանօթ և հեռու աշխարհ: Այդ ժողովուրդը պէտք էր այդ նոր աշխարհի համար. նա հաւատարիմ էր, հլու էր և՝ որ գլխաւորն է, նրա ձեռքումն էր արևելքի վաճառականութիւնը, և նրա միջոցով մեծ կայսրը կարող էր իրագործել իւր մեծ նպատակները՝ արևելքի վաճառականութիւնը կապել Եւրոպայի հետ Ռուսաստանի վրայով և իւր պետութեանը մի նոր կեանք տալ:

Բայց որպէս հայերը, նոյնպէս և վրացիները չէին ցանկանում կայսրի պաշտպանութիւնը խնդրել իրանց հայրենիքի փրկութեան համար: Նրանք աւելի բարւոք էին համարում մնալ իրանց հայրենիքում, միայն ազատ լինել մահմեդական լծից:

Իսկ այդ միջոցներում կատարուեցան մի քանի դիպլոմատիկան կապակցութիւններ, որոնք իսպառ զրկեցին թէ հայերին և թէ վրացիներին իրանց բաղձանքներից:

Հէնց նոյն ժամանակ, երբ կայսրը Հաշտարխանից վերադարձաւ Ս. Պետերբուրգ (1723 թ. 3 սեպտեմ.), այնտեղ եկաւ Շահ-Թահմազի *) դեսպանը, ռուսաց և պարսից մէջ խաղաղութեան դաշն կապուեցաւ, որի հիման վրայ պարսիկները թողեցին ռուսների տիրապետութեան ներքոյ Դերբէնդ և Բագու քաղաքները, այլև Գիլանի, Մազանդարանի և Աստրաբատի նահանգները, իսկ կայսրը իւր կողմից պարտաւորուեցաւ զօրք ուղարկել Շահ-Թահմազին օգնելու համար աւղանների և օսմանցիների դէմ: Թէև այդ դաշնագրին վերջը չստորագրեց Շահը, այսուամենայ-

*) Շահ-Թահմազը Շահ-Սուլթան-Յուսէինի որդին էր։

նիւ, օսմանցիները սաստիկ վրդովուեցան, երբ նկատեցին ռուսների միջամտութիւնը պարսից գործերի մէջ: Բայց կայսրը հանգստացրեց նրանց, Բ. Դրան հետ կապած իւր դաշնագրութեամբ (1724 թ. 12 յունիսի), որի հիման վրայ համաձայնուեցաւ, որ օսմանցիք տիրէին Վրաստանին, ստորին Դաղստանին, և հայոց նահանգներին, որպէս էին՝ ամբողջ Ատրպատականը, Նախիջևանը, Երևանը, Գանձակը, Ղարաբաղը, և այլն, մինչև Շիրվանի մի մասը: Այդ դաշնագրութեան զօրութեամբ այնուհետև իզուր էին հայերի յոյսերը Ռուսաստանից օգնութիւն սպասել, որովհետև որքան էլ ցանկանային ռուսները, չէին կարող օգնել:

Այդ էր պատճառը, որ երբ հայոց կաթողիկոսները և մելիքները կրկին և կրկին անգամ դիմեցին Պետրոս մեծին, իւր հրովարտակով (1724 թ. 10 նոյեմ.) կայսրը բարեհաճեց հայերին ընդունել իւր բարձր հովանաւորութեան ներքոյ, և ամենաողորմածաբար հրամայեց Դերբէնդի բերդապահ գեներալ Կրօպօտովին, որ հայերին բնակութեան տեղ տայ Սուրբ Խաչ բերդի մօտ, Սուլակ, Ագրախանա և Թերէք գետերի ափերի մօտ: Միևնոյն ժամանակ կայսրի կանցլեր գրաֆ Գաւրիլօ Գոլովկինը գաղտնի հրահանգներ է ուղարկում իրանց նոր գրաւած պարսկական նահանգների կառավարիչներին, որ համոզեն հայերին թողնել իրանց հայրենիքը և գաղթել Կասպից ծովեզերեայ երկրները, որպէս էին Գիլանը և Մազանդարանը, որովհետև օսմանցոց Բ. Դրան հետ կապած դաշնագրի պատճառով կայսրը չէ կարող օգնել հայերին, քանի որ նրանք իրանց հայրենիքումը կմնան: Դեռ դրանից առաջ Կասպից ծովեզերքի կառավարիչ գեներալ Մատիւշկինը հրաման էր ստացել, որքան կարելի է աննկատելի կերպով աշխատել մաքրելու Գիլանը և Մազանդարանը մահմեդականներից, հանդարտ կերպով ոչնչացնելով նրանց, որպէս զի յետոյ կարելի

լինի նրանց տեղը լցնել հայ գաղթականներով։

Բայց Պետրոս մեծի վաղահաս մահը (1725 թ. 28 յունվարի) թողեց Ղարաբաղի հայերի գաղթականութեան խնդիրն անկատար։ Կայսրի մահից յետոյ ռուսաց գահի վրայ նստեց նրա ամուսինը՝ Եկատերինա I., որի թագաւորութեան ժամանակ հայերի վիճակն աւելի ծանրացաւ։

Թէև Պետրոս մեծը չկարողացաւ իր կողմից օգնել հայերին մահմեդականների դէմ, այսուամենայնիւ մեծ թագաւորի մահուան բօթը հայերին սուգի մէջ գցեց։ Հայոց Եսայի և Ներսէս կաթողիկոսները և Ղարաբաղի մելիքները Դերբէնդից ուղարկեցին մի պատգամաւորութիւն կայսրուհի Եկատերինա I-ինի մօտ՝ յայտնելու իրանց խորին ցաւակցութիւնը։ Այդ պատգամաւորութեան գլխաւորներն էին Իւզբաշի Բաղին, Չելեբի Քեօխվան և ուրիշ նշանաւոր անձինք։ Նրանք միևնոյն ժամանակ յայտնեցին, որ Սարի-Մուստաֆա փաշան 40 հազար հոգով յարձակուեցաւ Ղարաբաղի վրայ, և հայերը ութն օր յաւահատ կռուով պատերազմելով, հազիւ կարողացան յաղթել օսմանցիներին։ Պատգամաւորներն աւելացրին, թէ դժուար կլինի հայերին երկար պաշտպանուել, եթէ նրանց օգնութիւն չհասնի։

Կայսրուհին իր հրովարտակով (1726 թ. 21 փետրվարի) բարեհաճեց արտայայտել իր ողորմածութիւնը և համակրութիւնը դէպի հայերը, իսկ ինչ որ գործին էր վերաբերում, գրուեցաւ որ Չելեբի Քեօխվան բերանացի կըհաղորդէ։

Հայոց պատգամաւորներին պատուիրած էր հաղորդել Ղարաբաղի ապստամբներին, որ նրանք հաստատ մնան իրանց ապստամբութեան շարժման մէջ, շարունակեն իրանց կռիւները մահմեդականների դէմ, շուտով նրանց օգնութեան կըհասնեն վրաց Վախտանգ իշխանը և գեներալ Դոլգորուկի իշխանը։

Այնուհետև հայերը մի քանի անգամ կրկնեցին իրանց խնդիրները, բայց ոչ ոք նրանց օգնութեան չհասաւ, ուստի ստիպուած էին իրանց սեպհական ուժերով պատերազմել թշնամու դէմ։ Բայց երևի հայերին վիճակուած չէր մի լաւ օր տեսնել, որովհետև Աննա Իվանովնա կայսրուհու թագաւորութեան ժամանակ (1732) յայտնուեցաւ սարսափելի Նադիրը և Պարսկաստանում նշանաւոր փոփոխութիւններ կատարուեցան, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան հայերի սկսած գործի ապարդիւն մնալու վրայ։

VIII

Նադիրը *) յայտնուեցաւ այն ժամանակ, երբ, որպէս տեսանք վերևում, Պարսկաստանը բաժան-բաժան էր եղած և պարսից գահի վրայ նստում էին օտարները։ Պարսկաստանի մի մասին տիրում էին աւղանները, մի մասը գրաւել էին ռուսները, իսկ պարսկական Հայաստանը, Վրաստանը և մի քանի այլ նահանգներ օսմանցիների ձեռքումն էին։

Նադիրը յայտնուեցաւ ինչպէս մի կատաղի փոթորիկ, որ զօրաւոր ձեռքով նախ մաքրեց Պարսկաստանն աւղաններից, տիրեց Հնդկաստանի մի մասին, յետոյ իր սուրը դարձրեց օսմանցիների դէմ։ Նրա զարմանալի յաջողութիւնները նոր ոյժ, նոր խրախոյս ներշնչեցին Ղարաբաղի հայոց մելիքներին։ Այդ վերջիններն սկսեցին իրանց սեպհական ուժերով մաքրել իրանց հայրենիքը օսմանցիներից։

Այդ ժամանակ օսմանցիների սերասկէր (գլխաւոր հրա-

---

*) Նադիրը կոչվում է և Թահմազ-Ղուլի-խան. նա սկզբում մի հասարակ աւազակապետ էր, ասպատակութիւններ էր գործում Խորասանի անապատներում. յետոյ Շահ-Թահմազի մօտ զօրապետ և ապա ընդհանուր սպարապետ դարձաւ. վերջը Շահ-Թահմազին սպանել տալով, ինքը թագաւոր եղաւ։

մանատար) Սարի-Մուստաֆա փաշան իր գլխաւոր բանակով գետեղուած էր Գանձակ քաղաքում, իսկ մնացած զօրքերը տարածել էր Ղարաբաղի մելիքների երկրներում: Մելիք-Աւանը, որ բոլոր միւս մելիքների գահերէցն էր, օգուտ քաղելով փաշայի դէպի ինքն ունեցած բարեկամական յարաբերութիւններից, և առ երես հնազանդութիւն ցոյց տալով, գաղտնի կերպով մի մեծ դաւադրութիւն սարքեց: Ղարաբաղի բոլոր մելիքները միաբանուեցան նրա հետ: Ապստամբութեան նշանաբանը բովանդակւում էր հետեւեալ խօսքերի մէջ. «պահպանեցէք հին սերմերը, որպէս բուսնելու յոյս տուողներ, և ոչնչացրէք նորը, որ պտուղ չէ խոստանում». այսինքն՝ խնայել պարսիկներին և կոտորել օսմանցիներին: Կոտորածը պէտք է կատարուէր մեծ պասի առաջին գիշերուայ մէջ: Այդ Բարթօղոմէեան գիշերում հայերը ոչնչացրին թէ Ղարաբաղի և թէ Գանձակի կողմերում գտնուած բոլոր օսմանցի զօրքերին: Զմեռուայ ցրտի պատճառով զինուորները հայերի տներումն էին բնակւում: Ամեն մի տանուտէր սպանեց իր ինքնակոչ հիւրին: Սարի-Մուստաֆա փաշան հազիւ կարողացաւ ազատուել, փախչելով Երևան: Այդ յիշատակի արժանի անցքը կատարուեցաւ 1733 թուին:

Որպէս մի փոքրիկ միջանկեալ, ես աւելորդ չեմ համարում նկարագրել մի դէպք, որ նոյն գիշերը տեղի ունեցաւ Վարանդայի Աւետարանոց գիւղում: Դրա մէջ փայլում է հայ կնոջ հերոսութիւնը: Աւետարանոցը Վարանդայի մելիքութեան բերդաւանն է: Այստեղ իր զինուորներով գետեղուած էր օսմանցիների զօրապետներից մէկը, որ կոչւում էր Սուլէյման-բէկ: Դա լսելով տեղային մելիք-Յուսէինի դստեր՝ Գայիանէի գեղեցկութիւնը, մտածում է տիրապետել նրան: Բայց չհամարձակելով յայտնի բռնութիւն գործ դնել, առաջարկում է ամուսնանալ Գայիանէի

հետ: Հայրն ու մայրը անպատկառ մահմեդականին մերժելու համար խոստանում են տալ աղջիկը, բայց միշտ յետաձգում են, յայտնելով թէ հայերի ազգային և կրօնական սովորութիւնների համեմատ պէտք է դեռ ևս այս և այն ծէսերը կատարուած լինին: Այսպէս օրըստօրէ ժամանակ են խլում, մինչև հասնում է նշանակեալ գիշերը: Սկսւում է կոտորածը: Մելիք-Յուսէինը այն գիշերը տանը չէ լինում. նա գնացել էր իր գաւառի միւս տեղերում գործելու համար: Աւետարանոցի կոտորածին առաջնորդում էր նրա քաջասիրտ կինը՝ Աննա-խաթունը *): Երբ այդ զինուած հերոսուհին աւանի փողոցների մէջ կոտորել էր տալիս օսմանցիներին, այդ միջոցին նրա ինքնակոչ փեսացուն՝ Սուլէյման-բէկը, իր կեանքն ազատելու համար, փախչում է դէպի Աննա-խաթունի տունը: Նոյն րոպէում Գայիանէն, նոյնպէս զինուած, կանգնած է լինում տան դրան մօտ: Տեսնելով իր ատելի փեսացուին ներս մտնելիս, օրիորդը իր խէնջարը խրում է նրա սրտի մէջ...: Այդ սպանութիւնից յետոյ Գայիանէն իր անձը նուիրեց կուսակրօնութեան և մտաւ Աւետարանոց գիւղի կուսանաց անապատը **):

Աննա-խաթունի և Գայիանէի քաջագործութեան յիշատակը պահպանուած է միայն ժողովրդական աւանդութեան մէջ, իսկ Մելիք-Յուսէինի յիշատակը մնում է արձանագրուած իր գերեզմանաքարի վրայ, որ գտնւում

---

*) Աննա-խաթունը Տիզակի գաւառի Մելիք-Աւանի (Մելիք-Եգանի) քոյրն էր. նոյն անձի, որ սարքեց ընդհանուր ապստամբութիւնը:

**) Իմ 1881 թուի ճանապարհորդութեան ժամանակ Աւետարանոց գիւղում ինձ յաջողուեցաւ տեսնել մի հրաշալի գրչագիր աւետարան, որ գրուած էր նոյն Գայիանէի ձեռքով:

է Աւետարանոց բերդի կուսանաց անապատի գաւթում *)։

Ղարաբաղի մելիքների կռիւները օսմանցիների հետ մի մեծ տեղ են բռնում այդ ժամանակի պատմութեան մէջ, որ դեռ ևս ոչ ուսումնասիրուած է և ոչ տպագրուած։ Մենք այժմ այսքանը միայն կ՚ասենք, որ հայերը որի ուժով մաքրելով իրանց հայրենիքը օսմանցիներից, բաւական հեշտացրին Նադիրի յաղթութիւնները օսմանցիների դէմ, և պարսիկ սպարապետը թագաւոր դառնալուց յետոյ, որպէս կը տեսնենք, չմոռացաւ հայոց մելիքների ծառայութիւնները. նա աւելի երախտահատոյց գտնուեցաւ, քան թէ քրիստոնեայ կայսրները։

Մինչ Ղարաբաղում հայոց մելիքները ջարդում էին օսմանցիներին, հէնց միևնոյն ժամանակներում Սիւնեաց իշխան Դաւիթ-բէկը Ղափանի կողմերում հրաշքներ էր գործում։ Մահմեդական տիրապետողների բերդերը մինը միւսից յետոյ ընկնում էին նրա ահեղ զօրութեան առջև։ Հալիձորի բերդի պաշարման ժամանակ մի բուռն քաջերով ցրուեց նա օսմանցիների աւելի քան քսան հազար զօրքը **). Ղափանը, Բարգուշատը, Զանգուրը, Գենուազը և Գողթանը բոլորովին մաքրեց օսմանցիներից. խլեց նրանցից Մեղրի և Օրդուբադ քաղաքները։ Այդ բոլո-

*) «Այս է տապան Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Յուսէինին. թվ. ռ. ճ. ձ. ե. 1185 (1736)։

«Ոգեմ բանս գովեստի ի վերայ Մելիք-Յուսէինի. զոր գրեցի այս տապանի. սա էր տէր երկրին Վարանդի. երեսուն և հինգ մասն գեղի. սա էր հացով սեղանով լի. ողորմէր ամեն ազգի. կերպարանօք էր գովելի. սա ոչ ետ հարկ թագաւորի. ամուր պարիսպ էր աշխարհի. թագ պարծանք հայոց ազգի. պատերազմեաց հետ օսմանցի. ջոյժ կոտորեաց ազգէն տաճկի»։

**) Պատմութեան մէջ 70 հազար է նշանակուած. այդ թիւը չափազանց է։

րը խլելով պարսից Շահ-Թահմազը, *) թէ որքան նա օգնեց իրան, պատերազմելով թշնամիների հետ, վարձատրեց քաջի յաղթութիւնները՝ զանազան արտօնութիւններ շնորհելով Դաւիթ-բէկին։ Նա ուղարկեց բէկին մի գլօշակ, մի պատուական նժոյգ և թագաւորական ֆիրմանով հաստատեց, որ նա ժառանգաբար իւր տիրած երկրների տէրը և իշխանաց իշխանը լինի. նա իրաւունք տուեց բէկին իւր անունով դրամ կտրելու։ Բայց յանկարծակի մահը թոյլ չտուեց այդ հերոսին երկար վայելելու իւր յաղթութիւնների փառքը...։ 1728 թուին դաւաճանի թոյնը նրան գերեզման տարաւ։ Միևնոյն տարուայ մէջ մեռան Ղարաբաղի երեք նշանաւոր գործիչները՝ Մելիք-Բէգլարեան Աբով II-ը, Մելիք-Իսրայէլեան Մելիք-Եսային և Գանձասարի Եսայի կաթողիկոսը։ Մելիք-Աբովին յաջորդեց իւր որդի Մելիք-Իսաքը, Եսայի կաթողիկոսին յաջորդեց Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսը, իսկ Մելիք-Եսայուն յաջորդեց իւր եղբայր Ալլահ-Ղուլին, որ իւր քաջագործութիւնների համար Նադիրից ստացաւ սուլթանութեան տիտղոս և կոչուեցաւ Ալլահ-Ղուլի-սուլթան։

Նադիրը, յաջողութեամբ առաջ տանելով իւր արշաւանքները, մի քանի տարուայ մէջ հետզհետէ խլեց այն բոլոր պարսկական նահանգները, որ ռուսները և օսմանցիները տիրել էին—Ատրպատականը, Նախիջևանը, Երևանը, Վրաստանը, Գանձակը, և այլն։ Նրա յաղթութիւնները երկիւղի մէջ դրին մինչև անգամ ռուսաց կառավարութեանը, որ առանց պատերազմի, Աննա Իվանովնա կայսրուհու օրերում (1732—1735), վերադարձրեց Նադիրին Պետրոս մեծի գրաւած բոլոր պարսկական գաւառ-

*) Պէտք չէ մոռանալ, որ մինչև Շահ-Թահմազի սպանուիլը, Նադիրը շահի սպարապետն էր։ Շահի մահից յետոյ նա թագաւոր դարձաւ։

ները—Գիլանը, Մազանդարանը, Աստրաբադը, Բագուն և Դերբէնդը։

Իւր յաղթութիւնները փառաւոր կերպով կատարելուց յետոյ, 1736 թ. ձմեռը, Նադիրը բանակ դրեց Երասխ գետի մօտ, Մուղանի լայնատարած անապատում։ Այնտեղ կանչուած էին Պարսկաստանի բոլոր նահանգապետները, այնտեղ էր Կախէթիայի վալին՝ Իմամղուլի-խանի (Դաւիթ III) որդի մահմեդականացած Ալի-Միրզա-խանը. այնտեղ հրաւիրուած էր Ս. Էջմիածնի Աբրահամ կաթողիկոսը *) և Ղարաբաղի Ներսէս կաթողիկոսը. այնտեղ էին Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի հայոց բոլոր մելիքները և քալանթարները. այնտեղ էր Թիֆլիզի իշխան Մելիք-Աշխալ-բէկի որդի Աղա-բէկը (իշխան Բէհբութեանների պապը), որ մասնակցեց Նադիրի հնդկական արշաւանքներին։

Նոյն տարուայ փետրվար ամսում, Մուղանի անապատում, կատարուեցաւ Նադիրի թագադրութեան հանդէսը։ Հայոց Աբրահամ կաթողիկոսը օրհնեց նրա սուրը և իւր ձեռքով կապեց պարսից նոր թագաւորի մէջքին։

Թագադրութիւնից յետոյ Նադիր-շահը՝ այնտեղ հաւաքուած աւագներին զանազան պաշտօններ և աստիճաններ շնորհելու ժամանակ, վարձատրեց և հայոց մելիքների կատարած քաջագործութիւնները, որոնք այնքան ե-

*) Այդ Աբրահամ կաթողիկոսը, որ կոչվում էր Կրետացի, վայելում էր Նադիրի առանձին սէրը և համակրութիւնը։ Պարսից քաջ զօրապետը նրա մօտ հիւր եղաւ Ս. Էջմիածնի վանքում, և իւր արշաւանքների ժամանակ, Հայաստանի և Վրաստանի կողմերում, նրան չէր հեռացնում իւր բանակից։ Այդ հեշտացրեց կաթողիկոսին աւելի մօտից ծանօթանալ նրա գործողութիւնների հետ և օրագրութեան ձևով թողեց մեզ մի հետաքրքիր պատմութիւն, որ կոչվում է «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նադիր-Շահին պարսից», տըպուած Ս. Էջմիածնում 1870 թ.

ռանդ էին ցոյց տուել օսմանցիներին կոտորելու գործում։ Առանձին ֆիրմաններով նրանց կրկին հաստատեց իրանց հայրենական իշխանութիւնների մէջ՝ իրաւունք տալով իւրաքանչիւրին անկախ կերպով կառավարելու իւր երկիրը, վճարելով ամեն տարի մի որոշեալ քանակութեամբ հարկ։ Այնուհետև մելիքները կախումն ունենալով միայն շահից, իսկ իրանց իշխանութեան մէջ վայելելով ինքնավարութեան կատարեալ իրաւունքներ, որպէս վ ա լ ի ն ե ր (աւատական իշխաններ), աւելի հանգիստ և ապահով դրութիւն ստացան և սկսեցին աւելի ևս զօրացնել իրանց ուժերը։

Մի քանի մելիքներ առանձին աստիճաններ ստացան. Ջրաբերդի Մելիք-Իսրայէլի որդի Մելիք-Ալլահ-Ղուլին ստացաւ ս ո ւ լ թ ա ն ի աստիճան *) և կոչուեցաւ Ալլահ-Ղուլի-սուլթան։ Շահի առանձին շնորհը վայելում էր Տիզակ գաւառի Մելիք-Աւանը (Եգանը), որին շահը «բաբալըղ» էր կոչում, որ նշանակում է հոգևոր հայր։ Մելիք-Աւանը Ղարաբաղի մելիքների գահերէցն էր. դա մի ամբողջ տարի իւր ծախքով կերակրեց շահի զօրքերին. դա էր պարագլուխը մեր վերև յիշած սարսափելի կոտորածի, որով մի գիշերուայ մէջ հայերը ոչնչացրին Ղարաբաղում գտնուած բոլոր օսմանցիներին։ Շահը շնորհեց նրան խ ա ն ու թ ե ա ն աստիճան, կոչուեցաւ Մելիք-Աւան-խան և կարգեց Խամսայի հինգ մելիքութիւնների գլխաւոր, դրա մօտ էին հաւաքվում վճարելիք հարկերը և դրա ձեռքով էին յանձնվում արքունի գանձարանին։

*) Ս ո ւ լ թ ա ն չպէտք է հասկանալ այն մտքով՝ ինչ նշանակութիւն որ ունի այժմ Թիւրքիայում։ Սուլթանը այժմեան Պարսկաստանում զինուորական աստիճան է, իսկ Նադիրի ժամանակ այդ տիտղոսը տրվում էր առանձին գաւառների կամ փոքրիկ վիճակների տիրապետողներին։

Երբ Աբրահամ կաթողիկոսը Մուղանի անապատում, Շահի խնդրելով, Երասխ գետի ափի մօտ կատարեց սուրբ ծննդեան և Մկրտութեան տօնի հանդէսը, ներկայ էին բացի քրիստոնեաներից մինչև երեք հարիւր պարսիկ ազնուականներ, շէյխուլիսլամը, դադին և այլ նշանաւոր անձինք: Բոլորի մէջ միայն Մելիք-Աւան-խանն արժանացաւ այն պատւին, որ խաչը ջրից դուրս հանեց:

Աւելորդ չեմ համարում յիշել մի փոքրիկ դէպք, որ ինքն ըստ ինքեան թէև շատ ծաղրական է, բայց ցոյց է տալիս, թէ ո՛ր աստիճան հայոց այդ աւագը մտերիմ և բարեկամ էր Պարսկաստանի ահարկու թագաւորին:

Նադիր-Շահը սովորութիւն ունէր շատ-շատ ճաշել Մելիք-Աւան-խանի տանը, որի ճոխ սեղանը հռչակուած էր, թէ այնտեղ ամեն բարիք կարելի է գտնել: Մի անգամ Շահը կամենալով փոքր ինչ ամաչացնել իւր հիւրընկալին, պատւիրեց ճաշի համար թարմ սունկ պատրաստել: Թէև ձմեռն էր, թէև տարւայ այն ժամանակին Ղարաբաղի անտառներում թարմ սունկ գտնելն անկարելի բան էր, այսու ամենայնիւ Մելիք-Աւան-խանը ցոյց տուեց, թէ Շահի փափագը կատարուած կլինի: Ճաշի ժամանակ, երբ թագաւորը պահանջեց ցանկացած կերակուրը, մելիքի սպասաւորները դրեցին նրա առջև մի մատուցարան, լիքը դիզած ոսկիներով:—Ես սունկ էի պատւիրել, ասաց Շահը:—Մենք առանց սունկի եւս կարող ենք կըշտանալ, – պատասխանեց մելիքը.—իսկ ձեր զինւորներին ոսկի է հարկաւոր թշնամու հետ պատերազմելու համար: Շահին խիստ հաճոյ թուեցաւ մելիքի պատասխանը և ընդունեց ոսկիները:

Մելիք-Աւան-խանը յարգուած էր և ռուսաց կառավարութիւնից: Աննա Իվանովնա կայսրուհու թագաւորութեան ժամանակ (1734) նա իւր աստիճանաւորներով

գնաց Ռուսաստան, փառաւոր ընդունելութիւն գտաւ և արժանացաւ կայսրուհու առանձին ուշադրութեանը: Պետրոս մեծի պարսկական արշաւանքների ժամանակ, իւր ցոյց տուած նշանաւոր ծառայութիւնների համար Մելիք-Աւան-խանն ստացաւ գեներալ-մայօրի աստիճան և զանազան շքանշաններ: Նրա ամբողջ շքախմբին (սվիտա) նոյնպէս աստիճաններ, շքանշաններ շնորհեցին և թօշակ նշանակեցին:

Յետոյ Եղիսաւետա Պետրովնա կայսրուհու թագաւորութեան ժամանակ Մելիք-Աւան-խանը, արդէն ծերացած հասակում, կրկին անգամ գնաց Ռուսաստան, իւր ընտանիքն էլ հետը տանելով: Ղարաբաղի երևելի տիրապետողը կրկին անգամ արժանացաւ զանազան շքանշանների և պատւի, թէև նրա այցելութիւնների նպատակը իւր անձնական փառասիրութիւնը չէր, այլ նա աշխատում էր իւր դժբախտ հայրենիքի փրկութեան համար: Մեծն Պետրոսի օգոստափառ դուստրը ցանկացաւ ծերունի հերոսին անձամբ տեսնել Ս. Պետերբուրգում և նշանակեց առանձին աուդիէնցիա: Գրաֆ Մինիխը և գրաֆ Րազումովսկին Մելիք-Աւան-խանին իւր ամբողջ ընտանիքի հետ ներկայացրին կայսրուհուն: Ընդունելութեան ժամանակ կայսրուհին տեսնելով մի մանկահասակ գեղեցկուհի, որ մելիքի թոռն էր, այնքան սիրեց նրան, որ ցանկացաւ պահել իւր արքունիքում իբրև պալատական օրիորդ (ֆրէյլին): Մինչև Աւան-խանի Ս. Պետերբուրգից հեռանալը Կայսրուհին պահեց նրան իւր պալատում, և միայն ծերունի մելիքի շատ խնդրելու համար թոյլ տուեց օրիորդին, որ իւր ծնողների հետ վերադառնայ իւր հայրենիքը, պարգևելով նրան շատ ընծաներ:

Վերադառնալով իւր հայրենիքը՝ Տիզակ, Մելիք-Աւան-խանը երկար չապրեց. նա վախճանուեցաւ 1744 թ. և մարմինը թաղուեցաւ իւր Տող անունով բերդի եկեղեցու

գաւթում։ Նրա մահից յետոյ երէց որդի՝ Մելիք-Արամը միայն մի տարի իշխեց և մեռաւ, որից յետոյ իշխանութիւնը ձեռք առաւ կրտսեր եղբայրը՝ Մելիք-Եսային, որ, ինչպէս յետոյ կտեսնենք, սպանուեցաւ Ջուշիի Իբրահիմ-խանի դաւաճանութեամբ։ Մելիք-Աւան-խանի ժառանգների մեծ մասը դաւաճանութեան զոհ եղան։ Այդ էր պատճառը որ նրա այրի կինը՝ Գոհար-խանումն ստիպուած եղաւ թողնել իւր հայրենիքը և մնացած զաւակների հետ գաղթել Հաշտարխան, որտեղից իւր բնակութիւնը տեղափոխեց Ղզլար, երբ այդ քաղաքը շինուեցաւ։ Մելիք-Աւան-խանի և նրա եղբօր ժառանգներից առաջ եկան իշխան Սմբատեանները, իշխան Մելիքովները և Հայրապետեանները, որոնք մի ժամանակ Հաշտարխանում, Ս. Պետերբուրգում և Մոսկուայում ռուսաց նշանաւոր պաշտօնների մէջ մտան։

IX

Փանահ-խանի յայտնուելը.

Երբ Նադիր-շահը Մուղանի դաշտում իրան պարսից թագաւոր յայտնեց, այդ ժամանակ Կուր գետի աջ եզերքի մօտ գտնուած անտառներում թափառող մի թուրք ցեղից, որ տեղի անունով կոչվում էին ջուանշիրցիք, բաւական մեծ բազմութիւն գաղթեցրեց Խորասանի կողմերը, բնակեցնելով նրանց Սարխաս կոչուած գաւառում։ Ջուանշիրցիք, որպէս հովուական կեանքով ապրող մի ժողովուրդ, իրանց գլխաւոր պարապմունք էին ընտրել խաշնարածութիւնը և աւազակութիւնը։ Երկրի խաղաղութիւնը պահպանելու համար Նադիրն աւելի բարւոք համարեց այդ անհանգիստ, կիսավայրենի ցեղը հեռացնել դէպի Պարսկաստանի խորքերը։

Այդ ցեղի մի տոհմից, որ առանձին անունով կոչվում

էր Սարիջալլու, առաջ եկաւ Փանահ անունով մի մարդ, որ Պարսկաստան գաղթելուց յետոյ շնորհ գտաւ Շահի դռանը և ստացաւ մի աննշան պաշտօն։ Այդ պաշտօնի համար մի այլ արժանաւորութիւն պէտք չէր, բայց միայն ունենալ զօրեղ ձայն և՝ երկրի սովորութեան համեմատ, թագաւորի հրամանները քաղաքի հրապարակներում բարձրաձայն հրատարակել։ Փանահն ունէր այդ արժանաւորութիւնը և թագաւորի մունետիկը դարձաւ, և այնուհետև կոչուեցաւ «ջառչի» Փանահ։ Երկար այդ պաշտօնը կատարում էր նա, բայց մի անկարգութեան համար որ պիտի գլխատման դատապարտուէր, Պարսկաստանից փախաւ և կրկին եկաւ իւր հայրենիքը։ Որպէս յանցաւոր նա անյայտ կերպով թափառում էր Ղարաբաղի անտառներում, աննշան, աստանդական կեանք էր վարում։

Յետոյ դիմեց նա Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սուլթանին և նրա մօտ ապաստան գտաւ։ Սուլթանը նշանակեց նրան իւր գիւղերի վրայ որպէս դարուղա՝ այսինքն տուրքեր հաւաքող։ Թէև Պարսկաստանից մի քանի անգամ սաստիկ հրամաններ ստացուեցան, որ բռնեն Փանահին և յետ ուղարկեն, բայց նա պահպանուելով հայ սուլթանի պաշտպանութեան ներքոյ, ազատ մնաց։

Երբ Խորասանում, գիշերը վրանի մէջ քնած ժամանակ, իւր դրանիկների դաւաճանութեամբ Նադիր-շահը սպանուեցաւ հէնց վրանի պահապանների ձեռքով (1747), այդ ժամանակ պարսից գահը ժառանգելու համար սարսափելի խռովութիւններ բարձրացան. զանազան տեղերում զանազան թագաւորներ նստեցին, նահանգներից շատերն ապստամբուեցան։ Մաշհադի մէջ թագաւորեց նրա թոռը՝ Շահ-Ռուխ կոչուածը. Ատրպատականում թագաւորեց նրա եղբօրորդի Ադիլ-շահը, որի եղբայրը՝ Միրզա-Իբրահիմը յետոյ կուրացնելով հարազատ եղբօրը, ինքը

թագաւոր դարձաւ։ Այդ երկպառակութիւնների ժամանակ, երբ Պարսկաստանում շատ իշխողների պատճառով երկիրն անիշխանութեան մէջ էր գտնւում, Նադիրի Խորասան տարած ջւանշիրցի գաղթականները վերադարձան իրանց հայրենիքը՝ Ղարաբաղի անապատները։

Այդ ժամանակ «ջառչի» Փանահն իրան ազատ զգաց․ այլեւս պատժւելու, գլխատւելու երկիւղ չունէր։ Այդ մարդը, այդ հովուի, անապատների պարզամիտ որդին, երկար տարիներ ապրելով պարսկական բարձր դռան ինտրիգաների մէջ, սովորեց պարսիկների խորամանկութիւնը, վարժւեցաւ նրանց խաբէութիւնների մէջ։

Նա արդէն Ջրաբերդի հզօր մելիքի՝ Ալլահ-Ղուլի-սոլթանի ծառայութեան մէջ բաւական նշանաւորութիւն էր ստացել։ Երբ լսեց Նադիր-շահի մահը և իւր ցեղակիցների վերադարձը Խորասանից, թողեց այդ ծառայութիւնը և մտաւ ջւանշիրցի խաշնարածների մէջ։ Սկզբում նրանց նման կեանք էր վարում, որպէս մի հասարակ հովիւ, բայց յետոյ սկսեց փոքր առ փոքր դէպի իւր կողմը գրաւել միամիտ խաշնարածներին, մինչեւ յաջողւեցաւ նրան հրաժարեցնել տալ ցեղի նախկին տանուտէրին և իրան ընտրել տալ նրա տեղը։

Այդ չնչին պաշտօնը միայն մի առիթ էր, որով Փանահը կարողացաւ փոքր ժամանակում խաշնարածների մի քանի ցեղեր իւր հրամանին ենթարկել։ Բայց նրա փառասիրութիւնը դրանով չյագեցաւ։ Նադիրի մահից յետոյ երբ նրա եղբօրորդի Ադիլ-շահը Թաւրիզում թագաւոր դարձաւ, նա ուղարկեց դէպի Ղարաբաղի կողմերը Ամիր-Ասլան-խան անունով մէկին՝ տեղային խռովութիւնները խաղաղեցնելու համար։ Այդ ժամանակ պարսից շահերն այն անհաստատ դրութեան մէջ էին, որ մի օրուայ համար ևս իրանց վիճակը ապահով չէին համարում։ Այդ պատճառով

շտապելով շուտափոյթ օգուտ քաղել իրանց դիրքից, մի քանի թումանով վաճառում էին պաշտօններ, աստիճաններ, տիտղոսներ, և այլն։ Ջառչի Փանահը նոյնպէս օգուտ քաղելով այդ հանգամանքներից, յիշեալ Ամիր-Ասլան-խանի միջնորդութեամբ ստացաւ Ադիլ-շահից խ ա ն ո ւ թ ե ա ն տիտղոս։

Բայց նա խելացի մարդ էր․ նա մտածում էր ստեղծել մի աւելի հիմնաւոր իշխանութիւն, որի գլուխը ի հարկէ ինքը պէտք է լինէր։ Իսկ այդ նպատակն իրագործելու համար շատ դժուարութիւններ կային․ գլխաւորը իւր ցեղի կենցաղավարութեան պայմաններն էին։

Ջւանշիրցիները, որպէս մի խաշնարած և թափառաշրջիկ ժողովուրդ, ձմեռն անց էին կացնում Կուր գետի աջ ափերի մօտ տարածւած տափարակների վրայ՝ բնակւելով շարժական տաղաւարների մէջ կամ գետնափոր խրճիթներում, իսկ գարնան սկզբից մինչեւ աշնան վերջը սփռւում էին Ղարաբաղի լեռների վրայ, իրանց անասուններն արածացնելու համար։ Զուրկ լինելով հաստատ բնակութիւնից, նրանք զուրկ էին և հողի սեպհականութիւնից։ Ամբողջ Ղարաբաղը գտնւելով հայ մելիքների իշխանութեան ներքոյ, ջւանշիրցիներն ստիպւած էին իրանց ոչխարներից տասանորդ վճարել, որպէսզի թոյլ տրուի իրանց անասուններն արածացնել մելիքների արօտատեղիներում։

Երկրի աշխարհագրական դիրքն այնպէս էր, որ լեռնային անտառապատ բարձրաւանդակները, հովասուն հովիտները, որոնց վրայ ամառային տօթերի ժամանակ կարող էր խաշնարածն ապաստան գտնել, հայ մելիքների ձեռքումն էին։ Իսկ լեռներից սկսւած անջուր, ցամաք տափարակների վրայ, որ տարածվում էին մինչեւ Կուր գետի ափերը, թափառում էին ջւանշիրցիները։ Փանահ-

խանը մտածում էր Ղարաբաղի լեռների վրայ մի տեղում հաստատ ոտքի տեղ ունենալ: Մի ամուր դիրք ռազմագիտական նպատակով նրան պէտք էր իւր նպատակներն իրագործելու համար:

Սկզբում նա գնաց Բայաթ *) և այնտեղ սկսեց մի բերդ հիմնել: Բայց Գիւլիստանի Մելիք-Բէգլարեան Մելիք-Իւսուբը և Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Մելիք-Ալլահ-Ղուլի-սուլթանը, միանալով Շիրվանի Հաջի-Չելէբի անուանով կառավարչի հետ, ոչնչացրին այդ հիմնարկութիւնը: Յետոյ նա սկսեց Շահ-բուլաղի մօտ, Թարնակիւրտ (Տիգրանակերտ) կոչուած աւերակների վրայ մի այլ բերդ կառուցանել Ասկարան անունով: Բայց Գիւլիստանի Մելիք-Իւսուբը, Ջրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սուլթանը և Խաչէնի Հասան-Ջալալեան Մելիք-Ալլահվէրդին, այդ բերդը մօտ գտնելով իրանց երկրների սահմաններին, սկսեցին պատերազմել նրա հետ և դարձեալ ոչնչացրին:

Տեսնելով այդ արգելքները հայ մելիքների կողմից, խորամանկ Փանահ-խանը մտածեց երկպառակել նրանց միաբանութիւնը և այսպիսով թուլացնել նրանց ուժերը, որպէսզի կարողանայ իրագործել իւր նպատակները: Նրան նպաստեցին մի քանի անցքեր, որ կատարուեցան այդ միջոցներում և որոնք սկիզբ դրեցին Ղարաբաղի մելիքութիւնների քայքայմանը...: Այդ էջերն այնքան սխալ տեղ են բռնում Ղարաբաղի մելիքների պատմութեան մէջ, որ մենք աւելորդ չենք համարում մի փոքր ընդարձակ խօսել այդ մասին:

X

Տիզակի Մելիք-Աւան-խանը, Պետրոս մեծի և Նա-

*) Բայաթ աւերակ քաղաքատեղ է Գարգար գետի մօտ:

դիր-շահի սիրելին, Ղարաբաղի մելիքների գահերէցը, վաղուց արդէն վախճանուած էր (1744): Նրա մահից յետոյ Ղարաբաղի իշխանների մէջ չկար մի այնպիսին, որ նրա չափ հանճար և հեղինակութիւն ունենար, որ կարողանար պահպանել մելիքների մէջ խաղաղ ներդաշնակութիւն: Հանգուցեալի երէց որդին՝ Մելիք-Արամը, միայն մի տարի իշխեց: Նա այնքան թոյլ մարդ էր, որ երբ Նադիր-շայի միակ որդին վախճանուեցաւ և հարկաւոր եղաւ շահին մխիթարելու համար մի պատգամաւորութիւն ուղարկել, փոխանակ ինքը գնալու կամ ուրիշ արժանաւոր մարդիկ ուղարկելու, ուղարկեց իւր կնոջը: Խելացի կինը զարմացրեց պարսից բոլոր պալատականներին, երբ իւր շքախմբով, ազգգեստ ներկայացաւ շահին: Իւր մխիթարական ճառից յետոյ, տիկինը, բաւական խորամանկ քաղաքավարութեամբ, մատոյց շահին 6,000 թուման փէշքէշ, ասելով. «Դուք այնքան ողորմած էիք, որ գնահատելով Մելիք-Աւան-խանի ձեզ մատուցած ծառայութիւնները և յարգելով նրա ծերութիւնը, ձեր «բաբալըղ» (հոգւոր հայր) էիք կոչում: Նրա վախճանից յետոյ արժան էր, որ դուք ևս ձեր մասն ստանայիք ձեր հայրացուի ժառանգութիւնից: Եւ ես ահա բերել եմ ձեր բաժինը: Շահին այնքան հաճոյ թուեցաւ այդ ընծան, որ հրամայեց երկու այն չափով պարգևներ տալ նրան իւր գանձարանից և մեծ յարգանքով ճանապարհ դրեց, տիկնոջ ձեռքով ուղարկելով նրա ամուսնու՝ Մելիք-Արամի հաստատութեան ֆիրմանը:

Վերադառնալով Պարսկաստանից, տիկինը գտաւ իւր ամուսնուն վախճանուած: Փանահ-խանի թելադրութեամբ մի դաւաճան հայ թունաւորել էր նրան:

Մելիք-Արամի մահից յետոյ Տիզակի իշխանութիւնը իւր ձեռքն առաւ հանգուցեալի կրտսեր եղբայրը՝ Մելիք-Ե-

սային, որ իւր յատկութիւններով բոլորովին նման էր իւր հօրը։

Մինչև այսօր Տիզակ գաւառի բնակիչները յիշում են մի հին աւանդութիւն, թէ երբ Մելիք-Եսային ծնուեցաւ, մանկաբարձ պառաւները նկատեցին, որ տղայի աջ ձեռքի մատները խփուած էին։ Երբ բուռը բաց արին, տեսան ափի մէջ լիքն էր արիւնով։ Այն օրից նախագուշակեցին, որ երբ այդ մանուկը մեծանայ, դրա ձեռքով շատ արիւնհեղութիւններ կլինին։ Եւ իրաւ, Մելիք-Եսային իւր ամբողջ կեանքն անցկացրեց պատերազմներով։ Տիզակը պարսից սահմանի վրայ լինելով, Երասխ գետի ափի մօտ, ենթարկուած էր պարսիկների անընդհատ յարձակումներին։ Քաջ իշխանը՝ իւր երկիրը նրանց արշաւանքներից պաշտպանելու համար ստիպուած էր անդադար պատերազմել նրանց հետ։

Մելիք-Եսային առաջինն էր Ղարաբաղի մելիքների մէջ, որ հասկացաւ կանոնաւոր զօրքի և ընդհանուր զինուորութեան անհրաժեշտութիւնը երկրի ապահովութեան համար. Նա տուգանք նշանակեց գիւղացիների վրայ, եթէ նրանց զէնքերից մէկը պակաս կլինէր, կամ եթէ իրանց զէնքերը չէին պահպանի անխանգար դրութեան մէջ։ Որոշեալ օրերում, երկրագործական պարապմունքներից յետոյ, գիւղացի երիտասարդները զբաղվում էին զինուորական մարզութիւններով. Նրանց վրայ կարգուած էին տասնապետներ, յիսնապետներ, հարիւրապետներ՝ կրթելու համար։ «Նրա ժամանակում, գրում է մի վարդապետ, մեր երկրում այնպիսի ապահովութիւն էր տիրում, որ դեռահաս աղջիկները՝ այգիների ծառերի տակ նստած կար էին կարում, մնում էին այնտեղ, մինչև մութը պատում էր. Հարսները զուգուած դուրս էին գալիս տներից և աներկիւղ զբօսնում էին լեռների վրայ, բոլորովին չմտածելով

թէ թուրքը, կամ պարսիկը կըգայ, կըյափշտակէ և կըտանէ իրանց։ Երբ թշնամին յայտնվում էր, երկրի երիտասարդները զէնքը ձեռներին միշտ պատրաստ էին նրան հանդիպելու համար»։

Նադիր-շահի մահից յետոյ Մելիք-Աւան-խանի տան բարեկամական յարաբերութիւնները պարսից արքունիքի հետ կտրուեցան։ Մելիք-Եսային տեսնելով Պարսկաստանում տիրող անիշխանութիւնը, խռովութիւնները և ներքին պատերազմները, և մանաւանդ ձանձրացած լինելով պարսից հարկահաններից, վճռեց միանգամայն չճանաչել նրանց և մերժել հարկապահանջներին։ Այդ առիթից օգուտ քաղեց Փանահ-խանը և Մելիք-Եսայուն մատնեց Թաւրիզում նստող Ադիլ-շահին։ Շահը հրամայեց Ղարադաղի *) կառավարիչ Քազըմ-խանին գնալ և պատժել Մելիք-Եսայուն։ Ղարադաղի խանն եկաւ զօրքերի մեծ բազմութեամբ. ինքը Փանահ-խանը մի քանի հազար հոգով միացաւ նրա հետ, պաշարեցին Մելիք-Եսայու Տող բերդը։ Ով որ տեսել է Տողը, կարող է երևակայել, որ թշնամու զօրքերի բազմութիւնը չէր կարող սարսափեցնել Մելիք-Եսայուն, երբ որ իւր քաջ զինուորների փոխարէն առաւելապէս բնութեան ամրութիւնները պիտի պատերազմէին թշնամու զօրութեան դէմ։ Հայոց զինուորները մասամբ պաշտպանուած բերդի մէջ, մասամբ թագնուած շրջակայ լեռների խիտ անտառներում, անակնկալ յարձակումներ են գործում և ջարդում պարսիկներին։ Ղարադաղի խանը յաղթուած, իւր զօրքերի մեծ մասը կորցրած, յետ է դառնում Պարսկաստան։ Հետևեալ տարին նա արշաւանք է գործում աւելի մեծ բազմութեամբ. Փանահ-խանը դարձեալ միանում է

*) Պէտք է ի նկատի ունենալ, որ Ղարադաղը (հին Փայտակարանի մի մասը) և Տիզակ գաւառը սահմանակից են, բաժանվում են միայն Երասխ գետով։

նրա հետ, բայց երկուսի ջանքերը ևս ապարդիւն են անցնում. Մելիք-Եսային յաղթող է հանդիսանում:

Այնուհետև Փանահ-խանն ամբողջ եօթը տարի պատերազմեց Մելիք-Աւանեան Մելիք-Եսայու հետ. երբ նկատեց, որ հնար չկայ նրան հնազանդեցնելու, ստիպուեցաւ հաշտուել, մտածելով գուցէ բարեկամական միջոցներով կարող կըլինի ոչնչացնել նրան, և որպէս յետոյ կըտեսնենք, խորամանկ խանի այդ մտադրութիւնը յաջողուեցաւ...:

XI

Փանահ-խանը մի քանի անաջող փորձերից յետոյ վերջապէս համոզուեցաւ, որ Ղարաբաղի մելիքների միաբանութիւնը քանդելու և Ղարաբաղի մէջ մի հաստատ դիրք բռնելու համար անպատճառ հարկաւոր է, որ մելիքներից գոնէ մէկին գրաւէ դէպի իւր կողմը: Մի աղէտալի անցք կատարեց նրա ցանկութիւնը:

Որպէս վերևում յիշեցինք, Նադիր-շահը՝ Մուղանի անապատում իրան պարսից թագաւոր հրատարակելուց յետոյ, Ղարաբաղի հինգ մելիքներին հաստատեց իրանց իշխանութիւնների մէջ, տալով նրանց հայրենական վաղեմի իրաւունքները: Բայց միևնոյն տարւոյ մէջ (1736) վախճանուեցաւ Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարեան Մելիք-Յուսէփը, որի կինը Աւետարանոց գիւղում կոտորել տուեց օսմանցիներին: Մելիք-Յուսէփի փոխարէն Վարանդան սկսեց կառավարել նրա ազգական Մելիք-Միրզա-բէկ II-ը *): Դա իւր յանդուգն անհնազանդութեամբ

*) Մելիք-Միրզա-բէկ II-ը Մելիք-Բաղիի որդին էր, իսկ այդ վերջինը Մելիք-Յուսէփի հօրեղբայր Մելիք-Միրզա-բէկ I-ի որդին էր:

գրգռեց շահի բարկութիւնը, և շահը հրամայեց գլխատել նրան: Մելիք-Միրզա-բէկ II-ի փոխարէն շահը Վարանդայի մելիք նշանակեց Մելիք-Յուսէփի որդի Մելիք-Յովսէփին: Այդ Մելիք-Յովսէփը, որին պարսիկները Յուսէփն էին կոչում, չափազանց հեզաբարոյ, զգաստ և խելացի մարդ էր, բայց մի ոտքով կաղ և փոքրահասակ: Նա ունէր մի եղբայր ևս, որ ընդհակառակն վայելչահասակ, գեղեցիկ և չափազանց փառասէր տղամարդ էր: Դա էր Մելիք-Շահնազար II-ը *), Ղարաբաղի կործանիչը...

Իւր ընտանեկան կեանքում Մելիք-Շահնազարը սաստիկ անբարոյական մարդ էր. պարսիկների սովորութեանը հետևելով, իւր տունը լցրել էր բազմաթիւ հարճերով: Բացի դրանցից, նա ունէր իւր առաջին օրինաւոր կինը Թագում (Թագուհի) անունով, որ Խաչէնի Հասան-Ջալալեան իշխանների տնից էր: Թագումի մեռնելուց յետոյ Մելիք-Շահնազարը բռնութեամբ խլեց կենդանի ամուսնուց նրա գեղեցիկ կինը Սօնա անունով (որ Տիզակի իշխան Մելիք-Եսայու աղջիկն էր) և պսակուեց նրա հետ: Նոյն իսկ Սօնայի կենդանութեան ժամանակ Մելիք-Շահնազարն ամուսնացաւ իւր հանգուցեալ կնոջ, Թագումի, հարազատ եղբօր Մալայիկ անունով դստեր հետ, և այսպիսով մտցրեց իւր ընտանիքի մէջ մահմեդական բազմակնութիւնը: Մելիքի այդ տեսակ վարմունքները սաստիկ վիրաւորեցին ժողովրդի կրօնական զգացմունքը և նրան աւելի գարշ-

*) Մելիք-Յովսէփը և Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին. վերջինը ծնուած էր Մելիք-Յուսէփի Աննա-խաթուն անունով կնոջից, որ Տիզակի իշխան Մելիք-Աւան-խանի քոյրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնուած էր Զօհրա-խանումից, որ Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թիւրք: Մելիք-Յուսէփը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, բայց յետոյ ամուսնացաւ նրա հետ:

րին Ղարաբաղի միւս մելիքների մօտ: Բայց նրա կատարած մի եղեռնագործութիւն հրաւիրեց իւր վրայ բոլոր մելիքների վրէժխնդրութիւնը:

Մելիք-Չահնազարը փառասէր, յանդուգն և ոխերիմ մարդ էր. նա չկարողացաւ համբերել, որ իւր եղբայր Մելիք-Յովսէփը վարէր Վարանդայի իշխանութիւնը, թէև նա կարգուած էր Նադիր-շահից: Մի գիշեր յարձակուելով Մելիք-Յովսէփի տան վրայ, իւր ձեռքով սպանեց եղբօրը և նրա ամբողջ ընտանիքը կոտորել տուեց: Կոտորածից ազատուեցաւ մի երեխայ միայն, փոքրիկ Սայի-բէկը, որին դայեակը ծածուկ փախցրեց Խաչէն գաւառի Հասան-Ջալալեան Մելիք-Ալլահվերդու մօտ, որ երեխայի քեռին էր *):

Սպանելով իւր եղբօրը, Մելիք-Չահնազարը բռնութեամբ իւր ձեռքը ձգեց Վարանդայի իշխանութիւնը: Բայց նրա եղեռնագործութիւնը սաստիկ բորբոքեց իւր դէմ Ղարաբաղի միւս չորս մելիքների բարկութիւնը: Նրանք միաբանուեցան Մելիք-Չահնազարից վրէժխնդիր լինելու հա-

*) Աւետարանոց (Չանախչի) բերդը շատ անգամ եղել է հանդիսարան արիւնոտ գործերի: Մենք նկարագրեցինք Մելիք-Յուսէփն մեծի ժամանակ տեղի ունեցած օսմանցիների կոտորածը այդ բերդում: 1723 թ. օգոստոս 20-ին, Ղափանցի Ղանլու-Չաբան անունով հայ իշխանը 300 ձիաւորներով հիւր է գալիս Աւետարանոց բերդի Մելիք-Միրզա-բէկի մօտ (Մելիք-Բաղիի որդին): Չնայելով որ Մելիք-Միրզա-բէկը հին ոխ ունէր Ղանլու-Չաբանի հետ, այսուամենայնիւ սիրով ընդունում է նրան իւր տանը, և նրա շքախմբին որպէս հիւրեր բաժանում է իւր գիւղացիների տներում: Գիւղացիները պատուէր են ստանում՝ հէնց որ գիշերը մելիքի տնից լսելի կլինի հրացանի ձայն, ամեն մարդ պատրաստ լինի իւր հիւրին սպանելու: Այսպիսով մի գիշերուայ մէջ կոտորում են բոլոր 300 ձիաւորներին, իրանց իշխանի հետ: Դա միևնոյն Մելիք-Միրզա-բէկն էր, որին Նադիր-շահը գլխատել տուեց:

մար: Դրանք էին՝ Գիւլիստանի Մելիք-Բէգլարեան Մելիք-Իւսուբը, Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Ալլահ-Ղուլի-սոլթանը, Խաչէնի Մելիք-Ալլահվերդին և Տիզակի Մելիք-Աւանեան Մելիք-Եսային: Իրանց զօրքերով այդ չորս մելիքները դիմեցին դէպի Վարանդայ: Մելիք-Չահնազարն ամրացաւ իւր Աւետարանոց բերդի մէջ: Պաշարումը երկար տևեց, ձմեռը վրայ հասնելով, բերդը չկարողացան գրաւել, բայց Վարանդայի գիւղերի մեծ մասն աւարի առնելով ու աւերակ դարձնելով, մելիքները վերադարձան իրանց տեղերը, պայման դնելով, որ հետևեալ գարունքին կրկին արշաւանք գործեն՝ Աւետարանոց բերդը կործանելու համար:

Փանահ-խանն այժմ հասաւ իւր նպատակին: Ղարաբաղի մելիքների մէջ սկսուեցաւ ներքին պատերազմ: Նա շտապեց օգուտ քաղել այդ հանգամանքներից:

Մելիք-Չահնազարը որքան էլ յանդուգն, աներկիւղ մարդ լինէր, դարձեալ գիտէր, որ իւր ուժերը չէին կարող հաւասարուել բոլոր չորս մելիքների անհամեմատ մեծ զօրութեանը: Այդ պատճառով նա սաստիկ անհանգստութեամբ սպասում էր գարնան արշաւանքին: Նրան պէտք էր մի դաշնակից, մի օգնական, և նա ձեռք մեկնեց իւր հայրենիքի ոխերիմ թշնամուն—ջուանշիրցի աւազակին...:

Միւս մելիքներն աւելի կատաղեցան, երբ նկատեցին որ Մելիք-Չահնազարը միացաւ Փանահ-խանի հետ, որի չար դիտաւորութիւնները՝ Ղարաբաղի հայկական բոլոր իշխանութիւնները ոչնչացնելու մասին, ամենքին յայտնի էին:

Փանահ-խանը իւր կողմից շատ ուրախ եղաւ, երբ մելիքների միաբանութիւնը քանդուած տեսաւ, երբ նրանցից մէկը, այն էլ ամենանշանաւորը, անցաւ իւր կողմը:

Վաղուց նա դիտաւորութիւն ունէր մտնելու անմատչելի Ղարաբաղի սրտի մէջ, և մի յարմար դիրքի վրայ ցանկանում էր մի ամուր բերդ հիմնել: Նրա Բայաթի և

Ասկարանի բերդերը, ինչպէս տեսանք, հայոց մելիքները ոչնչացրին:

«Ձեր Ջանախչին պաշտպանութեան համար խիստ անյուսալի դիրք ունի, ասաց Փանահ-խանը Մելիք-Շահնազարին, — պէտք է որոնել մի աւելի ամուր դիրք, և ես մի այդպիսի տեղ ի նկատի ունիմ, որի վրայ բերդ հիմնելով, կլինինք այնուհետև բոլորովին ապահովուած»...:

Փանահ-խանը ցոյց տուեց Վարանդայի գաւառում մի տեղ, Գարգար գետի վրայ, որ Մելիք-Շահնազարի սեպհական կալուածքն էր, և բնութիւնը, իրաւ որ, այդ անմատչելի լեռնային բարձրաւանդակն ստեղծել էր ամուր բերդ լինելու համար: Երկու դաշնակիցներն սկսեցին բերդի հիմնարկութիւնը: Մելիք-Շահնազարը իւր ձեռքով դրեց նրա առաջին քարը, որ իւր և ամբողջ Ղարաբաղի մելիքութիւնների գերեզմանը դարձաւ...:

Մի կողմից բերդի կառուցումն առաջ տանելով, միւս կողմից մելիքների հետ պատերազմ մղելով, երկու դաշնակիցները շուտով վերջացրին շինութիւնը (1752) և մերձակայ Շօշի աւանի հայ բնակիչներին տեղափոխելով այնտեղ, բերդը կոչուեցաւ Շօշի կամ Շուշի:

Փանահ-խանը մտնելով Ղարաբաղի սրտի մէջ, իւր դաշնակից Մելիք-Շահնազարի աջակցութեամբ ոչ միայն կարողացաւ պաշտպանուել միւս հայ մելիքների յարձակումների դէմ, այլ իւր իշխանութիւնը տարածեց և այն թիւրք ցեղերի վրայ, որոնք առաջ չէին խոնարհվում նրան:

Ինքը Փանահ-խանը իւր ծագումն ստացած լինելով աւելի աննշան և ստոր ցեղից, որպէս էին սարուջալլուցիք, միւս աւելի զօրեղ և նշանաւոր ցեղերը (ջւանշիրցիք, քեբիրլուցիք և օթուզիքի, այսինքն՝ երեսուն և երկու կոչուած ցեղը) արհամարանքով էին նայում նրա վրայ,

նամանաւանդ որ իրանց նահապետական սովորութիւններին խիստ հակառակ էր թվում՝ խոնարհուել մէկ միապետի հրամանի ներքոյ, որ պարզից խ ա ն ի տիտղոս էր կրում: Բայց Մելիք-Շահնազարի օգնութեամբ նրանց բոլորին կարողացաւ հետզհետէ զսպել:

Իսկ հայոց մելիքների վերաբերութեամբ դեռ վճռական քայլ չէր անում նա, այլ աշխատում էր առանձացնել նրանց, աշխատում էր երկպառակութիւն սերմանել նրանց մէջ և փոքր առ փոքր նրանց ուժերը թուլացնել:

Սկսեց Խաչէնի մելիքութիւնից, որ մնացածներից աւելի մօտ էր Շուշի բերդին: Այստեղ ամենահին ժամանակներից իշխում էին Հասան-Ջալալեան իշխանների ժառանգները: Դրանք դարերի ընթացքում այնքան բազմացել էին, որ Խաչէն գաւառն ամենամանր կտորներով բաժանուած էր այդ տոհմի ներկայացուցիչների ձեռքում, որոնք բնականաբար շատ հաշտ չէին կարող լինել միմեանց հետ: Փանահ-խանը մտածեց ստեղծել այստեղ մի նոր մելիքութիւն՝ նրանց բոլորին հետզհետէ ոչնչացնելու նպատակով: Նրան զօրավիգ եղաւ ինքը Մելիք-Շահնազարը:

Մենք տեսանք որ երբ Մելիք-Շահնազարն սպանեց իւր եղբօրը՝ Մելիք-Յովսէփին, և բռնութեամբ գրաւեց Վարանդայի իշխանութիւնը, սպանուածի որդիներից մէկին գայեակը փախցրեց Խաչէն գաւառը և թագցրեց իւր քեռու տանը: Մանուկի քեռին էր Հասան-Ջալալեան իշխան Մելիք-Ալլահվերդին: Մտածելով որ մի ժամանակ այդ մանուկը կմեծանայ և իւր քեռու օգնութեամբ վրէժխնդիր կլինի իւր հօր արեան համար, և գուցէ յետ կխլէ հօր իշխանութիւնը, — Մելիք-Շահնազարը վճռեց ոչնչացնել թէ մանուկին և թէ նրա քեռուն: Փառասէր մելիքն այդ ձեռնարկութեան մէջ իւր առանձին հաշիւներն ունէր, իսկ այդ հաշիւները նպաստաւոր էին Փա-

նահ-խանի համար այն կողմից, որ նա Խաչէնի մելիքութիւնները ոչնչացնելով այնտեղ կընշանակէր իւր ցանկացած մարդուն և այսպիսով մի ամբողջ գաւառ իւր ձեռքը կ'առնէր: Մելիք-Ալլահվերդին բնակվում էր իւր սեպհական ամրոցում, որ իւր պապերից մէկի անունով կոչվում էր Ուլու-պապի բերդ *): Նա յայտնի էր որպէս քաջ և անպարտելի պատերազմող: Երբ Փանահ-խանն ու Մելիք-Շահնազարը իրանց հայ և թիւրք զօրքերով արշաւեցին նրա վրայ, Մելիք-Ալլահվերդին մի այնպիսի սաստիկ ջարդ տուեց նրանց, որ երկու դաշնակիցները հազիւ կարողացան իրանց կեանքն ազատել՝ փախչելով և մտնելով Շուշի բերդը:

Այդ ժամանակ Փանահ-խանը, Մելիք-Շահնազարի խորհրդով, գաղտնի կերպով կանչեց իւր մօտ Խնձրիստան գիւղի տանուտէր Միրզախանին, որ Մելիք-Ալլահվերդուց կարգուած, նոյն գիւղի կառավարիչն էր: Խանն առաջուց իմացած լինելով տանուտէրի փառասիրական ձգտումները, խոստացաւ, որ եթէ նա Մելիք-Ալլահվերդուն մի հնարքով կըռնի և իւր ձեռքը կըտայ, ամբողջ Խաչէն գաւառի վրայ մելիք կըկարգէ նրան:

Միրզախանը, հրապուրուած խանի խոստումներից, գնաց Մելիք-Ալլահվերդու մօտ, յայտնեց նրան, թէ իրան յայտնի է որ Փանահ-խանն աւելի մեծ պատրաստութիւններով յարձակուելու է նրա վրայ, և թէ նրա սեպհական ամրոցն այնքան յուսալի մի տեղ չէ, որի մէջ կարելի լինի պաշտպանուել թշնամու այս անգամուայ ահագին զօրութեան դէմ, և խորհուրդ տուեց ամրանալ Կաչաղակաբերդի մէջ, որ անառիկ և անմատչելի դիրք ունէր: Որ-

*) Ուլու-պապի բերդը գտնվում է Խաչէն գետի մօտ, Քարամէջ կամ Օրախաչ գիւղում, Պտկէսի սուրբ Գէորգ անունով մատուռի մօտ: Այդ ամրոցին թիւրքերը կոչում են Բալլու-Կայեա:

պէս ստորագրեալ և պաշտօնեայ, Միրզախանն առաջարկեց իւր պատրաստականութիւնը ամեն կերպով օգնելու իշխանին, աւելացնելով թէ ինքն արդէն պատրաստած ունի Կաչաղակաբերդի մէջ մի քանի ամիսների համար պաշար, ուր նա կարող է ապահով կերպով պաշտպանուել թշնամու դէմ, եթէ այդ բերդը պաշարուած կըլինի: Նա իշխանին հրաւիրեց իւր տուն, որ այնտեղից միասին գնան Կաչաղակաբերդը, որ շատ հեռու չէր Խնձրիստանից: Բայց նոյն գիշերը ընթրիքի ժամանակ դաւաճանը սենեակից դուրս եկաւ և իւր ետևից կողպեց դուռը, իշխանին այնտեղ մենակ թողնելով: Այդ միջոցին Փանահ-խանի և Մելիք-Շահնազարի մարդիկը, որ առաջուց պահուած էին նրա տան մէջ, վրայ հասան և կալանաւորեցին իշխանին: Փանահ-խանը նրան տուեց դահիճների ձեռքը և գլխատեցին, իսկ նրա ամբողջ ընտանիքը կոտորել տուեց: Այդ ժամանակ Մելիք-Շահնազարն սպանել տուեց իւր եղբօրորդի փոքրիկ Սայի-բէկին, որ նոյն ընտանիքի մէջ պահուած էր: Եղեռնագործը իւր եղբօր արեան մէջ շաղախուած ձեռքերը թաթախեց դժբախտ զաւակի արեան մէջ...:

Փանահ-խանը կատարեց իւր խոստումը. դաւաճան Միրզախանին կարգեց Խաչէնի վրայ մելիք (1755) և այն օրից Հասան-Ջալալեան իշխանների տիրապետութիւնը համարեա թէ ընկաւ: Թէ ինքը [Մելիք-Միրզախանը և թէ նրա ժառանգները (Մելիք-Ալլահվերդին *) և Մելիք-Ղահրամանը) հաւատարմութեամբ ծառայեցին Շուշիի խաներին, և կտրուելով հայոց մելիքների դաշնակցութիւնից, անթիւ վնասներ հասցրին Ղարաբաղի հայոց իշխանութիւններին:

*) Այդ Մելիք-Ալլահվերդուն պէտք չէ շփոթել Հասան-Ջալալեան Մելիք-Ալլահվերդու հետ:

Եւ այսպէս Ղարաբաղի հինգ մելիքութիւններից երկուսը՝ Վարանդան և Խաչէնը, անցան Փանահ-խանի կողմը:

XII

Մնում էին երեք մելիքութիւնները՝ Գիւլիստանը, Ջրաբերդը և Տիզակը:

Գիւլիստանում տիրում էր Մելիք-Բէգլարեան Մելիք-Իւսուբը, Ջրաբերդում տիրում էր Մելիք-Իսրայէլեան Ալլահ-Ղուլի-սոլթանը, իսկ Տիզակում տիրում էր Մելիք-Աւանեան Մելիք-Եսային:

Տեսնելով որ մի կողմից Մելիք-Շահնազարը իւր բերդը, Շուշին, պարգևեց Փանահ-խանին և նրա ամենահաւատարիմ դաշնակիցը դարձաւ, միւս կողմից Խաչէնում մի նոր մելիքութիւն կազմուեցաւ, որ նոյնպէս մահմեդական խանի դաշնակից եղաւ,—վերոյիշեալ երեք մելիքները ոչ միայն չվհատեցան, այլ իրանց միացած ուժերով սկսեցին սաստիկ պատերազմներ մղել Փանահ-խանի և նրա հայ դաշնակիցների հետ: Այդ արիւնահեղ պատերազմները, ինչպէս կը տեսնենք, տևեցին ամբողջ քսան տարի, որոնք խիստ զգալի վնասներ պատճառեցին Ղարաբաղին:

Վերջը Փանահ-խանն անճար մնալով, մտածեց հաշտութիւն խօսել Ալլահ-Ղուլի-սոլթանի, Մելիք-Իւսուբի և Մելիք-Եսայու հետ: Խաղաղութեան պայմանների վրայ բանակցելու համար որոշուեցաւ ոչ թէ Շուշի բերդը, այլ մի չէզոք տեղ՝ Ամարասայ վանքը: Ջրաբերդի Ալլահ-Կուլի սոլթանն ուղարկուեցաւ հայոց դաշնակից մելիքների կողմից իբրև հաւատարմատար Ամարասայ վանքը: Այնտեղ եկաւ և Փանահ-խանը իւր հաւատարիմ Մելիք-Շահնազարի հետ:

Այդ միջոցներում Փանահ-խանի մօտ միևնոյն վան-

քում տեսութեան է գալիս Նախիջևանի Հէյդար-Ղուլի-խանը: Երբ նրան ներս են տանում, Փանահ-խանի մօտ նստած է լինում հայոց մելիքների հաւատարմատարը՝ Ալլահ-Ղուլի-սոլթանը: Տեսնելով շքեղ կերպով հագնուած, հսկայատիպ սոլթանին, Նախիջևանի խանը շփոթվում է, և կարծելով թէ այդ գեղեցիկ տղամարդը լինելու է ինքը Փանահ-խանը, ողջունում է նրան և ամենայն խոնարհութեամբ սկզբից նրան է գլուխ տալիս: Բայց յետոյ, երբ հասկացնում են նրան իւր սխալը, նա յիշեցնում է Փանահ-խանին պարսից երևելի բանաստեղծի՝ Սաադիի խօսքը. «Տասը դէրվիշ կարող են մի փալասի կտորի վրայ պառկել, բայց երկու Թագաւոր չեն կարող մի աշխարհի մէջ հաշտ ապրել»...:

Այդ խօսքերով նենգաւոր Նախիջևանցին կամեցաւ հասկացնել Փանահ-խանին, թէ նրա իշխանութիւնը չէ կարելի ապահովուած համարել, մինչև որ Ղարաբաղում կը գտնուեն այս տեսակ նշանաւոր հայ պետեր: Փանահ-խանը, արդարև, դաւաճանեց իւր պայմանին. Ալլահ-Ղուլի սոլթանին կալանաւորեց, տարաւ Շուշի բերդում բանտարկեց և մի քանի օրից յետոյ գլխատել տուեց (1756): Այսպէս վարուեցաւ իւր բարերարի հետ, որի մօտ առաջ ծառայում էր նա և որ ազատեց նրա կեանքը Նադիր-շահի դահիճների ձեռքից...:

Այդ անցքը, որի իսկութիւնը չէ ուրանում և պարսից պատմութիւնը, Ղարաբաղի ժողովրդական աւանդութիւնների մէջ լեգենդական ձև է ստացել: Մինչև այսօր չեն մոռացուել ժողովրդի բերանում այն երգերը, որ հսկայ կալանաւորը երգում էր իւր բանտի մէջ: Նա կոչում էր իւր քաջ եղբօրը՝ Մելիք-Աթամին, նա կոչում էր իւր անպարտելի նիզակակցին՝ Դալի-Մահրասային, յորդորում էր Շուշին քարուքանդ անել, արիւնով շաղախել նրա մոխիրն

ու հողը և իրան ազատել բանտից: Դրանցից և ոչ մէկը չէ յայտնվում. հսկայի ձայնին օգնութեան է հասնում սիրող կինը. նա Փանահ-խանի հարեմի ամենագեղեցիկն էր: Գիշերը կալանաւորին ընթրիք տանելու ժամանակ, սիրահարուած գեղեցկուհին թագցնում է փլաւի մատուցարանի մէջ բանտի և նրա երկաթեայ ոտնակապերի բանալիները, որ նա բաց անէ և փախչէ: Բայց հսկան պատասխանում է, հայոց քաջերը փախչելու սովորած չեն. եթէ ինքը ցանկանայ, այդ բանալիներին կարօտութիւն չունի: Եւ նա զօրաւոր ձեռքով փշրում է իւր շղթաները, և նրանց կտորտանքը լցնելով փլաւի մատուցարանի մէջ, յետ է ուղարկում, ասելով. «դաւաճանութիւնը կըպատժուի... իւր արիւնն առանց վրէժխնդրութեան չի մնայ»...:

Ալլահ-Ղուլի-սօլթանի աղէտալի մահից յետոյ Ջրաբերդի մելիքութեան կառավարութիւնն անցաւ նրա կրտսեր եղբօր՝ Մելիք-Աթամի ձեռքը: Դա իւր բոլոր յատկութիւններով շատ նման էր իւր քաջ եղբօրը: Մանկութեան հասակից իբրև պատանդ պահուած լինելով Դաղստանի Խօսրով սուլթանի մօտ, Մելիք-Աթամը վարժուեցաւ տեղային լեռնաբնակների հերոսական յատկութիւնների մէջ: Նրան ազատեց այնտեղից Նադիր-շահը իւր Դաղստանի արշաւանքի ժամանակ:

Զրկելով Ջրաբերդը իւր հզօր իշխանից, Փանահ-խանը դաշնակից մելիքների ուժերը բոլորովին թուլացած կարծեց, և նա յանդգնաբար հրաման գրեց Գիւլիստանի Մելիք-Իւսուբին, բացարձակ կերպով պահանջելով նրանից, որ հպատակութիւն ընդունէ: Այդ ժամանակն էր, որ Մելիք-Իւսուբի որդի Մելիք-Բէգլար II-ը, որ սաստիկ գոռոզ և գլխաբորբոք երիտասարդ էր, թոյլ չտուեց իւր հօրը պատասխանելու, ասելով թէ ինքը կըտայ Փանահ-խանի պատասխանը: Եւ նա իւր սուրը բռնելով խանի

պատգամաւորի գլխի վրայ, ստիպեց նրան կուլ տալ բերած հրամանագիրը: Երբ խեղճ պատգամաւորը սարսափելով կուլ տուեց թղթի վերջին պատառը, երիտասարդն ասաց նրան. «Հիմա գնա. ինչ որ կերար այստեղ, նրա արտադրութիւնը... կըլինի Փանահ-խանի պատասխանը» *)...:

Այդ անցքից յետոյ աւելի սաստիկ կերպով բորբոքուեցաւ պատերազմը Փանահ-խանի և դաշնակից մելիքների մէջ: Վարանդայի Մելիք-Շահնազարը և Խաչէնի Մելիք-Միրզախանը, ինչպէս առաջ նոյնպէս և այժմ հաւատարիմ մնացին հայոց ոխերիմ խանին: Ոչ թէ միայն իրանց խորհուրդներով, այլ շատ անգամ իրանց զօրքերով օգնում էին նրան: Բայց չնայելով այդ բոլորին, դաշնակից մելիքները (Գիւլիստանի Մելիք-Իւսուբը, Ջրաբերդի Մելիք-Աթամը և Տիզակի Մելիք-Եսային) այն աստիճան նեղութեան մէջ էին դրել Փանահ-խանին, որ նրա Շուշի բերդը մշտական պաշարման դրութեան մէջ էին պահում:

Մինչև այսօր առակ է դարձել Ղարաբաղի ժողովրդի մէջ, թէ Թիւլի-Արզումանը, Դալի-Մահրասան և Չալաղան-ուզբաշին ամբողջ եօթն տարի թոյլ չտուեցին, որ մի թուրք անցկենար Մաղէ-կամուրջից **) դէպի Ջրաբերդի և Գիւլիստանի կողմերը:

Յիշեալ երեք անձնաւորութիւնները երեք հերոսներ են, որոնց դեռ ժողովուրդը չէ մոռացել: Ես աւելորդ չեմ համարում ծանօթացնել նրանց մեր ընթերցողներին:

Դալի-Մահրասա թուրքաց լեզուով նշանակում է գ ի ժ - ա բ ե ղ ա յ: Եւ իրաւ, այդ մարդն աբեղայ էր, Ջրաբերդի Եղիշէ առաքելոյ վանքի միաբան: Ամեն ուխտա-

---

*) Այդ պատմական փաստը չէ մոռացուած և ‹Ղարաբաղի Աստղագէտը› կոչուած վէպի երկրորդ հատորի IX գլխում:

**) Մաղէ-կամուրջ կոչվում է Գարգար գետի վրայ գտնըւած կամուրջը Շուշի բերդի մօտ:

ւոր և այսօր կարող է տեսնել յիշեալ վանքում այն բարձր աշտարակը, որի մէջ, առանձնացած վանականների աղօթող միաբանութիւնից, բնակւում էր «գիժը»: Նրա իսկական անունը Աւագ վարդապետ էր, բայց ժողովուրդը նրան դ ա լ ի (գիժ) տիտղոսը տուեց: Մի այսպիսի տիտղոս կրում էին արևելքի տասնևվեցերորդ դարու հերոսը՝ Քեօռ-օղլին և նրա խմբի մէջ գտնուած քաջերը. դրանք կոչւում էին Քեօռ-օղլու դ ա լ ի ն ե ր (գժեր):

Դալի-Մահրասան Ղարաբաղի հայոց Քեօռ-օղլին էր. ժողովուրդը գուցէ մինչև յաւիտեան կյիշէ այն բոլոր հրաշքները, որ կատարել է նա իւր կռիւների մէջ: Երբ նստում էր իւր նշանաւոր մոխրագոյն նժոյգի վրայ և կայծակի նման նետվում էր դէպի պատերազմի դաշտը, նրա ահարկու, որոտալից ձայնը բաւական էր թշնամուն սարսափեցնելու համար: Եկեղեցու մոլեռանդութիւնը պատժեց գիժ աբեղային նրա կատարած արիւնհեղութիւնների համար: Սիմօն կաթողիկոսի ժամանակ նրան տարան Ս. Էջմիածին և բանտարկեցին սառցատան մէջ, որ ապաշխարէ: Մի օր իւր բանտի մէջ լսեց նա, որ վանքում ինչ որ աղմուկ և իրարանցում է տիրում: Նրա հարցին պատասխանեցին, թէ ջալալի քրդերը եկան վանքի անասունները թալանեցին, հիմա վտանգ կայ, որ վանքն էլ կողոպտեն:

—Կարո՞ղ էք տալ ինձ մի ձի և մի քանի զէնք, ասաց ապաշխարողը: Երբ նրա խնդիրքը կատարուեցաւ, նա նստեց ձին և նետուեցաւ ջալալիների ետևից: Մի քանի ժամից յետոյ վերադարձաւ նա՝ յետ բերելով քրդերի տարած աւարը: Այդ օգուտը վանքին տալուց յետոյ նրան արձակեցին, խոստմունք առնելով, որ այլևս մարդասպանութիւն չանէ: Բայց նա չկատարեց իւր խոստմունքը. հայրենիքի թշնամիներին սպանելը նա մեղք չէր համարում, և շարունակում էր մասնակցել մելիքների բոլոր պատե-

րազմների մէջ: Միանգամ Գանձակ քաղաքի մօտ, լէզգիների հետ պատերազմելու ժամանակ, գիշերը վրայ հասաւ: Նա կռուից յոգնած նստել էր մի գերեզմանաքարի վրայ, որ փոքր ինչ հանգստանայ: Նրա շուրջը ծածկուած էր դիակներով, որ ընկել էին իւր ձեռքով: Այդ միջոցին վիրաւոր լէզգիներից մէկը, որի շունչը դեռ չէր կտրուած, ատրճանակը բարձրացրեց և գնդակով զարկեց նրան: Քաջի մարմինը թաղուեցաւ Գանձակի մայր եկեղեցու գաւթում:

Գժի հետ ծանօթացանք, հիմա անցնենք Թիւլի-Արզումանին:

Թիւլի թիւրքաց լեզուով նշանակում է աւազակ, բայց ոչ այն տեսակ մանր աւազակներից, որոնք գիշերը ծածուկ կերպով մտնում են քնած քաղաքացու տունը և կողոպտում են նրան: Թիւլին բացարձակ կերպով է գործում. օր-ցերեկով քարաւաններ, գիւղեր և քաղաքներ է կողոպտում: Այդպէս էր և Արզումանը: Նա Մելիք-Աթամի հօր (Մելիք-Իսրայէլի) հովուի որդին էր, մանկութեան օրերում ոչխարներ էր արածացնում, իսկ յետոյ Մելիք-Աթամի ընտիր զօրապետներից մէկը դարձաւ:

Փանահ-խանն այն աստիճան նեղուած էր Թիւլի-Արզումանից, որ մի հնարքով նրա հօրը, Սարգսին, բռնել տուեց, տարաւ Շուշի բերդում իբրև պատանդ պահեց, որ գուցէ դրանով ազատուէր որդու հասցրած վնասներից: Մի օր խանն ասաց Սարգսին.— Խրատիր քո որդուն, որ դադարէ չարագործութիւնից. նա Ղարաբաղի երկիրն աւերակ դարձրեց. Մազէ-կամուրջը թողեց կարօտ մարդկանց անցուդարձից:—Ես Արզուման անունով որդի չունիմ, պատասխանեց ծերունի հայրը սառնարտութեամբ:—Ի՞նչպէս չունիս, հարցրեց խանը բարկանալով.—մի՞թէ այն արիւնարբու Արզումանը, որ իմ երկրները կողոպտում է,

որ իմ շինականների տները հրդեհում է, որ ինձ ամեն օր հանգստութիւն չէ տալիս, մինթէ այդ աւազակը քո որդին չէ։—Այո, իմ որդին չէ, պատասխանում է դառնացած ծերունին;—եթէ նա իմ որդին լինէր, քեզ մինչև այսօր կենդանի չի պիտի թողնէր և քո բերդի աւերակները քո գերեզմանը պիտի դարձնէր…։

Խանը հրամայեց իսկոյն գլխատել յանդուգն ծերունուն։ Իսկ Արզումանը սպանուեցաւ Գանձակի պաշարման ժամանակ, որի մանրամասնութիւնները կըտեսնենք յետոյ։

Չալաղան-ուզբաշու պատմութիւնը կարճ է. նա բովանդակվում է հէնց իւր մականունի մէջ, որ ժողովուրդը տուել էր նրան։ Դա բառացի թարգմանութեամբ նշանակում է յափշտակող կամ ապտակող հարիւրապետ։ Եւ իրաւ, նա աւելի մի աւազակապետ էր քան թէ զօրապետ։ Մինչև այսօր Ջրաբերդի գաւառում, Երիցմանկանց վանքի հանդէպ, մի նեղ ձորի մէջ, որի երկու կողմից բարձրանում են ահագին անտառապատ լեռներ, Թրղի գետի ափի մօտ ցոյց են տալիս մի հին ամրոցի աւերակներ։ Այստեղ էր բնակվում «յափշտակող և ապտակող հարիւրապետը։» Նրա իսկական անունը յայտնի չէ. ժողովուրդը իւր սիրելի հերոսին կոչում էր իւր արհեստի անունով։ Այն ևս յայտնի չէ, թէ ո՛րպիսի վախճան ունեցաւ այդ քաջը։ Միայն պատմում են, թէ դա էր այն պատգամաւորներից մէկը, որոնք անդադար դիմում էին դէպի ռուսաց արքունիքը և իրանց հայրենիքի փրկութեան համար օգնութիւն էին խնդրում։ Երբ տեսաւ դիպլօմատիկան չօգնեց, սկսեց գործել սրով։

XIII

Հայոց դաշնակից մելիքները նկատեցին որ Փանահ-խանին իսպառ ոչնչացնելու և նրա կողմնակից երկու հայ մելիքներին (Մելիք-Շահնազարին և Մելիք-Միրզախանին) պատժելու համար պէտք էր արտաքին ուժերից ևս օգուտ քաղել։

Երբ Պարսկաստանից եկաւ Ղարաբաղի կողմերը ուրմեցի օվշար Ֆաթալի-խանը (1761) Գիւլիստանի Մելիք-Իւսուբը և Ջրաբերդի Մելիք-Աթամը միացան նրա հետ։ Այդ Ֆաթալի-խանը Նադիր-շահի սիրելի և քաջ զօրապետներից մէկն էր *)։ Շահի մահից յետոյ, Պարսկաստանում յուզուած խռովութիւնների ժամանակ, Ֆաթալի-խանը սրի ուժով հնազանդացրեց ամբողջ Ատրպատականը, յետոյ արշաւեց դէպի Ղարաբաղի կողմերը և միանալով հայոց մելիքների հետ, նա պաշարեց Շուշի բերդը։ Փանահ-խանը և Մելիք-Շահնազարն առժամանակ կարողացան քաջութեամբ պաշտպանուել, բայց յետոյ անճարացած, ստիպուած եղան անձնատուր լինել։ Ֆաթալի-խանը մեղանչեց այն պայմանի դէմ, որ դրել էր իրան օգնող երկու մելիքների՝ Աթամի և Իւսուբի հետ։ Այդ պայմանը կայանում էր նրանում, որ Ֆաթալի-խանը պիտի բաւականանար միայն Շուշի բերդի կողոպուտով, իսկ Փանահ-խանին պիտի յանձնէր Մելիք-Աթամի և Մելիք-Իւսուբի ձեռքը, ինչպէս կամենային, այնպէս վարուէին նրա հետ։ Բայց նա ստանալով Փանահ-խանից տասն հազար թուման

*) Դա միևնոյն օվշար (ցեղի անունն է) Ֆաթալի-խանն է, որ Տաթևի վանքը կողոպտեց (1762), մի մասը աւերակ դարձրեց և Տաթևի վանահայր Յովհաննէս եպիսկոպոսին սպանել տուեց։

փող և նրա որդի երիտասարդ Իբրահիմ-աղային պատանդ առնելով, իւր հետ տարաւ Պարսկաստան։

Այդ պարտութիւնը երկար մոռանալ չկարողացաւ Փանահ-խանը, պահելով իւր սրտում այն ոխը, որ եթէ հայոց մելիքները չօգնէին, պարսիկ խանը չէր կարող գրաւել իւր բերդը և իւր որդուն որպէս գերի տանել Պարսկաստան։ Այդ անցքն աւելի գրգռեց Փանահ-խանի թշնամութիւնը դէպի հայոց դաշնակից մելիքները և նորանոր կռիւների առիթ տուեց։

Հայոց դաշնակից մելիքներին հարկաւոր էին նոր ուժեր։ Պէտք է ի նկատի առնել որ Ղարաբաղի մելիքութիւնների աշխարհագրական բաժանումներն այնպէս էին դասաւորուած, որ երեք դաշնակից մելիքները խիստ դժուարութեամբ էին կարողանում միանալ և ընդհանուր ուժերով դէմ դնել թշնամուն։ Որպէս մեզ յայտնի է, դաշնակից երեք մելիքութիւնները՝ Գիւլիստանի, Ջրաբերդի և Տիզակի մելիքութիւններն էին։ Գիւլիստանը և Ջրաբերդը սահմանակից էին և այդ պատճառով կարող էին իրանց ուժերը միացնել, իսկ Տիզակը իւր աշխարհագրական դիրքով բաժանուած էր այդ երկու գաւառներից։ Տիզակի և յիշեալ երկու գաւառների մէջտեղում ընկած էին՝ Խաչէնի մելիքութիւնը, Շուշի բերդը և Վարանդայի մելիքութիւնը, որոնք կապուած էին Փանահ-խանի հետ։ Ուրեմն թշնամին մտել էր դաշնակիցների մէջտեղը։ Այդ էր պատճառը, որ Գիւլիստանի և Ջրաբերդի մելիքները շատ օգուտ չէին կարողանում քաղել իրանցից անջատուած Տիզակի մելիքից, որ այդ ժամանակ Մելիք-Եսային էր։

Գիւլիստանի Մելիք-Իւսուբը և Ջրաբերդի Մելիք-Աթամը դիմում են վրաց իշխան Հերակլէի հայր Թէյմուրազին, առաջարկում են միանալ նրա հետ, Փանահ-խանի իշխանութիւնը ոչնչացնելու համար, խոստանում են,

որ իրանք ևս պատրաստ կլինին ամեն մի հարկաւորած դէպքում օգնել վրաց իշխանին, որպէս հաւատարիմ դաշնակիցներ։ Թէյմուրազն ընդունում է հայոց մելիքների առաջարկութիւնը, որովհետև ինքը ևս թշնամութիւն ունէր Փանահ-խանի հետ։ Նա հաւաքում է վրացիների, օսերի, խևսուրների և այլ լեռնացիների ահագին խառնիճաղանճ բազմութիւնը և արշաւում է դէպի Ղարաբաղի կողմերը (1762)։ Մելիք-Աթամը և Մելիք-Իւսուբը իրանց զօրքերով միանում են նրա հետ։ Ասկարանի աւերակների *) մօտ բանակ է դրվում. հայոց մելիքները մատակարարում են իրանց դաշնակից հիւրերի բոլոր պաշարեղէնները։

Այդ միջոցին Փանահ-խանը նոյնպէս անգործ չէ մնում. նա ամրացնում է իւր բերդը՝ Շուշին, օգնութեան է կանչում իւր երկու հաւատարիմներին՝ Մելիք-Շահնազարին և Մելիք-Միրզախանին, որոնք իրանց ուժերով միանում են նրա հետ։

Ճակատամարտը կատարվում է Գարգար գետի ափերի մօտ, Ասկարանի աւերակներից փոքր ինչ հեռու։ Փանահ-խանի զօրքերը ջարդվում են և ինքը փախչում է դէպի Պարսկաստան։ Բայց երկու քաջեր՝ Դալի-Մահրասան (Աւագ վարդապետը) և Թիւլի-Արզումանը, փախստականին Խուդափիրինի կամուրջից **) բռնելով յետ են բերում։

Մելիք-Շահնազարը յաղթուելուց յետոյ փախչում է և ամրանում իւր Աւետարանոց բերդում. Մելիք-Միրզախանն էլ նրա մօտ ապաստան է գտնում։ Այդ միջոցին հայոց և վրաց միացած ուժերը պաշարում են Աւետարա-

*) Ասկարանի աւերակները Շուշի բերդից մօտաւորապէս 30 վերստ հազիւ հեռաւորութիւն ունին։

**) Երասխ գետի վրայ։

նոց բերդը, և մի քանի օրուայ ընդդիմադրութիւնից յետոյ, գրաւում են նրան։ Մելիք-Շահնազարը և Մելիք-Միրզա-խանը գերի են ընկնում. Աւետարանոց բերդն աւերակ է դառնում. այդ երկու մելիքների և Փանահ-խանի երկրները բոլորովին աւարի են առնում, հրդեհում են և ամեն ինչ ոչնչացնում։

Այդ բոլորից յետոյ Թէյմուրազը յիշեալ երկիրների իշխանութիւնը տալով Մելիք-Աթամին և Մելիք-Իւսուբին, կամենում է վերադառնալ դէպի Վրաստան, Փանահ-խանին, Մելիք-Շահնազարին և Մելիք-Միրզախանին իւր հետ տանելով որպէս գերիներ։ Բայց հայոց դաշնակից մելիքները, Թէյմուրազի հետ սկզբից դրած պայմանի համեմատ, պահանջում են, որ Փանահ-խանին և յիշեալ երկու մելիքներին իրանց ձեռքը տայ, ինչպէս կամենան, այնպէս վարուեն նրանց հետ, իսկ ինքը պէտք է բաւականանայ միայն պատերազմական աւարով։ Թէյմուրազը կամենում է նոյն խաբէութիւնը գործ դնել իւր դաշնակիցների հետ, ինչ խաբէութիւն որ գործ դրեց օվշար Փաթալի-խանը։ Նա բացարձակ կերպով չէ մերժում Մելիք-Աթամի և Մելիք-Իւսուբի պահանջը, բայց զանազան պատրուակներով յետաձգում է, մինչև իւր զօրքերի և գերիների հետ դուրս է գալիս Ղարաբաղի սահմաններից։

Մելիք-Աթամը և Մելիք-Իւսուբը հասկանում են, որ վրաց ընչաքաղց իշխանը դիտաւորութիւն ունի մեծագումար փրկանք ընդունել Փանահ-խանից և նրա երկու մելիքներից, և այնուհետև նրանց բաց թողնել։ Այդ առիթ է տալիս սաստիկ հակառակութեան. հայ և վրաց դաշնակցութիւնը քանդվում է և Մելիք-Աթամն ու Մելիք-Իւսուբը վիրաւորուած բաժանվում են Թէյմուրազից։

Բայց Մելիք-Աթամը և Մելիք-Իւսուբն այնտեսակ մարդկանցից էին, որ չէին կարող անպատիժ թողնել

խաբեբային։ Նրանք իսկոյն դիմում են Շիրվանի կառավարիչ Հաջի-Չելէբի *) անունով խանին և առաջարկում են նրան իրանց դաշնակցութիւնը, միանալու միասին վրաց իշխանի դէմ։ Այդ Հաջի-Չելէբին հաշտ էր հայոց մելիքների հետ. մենք տեսանք որ դեռ մի քանի տարի առաջ նա միացաւ Մելիք-Աթամի և Մելիք-Իւսուբի հետ և միասին քանդեցին Փանահ-խանի Անկարան անունով բերդը։ Բայց նա սաստիկ ատելութիւն ունէր դէպի վրացիները, այդ պատճառով սիրով ընդունեց Մելիք-Աթամի և Մելիք-Իւսուբի առաջարկութիւնը։

Մինչև Հաջի-Չելէբիի Կուր գետն անցնելը, մինչև հայոց երկու մելիքների հետ միանալը, կատարուեցաւ մի այլ անցք։ Վրաց իշխան Թէյմուրազի զօրքերը՝ Գանձակի մօտից անցկենալու ժամանակ կողոպտեցին ճանապարհի վրայ պատահած գիւղերը։ Նրա առաջը դուրս

---

*) Հաջի-Չելէբին ծագումով հայ էր։ Տասնևեօթներորդ դարու վերջերում Շիրվանի Ղաբալա կոչուած գաւառի Սօղլութլու գիւղում բնակվում էր Բարսեղ անունով մի քահանայ, որին թիւրքերը կոչում էին «ղարա-քէշիշ» (սև-քահանայ)։ Դա գաղթական էր Ղարաբաղի Խաչէն գաւառից և տեղային մելիքների տոհմից էր։ «Սև-քահանան» իշխանական փառասիրութիւն ունէր, դիմեց Սպահան, պարսից շահից մելիքութեան ֆիրման ստացաւ։ Բայց նա ունէր մի հակառակորդ Մելիք-Մուհամմէդ անունով Ղաբալա գաւառի Ղուրթղաշլին գիւղում, որ թոյլ չտուեց «սև-քահանայի» ստացած ֆիրմանը գործ դրուէր։ Այդ Մելիք-Մուհամմէդը, ինչպէս երևում է, նոյնպէս հայոց ծագումից էր, բայց մահմեդականութիւն ընդունած։ «Սև-քահանան» նոյնպէս ընդունում է մահմեդականութիւն, որ կարողանայ իւր ֆիրմանը գործ դնել։ Բայց հակառակորդն աւելի զօրաւոր է լինում և քահանայի կրօնափոխութիւնն անցնում է ապարդիւն։ Սև-քահանայի որդին էր Ղասաբ-Ղուրբանալին, որ մի հասարակ մսավաճառ էր։ Իսկ այդ հասարակ մսավաճառից ծնուեցաւ Հաջի-Չելէբին, որ Շիրվանի զօրաւոր խաների նախահայրն եղաւ։

եկաւ տեղային իշխան Շահվերդի-խանը. երկուսի մէջ սաստիկ կռիւ ծագեց: Շահվերդի-խանը գերի բռնուեցաւ: Այդ միջոցին վրայ հասաւ Հաջի-Չելէբին հայոց երկու մելիքների հետ: Մի թեթև ճակատամարտից յետոյ, որ կատարուեցաւ Շէյխի-Նիզամի կոչուած տեղում, վրացիները յաղթուեցան և թողնելով իրանց յափշտակած բոլոր աւարը, սկսեցին փախչել դէպի Թիֆլիզ: Հայոց և Հաջի-Չելէբիի զօրքերը հետամուտ եղան, հալածեցին նրան մինչև Սնըղի կամուրջը, անցան Ղազախի և Շամշադինի գաւառները, և ամեն տեղ թալանելով յետ դարձան:

Բայց այն, ինչ որ հայոց մելիքների ամենագլխաւոր ցանկութիւնն էր, դժբաղդաբար չկատարուեցաւ. նրանք չկարողացան ձեռք ձգել ո՛չ Փանահ-խանին, ո՛չ Մելիք-Շահնազարին և ոչ էլ Մելիք-Միրզախանին, որովհետև մինչև նրանց հասնելը, Թէյմուրազը՝ յիշեալ գերիներից մեծ գումար ստանալով, բաց էր թողել նրանց: Հայոց մելիքները կարողացան ազատել միայն Գանձակի Շահվերդի-խանին, և այդ երախտիքն ապագայում մեծ օգուտ ունեցաւ, որովհետև, որպէս պիտի տեսնենք յետոյ, Գանձակի խաների և հայոց մելիքների մէջ կազմուեցաւ սերտ բարեկամական յարաբերութիւն: Գանձակի բերդը դարձաւ հայոց մելիքների և նրանց ժառանգների ապահով ապաստարան. ամեն մի տագնապի և դժուարին դէպքերի ժամանակ այստեղ էին պատսպարվում:

XIV

Գանձակի Շահվերդի-խանը *), բացի վերոգրեալ պատ-

*) Շահվերդի-խանը Ուղուրլու-խանի որդին էր:

ճառներից, վաղուց արդէն երախտապարտ էր Մելիք-Աթամին և նրա լաւ բարեկամն էր: Երբ Շահվերդի-խանի հայրը մեռաւ, նրա եղբայրը՝ Մամատ-խանը, կամենում էր սպանել նրան Գանձակի խանութիւնը գրաւելու համար: Այդ միջոցին Շահվերդի-խանը փախաւ Ջրաբերդ Մելիք-Աթամի մօտ և իւր կեանքն ազատեց: Յետոյ Մելիք-Աթամը հայոց զօրքերով նրան տարաւ Գանձակ և Մամատ-խանին խեղդել տալով, Շահվերդի-խանին հաստատեց իւր հօր իշխանութեան մէջ: Այդ օգնութիւնը չմոռացաւ և նրա որդի Ջաւատ-խանը Մելիք-Աթամի ժառանգ Մելիք-Մէջլումի վերաբերութեամբ, որպէս պիտի տեսնենք մեր պատմութեան ընթացքում:

Իսկ Մելիք-Իւսուբը, որպէս ընթերցողին յայտնի է, մօր կողմից տոհմակից էր Շահվերդի-խանին: Մելիք-Իւսուբի մայրը, Ղամար-սօլթանը, Շահվերդի-խանի եղբօր աղջիկն էր, քրիստոնէութիւն ընդունած: Նրա պատմութիւնը յիշեցինք սկզբներում:

Թէյմուրազի հետ ունեցած պատերազմներից յետոյ Մելիք-Աթամը և Մելիք-Իւսուբն առժամանակ մնացին Գանձակում: Շահվերդի-խանը նրանց հիւրասիրեց իւր մօտ: Շահվերդի-խանը բարեսիրտ մարդ էր, որպէս առհասարակ եղել են Գանձակի խաները: Նա ծագումով թուրք չէր, այլ պարսիկ էր. պարսիկները համեմատաբար աւելի բարի են եղել դէպի քրիստոնեաները, քան թէ վայրենի, մոնղոլական թուրքերը: Իւր սահմանակից և հեռաւոր խաների մէջ (որպէս էին Շաքիի, Շիրվանի, Շուշիի, Դերբէնդի, Բագուի և այլ խաները) Շահվերդի-խանն աւելի բարձր դիրք և ձայն ունէր. նա պարսից կառավարութիւնից ճանաչուած էր որպէս բէգլէրբէգի, այսինքն իշխանների իշխան:

Շահվերդի-խանը կամեցաւ հաշտեցնել Մելիք-Աթամին

և Մելիք-Իւսուբին Փանահ-խանի հետ։ Քսանամեայ անընդհատ պատերազմները, որոնք այնքան արեան և տարաբախտութիւնների պատճառ դարձան, մաշել էին երկու կողմերի ուժերը ևս։ Ժողովուրդը բոլորովին ձանձրացել էր շարունակ կռիւներից, հանգստանալ էր ուզում։ Այդ էր պատճառը, որ Մելիք-Աթամը և Մելիք-Իւսուբը հաճութեամբ ընդունեցին Ղահվերդի-խանի առաջարկութիւնը։ Հաշտութեան գլխաւոր պայմաններն այս էին՝ որ Փանահ-խանը տէր լինի Շուշի բերդին՝ առանց իրաւունք ունենալու միջամտել մելիքների երկրի և հպատակների գործերի մէջ. եթէ հարկաւոր լինի պատերազմ արտաքին թշնամիների հետ, պէտք է վճռուի ընդհանուր համաձայնութեամբ. Փանահ-խանն ինքնագլուխ ոչ ոքի հետ պատերազմելու իրաւունք չպիտի ունենայ. հայոց մելիքների երկրներից հաւաքուած հարկերը պէտք է գործ դրուեն տեղային պէտքերի համար. Փանահ-խանը Ղարաբաղի մէջ նոր նուաճումներ անելու համարձակութիւն չի պիտի ունենայ, ևայլն։

Փանահ-խանը, քանի կենդանի էր, պահպանեց խաղաղութեան այդ պայմանները։ Նրա մահից յետոյ որդին, Իբրահիմ-խանը, թէև առժամանակ հետևեց հօր օրինակին, բայց յետոյ ոչնչացրեց հօր դաշնադրութիւնը և հանգամանքները փոխուեցան...։

Աւելորդ չէր լինի մի քանի խօսք ասել Փանահ-խանի մահուան մասին։

Մենք տեսանք, որ ուրմեցի օվշար Ֆաթալի-խանը, միանալով հայոց մելիքների հետ, պատերազմեց Փանահ-խանի հետ և նրան յաղթելով, որդուն՝ Իբրահիմ-աղային իբրև պատանդ տարաւ Պարսկաստան։ Այդ Ֆաթալի-խանը յետոյ Պարսկաստանում պատերազմ ունեցաւ Ասլարխանի հետ (որ Զէնդ-Քերիմ-խանի եղբայրն էր) և սպանեց նրան։ Երբ Քէրիմ-խանը զօրացաւ և Պարսկաստանում շատ նուաճումներ կատարեց, կամեցաւ պատժել Ֆաթալի-խանին իւր եղբօր սպանման համար։ Շիրազից գալով, պաշարեց նա Ֆաթալի-խանի Ուրմի բերդը (1762) և նրան կալանաւորելով, տարաւ Շիրազ։ Այդ ժամանակ Քէրիմ-խանն ազատեց Փանահ-խանի որդի Իբրահիմ-աղային, որ Ուրմի բերդում պահուած էր, նրան ևս իւր հետ Շիրազ տարաւ։

Փանահ-խանը լսելով այդ դէպքը, մեծ ընծաներով գնաց Պարսկաստան Քէրիմ-խանի մօտ, իւր որդուն ստանալու դիտաւորութեամբ։ Երկու տարի մնաց Շիրազում. վերջը տեսնելով որ ո՛չ իրան են բաց թողնում և ոչ որդուն են տալիս, իւր յատուկ խորամանկութեամբ մի խաղ հնարեց, որ գոնէ իւր անձը կարողանայ ազատել։ Որովհետև Քէրիմ-խանը, որ այդ ժամանակ իրան ամբողջ Պարսկաստանի թագաւոր էր համարում, երկրի խաղաղութիւնը պահպանելու համար չէր ցանկանում Ղարաբաղի խռովարարին կրկին բաց թողնել իւր հայրենիքը, Փանահ-խանն իրան ձևացրեց մեռած և դրուեցաւ դագաղի մէջ։ Նրա մարդիկը, դիմելով Քէրիմ-խանին, խնդրեցին որ թոյլ տայ կատարելու հանգուցեալի կտակը, նրա մարմինը տանելով իւր հայրենիքը, այնտեղ թաղելու համար։ Քէրիմ-խանը հասկացաւ խորամանկութիւնը։—Ես նրան պէտք է պատուով յուղարկաւորեմ... ասաց նա. նրա մարմինը ճանապարհին կըհոտի. հարկաւոր է զմռսել նրան...։

Քէրիմ-խանի հրամանով դահիճները դուրս թափեցին կենդանի հանգուցեալի փորոտիքը, որպէս անում են դիակները զմռսելու համար, յետոյ յանձնեցին նրա մարդկանց, ասելով, թէ հիմա կարող էք տանել։ Նրա մարմինը բերուեցաւ Ղարաբաղ։

Այս մահով մեռաւ Փանահ-խանը (1763)։ Այնուհե-

տե Քէրիմ-խանը մտածելով, որ որդին աւելի հաւատարմութեամբ կը ծառայէ Պարսկաստանին քան թէ խորամանկ հայրը, նրան խանութեան աստիճան շնորհեց և ուղարկեց Ղարաբաղ: Իբրահիմ-աղան դարձաւ Իբրահիմ-խան և յաջորդեց հօրը:

XV

Իբրահիմ-խանն սկզբում պահպանեց իւր հօր կապած դաշնադրութեան պայմանները հայոց մելիքների հետ, որովհետև դեռ թոյլ էր և բոլորովին չէր ամրացած իւր տեղում: Բայց յետոյ մի քանի հանգամանքներ նպաստեցին նրան զօրանալ և հայոց մելիքների հետ բռնութեամբ վարուել:

Այդ հանգամանքներից մէկն այն էր, որ Վարանդայի Մելիք-Շահնազարը, այդ հայրենիքի դաւաճանը, որ իւր Շուշի բերդը տալով Փանահ-խանին, նրան ուժ և զօրութիւն տուեց, որ իւր աջակցութեամբ այնքան բարձրացրեց հասարակ ջուանշիրցի խաշնարածին, որ Ղարաբաղի հայ իշխանութիւնների քայքայման պատճառը դարձաւ, — այժմ միևնոյն Մելիք-Շահնազարը, Փանահ-խանի մեռնելուց յետոյ, իւր վաղեմի բարեկամութիւնը նրա որդու հետ պահպանելու համար, կատարեց մի այլ ամօթալի գործ. նա իւր աղջկան՝ գեղեցիկ Հիւրի-զադին տուեց Իբրահիմ-խանին կնութեան: Մելիք-Շահնազարի այդ վարմունքը սաստիկ վրդովեցրեց հայոց միւս մելիքներին, մանաւանդ Ջրաբերդի Մելիք-Եսայուն, որովհետև Հիւրի-զադը իւր հարազատ թոռն էր *):

*) Մելիք-Շահնազարն ունէր մի քանի կին. նրա Սօնա անունով կինը Հիւրի-զադի մայրն էր և Մելիք-Եսայու աղջիկը:

Այդ դէպքն առիթ տուեց արիւնալի կռիւների Մելիք-Շահնազարի և Մելիք-Եսայու մէջ, որոնք տևեցին մի քանի տարի: Մելիք-Շահնազարը միացաւ Խաչէնի Մելիք-Միրզախանի հետ, և երկուսը միասին յարձակումներ էին գործում Մելիք-Եսայու Տող բերդի վրայ: Մի ճակատամարտի մէջ Մելիք-Միրզախանը գերի բռնուեցաւ: Մելիք-Եսային *) իւր սուրը բռնելով նրա գլխի վրայ, արտասանեց հետևեալ խօսքերը. «դու, Միրզախան, շատ նման ես այն դաւաճանին, որին կոչում էին Մեհրուժան: Նա ուրացաւ մեր կրօնը, նա պարսից ձեռքում գործիք եղաւ և սկսեց մեր հայրենիքն աւերակ դարձնել: Նրան, որպէս վարձատրութիւն իւր կատարած չարագործութիւնների համար, խոստացել էին Հայաստանի թագը: Մի ճակատամարտի մէջ նա ևս քեզ նման գերի ընկաւ հայերի ձեռքը: Այդ միջոցին հայոց զօրավարներից մէկը, որին կոչում էին Սմբատ Բագրատունի, կրակի մէջ շիկացրած շամփուրին պսակի ձև տուեց, և դնելով նրա գագաթի վրայ, ասաց. «դու ցանկանում էիր հայոց թագաւոր լինել, ահա ես, իբրև ասպետ և թագադիր, պսակում եմ քեզ»...: Բայց դու գոնէ Մեհրուժանի չափ փառասիրութիւն չունէիր. դու միայն մի ցած դաւաճան էիր, որ առօրեայ չնչին փառքի համար թուրք խանի և Մելիք-Շահնազար չարագործի արբանեակը դարձար: Քեզ հետ պէտք է վարուել ինչպէս մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպէսզի միւս արարածները նրա կծոտելուց չվարակուեն»...: Վերջին խօսքերի հետ նա իջեցրեց իւր սուրը (1775):

Մելիք-Միրզախանի փոխարէն Իբրահիմ-խանը Խաչէնի կառավարիչ կարգեց նրա որդի Մելիք-Ալլահվերդուն,

*) Մելիք-Եսային կարդացած մարդ էր. նա բաւական հմտութիւններ ունէր հայոց, պարսից և արաբական դպրութեան մէջ:

որ հօր նման հաւատարիմ մնաց Թուրք խանին: Դրանով կռիւն աւելի բորբոքուեցաւ: Եւ որովհետև կռիւների սկզբնապատճառը գեղեցիկ Հիւրի-զադն էր, այդ պատճառով Իբրահիմ-խանը նոյնպէս խառնուեցաւ կռիւների մէջ, ի հարկէ բռնելով Մելիք-Ջահնազարի կողմը:

Մելիք-Եսային միայնակ պիտի պատերազմէր իւր երեք թշնամիների դէմ, որպէս էին՝ Իբրահիմ-խանը, Մելիք-Ջահնազարը և Մելիք-Ալլահվերդին: Նրա հզօր դաշնակիցներն այլևս չկային: Մենք յետոյ կտեսնենք, որ Գիւլիստանի Մելիք-Բէգլարեան Մելիք-Յուսուբը վախճանուեցաւ (1775) և նրա որդին, Մելիք-Աբով III-ը, աւելի զբաղուած էր իւր երկրի կառավարութիւնով, քան թէ պատերազմներով: Մելիք-Յուսուբից հինգ տարի յետոյ 1780 թուին վախճանուեցաւ Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Մելիք-Ատամը, այն սարսափելի մարդը, որից դողում էր Իբրահիմ-խանը: Հանգուցեալի մահից յետոյ յաջորդեց որդին՝ Մելիք-Մէջլումը: Այդ երիտասարդը թէ հօր քաջութիւնը և թէ նրա հայրենասիրութիւնն ունէր: Բայց չափազանց դիւրագրգիռ և բարկացոտ բնաւորութեան տէր լինելով, նա հրացանի բռնել տուեց մի քանի նշանաւոր հայ ազնուականների *) և այդ պատճառով բարձրացրեց իւր իշխանութեան մէջ ներքին կռիւ: Դրա համար ժամանակ չունեցաւ Մելիք-Եսայուն օգնելու:

1781 թուին Իբրահիմ-խանը իւր բարեկամ երկու մելիքների հետ պաշարեցին Մելիք-Եսայու Տող բերդը: Նա քաջութեամբ պաշտպանվում էր: Պաշարումը տևեց երկար: Յետոյ խանը Մելիք-Ջահնազարի խորհրդով ուղար-

*) Դրանցից մէկն էր Գիւլ-եաթաղ գիւղի Մխայէլ-բէկը, միւսը Նրա փեսայ Յակոբ-իւզբաշին:

կեց նրա մօտ մի քահանայ և մի նշանաւոր հայ մարդ *), երդումով, խաչով ու աւետարանով, որ Մելիք-Եսային ցած իջնէ իւր բերդից հաշտուելու համար: Նա հաւատաց և դուրս եկաւ բերդից: Իբրահիմ-խանը նրան բանտի մէջ խեղդել տուեց. նրա ամբողջ կայքը յափշտակեց և տունն աւերակ դարձրեց **):

Մելիք-Եսային խաբէութեան զոհ դառնալուց յետոյ, նրան յաջորդեց իւր եղբօր (Մելիք-Արամի) որդի Մելիք-Բախտամը:

Իբրահիմ-խանն ունեցաւ մի երկրորդ ամուսնութիւն ևս, որ ոչ սակաւ նպաստեց նրա զօրանալուն: Նա կին առեց Դաղստանի Աւարիա գաւառակի իշխող Օմար-խանի (Ումայի-խան) աղջկան, որ կոչվում էր Բիքա: Այդ Օմար-խանը Նուսխալ-խանի որդին էր: Փեսայ դառնալով՝ մի կողմից Վարանդայի հայոց իշխանին, միւս կողմից Դաղստանի լեռնաբնակների խանին, Իբրահիմ-խանն սկսեց օր ըստ օրէ զօրանալ: Ամեն մի սպառնալից դէպքում նա կամ Դաղստանից օգնութիւն էր ստանում, կամ փախչում էր իւր աներոջ մօտ և իւր կեանքն ազատում:

*) Անունները յայտնուած չեն այն գրչագիր պատմութեան մէջ, որից մենք քաղում ենք այդ անցքը:

**) Նրա գերեզմանը գտնվում է իւր բերդի եկեղեցու գաւթում. տապանաքարի վրայ կարդացվում է հետևեալ արձանագրութիւնը.

«Այս է տապան քաջ իշխանին, Սայի անուն մեծ մելիքին. կարգեալ իշխան Նադիր-շահին. երեսուն երեք ամ տիրեց Տիզակ երկրին. գքաջութիւն և զպաղթութիւն՝ արար բազում ձեռամբ նորին: Ընդ անօրինաց էր հակառակ. ի սուր մաշէր զթըշնամին: Ինքն պարթև և զօրաւոր, քան զառաջինսն էր աչաւոր: Մինչ վացսուն և վեց ամաց եղեալ, ի յաշխարհէ վերափոխեալ»:

«Վախճանեցաւ թուին ռ. մ. լ.» (1781):

Բայց միայն Մելիք-Շահնազարը և Օմար-խանը չէին Իբրահիմ-խանի զօրանալու պատճառները. տեղի ունեցան և ուրիշ առիթներ, որոնք ոչ սակաւ ուշադրութեան արժանի են:

XVI

1775 թուին, որպէս յիշեցինք, վախճանուեցաւ Գիւլիստանի Մելիք-Բէգլարեան Մելիք-Իւսուբը ծերութեան հասակում, որով Ղարաբաղի մելիքների մի հայրենասէր և եռանդոտ դաշնակիցը պակասեցաւ: Նա կտակեց որդուն իւր սուրը պատեանի մէջ չդնել, մինչև Ղարաբաղն իսպառ մաքրուած չլինի մահմեդականներից:

Նա թողեց երկու որդի. երէցը կոչւում էր Բէգլար, կրտսերն՝ Աբով: Հօր մահից յետոյ յաջորդեց Բէգլարը:

Դա Մելիք-Բէգլար II-ն է, որ սաստիկ գոռոզ, քաջասիրտ և պատերազմասէր երիտասարդ էր: Նա դեռ հօր կենդանութեան ժամանակ մասնակցում էր նրա կռիւների մէջ և յայտնի էր իւր զարմանալի յաղթութիւններով:

Բայց այդ անպարտելի տղամարդը, որ իւր երիտասարդութիւնն անցուցել էր պատերազմների մէջ, երկար չվարեց իւր երկրի իշխանութիւնը: Մի անգամ լէզգիների հետ ունեցած ճակատամարտում, որ տեղի ունեցաւ Գանձակից ոչ այնքան հեռու, Գօրանի գետի ափին, նոյն անունով գիւղի մօտ Մելիք-Բէգլարը հրացանի գնդակից սպանուեցաւ:

Նրա մահուան մասին աւանդութիւնն ստեղծել է մի այսպիսի լեգէնդա. թէ այն րոպէում, երբ մելիքը պատրաստւում էր պատերազմ գնալու, նրա մայրը, բարեսիրտ Հերիքնազը, դուրս եկաւ որդու առջև և արտասուքն աչքերում բռնեց նրա ձեռքից, աղաչեց, որ իրան հեռու

պահէ արիւնհեղութիւնից, որ գոնէ այս անգամ պատերազմ չգնայ, որովհետև ինքը վատ երազ է տեսել... տըխուր կասկածներ տանջում են իւր սիրտը... Խստասիրտ որդին մերժեց մօր աղաչանքը, ձեռքով մի կողմ հրելով նրան, ցած ձգեց և ձին նստելով գնաց: Բայց այլևս չվերադարձաւ. մօր անէծքը պատժեց նրան...:

Բայց Մելիք-Բէգլարի սպանման մէջ կար մի ամբողջ ռօման:

Մելիք-Բէգլարն ամուսնացած էր Վարանդայի Մելիք-Շահնազարի դստեր Ամարնանի (Մարիամի) հետ: Բացի օրինաւոր կնոջից նա պահում էր մի սիրուհի Բալա անունով:

Մինչև այսօր, երբ ուղևորն անցնում է Գիւլիստանի Խարխափուտ գիւղից և մտնում է նոյն անունով ձորի մէջ, ճանապարհի աջ կողմում ցոյց են տալիս մի հին այգի: Անտառային ծառերը աճելով, խառնուել են պտղատու ծառերի հետ և այգու վաղեմի գեղեցկութիւնը ծածկուել է վայրենի մացառների տակ: Այդ տեղին կոչում են Մելիք-Բէգլարի այգի: Այստեղ յատկապէս շինել տուած գեղեցիկ ամարանոցում ապրում էր իշխանի սիրուհին: Ամարանոցի աւերակներն են մնացել այժմ:

Ամուսնու այդ տեսակ վարմունքը չէր կարող չգրգռել նրա օրինաւոր կնոջ՝ Ամարնանի խանդոտութիւնը: Այդ կինը, ինչպէս վերևում յիշեցի, Վարանդայի Մելիք-Շահնազարի աղջիկն էր. իւր հօր նման միջոցների մէջ խտրութիւն անել չգիտէր նա. վաղուց մտածում էր վրէժխնդիր լինել Բալայից: Նա ընտրեց հէնց այն գիշերը, երբ իւր ամուսինն զբաղուած էր պատերազմական պատրաստութիւններով, իսկ առաւօտեան պէտք է կռուելու գնար: Նա կաշառեց իրանց ծառաներից մէկին, որ կոչւում էր Լալա, և ուղարկեց իւր ախոյանուհուն սպանելու համար:

Եղեռնագործութիւնը կատարելու համար մի այլ զէնքի կարօտութիւն չկար. ասում են՝ գեղեցիկ կնոջ մազերի հիւսերն այնքան երկար էին, որ չարագործը փաթաթեց պարանոցովը և իւր մազերով նրան խեղդեց: Մարմինը ձրգուեցաւ հորի մէջ:

Առաւօտեան հէնց այն րոպէին, երբ Մելիք-Բէգլարը պատրաստւում էր նստել ձին, որ գնայ կռուելու, նրան լուր տուին, թէ Բալան սպանուած է: «Երբ կըվերադառնամ պատերազմից, ես գիտեմ թէ ինչ կ՚անեմ սպանողներին»... ասաց նա և գնաց:

Մելիք-Բէգլարի խստասրտութիւնը յայտնի էր եղեռնագործին: Նա հասկացաւ, որ մելիքն ամեն հնար գործ կըդնէր երևան հանելու սպանութիւնը, և այն ժամանակ ոչ միայն իրան մահով կըպատժէր, այլ և իւր ամբողջ ընտանիքը սրից անց կըկացնէր: Երկիւղը նրան մի յանցանքից մի աւելի մեծ յանցանքի մէջ ձգեց: Նա հետևեց մելիքին, որպէս նրա թիկնապահներից մէկը, պատերազմի դաշտը: Կռուի խռովութեան ժամանակ թուփերի միջից անցաւ հրացանի գնդակը և մելիքին ցած գլորեց: Ի հարկէ այն խառնաշփոթութեան մէջ ոչ ոք չէր կարող ստուգել, թէ գնդակը արդեօք մի որևիցէ լեզգու հրացանից արձակուեցաւ, թէ՞ մելիքի անձնական թիկնապահից:

Մելիք-Բէգլար II-ի մահից յետոյ նրա որդի Փրէյդունն անչափահաս լինելով, Գիւլիստանի կառավարութիւնն անցաւ հանգուցեալի եղբայր Աբով III-ի ձեռքը: Այդ Աբովը իւր նախնի միւս Աբովների նման նոյնպէս յայտնի եղաւ որպէս մի քաջ պատերազմող: Դրա կառավարութեան օրերում, որպէս պիտի տեսնենք, կատարուեցան Ղարաբաղի բախտաւոր և ամենադժբախտ անցքերը:

Եւ այսպէս՝ Գիւլիստանի Մելիք-Իւսուբը մեռաւ. Նրա որդի Մելիք-Բէգլարը սպանուեցաւ. Տիգակի Մելիք-Եսային

Իբրահիմ-խանի խաբէութեամբ զոհ դարձաւ. Ջրաբերդի Մելիք-Ալթամը մեռաւ: Նշանաւոր փորձուած մարդիկն անհետացան, մնացին դիւրագրգիռ, տաքարիւն երիտասարդները...:

Մնացած մելիքների մէջ Իբրահիմ-խանն աւելի երկիւղ ունէր Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումից: Այդ երիտասարդը իւր հօր՝ Մելիք-Ալթամի նման ամենակատաղի թշնամի էր Շուշի բերդի մահմեդական բռնակալներին: Նրան ոչնչացնելու համար Իբրահիմ-խանը հետևեց իւր հօր՝ Փանահ-խանի քաղաքականութեանը: Այդ խորամանկ ջուանշիրցին, ինչպէս իւր տեղում տեսանք (XI գլ.), Խաչէնի Հասան-Ջալալեան մելիքների իշխանութիւնը թուլացնելու համար ստեղծեց այնտեղ (Խնձրիստան գիւղում) մի նոր մելիքութիւն՝ Մելիք-Միրզախանեանների տունը, որոնք ոչ սակաւ քան մահմեդականները վնասեցին Ղարաբաղի հայկական իշխանութիւնների քայքայմանը: Այժմ Իբրահիմ-խանը, իւր հօր օրինակին հետևելով՝ Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեանների իշխանութիւնը թուլացնելու համար, մտածեց ստեղծել այնտեղ մի նոր մելիքութիւն: Այստեղ Գիւլ-եաթաղ գիւղում ապրում էին Ալլահվերդի-իւզբաշու ժառանգները: Դրանց հայրը ծառայում էր Մելիք-Ալթամի մօտ, իսկ ժառանգները ծառայում էին Մելիք-Ալթամի որդի Մելիք-Մէջլումի մօտ: Իբրահիմ-խանը կանչեց իւր մօտ Ալլահվերդի-իւզբաշու որդուն՝ Միսայէլ-բէկին, յայտնեց նրան, որ եթէ մի կերպով Մելիք-Մէջլումին ոչնչացնէ, ինքը խոստանում է նրան օգնել, որ ամբողջ Ջրաբերդի վրայ մելիք դառնայ: Միսայէլ-բէկը հրապուրուած խանի խոստմունքով, համաձայնուեցաւ կատարելու նրա ցանկութիւնը:

Միսայէլ-բէկը իւր փեսայ Յակոբ-իւզբաշուն *) իւր

---

*) Այդ Յակոբ-իւզբաշին (հարիւրապետը) յայտնի էր անու-

հետ առնելով, գնաց Մելիք-Մէջլումի մօտ իբրև հիւր։ Մելիքն այդ ժամանակ գտնվում էր իւր սեպհական ամարանոցում, Թարթար գետի ափի մօտ, Ղազարխ կոչուած տեղում *)։ Նա առանց կասկածանքի ընդունեց հիւրերին, որովհետև մէկը իւր գիւղերի կառավարիչն էր, իսկ միւսը նրա փեսան։

Ընթրիքից յետոյ, երբ հիւրերն առանձնացան իրանց համար պատրաստուած սենեակում քնելու, երկար նրանց ճրագը վառ մնաց։ «Հիմա հարկաւոր է ճրագը հանգցնել»... ասաց Մխայէլ-բէկը։—«Այո՛, ժամանակն է»... պատասխանեց նրա փեսան։ Այդ ինքն ըստ ինքեան անմեղ խօսակցութիւնը գրաւեց մելիքի սպասաւորներից մէկի ուշադրութիւնը և նա սկսեց ծածուկ լրտեսել խօսակցութեան շարունակութիւնը, որից նկատեց, որ հիւրերը ինչ որ չար դիտաւորութիւն ունին։ Նա իսկոյն իմացում տուեց մելիքի կնոջը, որ հրամայեց ծառաներին գաղտնի հսկել իւր ամուսնու բնակարանի մօտ և սպասել հետևանքին։ Եւ իրաւ, գիշերից բաւական անցած, նրանք նկատեցին, որ հիւրերը մօտեցան մելիքի բնակարանին և փորձում էին ներս մտնել։ Երկուսին ևս կալանաւորեցին։

Միւս օրը Մելիք-Մէջլումը քննելով այն դրդիչ պատճառները, որոնցից հրապուրուած իւր հիւրերը կամենում էին սպանել իրան, հրամայեց թէ Մխայէլ-բէկին և թէ նրա փեսայ Յակոբ-իւզբաշուն, երկուսին էլ հրացանի բռնել։ Մելիքն այն աստիճան զայրացած էր, որ հրամայեց նրանց ամբողջ ընտանիքը բնաջինջ անել, բայց

նովս Թիւլի-Յակոբ, այսինքն աւազակ Յակոբ. իւր յատկանիշները բացատրվում են իւր ստացած մականունով։

*) Այդ տեղն այժմ կոչվում է Մարաղա, որովհետև բնակեցրած է 1828 թուի Պարսկաստանի Մարաղա անունով քաղաքից բերուած գաղթականներով։

Մխայէլ-բէկի փոքր եղբայր Ռուստամ-բէկը առաւ նրանց և փախաւ Ջուշի բերդը Իբրահիմ-խանի մօտ։

Այդ անցքը ոչ միայն ներքին երկպառակութիւնների պատճառ դարձաւ, այլև յիշեալ Ռուստամ-բէկը, Իբրահիմ-խանի ձեռքում գործիք դառնալով, շատ չարիքներ գործեց Մելիք-Մէջլումի դէմ։ Այդ կրտեսնենք մեր պատմութեան շարունակութեան մէջ, բայց այժմ այսքանը պէտք է յիշել, որ Ռուստամ-բէկը մի նշանաւոր մարդու, Ապրես-աղայի փեսան էր *)։ Իւր աներոջ հետ կազմեց նա մի զօրեղ կուսակցութիւն ոչ միայն Մելիք-Մէջլումի դէմ, այլև բոլոր այն մելիքների դէմ, որոնք դաշնակից էին Մելիք-Մէջլումին, որպէս էին՝ Գիւլիստանի Մելիք-Բէգլարեանները և Տիզակի Մելիք-Աւանեանները։

Եւ այսպէս, թէև Իբրահիմ-խանին չյաջողուեցաւ Մելիք-Մէջլումին սպանել տալ և Ջրաբերդում ստեղծել մի նոր մելիքութիւն իւր հովանաւորութեան ներքոյ, այսուամենայնիւ, նա հասաւ իւր նպատակին։ Նա կարողացաւ կազմել մի նոր և հակառակ կուսակցութիւն, որի մէջ կար և կաթողիկոս։ Այսպիսով Ղարաբաղի մելիքները երկու հակառակ կուսակցութիւնների բաժանուեցան. մէկը, Մելիք-Շահնազարեանների կուսակցութիւնը, որին պատկանում էին խանին համակրողները և Երիցմանկանց վանքի կաթողիկոսները, միւսը՝ Մելիք-Մէջլումի և Մելիք-Բէգլարեանների կուսակցութիւնը, որոնք հակառակ էին խանին և միացած էին Գանձասարի վանքի կաթողիկոսի հետ։

---

*) Այդ Ապրես-աղան Կասապացի էր. նա ամուսնացած էր Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսի քրոջ հետ։ Այդ ամուսնութիւնից ծնուեցաւ մի որդի Իսրայէլ անունով և մի աղջիկ Վարդ-խաթուն անունով։ Իսրայէլը Երիցմանկանց վանքի կաթողիկոս դարձաւ, իսկ Վարդ-խաթունն ամուսնացաւ Ռուստամ-բէկի հետ։

XVII

Որպէս մի միջանկեալ պատմութիւն, մենք հարկաւոր ենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել վերև յիշած երկու, միմեանց հակառակ, կաթողիկոսութիւնների հետ, որոնցից մէկը գտնվում էր Գանձասարի վանքում, իսկ միւսը Երիցմանկանց վանքում, որոնք ոչ սակաւ ներգործութիւն ունեցան Ղարաբաղի հայկական իշխանութիւնների կործանման վրայ։

Մեր պատմութեան մէջ սակաւ չէ այն տխուր երևոյթների թիւը, որ ամեն անգամ, երբ ծագել է մի որևիցէ ազգային կարևոր հարց, ամեն անգամ, երբ հայրենիքը տագնապի մէջ է գտնուել, ամեն անգամ, երբ ժողովրդի բարօրութեան համար մխիթարական երևոյթներ են նշմարուել,—մի խօսքով, ամեն մի բախտաւոր և դժբախտ րոպէներում, երբ ժողովրդի ուշադրութիւնը լարուած է եղել դէպի իւր գրութիւնը,—յանկարծ ծագել են կրօնական կամ եկեղեցական վէճեր։ Ժողովուրդը թողել է իւր կենսական հարցերը և զբաղուել է այդ վէճերով։

Մենք կարող էինք շատ օրինակներ բերել անցեալից, բայց կըվերառնենք հէնց նոյն պատմութիւնից, որ մեր յօդուածի նիւթ ենք ընտրել։

Յայտնի է, որ Աղուանից կաթողիկոսութիւնը՝ սկսեալ Գրիգորիսի *) օրերից, աւանդական կերպով շարունակուեցաւ մինչև 1828 թուականը. ուրեմն նա ամբողջ 15 դար գոյութիւն ունէր։ Այդ կաթողիկոսութեան ներկայացուցիչները նստում էին Աղուանից աշխարհի զանազան վանքերում, իսկ վերջին ժամանակներում նրանց աթոռա-

*) Գրիգորիսը սուրբ Գրիգոր Լուսաւորչի թոռն էր։

տեղին եղաւ Ղարաբաղի Խաչէն գաւառի Գանձասարայ վանքը։

Խաչէնը Հասան-Ջալալեան իշխանների ժառանգութիւնն էր. այստեղ տիրում էին վերջին ժամանակներում այդ տոհմից առաջ եկած մելիքները։ Կաթողիկոսներն ընտրվում էին դարձեալ միևնոյն տոհմից։ Եւ այդպիսով քահանայապետութիւնը և մարմնաւոր իշխանութիւնը գտնվում էր միևնոյն տոհմի ներկայացուցիչների ձեռքում։

1651 թուին Խոտորաշէնցի Սիմոն անունով մէկը (որ Հասան-Ջալալեանների տոհմից չէր, այլ մի հասարակ քահանայի որդի էր) Մռաւ լեռան մթին ձորերի մէկի մէջ հիմնեց մի վանք Երիցմանկանց անունով և այդ վանքի կաթողիկոսը դարձաւ։ Նրանից սկսուեցաւ մի նոր և Աղուանից վաղեմի կաթողիկոսարանին հակաթոռ կաթողիկոսութիւն։ *) Այդ երկու միմեանց հակառակ կաթողիկոսները (Գանձասարայ վանքը և Երիցմանկանց վանքը) կանգնած էին միմեանց հանդէպ, ոչ աւելի քան 24 ժամ ճանապարհի հեռաւորութեամբ։ Առաջինը գտնըվում էր Խաչէնի գաւառում, իսկ երկրորդը Ջրաբերդի գաւառում։

Երիցմանկանց վանքի կաթողիկոսների աթոռակալութիւնը տևեց 1651 թուից մինչև 1800 թուականի վերջը։ Այդ այն ժամանակամիջոցն էր, երբ Ղարաբաղի հայերի ամեն մի իզուր վատնած րոպէն նրանց համար մեծ կորուստ էր։ Այդ ժամանակամիջոցում զարթնել էին Ղարաբաղի մելիքների անկախութեան ձգտումները, նրանք սկսեալ Պետրոս Մեծի օրերից, ծանրակշիռ բանակցութիւն-

*) Սիմոնին յաջորդեց նրա ազգական Ներսէսը, յետոյ Ներսէսի քրոջ որդի Իսրայէլը, յետոյ Սիմոնի եղբօրորդի փոքր Սիմոն կաթողիկոսը, որ վերջինն էր։

ներ ունէին ռուսաց արքունիքի հետ, պատերազմում էին պարսիկների և օսմանցիների դէմ. ամբողջ Ղարաբաղը շարժման մէջ էր։ Այդ տարիները Ղարաբաղի պատմութեան ամենատաղնապալի ժամանակներն էին...։

Բայց ինչ էին շինում կաթողիկոսները։

Բաղդասար միտրոպօլիտի կազմած և այժմ մեր ձեռքում գտնուած զանազան ֆիրմանների և հրովարտակների հաւաքածուից երևում է, որ Գանձասարի և Երիցմանկանց կաթողիկոսարանների միմեանց հակառակ աթոռակալները *)՝ յիշեալ ժամանակամիջոցում երբ Ղարաբաղի ժողովուրդն զբաղուած էր իւր հայրենիքի անկախութեան խնդրով,—կաթողիկոսներն ընդհակառակը զբաղուած են եղել կռիւներով, միմեանց վրայ գանգատներ անելով՝ միմեանց ձեռքից վիճակներ խլելու համար։

Ի հարկէ կաթողիկոսներից իւրաքանչիւրն ունէր իւր կուսակցութիւնը, և այդ պատճառով կռիւների մէջ մասնակցում էին թէ ժողովուրդը և թէ ժողովրդի ներկայացուցիչները—մելիքները։

Չէ կարելի հերքել, որ կաթողիկոսների մէջ կային և օրինաւոր մարդիկ, ինչպէս Եսային և Ներսէսը, որոնք մելիքների հետ միացած, գործում էին հայրենիքի փրկութեան համար։ Բայց մի օրինաւորի շինածը, միւս անպիտանները ոչնչացնում էին...։

Այդ կտեսնենք յետոյ. հիմա շարունակենք մեր պատմութիւնը։

Երբ Իբրահիմ-խանը յաջորդեց Փանահ-խանին, միևնոյն տարուայ մէջ (1763) Գանձակում վախճանուեցաւ

*) Երիցմանկանց վանքի կաթողիկոսների ժամանակակիցները Գանձասարի վանքում էին՝ Երեմիա, Եսայի, Յովհաննէս և վերջինը Սարգիս, որ վախճանուեցաւ 1828 թուին, բոլորն էլ Հասան-Ջալալեան իշխանների տոհմից։

Երեցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսը։ Դարձեալ միևնոյն տարուայ մէջ Ղարաբաղի մելիքները, գլխաւորապէս Ջրաբերդի իշխան Մելիք-Աթամը *), օծել տուին Յովհաննէսին Գանձասարի վանքի կաթողիկոս։

Նոյն միջոցում, երբ Յովհաննէսը Գանձասարի կաթողիկոս դարձաւ, նրա հակառակ, Գանձակի հայերը՝ տեղային խանի օգնութեամբ օծել տուին Իսրայէլ եպիսկոպոսին կաթողիկոս Երիցմանկանց վանքի անունով (1763)։

Երկու կաթողիկոսների մէջ երկար հակառակութիւններ եղան։ Մելիքները դիմեցին Ս. Էջմիածին, ուր աւելի խառնուեց գործը։ Խռովութիւնները վերջացան նրանով, որ Յովհաննէսն ընդունուեցաւ որպէս Գանձասարի օրինաւոր աթոռակալ, իսկ Իսրայէլը մնաց Գանձակում որպէս նրա հակաթոռ։ Նա համարձակութիւն չունեցաւ մինչև անգամ Գանձակից գալ իւր վանքը (Երիցմանկանց վանքը), որի անունով օծուած էր, և այդ վիրաւորանքի համար միշտ մի յարմար առիթ էր որոնում վրէժխնդիր լինելու իւր հակառակորդից՝ Յովհաննէս կաթողիկոսից։ Այդ առիթը գտաւ նա, և իւր վրէժխնդրութեամբ ոչ միայն սպանել տուեց Յովհաննէս կաթողիկոսին, այլ և սպանեց այն մեծ գործը, որ Ղարաբաղի մելիքներն ստեղծել էին...։

XVIII

1762 թուին ռուսաց գահը ժառանգեց Եկատերինա II կայսրուհին։ Նա սկսեց ուշադրութիւն դարձնել Հայաստանի և Վրաստանի վրայ։ Հայոց հարցը կրկին զարթնեցաւ։

*) Յովհաննէս կաթողիկոսը Մելիք-Աթամի հետ խնամութիւն ունէր. նրա քոյր Ղամար-սօլթանը Մելիք-Աթամի կինն էր։

Եկատերինա II-ը կամեցաւ իրագործել Պետրոս Մեծի նպատակները Հայաստանի և Վրաստանի վերաբերութեամբ։ Այդ ժամանակ Ռուսաստանի հայոց առաջնորդն էր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան-Երկայնաբազուկը։ Վայելելով կայսրուհու առանձին ողորմածութիւնը և աւելի մօտ յարաբերութիւններ ունենալով ռուսաց արքունիքի հետ, Յովսէփ արքեպիսկոպոսը դարձաւ թարգման հայ ժողովրդի բաղձանքների, որ վաղուց սնուցանում էր նա իւր հայրենիքի վերականգման մասին։

Նա աւելի մեծ եռանդով սկսեց հետևել իւր նախորդի՝ Մինաս արքեպիսկոպոսի օրինակին։ Այդ արժանայիշատակ եկեղեցականը, որպէս տեսանք մեր պատմութեան սկզբում, գործում էր Պետրոս մեծի օրերում, իւր ընկեր Իսրայէլ Օրիի հետ։ Իսկ Յովսէփ արքեպիսկոպոսը գործում էր Յովհաննէս Լազարեանի հետ։ Թէ Օրին և թէ Լազարեանը միևնոյն հայրենիքից էին, այսինքն՝ Սպահանից գաղթած հնդկաստանցիներ։

Սպահանի և Հնդկաստանի հայերը թէև պատմական հանգամանքների պատճառով տարագրուեցան իրանց հայրենիքից, բայց իրանց սրտերը թողեցին Հայաստանի աւերակների մէջ։ Նրանք արևելքի հեռաւոր խորքերում բախտ և հարստութիւն գտան, բայց Ինդոս գետի ափերից միշտ խորին կարօտով յիշում էին հայկական աշխարհը, որպէս տարագրուած Իսրայէլը Տիգրիսի ափերից յիշում էր իւր սուրբ Երուսաղէմը։

Նրանք չէին խնայում իրանց հարստութիւնը, միայն թէ կարելի լինէր առանց արիւնի ոսկով գնել հայրենիքի փրկութիւնը։ Եկատերինա II կայսրուհու գահակալութիւնից երկու տարի առաջ (1760) Անգլիայից Ս. Պետերբուրգ եկաւ հայազգի Էմին Յովսէփեանը, որ բնիկ Պարսկաստանի Համադան քաղաքիցն էր, իսկ Հնդկաստանում

միլիոններ էր վաստակել։ Նա առաջարկեց իւր բոլոր հարստութիւնով օգնել ռուսներին, եթէ կը համաձայնէին իրանց զօրքերով մասնակցել հայերի հետ՝ Հայաստանը պարսից լծից ազատելու գործում։ Նրա առաջարկութիւնը համակրութեամբ ընդունուեցաւ։ Էմինը Ս. Պետերբուրգից եկաւ Հայաստան. Ղարաբաղի մելիքները մեծ ոգևորութեամբ ընդունեցին նրան։ Իրանք պատերազմելու համար սիրտ և զօրեղ բազուկներ ունէին, իսկ Էմինը փող էր տալիս զէնքեր գնելու համար։ Ուրեմն ամեն ինչ պատրաստ էր։ Վրաց և հայոց մէջ մի զօրեղ դաշնակցութիւն կապելու համար Էմինը դիմեց և Քարթալինիայի իշխան Հերակլին, յայտնեց նրան իւր միտքը։ Բայց այդ երկերեսանի իշխանը, որ այդ ժամանակ մի կողմից պարսիկների փէշկէշն էր բռնած, իսկ միւս կողմից աչքերը դարձրած ունէր դէպի Ս. Պետերբուրգ, անհամակրութեամբ վերաբերուեցաւ դէպի Էմինի առաջարկութիւնը։ Հայոց կրեսոսը գնաց այնուհետև Կալկաթա քաղաքական առանձին խորհուրդներով։ Բայց վաղահաս մահը թողեց նրա նպատակներն անկատար։ Նրա միլիոններն անտէր մնալով անգլիական բանկում, այնպէս էլ կորան...։

Յովսէփ արքեպիսկոպոսն այն աստիճան ոգևորուած էր Հայաստանի փրկութեան գաղափարով, որ նա իւր հայրենիքի վերականգնման հարցը կայսրուհու ողորմածութեամբ արդէն իրականացած էր համարում։ Վերանորոգուած Հայաստանը պիտի գտնուէր Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, որպէս առանձին վասալական իշխանութիւն։ Յովսէփ արքեպիսկոպոսին մինչև անգամ առաջարկուեցաւ կազմել դաշնակցութեան ծրագիրը, թէ ո՛րպիսի յարաբերութիւններ պիտի ունենար հայոց ազգը իրան հովանաւորող պետութեան հետ։ Այդ դաշնագիրը, որպէս յետոյ կը տեսնենք, բաղկացած էր 19 յօդուածներից

և բովանդակում էր իւր մէջ գլխաւոր հիմունքները, թէ որպիսի կազմակերպութիւն պիտի ստանար վերանորոգուած Հայաստանը և ինչ պարտաւորութիւններ պիտի յանձն առնէր նա ռուսաց պետութեան վերաբերութեամբ։

Յիշեալ դաշնագիրը գրուեցաւ 1790 թուին. միևնոյն ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսը կազմեց մի ընդարձակ տեղեկագիր, որի մէջ մանրամասնաբար նկարագրեց Ղարաբաղի մելիքների ունեցած յարաբերութիւնները ռուսաց արքունիքի հետ՝ Պետրոս Մեծի օրերից մինչև իւր ժամանակը, և յիշեցրեց նրանց մատուցած մեծ ծառայութիւնները Ռուսաստանին։ Այդ տեղեկագիրը վերոյիշեալ դաշնագրի հետ արքեպիսկոպոսը ներկայացրեց Կայսրուհուն գեներալ-ֆելդմարշալ իշխան Գրիգորիի Ալեքսանդրովիչ Պոտեմկինի միջնորդութեամբ։

Պոտեմկինը Յովսէփ արքեպիսկոպոսի լաւ բարեկամն էր։ Ինչպէս երևում է շատ պատմական փաստերից, նա արդէն իրան հայկական նոր իշխանութեան աթոռի թեկնածու (կանդիդատ) էր համարում։

Ընդհանուր հայերի ոգևորութեանը չափ չկար. աշխարհի ամեն ծայրերում ցրուած հայերն արդէն գիտէին թէ շուտով Հայաստանը կվերականգնի։ Յովսէփ արքեպիսկոպոսը, այդ եռանդոտ, անխոնջ եկեղեցականը, շարունակ թղթակցութիւններ ունէր ամեն երկրների հետ, ուր որ հայեր կային։ Սկսեալ Հնդկաստանից մինչև Լեհաստան, սկսեալ Եգիպտոսից մինչև Պարսկաստան նա տարածում էր իւր թղթերը և ամեն տեղ բորբոքում էր հայրենասիրութիւն։ Նա թղթակցութիւն ունէր Վրաստանի իշխանների, Ս. Էջմիածնի կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների հետ։

Ոգևորութիւնն այնքան մեծ էր և Հայաստանի ազատութեան գործն այնքան իրականացած էր համարվում,

որ Հնդկաստանում Յակոբ Շահամիրեանի հեղինակութեամբ տպագրեցին մի գիրք, որ բովանդակում էր իւր մէջ Հայոց և վրաց միացեալ թագաւորութիւնների վարչական և դատաստանական օրէնքները։

Հնդկաստանի դրամատէրերը չէին խնայում իրանց փողերը հեռաւոր Հայաստանի ազատութեան գործին ծառայեցնելու համար։ Այդ միջոցներում յայտնուեցաւ մի այլ հնդկաստանցի հայրենասէր, որ ցանկանում էր Հայաստանի ազատութիւնը ոսկով գնել Պարսկաստանից և Թիւրքիայից։ Նա արդէն գնել էր վրաց Գիօրգի իշխանից Լօռու գաւառը և դիտաւորութիւն ունէր գնելու նաև Բօրչալուի գաւառը, Երևանի նահանգը և ուրիշ երկիրներ, որպէսզի այդ կողմերում զարգացնէր բամբակի, շաքարեղէգի, լեղակի և սուրճի մշակութիւնը, գործարաններ բաց անել տար և իւր հայրենիքը տնտեսապէս կենդանացնէր։

Այդ բոլոր շարժումներին զարկ էր տալիս Յովսէփ արքեպիսկոպոսը։

Ռուսաց կառավարութեան այն ժամանակուայ քաղաքական շահերը պահանջում էին, որ պետութեան արևելեան սահմանները պարսից և օսմանցոց յարձակումներից ազատ պահելու համար, որպէս մի ամուր պատնէշ, վերականգնեցնէին հայ-վրաց միացեալ իշխանութիւնը, որ, Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, խոստանում էր հաւատարիմ սահմանապահ լինել։ Արևելեան մահմեդականութիւնը, մանաւանդ Անդրկովկասի մահմեդականները միշտ մեծ վտանգ էին սպառնում Ռուսաստանին։ Հարկաւոր էր մի միջնապարիսպ նրանց կատաղի հոսանքի առաջն առնելու համար, և այդ միջնապարիսպը պէտք է լինէին քրիստոնեայ հայերը և վրացիները։

Դեռ 1783 թ. ապրիլի 6-ին իշխան Գրիգորիի Ալեքսանդրովիչ Պոտեմկինը, որ հրապուրուած էր անկախ Հայաստանի իշխանութեան գլուխն անցնելու բաղձանքով, հրամանագրեց նոյն ժամանակուայ Կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ-պօրուչիկ Պաւել Սերգէիչ Պոտեմկինին, որ նա իշխանութիւնից հեռացնէ Շուշիի Իբրահիմ-խանին, օգնէ հայոց մելիքներին՝ Ղարաբաղում հայոց անկախ իշխանութիւն հաստատելու համար: Միւնոյն բովանդակութեամբ հրաման կրկնուեցաւ 1783 թ. մայիսի 10-ին նոյն գեներալ-պօրուչիկ Պոտեմկինին, որ հայերին յուսադրէ, որպէսզի նրանք գործակցեն ռուսաց կառավարութեան նպատակներին, որ դիտաւորութիւն ունի կազմելու նրանցից մի զօրեղ քրիստոնեայ պետութիւն, Ռուսաստանի բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ:

Այդ բոլորը գիտէին Ղարաբաղի մելիքները, այդ բոլորը յայտնի էր Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին, որ մելիքների խորհրդակիցն էր, այդ բոլորը յայտնի էր և Ս. Էջմիածնի կաթողիկոսին, որ գաղտնի մասնակցում էր ընդհանուր գործին: Ղարաբաղի մելիքները խոստանում էին մատակարարել ռուսաց զօրքերի բոլոր պաշարները և այլ պիտոյքները, երբ նրանք իրանց կողմը կըգային. խոստանում էին իրանց ոյժերով միանալ ռուսաց զօրքերի հետ: Պատերազմը նշանակուած էր 1784 թուի ամառը. գեներալ-պօրուչիկ Պոտեմկինը պատրաստուած էր պարսիկների դէմ պատերազմ գնալու: Այդ ժամանակ Ղարաբաղի մելիքների կողմից Ստեփան Դաւթեան անունով մի պատուիրակ գնաց գեն. պօր. Պոտեմկինի մօտ, հայոց պատրաստութիւնների և Անդրկովկասի քաղաքական դրութեան մասին նրան մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու: Այդ Ստեփան Դաւթեանը իւր արժանաւոր ծառայութեան

համար վարձատրուեցաւ պրեմիեր-մայորի աստիճանով:

XIX

Մինչ ռուսաց կողմից այսպիսի պատրաստութիւններ էին կատարւում, մինչ Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս Յովսէփը, վառուած հայրենասիրութեան հոգւով, անխոնջ կերպով աշխատում էր իրագործել իւր սկսած գործի մեծ գաղափարը, այդ միջոցներում Ղարաբաղում կատարուեցան մի քանի աղէտալի դէպքեր:

Մենք տեսանք, մինը միւսից յետոյ (1775—1780) վախճանուեցան Ղարաբաղի երկու նշանաւոր իշխանները՝ Գիւլիստանի Մելիք-Իւսուբը և Ջրաբերդի Մելիք-Աթամը, որոնք իրանց հայրենիքի ազատութեան համար ամենաեռանդոտ գործիչներն էին, որոնք ամբողջ քսան տարի պատերազմեցին Փանահ-խանի հետ և թոյլ չտուին, որ նրա իշխանութիւնը տարածուի Ղարաբաղի վրայ: Մելիք-Իւսուբին յաջորդեց նրա որդին՝ Մելիք-Աբով III-ը. իսկ Մելիք-Աթամին յաջորդեց որդին՝ Մելիք-Մէջլումը: Դրանք պահպանեցին նոյն դաշնակցութիւնը, որ կապել էին իրանց հայրերը և շարունակեցին նոյն բանակցութիւնը, որ սկսել էին նրանք ռուսաց կառավարութեան հետ՝ իրանց հայրենիքի ազատութեան վերաբերութեամբ:

Դարձեալ տեսանք, որ Մելիք-Աթամի վախճանուելուց մի տարի յետոյ (1781) Տիզակի տիրապետող Մելիք-Աւանեան Մելիք-Եսային Իբրահիմ-խանի խաբէութեանը զոհ դարձաւ: Նրա յաջորդը՝ Մելիք-Բախտամը ամենայն հաւատարմութեամբ պահպանեց իւր նախորդի դաշնակցութիւնը վերոյիշեալ երկու մելիքների հետ:

Նոյնպէս տեսանք, երբ Հասան-Ջալալեան Յովհաննէսը Գանձասարի վանքի կաթողիկոս ձեռնադրուեցաւ

(1763), նրա հակառակ, նոյն տարուայ մէջ, Գանձակում Իսրայէլ անունով մէկը նոյնպէս Աղուանից կաթողիկոս ձեռնադրուեցաւ և մնաց տեղային Ջաւատ-խանի պաշտպանութեան ներքոյ: Այդ հակաթոռ Իսրայէլ կաթողիկոսը կործանեց այն մեծ շէնքը, որ Յովհաննէս կաթողիկոսը և Ղարաբաղի երեք մելիքները մեծ ջանքերով կառուցել էին...:

Մինչ Ղարաբաղի մելիքները մի կողմից քաղաքական բանակցութիւններ էին վարում ռուսաց կառավարութեան հետ, իսկ միւս կողմից ներքին երկպառակութիւնը ջլատում էր նրանց ուժերը,— այդ միջոցներում Իբրահիմ-խանը քնած չէր, նա խիստ արթուն էր և գիտէր ամեն հանգամանքից օգուտ քաղել:

Նա նկատում էր ռուսների պատրաստութիւնները. նրան աղօտ կերպով յայտնի էր, որ այդ պատրաստութիւնների և Ղարաբաղի մելիքների շարժումների մէջ կար մի գաղտնի կապ: Նրան յայտնի էր և այն, որ վրաց Հերակլ իշխանը ծածուկ բանակցութիւններ ունի մելիքների հետ: Նա գիտէր, որ այդ բոլորը իւր իշխանութեան կործանմանը վտանգ էր սպառնում: Նա սկսեց ամրացնել Շուշի բերդը, պատրաստուեցաւ վտանգի առաջն առնելու:

Ռուսները խոստանում էին օգնութիւն հասցնել հայերին և վրացիներին, բայց ուշանում էին:

Իբրահիմ-խանը տեսնելով, որ առանց ռուսների օգնութեան ևս հայոց և վրաց միացեալ ոյժերը կարող էին նրան միանգամայն ոչնչացնել, մտածեց Վրաստանին կողմնակի կերպով մի հարուած տալ, իսկ յետոյ դառնալ դէպի հայերը:

Մենք XV-րդ գլխում յիշեցինք, որ Իբրահիմ-խանը, բացի Մելիք-Շահնազարի աղջիկը իրան կին առնելուց, ամուսնացաւ նաև Աւարիայի տիրապետող Օմար-խանի քրոջ հետ: Այդ խնամութիւնը մի ամուր դաշնակցական կապ

դարձաւ նրա և Օմար-խանի մէջ: Իբրահիմ-խանը մտածեց վրաց Հերակլ իշխանին զբաղեցնել իւր անհրոջ բարբարոս լեռնաբնակների հետ, որպէսզի նա ժամանակ չունենայ հայերի հետ միանալու և իւր դէմ գործելու:

Նրա դրդելով Օմար-խանը Կովկասեան լեռնաբնակների ահագին բազմութեամբ յարձակուեցաւ Վրաստանի վրայ (1782): Նախ Բօրչալուն աւերակ դարձրեց, յետոյ մտաւ Լօռու գաւառը, պաշարեց Գիւմուշ-խանա *) կոչուած բերդը: Այդ բերդում ամրացած էին այն յոյները, որոնք հանքերում աշխատում էին, այնտեղ էին ապաստանած և մերձակայ հայոց գիւղերի բնակիչները: Օմար-խանը գրաւեց բերդը և բոլոր յոյներին կոտորել տուեց, իսկ հայերից բազմաթիւ գերիներ վեր առաւ: Թէև Հերակլ իշխանը՝ որ բացի վրացիներից իւր հետ 300 ռուսաց զինուոր ևս ունէր, շտապեց Օմար-խանի բարբարոսութիւնների առաջն առնելու, բայց նա այնքան երկչոտ գտնուեցաւ, որ մինչև անգամ չհամարձակուեցաւ մօտենալ նրան: Օմար-խանը կատաղի կերպով ամեն ինչ աւերակ դարձրնելով, գերիների բազմութեամբ անցաւ Ախալցխա, որ այդ ժամանակ օսմանցիների ձեռքումն էր, և ձմեռն անցկացրեց տեղային կառավարիչ Սիւլէյման-փաշայի մօտ: Այստեղից Օմարը իւր զօրքերն ուղարկեց վրաց Վախամու բերդի վրայ, ուր իւր ընտանիքով բնակվում էր իշխան Աբաշիձէն: Օմարի զօրքերը յիշեալ բերդը գրաւեցին և բնակիչներին գերի վեր առան. դրանց թւումն էին Աբաշիձէի երկու աղջիկը, որոնցից մէկին Օմարը իւր համար պահեց, իսկ միւսին ընծայ ուղարկեց Իբրահիմ-խանին:

Գարնանը Օմարը թողեց Ախալցխան և Երևանի նա-

*) Գտնվում է Հաղբատի և Սանահնի մօտ և տեղային հանքերի անունով կոչվում է Գիւմուշ-խանա, որ նշանակում է արծաթի տուն կամ արծաթի հանք:

հանգի միջով անցաւ Ղարաբաղի կողմերը և այնտեղից գնաց իւր երկիրը, տանելով իւր հետ բազմաթիւ գերիներ և կողոպուտ: Այսուամենայնիւ լեռնային գազանի կատարած այդ փոթորկալից շրջանը Վրաստանի և Հայաստանի միջով մի ազդու ցոյց էր, որով Իբրահիմ-խանը կամեցաւ զգալ տալ քրիստոնեաներին իւր զօրութիւնը:

XX

Ղարաբաղի մելիքներն սպասում էին 1784 թուի ամառին և գեներալ պօլուչիկ Պոտեմկինի զօրքերին, որ նրա հետ միանալով, սկսեն պատերազմել մահմեդականների դէմ: Անցաւ մի տարի ևս, խոստացած օգնութիւնը չհասաւ:

1785 թ. ապրիլ ամսում մի մարդ մուրացկանի հագուստով, ձեռքին բռնած մի ծանր ճանապարհորդական մահակ, Գանձասարի վանքից ճանապարհ ընկաւ դէպի Գանձակ: Այդ մուրացկանին՝ սաստիկ արագընթացութեան համար կոչում էին «եօրղա» Գրիգոր: Նոյն ամսի միևնոյն օրը մի այլ մարդ Չահ-Մասուր գիւղից ուղևորուեցաւ դէպի Շուշի բերդը: Այդ վերջինը մուրացկան չէր, ազնուական էր: Նա ուղիղ ներկայացաւ Իբրահիմ-խանին, յայտնեց նրան, թէ հայոց մելիքները՝ Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսի հետ միացած, մի նոր թուղթ գրեցին ռուսաց կայսրուհուն, որով հրաւիրում են ռուսներին որ գան տիրեն քո երկրները. մի խօսքով՝ դաւաճանը մանրամասնաբար տեղեկութիւններ տուեց այն բոլոր պատրաստութիւնների և ռուսաց հետ ունեցած յարաբերութիւնների մասին, որ մինչև այնօր կատարել էին մելիքները և Յովհաննէս կաթողիկոսը:

Թէև մելիքներն իրանց պատրաստութիւնները սաս-

տիկ զգուշութեամբ էին կատարում, թէև նրանց մէջ պահպանվում էր խորին գաղտնապահութիւն, բայց այդ դաւաճանը Յովհաննէս կաթողիկոսի ընտանին էր, նրա հարազատ եղբայրն էր, որ անձամբ մասնակցում էր խորհուրդների մէջ: Դա Հասան-Ջալալեան Մելիք-բէկի որդի Ալլահ-Ղուլի-բէկն էր: Մի եղբօր շինածը միւս եղբայրը քանդում էր...: Մեր պատմութիւնը բաւական աղքատ է լաւ մարդկանցով, իսկ հարուստ է դաւաճաններով...:

Իբրահիմ-խանին յայտնի էին ռուսաց պատրաստութիւնները. նա վաղուց արդէն սկսել էր ամրացնել Շուշի բերդը: Նրան անորոշ կերպով յայտնի էին և հայոց գաղտնի յարաբերութիւնները ռուսների հետ, բայց այդ մասին նա մի հաստատ փաստ չունէր իւր ձեռքում հայերին պատժելու համար: Դաւաճանը ցոյց տուեց նրան փաստը: Նա յայտնեց, թէ մի սուրհանդակ, մուրացկանի հագուստով, իւր ձեռքի գաւազանի մէջ թագցրած, նոր թղթեր տարաւ Գանձակ, իսկ այնտեղից պիտի գնայ Թիֆլիզ: Այդ թղթերին, աւելացրեց նա, ստորագրել են իմ եղբայր Յովհաննէս կաթողիկոսը, Գիւլիստանի Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբովը, Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումը, Տիզակի Մելիք-Աւանեան Մելիք-Բախտամը և այլ նշանաւոր եկեղեցական ու աշխարհական անձինք:

Վարանդայի Մելիք-Շահնազարը, Խնզըրիստանի Մելիք-Ալլահվերդին, Գիւլ-Եաթաղի Ռուստամ-բէկը խանի կողմնակիցները լինելով և միանգամայն հակառակ միւս մելիքների ձգտումներին, այդ պատճառով դաշնակից մելիքները չէին հրաւիրել նրանց մասնակցելու իրանց խորհրդի մէջ:

Խանի հարցմունքին, թէ, կարելի՞ է արդեօք սուրհանդակի տարած թղթերը մի հնարքով ձեռք բերել, դաւաճանը պատասխանեց, թէ սուրհանդակը ներկայանալու

է Գանձակում Խորայէլ կաթողիկոսին, որ նրանից եւս թըղթեր առնէ ու յետոյ գնայ. բաւական է միայն յայտնել Խորայէլ կաթողիկոսին, և նա խսկոյն կըկալանաւորէ բոլոր թղթերը։

Խորայէլը վերջին ժամանակներում թագցնելով իւր հին թշնամութիւնը, որ ունէր Յովհաննէս կաթողիկոսի դէմ, առերես ցոյց էր տալիս, թէ նրա հետ համամիտ և համակամ է այն բոլոր խորհուրդների մէջ, որ պիտի կատարուէին հայրենիքի փրկութեան համար։ Նա Գանձասարի վանքում խաչի և աւետարանի վրայ հանդիսաւոր կերպով երդուող եկեղեցականներից մէկն էր, որոնք ուխտեցին հաւատարիմ մնալ հայրենիքի ազատութեան գործին։ Բայց միևնոյն ժամանակ այդ չարագործը շատ անգամ գաղտնի կերպով դիմել էր Իբրահիմ-խանին, յայտնելով նրան, որ եթէ Յովհաննէս կաթողիկոսին կըհեռացնէ և Գանձասարի վանքի կաթողիկոսական աթոռն իրան կըտայ, ինքը խոստանում է հաւատարիմ լինել խանին։

Խանն այժմ յարմար առիթ գտաւ փորձելու նրա հաւատարմութիւնը։ Գանձակի Ջաւատ-խանը իւր հետ թըշնամական յարաբերութիւնների մէջ լինելով, ինքը չէր կարող մարդ ուղարկել սուրհանդակին կալանաւորելու համար։ Նա մի նամակ գրեց Խորայէլ կաթողիկոսին, յայտնելով, թէ նրա մօտ գալու է մի թղտատար մուրացկանի հագուստով, որի ձեռքի գաւազանի մէջ թագցրած կան կասկածաւոր թղթեր. եթէ այդ թղթերը կըկալանաւորէ և իրան կ՚ուղարկէ, ինքը խոստանում է ամեն միջոցներով օգնել նրան, որ գրաւէ Գանձասարի կաթողիկոսական աթոռը։ Նամակն ուղարկուեցաւ միևնոյն դաւաճանի՝ Հասան-Ջալալեան Ալլահ-Ղուլի-բէկի ձեռքով։

Թէև Խորայէլ կաթողիկոսը շատ լաւ գիտէր՝ թէ խանի կամքը կատարելով, ինչպիսի սարսափելի վտանգի պիտի

ենթարկէր հայոց մելիքներին և Յովհաննէս կաթողիկոսին, թէև նա կարող էր հասկանալ, որ իւր մատնութիւնով պիտի սպանէր հայրենիքի ազատութեան գործը, այսուամենայնիւ իւր փառքը և Գանձասարի կաթողիկոսական աթոռն աւելի բարձր դասելով ամեն ազգային գործերից, նա կալանաւորեց թղթերը և ուղարկեց Իբրահիմ-խանին։

XXI

Իբրահիմ-խանն Խորայէլ կաթողիկոսի ուղարկած թըղթերն ստանալուց յետոյ, լուռ մնաց, այնպէս ձևացնելով, թէ ինքը մելիքների գործողութիւններից ամենևին տեղեկութիւն չունի։ Յետոյ բարեկամաբար հրաւիրեց իւր մօտ Մելիք-Մէջլումին, Մելիք-Աբովին և Մելիք-Բախտամին, իբր թէ երկրի կառավարութեան գործերի վերաբերութեամբ նրանց հետ կարևոր խորհելիքներ ունի։ Երբ նրանք եկան, Մելիք-Մէջլումին և Մելիք-Աբովին կալանաւորեց Շուշի բերդում, իսկ Մելիք-Բախտամին, որի հետ աւելի մեծ թըշնամութիւն ունէր, մատնեց պարսից կառավարութեանը, իբրև քաղաքական յանցաւոր, որ ձգտում էր պարսից երկրների մէջ մտցնել ռուսներին։ Մելիք-Բախտամին տարան Պարսկաստան և բանտարկեցին Արդաւիլի բերդում։ Պէտք է ի նկատի առնել, որ այդ բերդում, պարսից վաղեմի սովորութիւնների համեմատ, բանտարկվում էին ոչ թէ հասարակ յանցաւորները, այլ միայն նշանաւոր քաղաքական յանցաւորները իշխանական բարձր տոհմերից։ Մելիք-Բախտամը, Մելիք-Աւան-խանի թոռը, նոյնպէս փոքր մարդ չէր։ Նրա ազգատոհմը ծանօթ էր Պարսկաստանին սկսեալ Նադիր-Շահի օրերից։ Մելիք-Բախտամի կալանաւորութիւնից յետոյ, նրա երկիրը (Տիգակ) պարսկական գաւառ դարձաւ։

Մելիքներին իւր ճանկերի մէջ պահելուց յետոյ նա մի խումբ ձիաւորներ ուղարկեց Գանձասարի Հայրուստ վանքը կողոպտել. կայքերի մի մասը միայն կարողացան առաջուց թաքցնել: Յետոյ Յովհաննէս կաթողիկոսին բռնելով իւր հինգ եղբայրների հետ *) բերեց Շուշի բերդը և բոլորին էլ բանտարկեց: Այնուհետև սկսեց զանազան բարբարոսական տանջանքներով չարչարել նրանց: Յովհաննէս կաթողիկոսին թունաւորելով բանտի մէջ սպանեց (1786), իսկ նրա եղբայրներին և միւս ազգականներին ամբողջ ինն ամիս բանտի մէջ մաշեց: Քանի օր շարունակ Սարգիս եպիսկոպոսի ոտները փայտով ծեծել էր տալիս, որ նա ցոյց տայ ռուսաց կառավարութիւնից ստացած թղթերը: Բայց թղթերն առաջուց կրակը ձգելով այրել էին: Վերջը Գանձասարի վանքը ութն հազար թուման **) տուգանքի ենթարկելով, Սարգիս եպիսկոպոսից ստացաւ այդ գումարը, յետոյ նրան իւր եղբայրների հետ արձակեց բանտից:

Բայց Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը երկար չմնացին բանտում. նրանք կալանաւորուած էին առանձին տեղում: Հէնց որ նրանց կալանաւորութիւնը լսեց Մելիք-Մէջլումի քաջ զօրապետ Արզումանը, իսկոյն իւր հետ առաւ իւր երկու աներկիւղ ընկերներին—Դալի-Մահրասային և Զարգար-Մելքումին—գիշերով մտան Շուշի բերդը և բանտի դռները խորտակելով, ազատեցին մելիքներին:

---

*) Յովհաննէս կաթողիկոսը եօթն եղբայր ունէր. դրանցից մէկն էր Սարգիս եպիսկոպոսը, որ յետոյ կաթողիկոս դարձաւ. միւս վեց եղբայրները սրանք էին՝ Գաբրիէլ-բէկ, Դանիէլ-բէկ, Իսրայէլ-բէկ, Միսայէլ-բէկ, Ջալալ-բէկ և Ալլահ-Ղուլի-բէկ դաւաճանը, որ մատնեց բոլորին:

**) Մի ձեռագիր պատմութեան մէջ գրուած է 56 հազար թուման:

Իսրայէլ կաթողիկոսը իւր մատուցած ծառայութիւնների համար ստացաւ Իբրահիմ-խանից Աղուանից կաթողիկոսական աթոռը, այն աթոռը, որի գրաւելու համար նա սպանել տուեց Յովհաննէս կաթողիկոսին: Բայց նրան թոյլ տուեցին նստել Ամարասայ վանքում, որ աւելի մօտ լինի խանին և մնայ նրա ձեռքի տակ: Գանձասարի վանքում այդ ժամանակ նստած էր նահատակուած Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսը:

Եւ այսպէս՝ Խամսայի հինգ տիրապետող մելիքներից մնաց երկուսը—Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբովը և Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումը: Միւս երեքը համարեա թէ ոչնչացան: Տիզակի Մելիք-Աւանեան Մելիք-Բախտամը աքսորուեցաւ Պարսկաստան, և որպէս Արշակ Բ.-ը պահվում էր Արդաւիլի բերդում: Խաչէնի Հասան-Ջալալեան մելիքները, որպէս յետոյ կտեսնենք, Յովհաննէս կաթողիկոսի մահից յետոյ, բոլորը ցրիւ եկան, տարագրուեցան: Խաչէնում տիրում էին Իբրահիմ-խանից կարգուած մելիքները: Մնում էր Վարանդայի իշխողը—Մելիք-Շահնազարը, բոլոր չարիքների յօրինողը, Իբրահիմ-խանի սիրելին:

1787 թուին գեներալ Բուրնաշովը վրաց Հերակլ իշխանի հետ ռուսաց զօրքերով մօտեցան Գանձակին: Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը Շուշի բերդից փախչելուց յետոյ, անմիջապէս գնացին Հերակլի և Բուրնաշովի մօտ: Նրանք յոյս ունէին որ իրանք՝ շատ անգամ հաղորդուած խոստմունքների համեմատ, օգնական զօրք կըստանային, որ գնան Իբրահիմ-խանի հետ պատերազմեն և իրանց հըպատակներին կրկին տիրեն: Եւ իրաւ, նրանց խոստացան տալ չորս հազար զինուոր իշ. Օրբելեանիի հրամանատարութեան ներքոյ:

Բայց միևնոյն ժամանակ (1787) ծագեց ռուսաց երկ-

բորդ պատերազմը օսմանցիների հետ. գեներալ Բուրնաշովն անապասելի հրաման ստացաւ, որ իւր գունդերով վերադառնայ Ռուսաստան: Այդ պատճառով Բուրնաշովը և Հերակլը չկարողացան կատարել իրանց խոստմունքը:

Հերակլը ռուսաց զօրքերի հետ գնաց Թիֆլիզ, իսկ Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը, զրկուած օգնութիւնից, գնացին նրա հետ:

Այդ տեսնելով, Իբրահիմ-խանն աւելի վստահութիւն ստացաւ, աւելի կատաղի դարձաւ: Մինչև այնօր նա երկիւղ ունէր ռուսներից. բայց ռուսները յայտնուեցան և երազի նման դարձեալ աներևութացան: Այնուհետև այլ ևս ինչը կարող էր նրան զսպել: Մելիքների միաբանութիւնը քայքայուած էր. հայոց կաթողիկոսն անգամ նրա ձեռքում մի անարգ գործիք էր դարձել իւր հայրենիքի կործանման համար: Մնացել էին երկու մելիքներ միայն, —Աբովը և Մէջլումը—ճշմարիտ հայրենասէրներ, պատուի և զգացմունքի տէր տղամարդիկ,—դրանք ևս օտարների դռներում օգնութիւն էին մուրում,—այն մարդիկը, որոնց զօրութիւնից սարսափում էր Իբրահիմ-խանը:

Իբրահիմ-խանը երբ լսեց, որ երկու մելիքները ռուսաց զօրքերի հետ գնացել են Թիֆլիզ, Մելիք-Մէջլումի մօրը և Մելիք-Աբովի ընտանիքից մի քանի հոգի բռնել տուեց, և բերելով Շուշի բերդը, այնտեղ պահեց իբրև պատանդ: Յետոյ Մելիք-Մէջլումի երկիրը կողոպտեց, աւերակ դարձրեց. նրա տեղը կարգեց Գիւլ-Եաթաղ գիւղի Ռուստամ-բէկին *), որ խանի սիրելի Խուդայէլ կաթողիկոսի

*) Այդ Ռուստամ-բէկը Միսայէլ-բէկի եղբայրն էր. մեր պատմութեան մէջ տեսանք, որ Միսայէլ-բէկը կաշառուած Իբրահիմ-խանից, կամենում էր Մելիք-Մէջլումին սպանել, որ Ջրաբերդի մելիքութիւնն ինքն ստանայ: Այժմ ստացաւ նրա եղբայրը՝ անպատիւ հպատակութիւն խոստանալով մահմեդական խանին:

քրոջ ամուսինն էր: Մելիք-Աբովի տեղը նոյնպէս ուրիշին կարգեց:

Իբրահիմ-խանն այժմ հասաւ իւր նպատակին. նա իրան ամբողջ Ղարաբաղի տէրն էր համարում: Այնտեղ մնացած մելիքները թէև դեռ ևս վայելում էին իրանց վաղեմի արտօնութիւնները, բայց բացի Վարանդայի Մելիք-Շահնազարից, միւսները խանի ստորադրեալներն էին համարվում:

Բայց Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը հանգիստ չմնացին. նրանք չէին կարող անպատիժ թողնել մահմեդական խանին, որ իրանց հայրենիքն աւերակ դարձրեց...:

XXII

Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը Թիֆլիզում երկար չմնացին:

Այնքան զոհողութիւններ կրելուց յետոյ, հայրենիքը, ընտանիքը թշնամու ձեռքում թողնելուց յետոյ, մեծ յոյսերով Թիֆլիզ գալուց և այնտեղ յուսահատ մնալուց յետոյ, երկու մելիքները—Մէջլում և Աբով—դարձեալ իրանց երեսները յետ չէին դարձնում Ռուսաստանից, դարձեալ մեծ ակնկալութիւններ ունէին նրա պաշտպանութեան վրայ:

Նրանք նամակով դիմեցին գեներալ-անշէֆ Տեկէլլուն, նկարագրելով այն բոլոր դժբախտութիւնները, որ կրեցին իրանք՝ սկսեալ այն օրից, երբ գեներալ-պօրուչիկ Պօտեմկինի խոստմունքներից հրապուրուած, անձնատուր եղան Ռուսաստանին, սկսեցին պատերազմել Իբրահիմ-խանի հետ. նկարագրեցին այն բոլոր բարբարոսութիւնները, որ կատարեց այդ խանը:

Նրանք դարձեալ խնդրում էին կայսրուհու պաշտպանութիւնը հետևեալ պայմաններով.

1) Բարբարոսների լուծն իրանցից հեռացնելու համար, տալ իրանց իսկութեամբ օգնութիւն զօրքերով, թէև փոքր թւով. որովհետև նրանք միացնելով իրանց ոյժերը ռուսաց զօրքերի հետ, կարող էին միայն իրանց ահարկու անունով ոչնչացնել պարսից զօրութիւնը և ջնջել Շուշուայ խանի իշխանութիւնը: Միևնոյն ժամանակ խնդրում էին՝ տալ իրանց մի գլխաւոր հրամանատար, որ իւր արժանաւորութիւններով և յատկութիւններով ընդունակ լինէր գործին:

2) Եթէ իրանք պաշտպանութիւնն ստանալ չէին կարող, խնդրում էին, որ թոյլ տրուի իրանց տեղափոխուել Կասպից ծովի ափերի մօտ, Դերբէնդի շրջակայքը, այնտեղ նոր գաղթականութիւն հիմնելու համար: Իսկ իրանց տրուելիք նոր երկրները պիտի համարուէին իրանց սեպհականութիւն, տալով մելիքներին և նրանց ժառանգներին լիակատար իշխանութիւն իրանց հպատակների վրայ տիրելու:

Միևնոյն ժամանակ Ղարաբաղի մելիքների պատգամաւոր և ռուսաց գործակատար Ստեփան Դաւթեանը խընդրում էր Պոտեմկինից շուտափոյթ օգնութիւն հասցնել մելիքներին: Նա էլ խոստանում էր ուղարկել Դերբէնդ վեց գունդ զօրք՝ ցանկացողներին ռուսաց հովանաւորութեան ներքոյ ընդունելու համար:

Յիշեալ գաղթականութեան մասին, Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս Յովսէփը իւր ընդարձակ տեղեկագրի մէջ, որ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտեմկինի միջնորդութեամբ ներկայացրեց Եկատերինէ II կայսրուհուն, ի միջի այլոց գրում է հետևեալը.

«Սեպտեմբերի 19-ին, 1789 թուի Ղարաբաղի մելիքները, իրանց ստացած մխիթարական թղթերի համար, յայտնեցին ինձ՝ հայոց արքեպիսկոպոսիս իրանց շնորհակալութիւնը, և իմացում են տալիս հետևեալի մասին.— թէ իրանք, մելիքները, տեղեկութիւն են ստացել, իբր թէ նորին պայծառափայլութիւն իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտեմկինը հրամայել է գեներալ Պետր Աբրամովիչ Տեկէլլուն, որ մելիքներին կանչէ Ռուսաստան, և թէ յիշեալ գեներալ Տեկէլլու կողմից այդ գործի մասին իրանց ոչինչ հաղորդուած չէ: Այդ պատճառով ինձանից (արքեպիսկոպոսից) յատկապէս խնդրում են, որ նրանց ճիշտ տեղեկութիւն տամ: Մելիքները յայտնում են ինձ իրանց մէջ վճռած բոլոր պայմանները իրանց պահանջների վերաբերութեամբ և խնդրում են, որ իրանց իմացում տամ նորին պայծառափայլութեան բարի կարգադրութեան մասին:

«Յիշելով այն խնդիրքները, որ իրանց նախնիքը մատուցել են Պետրոս Մեծին, և հիմնուելով կայսրի ողորմածութեան վրայ, որ նա ցոյց էր տուել նոյն խնդիրքների առիթով, մելիքներն այժմ նոյնպէս խնդրում են, որ իրանց թոյլ տրուի գաղթել Դերբէնդի կողմերը, և այդ երկրները վաւերացուին իրանց անունով որպէս մշտական ժառանգութիւն: Իսկ եթէ հարկ կըհամարուի իրանց գաղթել Ռուսաստան, խնդրում են Վրաստանում գտնուած ռուսաց զօրքից օգնութիւն, որպէսզի իրանց ժողովրդի հետ միասին կարողանան անվտանգ կերպով հեռանալ Ղարաբաղի իշխանութիւնից: Միևնոյն ժամանակ յայտնում են, որ իրանց ամբողջ հասարակութիւնը, այդ երկու առաջարկութեան մէջ համաձայնուելով մելիքների հետ, խնդրում են, որ նրանց տեղեկութիւն տան, թէ արդեօք ո՞րտեղ, ո՞ր երկրում նրանց հողեր կըտան. եթէ Ռուսաստանում, ուրեմն ի՞նչ պայմաններով:

Մելիքները պահանջում են, որ բարեհաճեն վերահաստատելու իրանց ունեցած վաղեմի արտօնութիւնները, որ ամենահին ժամանակներից վայելում էին իրանք, և որ մինչև անգամ իրանց թշնամիները չէին կամեցել խափանել. այսինքն որ նրանք իրաւունք ունենան տիրելու իրանց հպատակների վրայ, և իրանց յաջորդները նոյնպէս իրաւունք ունենան ժառանգելու հօր իշխանութիւնը, նոյնպէս և այն երկրները, որ կտրուեն իրանց բնակութեան համար, կարողանան սեպհականացնել իրանց միևնոյն իրաւունքներով:

«Յիշեալ երկու մելիքները՝ Մէջլում և Աբով, իրանց խնդիրքը մատուցանելուց յետոյ, հաւատացնում են, որ մնացեալ երեք մելիքները ևս, որ մնացել են Ղարաբաղում, համաձայն են իրանց հետ: Այդ բոլորը հաղորդելով ի գիտութիւն ձերդ պայծառափայլութեան (Պոտեմկինի) Նորին Կայսերական Մեծութեանը զեկուցանելու համար, յատկապէս և ամենախոնարհաբար խնդրում եմ, որ շնորհուի նրանց բարձրագոյն ողորմած հովանաւորութիւն, որով նշանաւոր օգուտ կըլինի Ռուսաստանին: Իսկ ինձ պէտք է հրահանգ տալ, թէ ինչ կարող եմ յայտնել նրանց: Որովհետև ես առանց առանձին թոյլտուութեան, առանց բարձրագոյն բարեհաճութեան կամ ձեր պայծառափայլութիւնից տեղեկութիւն ստանալու, նրանց պատասխանել կարող չեմ: Իսկ յիշեալ երկու մելիքների՝ Մէջլումի և Աբովի, նամակների կոկականը, իրանց թարգմանութեան հետ, ուղարկում եմ այս թղթով:»

Թէ ինչ պատասխան ստացան մելիքները, մեզ յայտնի չէ, միայն այսքանը յայտնի է, որ ռուսներն այդ միջոցներում զբաղուած էին թիւրքական պատերազմով և հազիւ թէ ժամանակ ունէին մի հիմնաւոր կարգադրու-

թիւն անելու մելիքների ծանր դրութիւնը փոքր ինչ թեթևացնելու համար:

Նրանք առժամանակ միայն մնալով Հերակլ իշխանի մօտ, առաջարկում էին նրան միանալ իրանց հետ և ոչնչացնել Իբրահի-խանի իշխանութիւնը, յիշեցնում էին նրան այն բարբարոսական ասպատակութիւնները, որ մի քանի տարի առաջ Վրաստանում կատարեց Աւարիայի Օմար-խանը Իբրահիմ-պանի դրդելով: Հերակլը խոստանում էր կատարել նրանց ցանկութիւնը, միայն խորհուրդ էր տալիս փոքր ինչ սպասել: Բայց մելիքներն սպասելու համբերութիւն չունէին. իրանց հպատակները, իրանց ընտանիքը մինչև անգամ գտնվում էին Իբրահիմ- խանի ձեռքում:

Այդ միջոցներում Հերակլը նամակ է ստանում Իբրահիմ-խանից: Խանը գրում է նրան՝ Մելիք-Մէջլումին և Մելիք-Աբովին բռնէ և իւր մօտ ուղարկէ: Իսկ դրանց փոխարէն խոստանում էր խանը յետ ուղարկել այն 3000 թուրք ընտանիքներին, որոնք առաջ վրաց հպատակներ էին և Բօրչալուի կողմերից փախել եկել էին Ղարաբաղ և բնակվում էին Ասկարանի բերդի մերձակայքում:

Վրաց իշխանը ոչ այնքան իւր հպատակները յետ ստանալու ցանկութեամբ, որքան երկիւղ կրելով Իբրահիմ-խանի վրէժխնդրութիւնից, մտածում է կատարել նրա հրամանը, և իւր մօտ ապաստանած հիւրերին պատուութեամբ կալանաւորելով, ուղարկել դահճի մօտ:

Նրա խորհուրդը յայտնվում է հայոց մելիքներին: Հերակլի քարտուղարը, որ կոչվում էր Միրզա-Գիօրգի, գիտէր պարսկերէն ու արաբերէն և ազգով հայ էր. նա Իբրահիմ-խանի նամակը կարդալուց յետոյ բովանդակութիւնը յայտնում է մելիքներին:

Որպէս պատմում են, Հերակլը Թիֆլիզի Օրթա-ճա-

լա կոչուած այգիներում ճաշ է՝, պատրաստում, այնտեղ հրաւիրում է երկու մելիքներին, որ արբեցնէ, այնուհետեւ իւր սեղանի վրայ կալանաւորէ հիւրերին: Մելիքներին արդէն յայտնի էր նրա դիտաւորութիւնը. դեռ ճաշից առաջ նրանք ձի են նստում, պատճառելով թէ կամենում են մերձակայքում որսորդութիւն անել իշխանի սեղանի համար: Նրանք այլեւս չեն վերադառնում: Երկու մելիքները՝ որ իրանց հետ միայն հարիւր ձիաւոր ունէին, թողնում են անհիւրընկալ Թիֆլիզը և ուղեւորվում են դէպի Գանձակ: Ճանապարհին հանդիպում են նրանց վրացի սայլապաններ, որ գնում էին դէպի քաղաք. դրանց միջոցով Մելիք-Մէջլումը լուր է տալիս Հերակլին, ասելով, թէ գնացէք յայտնեցէք ձեր իշխանին, որ Մելիք-Մէջլումը չի մոռանայ նրա հիւրասիրութիւնը...:

Եւ իրաւ, Մելիք-Աթամի պատուաւէր որդին չմոռացաւ վրէժխնդիր լինել վրաց իշխանի խաբէութեան համար. նրա սարքած ճաշը մի քանի տարուց յետոյ Թիֆլիզի կործանման պատճառը դարձաւ...:

Վրաց իշխանի նենգաւորութիւնը սաստիկ վիրաւորեց Մելիք-Մէջլումի զգայուն սիրտը: Ռուսաստանի Հայոց Յովսէփ արքեպիսկոպոսն այնքան մեծ համարում ունէր Հերակլի վրայ, որ մինչեւ անգամ մտածում էր, եթէ չյաջողուի իշխան Պօտեմկինին հայ-վրաց միացեալ իշխանութեան աթոռի վրայ բազմեցնել, նրանից յետոյ ի նկատի ունէր միայն Հերակլին: Իսկ այդ երկչոտը, սարսափած Իբրահիմ-խանի նամակից, կամենում էր նրա ձեռքը մատնել Ղարաբաղի երկու նշանաւոր մելիքներին, որոնց նոյն խանի դէմ օգնական զօրք տալու յուսով հրաւիրեց իւր մօտ Թիֆլիզ:

Երկու մելիքները Թիֆլիզից եկան Գանձակ. տեղային Ջաւադ-խանը սիրով ընդունեց նրանց, բնակութեան տեղ

տուեց իւր քաղաքում և նրանց կեցութեան համար ռոճիկ նշանակեց: Թէեւ Աբրահիմ-խանը մի քանի անգամ դիմեց Ջաւադ-խանին և զանազան խոստմունքներով խնդրեց նրանից, որ մելիքներին իւր ձեռքը տայ, բայց Ջաւադ-խանն աւելի մեծահոգի գտնուեցաւ, քան թէ վրաց իշխանը, և մերժեց նրա խնդիրքը:

XXIII

Երբ Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը հանգստութիւն գտան Գանձակ քաղաքում, այստեղ լսեցին այն բոլոր բարբարոսութիւնները, որ Իբրահիմ-խանը գործ էր դրել Յովհաննէս կաթողիկոսի և առհասարակ Հասան-Ջալալեան տոհմի վրայ. լսեցին Գանձասարի հարուստ վանքի կողոպտուիլը և շարունակ հալածանքները, որ բռնակալը կատարում էր այդ վանքի միաբանութեան վրայ՝ չարչարելով նրանց և պահանջելով, որ եթէ այլեւս վանքային թագցրած կայքեր են մնացել, իրան ցոյց տան: Մելիք-Մէջլումը, որպէս գիտենք, նահատակուած Յովհաննէս կաթողիկոսի քրոջ որդին էր: Նա Գանձակից ուղարկեց մի խումբ ձիաւորներ Թիւլի-Արզումանի և Ջարգար-Մելքումի առաջնորդութեամբ, որ գնան Գանձասարի վանքը, և Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսին միւս միաբանների հետ միասին բերեն Գանձակ:

Արզումանի խումբը, գալով Խաչէն, թագնվում է Գանձասարի վանքի մօտ, անտառի մէջ, Կրատափ կոչուած տեղում: Այստեղից իմացում են տալիս Սարգիս եպիսկոպոսին, որ պատրաստուի փախչելու: Լրտեսների թիւն այդ ժամանակ այնքան բազմացել էր հայերի մէջ, որ Սարգիս եպիսկոպոսն ստիպուած է լինում սկզբից մի խորամանկութիւն գործ դնել, որպէսզի իրանց փախուստի մասին խա-

նին չմատնեն: Նա յանկարծ լուր է տարածում, թէ ապստամբներ են յայտնուել, պէտք է յարձակուել գործեն: Այդ լսելով շրջակայ գիւղացիները՝ հաւաքւում են Գանձասարի վանքի ամրութեան մէջ, որ այնտեղ պատսպարուեն: Այդ ժամանակ եպիսկոպոսը՝ նրանցից որին որ կասկածաւոր էր համարում, բռնել է տալիս և վանքում բանտարկում: Բայց չնայելով նրա գործ դրած նախազգուշութեանը, թշնամու համար միշտ պատրաստ հայ լրտեսներից մէկը արդէն խանին իմացում էր տուել բոլորը, թէ Սարգիս եպիսկոպոսը փախչելու է Գանձակ և վանքի մնացած հարստութիւնը տանելու է իւր հետ:

Խանն ուղարկեց մի խումբ ձիաւորներ, որ փախստականներին կալանաւորեն և վանքի բոլոր իրեղէնները յափշտակեն: Նրանք այնպէս շտապով կերպով վրայ հասան, որ փախստականները միջոց չունեցան իրանց հետ վեր առնել վանքի իրեղէնները, որոնք մնացին իրանց թաղցրած տեղերում:

Թէև վանքի հարստութիւնն ազատուեցաւ, այսու ամենայնիւ Մելիք-Մէջլումի ուղարկած մարդկանց մեծ քաջութիւն էր հարկաւոր, որ կարողանային եպիսկոպոսին և նրա ընկերներին ազատել խանի ձիաւորների ձեռքից: Այդ միջոցին օգնութեան հասաւ ինքը բնութիւնը: Մռաւ լեռների վրայ պատեց Ղարաբաղի այն սովորական թանձր մառախուղը, որ մի քայլ հեռաւորութեան վրայ ոչինչ չի կարելի տեսնել: Արզումանը իւր խումբը երկու մաս բաժանեց, մի մասը յանձնեց Զարգար-Մելքումին և պատուիրեց նրան, որ եպիսկոպոսին միւսների հետ առանձին ճանապարհով տանէ դէպի Գանձակ, իսկ ինքը մնացած մասի հետ յետ մնաց և սկսեց կռուել խանի ձիաւորների հետ: Նրան յաջողուեցաւ մեծ յաղթութիւն գործել մի քանի հարիւր ձիաւորների դէմ, որոնցից շատերին բռնելով, ա-

կանջներն ու քթները կտրեց և յետ ուղարկեց, ասելով՝ «գնացէք ձեր խանին խաբար տարէք, որ Արզումանը հեշտ կուլ տալու պատառ չէ»…:

Սարգիս եպիսկոպոսը իւր եղբայրների հետ եկան Գանձակ 1791 թուին. նրա հետ էր պատանի Բաղդասարը *), որ այդ ժամանակ 22 տարեկան էր: Ջաւադ-խանը **) սիրով ընդունեց նրանց, եպիսկոպոսին բնակութեան տեղ տուեց, ռոճիկ նշանակեց և այնուհետև Սարգիսը Գանձակի գաւառի հայոց առաջնորդը դարձաւ: Գանձասարի վանքը մնաց աւերակ դրութեան մէջ. զուրկ հոգևոր միաբանութիւնից:

Միևնոյն տարում (1791) երբ Հասան-Ջալալեան Սարգիս եպիսկոպոսն եկաւ Գանձակ, իւր երկու եղբայրներին՝ Դանիէլ-բէկին և Ջալալ-բէկին այնտեղից ուղարկեց Գանձասար, որ վանքի թաղցրած կայքերը գտնեն հանէին և բերէին Գանձակ: Այդ վանքի ամբաւ հարստութիւնից՝ Իբրահիմ-խանի յափշտակելու ժամանակ կարողացել էին մի մասը միայն թաղցնել, որովհետև Սարգիս եպիսկոպոսի փախուստն այն աստիճան շտապով կերպով կատարուե-

*) Բաղդասարը Սարգիս եպիսկոպոսի եղբայր Հասան-Ջալալեան Դանիէլ-բէկի որդին էր. նա եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ Ղարաբաղի միտրոպոլիտ նշանակուեցաւ և շատ նշանաւոր գործեր կատարեց:

**) Ջաւադ-խանը իւր հօր Շահ-Վերդի-խանի նման շատ հայասէր մարդ էր. նա շարունակ հայոց եկեղեցի էր գնում և ներկայ էր գտնվում հայոց բոլոր կրօնական տօներին և հանդէսներին: Գանձակի մայր եկեղեցու սիւներից մէկի վրայ կայ փոքրիկ արձանագրութիւն. ‹Ջաւադ-խանի սիւնը›.—այդ սիւնի մօտ էր կանգնում նա, երբ որ գալիս էր հայոց եկեղեցի: Հին, ցեղական թշնամութիւն ունենալով Շուշիի խաների հետ, Ջաւադ-խանն աւելի բարւոք էր համարում բարեկամութիւն պահպանել հայոց մելիքների հետ և Իբրահիմ-խանի հակառակ գործել:

ցաւ, որ նա ժամանակ չգտաւ վանքի կայքերը իր հետ վեր առնելու:

Բայց նրա եղբայրներին նոյնպէս չյաջողուեցաւ. Դանիէլ-բէկը և Ջալալ-բէկը թէև գաղտնի եկան Գանձասար, բայց իսկոյն մատնուեցան: Իբրահիմ-խանի մարդիկը բռնեցին նրանց, Ջալալ-բէկի գլուխը կտրեցին, իսկ Դանիէլ-բէկին կենդանի տարան խանի մօտ: Խանը հրամայեց բանտարկել նրան, ասելով՝ «գնա՛, այնտեղ մնա՛, թող ռուսները գան և ազատեն քեզ»... Այդ խօսքերով դուող խանը կամեցաւ ծաղրել հայերի այն յոյսերը, որ դրած էին ռուսների վրայ: Մի քանի օրից յետոյ նրան բանտից դուրս բերելով, հրամայեց մաս-մաս կտրատել...:

Նրա քոյրը՝ տիկին Ղամար-սուլթանը (Մելիք-Մէջլումի մայրը), որ այդ ժամանակ պահուած էր Շուշի բերդում իբրև պատանդ,—հաւաքեց եղբօր մարմնի կտորտանքը և թաղել տուեց տեղային գերեզմանատանը *):

Մենք վերևում յիշեցինք, որ Իբրահիմ-խանը դաւաճան Խարայէլ-կաթողիկոսի մատուցած ծառայութիւնների համար, Մելիք-Շահնազարի խորհրդով, նրան տուեց Ամարասայ վանքը և Ղարաբաղի վրայ հովիւ կարգեց: Այդ ժամանակ Երիցմանկանց վանքում նստած էր փոքր Սիմոն անունով մէկը կաթողիկոս: Եւ այսպէս, Ղարաբաղում եր-

*) 1851 թուին Դանիէլ-բէկի որդի Բաղդասար միտրոպոլիտը մի արձան կանգնեցնելով հօր շիրմի վրայ, փորագրել տուեց հետևեալ տողերը. «յարձանիս շիրմի ամփոփեալ դնի՝ մարմին իշխանին Խաչէն գաւառի, վեհ իշխանազնեայ Դանիէլ-բէկի, որդւոյ Մելիք-բէկ իշխանապետի, ի տանէ հայկազն մեծ Ջալալ-Դօլի, տեառն Արձախայ հայոց աշխարհի, որ Ղարաբաղայ կամ Շուշւոյ նահանգ՝ նա սովորաբար արդ վերաձայնի: Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգին՝ նահատակի աստ յամբոխս Շուշի, դառն տանջանօք Իբրահիմ-խանի, որ թշնամի էր խաչին Քրիստոսի: Ի 1240 թուին հայոց (1791)»:

կու կաթողիկոս կար՝ Իբրահիմ-խանի հովանաւորութեան ներքոյ:

Այդ տեսնելով Գանձակում գտնուած հայոց մելիքները՝ Մէջլումը և Աբովը, Ջաւադ-խանի հետ միաբանելով, Իբրահիմ-խանի հակառակ, Սարգիս եպիսկոպոսին Գանձակում կաթողիկոս օծել տուին (1794): Պատմում են, թէ օծութեան խորհուրդը կատարելու ժամանակ եպիսկոպոսների թուից մէկը պակաս էր. այդ պակասը լրացնելու համար ինքը Ջաւաթ-խանը կանգնեց եպիսկոպոսների շարքում, ասելով. «օծեցէք, թո՛ղ մէկն էլ ես լինիմ»:

Գանձակի հայերն այնտեղ գտնուած մելիքների հետ դիմեցին Ս. Էջմիածին, խնդրելով որ Սարգսին հաստատեն Աղուանից կաթողիկոսութեան մէջ *): Բայց Ս. Էջմիածինը մերժեց նրանց խնդիրքը, պատճառ բերելով թէ Ղարաբաղում կան արդէն երկու կաթողիկոս—Խարայէլը և Սիմոնը. թէև այդ կաթողիկոսներն աւելի մահմեդականների հոգևորականներ էին, քան թէ հայոց:

Եւ այսպէս ծագեցան երկպառակութիւններ երեք միմեանց հակառակ կաթողիկոսների մէջ, որոնցից Սիմոնը նստած էր Երիցմանկանց վանքում, Խարայէլը նստած էր Ամարասայ վանքում, իսկ Սարգիսը Գանձակում:

Այդ երկպառակութիւնները երկար զբաղեցրին Ղարաբաղի և Գանձակի հայ հասարակութիւններին մի այնպիսի ժամանակում, երբ Ղարաբաղի հայկական իշխանութիւնները Իբրահիմ-խանի ոտքերի տակ հետզհետէ խորտակվում էին... և հայերը պէտք է լուծէին մի մեծ ազգային խնդիր...:

*) Չպէտք է մոռանալ, որ ո՛չ միայն Ղարաբաղը Աղուանից կաթողիկոսութեան թեմ էր համարվում, այլև Գանձակի, Շամախու, Նուխու, Դերբէնդի և ուրիշ մի քանի գաւառները:

XXIV

Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի Գանձակում գըտնուած ժամանակ Իբրահիմ-խանն իրան դեռ ևս այդ երկու մելիքների վտանգից ազատուած չէր համարում, մանաւանդ երբ տեսնում էր որ նրանք միացել են իւր թշնամու՝ Ջաւադ-խանի հետ: Նա նկատում էր, որ Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի Ղարաբաղում թողած ժողովրդի մէջ ինչ որ գաղտնի շարժում կայ: Այդ ժողովուրդը չէր կարող մոռանալ իւր սիրելի մելիքներին և հպատակել այնպիսի հայ դաւաճանների, որոնք մահմեդական խանից կարգուած և մահմեդականի հլու էին: Մենք տեսանք, որ Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի Ղարաբաղից հեռանալուց յետոյ, նրանց հպատակներին Իբրահիմ-խանի օգնութեամբ սկսեցին տիրել նոր մելիքներ: Այդ օտար և խորթ մելիքներն անտանելի էին ժողովրդին:

Այդ էր պատճառը, որ Իբրահիմ-խանը կասկածելով, թէ Գիւլիստանի և Ջրաբերդի հայերը (այսինքն Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի հպատակները) կարող են միանալ Գանձակի հայերի հետ, և մեծ ուժ կազմելով, կարող են իրան վտանգ սպառնալ, այդ մտքով սկսեց նրանց Գանձակի սահմանների մօտից տեղափոխել ուրիշ տեղ: Գիւլիստանի բնակիչներին տարաւ Խաչէնի գաւառը, իսկ Ջրաբերդի բնակիչներին տարաւ Տիզակի գաւառը *), և այսպէս ցրուեց նրանց դէպի ամեն կողմեր: Այդ ժամանակներումն էր (1788) որ Մելիք-Աբովի հպատակներից

*) Այդ տեղափոխութիւններին պէտք է վերաբերել այն երևոյթը, որ այսօր Ղարաբաղի զանազան վիճակներում հանդիպում ենք շատ միևնոյն անունով գիւղերի, որպէս են՝ Հին-Խնածախ, Նոր-Խնածախ, Հին-Զէյվա, Նոր-Զէյվա, ևայլն:

(Գիւլիստանից) 500 ընտանիք, չկարողանալով համբերել Իբրահիմ-խանի բռնութեանը, թողեցին իրանց հայրենիքը և գաղթեցին Գանձակի գաւառը: Ջաւադ-խանը նրանց բնակութեան տեղ տուեց Շամքօրի մէջ, որ իւր իշխանութեան տակ էր գտնվում: Դարձեալ այդ ժամանակներումն էր, որ Մելիք-Մէջլումի հպատակներից մօտ հազար ընտանիք թողեցին Ջրաբերդը, նոյնպէս գաղթեցին Գանձակի գաւառը: Ջաւադ-խանը նրանց բնակութեան տեղ տուեց Շամշադինում:

Այդ գաղթականները, թէև անցան մի օտար հողի վրայ, բայց դարձեալ գտնվում էին իրանց մելիքների հըպատակութեան ներքոյ: Ջաւադ-խանը չէր իշխում նրանց վրայ. Մելիք-Մէջլումը տիրում էր իւր ժողովրդին, իսկ Մելիք-Աբովը տիրում էր իւր ժողովրդին: Նրանք բնակվում էին Գանձակի գաւառում որպէս ժամանակաւոր հիւրեր:

Այժմ ի դէպ է յիշել, որ ինչպէս Ղարաբաղում կային հինգ հայկական մելիքութիւններ, այնպէս էլ Գանձակի գաւառում կային չորս հայկական մելիքութիւններ *), որոնց մասին մեր պատմութեան մէջ ոչինչ չենք խօսեցել:

Ղարաբաղի հայերի մի մասը խմբուելով Գանձակի

*) 1) Բ ա ր ս ո ւ մ ի մելիքները, որպէս էր Մելիք-Ռոստոմը ևայլն. 2) Խ ա չ ա կ ա պ ի մելիքները, որպէս էր Մելիք-Մովսէսը ևայլն. 3) Ո ս կ ա ն ա պ ա տ ի մելիքները, որպէս էր Մելիք-Իւսուբը ևայլն. 4) Գ ե տ ա շ է ն ի մելիքները, որպէս էր Մելիք-Եգիզարի որդի Մելիք-Մնացականը ևայլն: Այդ մելիքները նոյնպէս ժառանգաբար իշխում էին իրանց ժողովրդի վրայ, միայն դրանց և Գանձակի խանի մէջ այն հակառակութիւնը չկար, որպէս Ղարաբաղի մելիքների և Շուշիի խաների մէջ: Այդ մելիքները միշտ հաշտ են եղել Գանձակի խաների հետ և համարուել են նրանց ստորադրեալներ:

դաւառում, իրանց վաղեմի մելիքների իշխանութեան ներքոյ, սկսեցին այստեղից արշաւանքներ գործել Իբրահիմ-խանի վրայ։ Նրանց երբեմն օգնում էին և Գանձակի գաւառի հայ մելիքները Ջաւադ-խանի դրդելով։ Այդ արշաւանքները ո՛չ այնքան տիրապետական նպատակներով էին կատարվում, որքան ասպատակութեան և աւարառութեան նպատակներով։ Ամեն մի յարձակում վերջանում էր կոտորածով, հրդեհով, աւերածով և գերեվարութեամբ։ Ղարաբաղի թուրքերն սկսեցին այդ ժամանակ հայի ձևով հագնուել որ չճանաչուեն։ Ամեն մի թուրք, որ հայերի ձեռքն էր ընկնում, անխնայ կերպով սպանվում էր։ Արշաւանքներին առաջնորդում էին Գալի-Մահրասան, Թիւլի-Արզումանը և շուշեցի Ջարգար-Մելքումը։ Նրանք այն աստիճան նեղը դրին Իբրահիմ-խանին, որ բոլորովին կտրեցին Թարթար գետի անցքը և ոչ մի թուրք չէր համարձակվում դէպի Գանձակի կողմերն անցկենալ։

Իբրահիմ-խանը հարկադրուեցաւ մի քանի անգամ դիմել Ջաւադ-խանին, խնդրելով նրա միջնորդութիւնը, որ իրան հաշտեցնէ Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի հետ, որ նրանք դադարեցնեն իրանց թշնամական գործողութիւնները և վերադառնալով իրանց հայրենիքը, վայելեն իրանց վաղեմի իրաւունքները, տիրելով իրանց երկրներին։ Բայց մելիքները չէին հաւատում խաբեբայի խոստմունքներին, առաջարկում էին, թէ իրանց հաշտութիւնը կըկայանայ միայն այն ժամանակ, երբ Շուշի բերդը կըքանդուի և Իբրահիմ-խանը դուրս գալով այդ որջից, կըհեռանայ Ղարաբաղից, հիմնելով իւր համար նոր բնակութիւն Ջրանշիրի անապատներում, ուր ապրում էին նրա նախնիքը։ Այդ առաջարկութիւնը խիստ ծանր էր. զրկուել Շուշի բերդի ամրութիւններից, նշանակում էր զրկուել ամեն բանից։ Պէտք է ասած, որ Ջաւադ-խանը նոյնպէս համա-

կրում էր այն մտքին, որ Շուշի բերդը դատարկուած և քանդուած լինի։ Նրան անտանելի էր տեսնել իւր հարեւանութեան վրայ մի նորաբուսիկ խանութիւն, ամրացած Շուշիի անմատչելի բարձրութեան վրայ։ Նա անդադար կրկնում էր այս խօսքը. «Նզովեալ լինի Մելիք-Շահնազարը, որ կեանք տուեց սառած օձին՝ իւր կուրծքի վրայ ջերմացնելով նրան։ Եթէ չլինէր Շուշի բերդը, չէր լինի և ջուանշիրցիների խանութիւնը...:»

Եւ իրաւ, այդ բերդը հիմնեց Մելիք-Շահնազարը և տուեց Փանահ-խանին։ Նա Ղարաբաղի կրծքի վրայ սկսեց զարգացնել մի նենգաւոր,- օձաբարոյ մահմեդական խանութիւն...:

Փանահ-խանը համեմատաբար աւելի լաւ էր. նա փոքր ի շատէ պահպանել էր իւր ցեղի պարզութիւնը, նա ազատ էր մահմեդական մոլեռանդութիւնից և հայոց մելիքների հետ վարվում էր ո՛չ իբրև իշխող, այլ որպէս դաշնակից։ Բայց Իբրահիմ-խանը հօր նման չէր։ Մանկութիւնից կրթուած լինելով Պարսկաստանում, սովորել էր նա մահմեդական կրօնի բոլոր մոլեռանդութիւնները։ Նա ո՛չ միայն հալածում էր քրիստոնէութիւնը, այլև բռնութեամբ ստիպում էր շատերին ընդունել մահմեդականութիւն։ Մելիքների տիրապետութեան ժամանակներում Ղարաբաղում ո՛չ մի թուրք բնակիչ չկար։ Եթէ այսօր հանդիպում ենք Ղարաբաղում ամբողջ գիւղերի՝ հայ-մահմեդական բնակիչներով, եթէ տեսնում ենք հայոց գիւղերում թուրք ընտանիքներ, որոնք խոստովանվում են, թէ իրանց նախնիքը հայեր են եղել, այդ բոլորը Իբրահիմ-խանի ժամանակների պտուղներն են։

Խանի այդ վարմունքը սաստիկ վիրաւորում էր հայոց մելիքների կրօնական զգացմունքը։ Նրանք մի այլ հնար չէին գտնում կրօնափոխութեան առաջն առնելու, այլ

միայն պատահած ժամանակ սպանում էին Քրիստոսի հաւատքը ուրացողներին: Դալի-Մահրասան այսպէս էր վարւում: Նա երդուել էր, թէ որքան թուով Իբրահիմ-խանը հայերից մահմեդական կդարձնէ, ինքը նոյնքան թուով թուրքեր պիտի կոտորէ: Իսկ Թիւլի-Արզումանը միսիոնէրի դեր էր կատարում: Նա իւր ձեռքն ընկած մահմեդականներին ստիպում էր խոստովանել քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնը և մահմեդականութեան ստութիւնը, ի հարկէ ոչ թէ քարոզներով, այլ սրի ուժով: Մի դէպք, որ Ղարաբաղի հայերի բերանում առակի ձև է ստացել, արտայայտում է այդ մարդու կրօնական նախանձախնդրութեան յատկանիշները: Մի անգամ Արզումանը պատահում է մի բարձրաստիճան թուրք մօլլայի, որ իւր ծառաների հետ գնում էր Շուշի բերդը: Բռնում է մօլլային և իւր սուրը նրա պարանոցի վրայ դնելով, ասում է. «Եթէ կխոստովանես, որ Քրիստոս Աստուած է, ես քեզ չեմ սպանի»: Մօլլան խոստովանում է: Արզումանն այդ խոստովանութիւնը երեք անգամ կրկնել է տալիս և ապա բաց է թողնում մօլլային: Այդ անցքն իմացում են տալիս Իբրահիմ-խանին: Խանը մօլլային իւր մօտ կանչելով, բարկութեամբ հարցնում է. «Միթէ դու խոստովանեցար, որ Քրիստոս Աստուած է»: —Այո, խոստովանեցայ, պատասխանում է մօլլան.—Իսկ եթէ դուք, վեհափառ խան, Արզումանի ձեռքն ընկնէիք, կ'ասէիք ոչ թէ միայն Քրիստոսը Աստուած է, այլև դու ինքդ, Արզուման, աստուածների աստուածն ես...:

XXV

Մի քանի տարի Գանձակի գաւառում մնալուց յետոյ, Մելիք-Մէջլումի և Մելիք-Աբովի մէջ տիրող միա-

բանութիւնն սկսեց փոքր առ փոքր խախտուել: Մելիք-Մէջլումը մի խոհեմ, զգաստ և սուր դատողութիւնով տղամարդ էր: Իսկ Մելիք-Աբովը, թէև պատերազմների մէջ քաջ, աներկիւղ և անպարտելի էր, բայց բնաւորութեամբ սաստիկ դիւրագրգիռ և անհեռատես էր: Ջաւադ-խանն աւելի յարգում էր Մելիք-Մէջլումին. այդ գրգռեց Մելիք-Աբովի նախանձը:

Նրանց հակառակութիւնն աւելի սաստկացաւ այն պատճառով, որ Մելիք-Աբովը ցանկանում էր իւր ժողովրդով թողնել Գանձակի գաւառը և գաղթել Վրաստան և Բօլնիսում նոր գաղթաշէնք հիմնել: Բայց Մելիք-Մէջլումը չէր համաձայնվում այդ մտքի հետ: Նա այժմ բոլորովին ցանկութիւն չունէր թողնել հայրենիքը և ապաստան գտնել մի նոր գաղթականութեան մէջ: Նրանք առանց դրան էլ իրանց հայրենիքից դուրս էին ապրում: Բայց Գանձակի գաւառը, Մելիք-Մէջլումի մտածելով, աւելի մօտ էր Ղարաբաղին. այստեղից աւելի հեշտ կլինէր պատեհ ժամանակում կրկին անցնել Ղարաբաղ: Բայց Վրաստան գնալ և վրաց իշխանի գործ դրած նենգաւորութիւնից յետոյ վրացիների հետ դարձեալ գործ ունենալ, նա ամենևին չէր կամենում:

Ջաւադ-խանի բոլոր ջանքերն իզուր անցան երկու մելիքներին հաշտեցնելու համար: Մի անգամ ամենաչնչին առիթով Մելիք-Աբովը կռուեց Մելիք-Մէջլումի հետ: Երկուսն էլ Ջաւադ-խանի մօտ ճաշի էին հրաւիրուած. օրը պաս էր. Մելիք-Մէջլումն անխտիր ուտում էր բոլոր կերակուրներից, իսկ Մելիք-Աբովը հրաժարվում էր, ասելով թէ ինքը մեղք է համարում պաս լուծել: Այդ առիթ տուեց վիճաբանութեան և Մելիք-Աբովն սկսեց սաստիկ նախատել Մելիք-Մէջլումին, թէ նա մեղանչում է հայոց

կրօնի դէմ, ևայլն։ Այդ օրից նա թողեց Գանձակը և իւր ժողովուրդը վեր առնելով գնաց Բօլնիս։

Բօլնիսում ևս Մելիք-Աբովը հակառակութիւն ունեցաւ վրաց իշխանների հետ, երկար այնտեղ մնալ չկարողացաւ։ Յետոյ (1795) թողեց Բօլնիսը և Իբրահիմ-խանի հետ հաշտուելով, վերադարձաւ Ղարաբաղ, բնակուեցաւ իւր հայրենի երկրում — Գիւլիստանում։ Բայց հանգամանքները, որպէս յետոյ կըտեսնենք, կրկին ստիպեցին նրան թողնել հայրենիքը...։

XXVI

1791 թուին վախճանուեցաւ Մելիք-Շահնազար II-ը։ Ղարաբաղն ազատուեցաւ իւր կործանողից։ Բայց Խամսայի մելիքութիւններին հասցրած նրա հարուածն այն աստիճան մահացու էր, որ այլևս ոչնչով բժշկել չէր կարելի...։

Մահուան անկողնում զղջաց նա, կամեցաւ հաշտուել իւր խղճի և Աստուծոյ հետ։ Եւ ինչպէս որ այդ տեսակ մարդիկ միշտ կրօնական բարեպաշտութեան մէջ են որոնում իրանց մեղքերի թողութիւնը, նա ևս շրջապատեց իրան աբեղաներով, բաց արեց հարստահարութեամբ մթերած ցորենի ամբարները և մի սովի ժամանակ ձրի կերակրեց ժողովրդին իւր հացով։

Մելիք-Շահնազարը շատ հարուստ մարդ էր։ Նա մտածեց աւելի նշանաւոր գործով քաւել իւր նշանաւոր յանցանքները։ Ամարասայ վանքը, որի մէջ ամփոփուած էին Լուսաւորչի թոռի՝ սուրբ Գրիգորիսի նշխարները, խիստ անշուք և կիսաւեր դրութեան մէջ էր նրա ժամանակում։ Նա սկսեց այդ վանքի շինութիւնները վերանորոգել. շրջապատեց վանքն ամուր և բարձր պարիսպներով, աշտարակներով, միաբանութեան համար խուցեր, սենեակներ

շինեց, վանքային տնտեսութեան համար ընդարձակ սեղանատուն, ամբարանոցներ և ախոռատուն հիմնեց՝ բոլորը սրբատաշ քարից, բոլորը մեծ և վայելուչ։ Բայց դեռ տաճարի կառուցմանը չձեռնարկած, մահը վրայ հասաւ և նրա բաղձանքը թողեց անկատար։ Հանգուցեալի արկղի մէջ գտան մի քանի քսակ լի ոսկով, որ կտակել էր տաճարի շինուածքն աւարտելու համար։ Ժառանգները չկատարեցին կտակը։

Մելիք-Շահնազարը թողեց չորս որդի՝ Ջումշուդ, Յուսէին III, Ջհան-Բախշ և Ջհանգիր։

Դեռ մեռնելուց առաջ նա կարգեց որդիների վրայ հոգաբարձու իւր բարեկամ Իբրահիմ-խանին, յանձնելով նրան, որ ժառանգներից որին որ յարմար կըհամարէ, կարգէ իւր փոխարէն յաջորդ։

Օրէնքով պէտք է յաջորդէր Ջումշուդը, որովհետև նա ծնուած էր Մելիք-Շահնազարի օրինաւոր ամուսնութիւնից. բայց Իբրահիմ-խանը իւր կնոջ՝ Հուրի-Զատ-խանումի ազդեցութեամբ ընտրեց նրա հարազատ եղբօրը՝ Յուսէինին *)։ Խանի կամայականութիւնն առիթ տուեց ժառանգների մէջ երկպառակութեան։ Ջհան-Բախշը դիմեց պարսից շահին, և նրանից ֆիրման ստանալով, աշխատում էր ինքն իշխել։ Բայց Մելիք-Յուսէինը, Իբրահիմ-խանի օգնութեամբ յարձակուեցաւ Ջհան-Բախշի տան վրայ, նրա կայքը կողոպտեց, և Ջհան-Բախշը հազիւ կարողացաւ իւր կեանքն ազատել, իւր եղբայր Ջհանգիրի հետ փախչելով

---

*) Մելիք-Շահնազարն ունէր մի քանի կին. Թագուհի-խանումից ծնուեց Մելիք-Ջումշուդը. Սօնա-խանումից ծնուեց Մելիք-Յուսէին III-ը և մի աղջիկ Հուրի-Զատ անունով, որին հայրը կնութեան տուեց Իբրահիմ-խանին, իսկ Մալայիկ-խանումից ծնուեց Ջհան-Բախշը, Ջհանգիրը և մի աղջիկ Հումայի անունով։

Շամախի Մուստաֆա-խանի մօտ: ժառանգների մէջ այդ երկպառակութիւնները տեւեցին մինչև Աղա-Մահմադ-խանի գալուստը, երբ ինքը՝ Իբրահիմ-խանը՝ իւր կեանքը պարսից ներքինի Շահի ձեռքից ազատելու համար, ստիպուեցաւ փախչել Բալաքան:

XXVII

Մելիք-Շահնազարի մեռնելուց յետոյ Իբրահիմ-խանի զօրութիւնը թուլացաւ: Այդ մարդու ձեռքումն էր բռնած այն շղթայի մի ծայրը, որով հայոց մի քանի նորաբուսիկ մելիքներ հնազանդվում էին թիւրք խանին: Այդ մելիքները՝ որոնք առաջ իշխանութեան և աստիճանի տէր լինելու բաղձանքով դիմեցին թիւրք խանի օգնութեանը և նրան անձնատուր եղան, Մելիք-Շահնազարի մահից յետոյ սկսեցին փոքր առ փոքր զգալ իրանց սխալը, սկսեցին վերջապէս հասկանալ, որ իրանք իրանց ձեռքով քանդեցին իրանց տունը և մահմեդական բռնաւորին բարձրացրին իրանց գլխի վրայ:

Այդ ինքնաճանաչութիւնն առաջ եկաւ զանազան հանգամանքներից, որոնց մասին հարկաւոր ենք համարում համառօտ կերպով անցնել, ցոյց տալու համար, թէ ինչպէս ինչ նշանակութիւն ունէին Շուշի բերդի խաները, և իրանց յարաբերութիւնների մէջ հայոց մելիքների հետ ո՛ր աստիճան իրաւունքներ ունէին, և արդեօք կարելի՞ է համարել նրանց երկրի տէրը կամ իշխանը:

Մենք գիտենք Փանահ-խանի ծագումը. մենք գիտենք և այն, որ Պարսկաստանը կառավարող Զէնդ-Քէրիմ-խանը (որ թագաւոր չէր, այլ Պարսկաստանի մի

մասը բռնութեամբ տիրացած մի աննշան լօռեցի *), Փանահ-խանին սպանել տալուց յետոյ, նրա որդի Իբրահիմին խանութեան աստիճան շնորհեց և կարգեց Շուշի բերդի կառավարիչ: Ուրեմն Իբրահիմ-խանը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ պարսիկներից կարգուած, պարսից մի հասարակ խան, որ Պարսկաստանի նոյն ժամանակուայ երկպառակութիւնների և անիշխանութեան պատճառով կարողացաւ երկար ժամանակ իւր տեղում մնալ, կարողացաւ հայոց միւս մելիքների հաշուով նրանց գլխին նստել: Բայց ինչպէս նա երկրի տէրը կամ իշխանը չէր. նա մի ժամանակաւոր կառավարիչ էր, որի նմաններին պարսից կառավարութիւնն անդադար փոփոխում էր: Նա ինքը պարսից հարկատու էր. իւր պաշտօնի մէջ մնալու համար ամեն տարի ահագին փէշքէշներ և ընծաներ էր ուղարկում Պարսկաստան:

Մելիքների անմիաբանութեան շնորհիւ նա կարողացաւ և կարողանում էր իւր դիրքը պահպանել: Եթէ մելիքներից մի քանիսը նրան թշնամի էին, ընդհակառակն՝ մի քանիսն էլ բարեկամներ էին, և այսպիսով նրա կացութեան հաւասարակշռութիւնը պահպանվում էր:

Իբրահիմ-խանը դեռ չէր դիպել հայոց մելիքների ուղղակի և զգալի շահերին: Թէև նրա հայրը և ինքը, օրինակ՝ Խաչէնում և Ջրաբերդում երկու նոր մելիքներ վերականգնեցին, բայց այդ կատարեցին նրանք որպէս օգնողներ և ո՛չ որպէս կարգողներ կամ հիմնողներ: Այդ պատճառով խաների յարաբերութիւնները դէպի այդ մելիքներն աւելի դաշնակցական էին, քան թէ իշխողի և ստորադրեալի յարաբերութեան բնաւորութիւնն ունէին:

---

*) Այդ մեր Լօռին չէ. հարաւային Պարսկաստանում մի գաւառ նոյնպէս կոչվում է Լօռի կամ Լօռիստան:

Բայց Մելիք-Շահնազարի մահից յետոյ Իբրահիմ-խա-
նը յետ քաշեց դիմակը, և օգուտ քաղելով հանգուցեալի
դէպի ինքն ունեցած հաւատարմութիւնից, որով իրան
հօգաբարձու էր կարգել իւր ժառանգների վրայ,—նա
բացարձակ իրաւունք համարեց յաջորդ նշանակելու
մելիքի որդիներից նրան, որ բոլորից անընդունակն էր,
բայց իւր կնոջ եղբայրը լինելով, աւելի հաւատարմու-
թեամբ կը ծառայէր իրան։ Այդ էր պատճառը, որ վրդովե-
ցրեց ժառանգներին, որովհետև խանի միջամտութիւնը
միանգամայն հակառակում էր նրանց աւանդական սովո-
րութիւններին յաջորդութեան կարգերի վերաբերութեամբ։
Բայց Իբրահիմ-խանն աւելի հեռու գնաց. նա դի-
պաւ ժողովրդի և մելիքների ամենազգալի շահերին. նա
սկսեց միջամտութիւն գործել երկրի հողային խնդիրների
մէջ, որոնք մինչև այսօր թողուած էին անձեռնմխելի և
կառավարվում էին միմիայն հայոց վաղեմի սովորութիւն-
ներով, որոնք օրէնքի ձև էին ստացել։ Մեր պատմութեան
նպատակից դուրս է մանրամասնաբար բացատրել, թէ ինչ
դրութեան մէջ էր հողային հարցը Ղարաբաղում, կամ ինչ
պարտաւորութիւններ ունէին գիւղացիները մելիքների վե-
րաբերութեամբ ընդհանրապէս, իսկ խանի վերաբերութեամբ
մասնաւորապէս *)։ Միայն այսքանը կ'ասենք, թէ այն աղէ-
տալի անցքերը, որ նկարագրեցինք XXIV-րդ գլխում,
միջոց տուին Իբրահիմ-խանի կամայականութեանը բաց-
արձակ կերպով հողային բաշխումներ և կարգադրութիւն-
ներ անելու. մի իրաւունք, որից նա առաջ զուրկ էր։
Մենք տեսանք, որ Ջրաբերդի Մելիք-Մէջլումը և Գիւլիս-

*) Այդ հարցերը մենք դիտաւորութիւն ունինք հրատա-
րակել առանձին բրօշիւրով, որ կրկրէ այսպիսի վերնագիր՝ «Հո-
ղային հարցը Ղարաբաղում մելիքների տիրապետութեան ժամա-
նակ»։

տանի Մելիք-Աբովը, իրանց ժողովրդի մի մասն առնելով,
գաղթեցին Գանձակի գաւառը։ Նրանց գիւղերը, նրանց
հողերը մնացին անտէր, դատարկ։ Այդ ժամանակ խանն
սկսեց նրանց հողերը բաժանել ում որ կամեցաւ. նրանց
տեղերում բնակեցրեց նոր գաղթականներ *)։ Եւ այսպի-
սով, հանգամանքների շնորհիւ նա իրաւունք գտաւ հայոց
հողերի վրայ, որ մինչև այնօր չունէր։
Այդ կամայականութիւնը վրդովեցրեց մինչև անգամ
խանին անձնատուր եղած մելիքներին աւաւել այն ժա-
մանակ, երբ տեսան, որ խանը հայոց հողերի վրայ բնա-
կեցրեց և թուրք գաղթականներ, ոպէս էին գօլանիները,
մի վայրենի և աւազակ ցեղ, որ թափառում էր Ջուան-
շիրի անապատներում։ Բոլորովին հայաբնակ Ղարաբաղում
մտան թուրք բնակիչներ, որոնք առաջ չկային։ Խանի
այդ վարմունքը յուզեց ընդհանուր դժգոհութիւն թէ Ղա-
րաբաղի հայ ժողովրդի և թէ խանի բարեկամ մելիքների
մէջ։
Բայց այդ մելիքները դեռ ևս ոչնչով չէին ցոյց տա-
լիս իրանց անբաւականութիւնը, միայն իրանց սրտերում
մնուցանում էին մի խուլ բողոք և սպասում էին յարմար
ժամանակի։
Առաջին բողոքը բարձրացրեց Վարանդայի Մելիք-
Շահնազարի որդի Մելիք-Ջումշուդը, որ իւր բոլոր եղ-
բայրների մէջ աւելի յառաջադէմը և աւելի խելացին էր։
Նա արդէն հասկացել էր, թէ որքան կորցրեց իւր հայրը
և որքան կորցնել տուեց Ղարաբաղի միւս մելիքներին՝
բարեկամութիւն պահպանելով Շուշի բերդի խաների հետ։

*) Խանի այդ բաշխումներն այնքան անհիմն և անհաս-
տատ էին, որ երբ հայոց գաղթականների մի մասը վերադարձաւ,
կրկին տէր դարձան իրանց հողերին և արտաքսեցին խանի
նոր բնակեցրած գիւղացիներին։

Հասարակութեան վրայ տարածուած բռնութիւնն այնքան զգալի չէ լինում անհատներին, մինչև որ իրանց անձի վրայ դեռ չեն փորձում նրա ճնշող ներգործութիւնը: Մելիք-Ջումշուդն անձամբ նրա փորձն առաւ: Բռնաւորը նրան զրկեց օրինաւոր յաջորդութիւնից և նրա փոխարէն կարգեց անարժան եղբօրը: Նրա երկու միւս եղբայրները՝ Ջհանգիրը և Ջհան-Բախշը, հալածուած նոյն բռնաւորից, փախան Մուստաֆա-խանի մօտ: Ինքը մնաց միայնակ և անօգնական:

Նրա տոհմային հպատակութիւնը սաստիկ վիրաւորուած էր: Նրա նախնիքը՝ Մելիք-Շահնազար մեծը, ամբողջ Գեղարքունեաց տէրը, բարեկամութիւն ունէր Շահ-Աբասի հետ, որից սարսափում էր արևելքը: Նրա պապը, Մելիք-Յուսէին մեծը, յարաբերութիւն ունէր կայսրների հետ: Իսկ այժմ այդ մեծ մարդկանց աւելի քան մի քանի հարիւր տարի գոյութիւն ունեցող հօյակապ տան մէջ կարգադրութիւններ էր անում մի նորելուկ ջուանշիրցի խան, որի իշխանութեան թուականը իւր հասակի տարեթուից հեռու չէր անցնում: Բայց ո՞վ բարձրացրեց ջուանշիրցուն, ո՞վ օգնեց նրա զօրանալուն:—Դարձեալ մի հայ, մի անբարիշտ և խռովարար հայ, որ հայրենիքի ազատութիւնը զոհեց իւր մանր անձնական շահերին և նրա աւերակների պատճառը դարձաւ: Մելիք-Ջումշուդը չէր կարող առանց վրդովմունքի յիշել, որ այդ հայը իւր հայրն էր...:

Այդ բոլորն անվերադառնալի կորուստներ էին: Բայց Մելիք-Ջումշուդը մտածում էր կարելոյն չափ կորուստը յետ դարձնել և դարման տանել հայրենիքի վէրքերին: Նա պարզ տեսնում էր, որ այդ վէրքերն առաջ եկան անմիաբանութիւնից, երկպառակութիւնից և հային յատուկ օտարասիրութիւնից: Մելիք-Ջումշուդը բաւական կարդացած

երիտասարդ էր: Նա չէր զարմանում, երբ յիշում էր, որ մի ժամանակ հայոց նախարարները դիմելով պարսից արքային, խնդրում էին նրանից, որ Հայաստանի հարազատ թագաւորին վեր առնէ և նրա տեղը պարսիկ մարզպան կարգէ: Նա չէր զարմանում, նա միայն ցաւում էր հայերի օտարասիրութեան վրայ, նա միայն վրդովվում էր, երբ նոյնը տեսնում էր կատարուած իւր ժամանակում, իւր աչքի առջև:

Նրա հայրը անմատչելի Ղարաբաղի մէջ մտցրեց մի օտար ցեղ, որ ուտելով, մաշելով խախտեց տեղային բոլոր հայկական իշխանութիւնների հիմքը և վերջապէս կործանեց այն հաստատուն շէնքը, որ դարերով կառուցուած էր: Այդ աւերմունքին գլխաւորապէս նպաստեցին իրանց՝ —հայերի գործակցութիւնները: Մելիք-Ջումշուդը մտածում էր վերականգնել խորտակուած շէնքը: Նա գիտէր, որ կործանման պատճառը եղաւ նոյն իսկ հայ մելիքների երկպառակութիւնը. ուրեմն շինութիւնը կարող էր յաջողուել դարձեալ նոյն մելիքների միաբանութեամբ: Նա աշխատում էր կրկին նորոգել միաբանութեան խզուած կապերը մելիքների մէջ: Բայց ո՞րտեղ էին մելիքները:

Մէկը՝ Տիզակի Մելիք-Բախտամը, շղթաների մէջ պահուած էր Արդաւիլի բերդում, երկուսը՝ Գիւլիստանի Մելիք-Աբովը և Ջրաբերդի Մելիք-Մէջլումը, գտնվում էին հայրենիքից դուրս և պանդխտութեան ու գաղթականութեան մէջ էին ապահովութիւն որոնում: Երկրի նշանաւոր և հիմնական ոյժերը ցրիւ էին եկած օտար աշխարհներում. իսկ հայրենիքի մէջ մնում էին դաւաճանները—խանին անձնատուր եղած մելիքները: Մելիք-Ջումշուդը մտածում էր այդ վերջիններին իւր կողմը ձգել և նրանց բարեկամական յարաբերութիւններն անջատել խանից: Մի դէպք նպաստեց նրա ցանկութեանը: Այդ դէպքը թէև

ընտանեկան էր, բայց քաղաքական կերպարանք ստացաւ:

Իբրահիմ-խանը սաստիկ անբարոյական մարդ էր. նրա հարեմը լի էր հայոց աղջիկներով. և ամեն տեղ, եթէ գտնվում էր մի գեղեցիկ հայ աղջիկ, հազիւ էր կարողանում ազատ մնալ նրա կրքերից: Մենք գիտենք, որ նրա հաւատարիմ մելիքներից մէկը, Ռուստամը, ամուսնացած էր կապապացի Ապրես-աղայի դստեր՝ Վարդ-խաթունի հետ: Երբ Վարդ-խաթունը դեռ օրիորդ էր, Իբրահիմ-խանը ցանկացաւ նրան իւր կին ունենալ: Օրիորդի հայրը՝ աղջըկան մահմեդական հարեմից ազատելու համար տուեց Մելիք-Ռուստամին, թէև աղջիկը դեռ փոքր էր և կին լինելու հասակին չէր հասած: Բայց դրանով Իբրահիմ-խանը չհանգստացաւ. նա շատ բաներ էր լսած Վարդ-խաթունի գեղեցկութեան մասին, ցանկանում էր նրան իւր մօտ ունենալ:

Մենք տեսանք, որ երբ Մելիք-Մէջլումը և Մելիք-Աբովը հեռացան Ղարաբաղից, Իբրահիմ-խանը նրանց ընտանիքներից մի քանի հոգի բերեց Շուշի բերդը և պահեց այնտեղ իբրև պատանդ: Այդ ժամանակ պահանջեց նա Մելիք-Ռուստամից պատանդի անունով նրա կնոջը՝ Վարդ-խաթունին: Մելիք-Ռուստամն անճարացած տուեց, թէև նրան լաւ յայտնի էր, որ խանն աւելի իւր համար սիրուհի է տանում, քան թէ պատանդ, որովհետև իւր հաւատարմութեան վրայ կասկածելու առիթ չունէր նա:

Մենք գիտենք և այն, որ Մելիք-Ռուստամը Խամսայի մելիքութիւններից չէր, այլ Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումի կեանքի դէմ դաւադրութիւն սարքելու համար, որպէս վարձատրութիւն, ստացաւ խանից Ջրաբերդի իշխանութիւնը: Իսկ այժմ յիշեալ ընտանեկան անպատուութիւնը այն աստիճան վիրաւորեց նրան, որ նա թողեց Իբրա-

հիմ-խանի ծառայութիւնը և իւր մնացած ընտանիքով *) գնաց Նուխի Սէլիմ-խանի մօտ, որ այդ ժամանակ թշնամական յարաբերութեան մէջ էր Իբրահիմ-խանի հետ:

Սէլիմ-խանը սիրով ընդունեց Մելիք-Ռուստամին և Գաշ-Բուլաղ անունով գիւղն ընծայեց նրա բնակութեան համար: Այնտեղից Մելիք-Ռուստամն սկսեց յարձակումներ գործել Շուշի բերդի վրայ և շատ վնասներ տալ Իբրահիմ-խանին:

Թէև մի առանձին մեծ նշանակութիւն չունէին նրա յարձակումները, որովհետև Իբրահիմ-խանին ոչնչացնելու համար, հարկաւոր էր, որ հայոց բոլոր մելիքները հաւաքական ուժերով պատերազմէին, բայց այդ էլ բաւական էր, որ խանի հաւատարիմ մելիքներից մէկը ոչ միայն անջատուեցաւ նրանից, այլև թշնամացաւ նրա հետ:

Խանին բարեկամ մնացին միայն երկու մելիքներ՝ Խնձիրիստանի Մելիք-Միրզախանեան Մելիք-Ալլահվերդին և Վարանդայի Մելիք-Շահնազարեան Մելիք-Յուսէին III-ը, որ Իբրահիմ-խանի կնոջ (Հուրի-Ջատ խանումի) հարազատ եղբայրն էր, և քրոջ ազդեցութեամբ իւր ձեռքը ձգեց Վարանդայի իշխանութիւնը: Այդ անցքը, որպէս վերևում ցոյց տուինք, սաստիկ գրգռեց Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդի թշնամութիւնը, և նա սկսեց այնուհետև մտածել Իբրահիմ-խանի կործանման վրայ. միայն սպասում էր մի յարմար ժամանակի: Նա սկսեց գաղտնի թղթակցել Մելիք-Մէջլումի, Մելիք-Աբովի և Մելիք-Ռուստամի հետ, որոնք՝ խանից հալածուած, նոյնպէս թշնամի էին խանին:

*) Ղարաբաղի մելիքներից շատերը բազմակնութեան սովորութիւն ունէին. Մելիք-Ռուստամն ունէր երկու կին՝ մէկը վերև յիշած Վարդ-խաթունը, միւսը Մարիամ անունով մի կին:

XXVIII

Ռուս-տաճկական երկրորդ պատերազմի հետ (1787—1791) միաժամանակ ծագեց շվեդական պատերազմը: Ռուսաց կառավարութիւնն այն աստիճան զբաղուած էր այդ պատերազմներով, որ ամենևին ժամանակ չունէր մտածելու Անդրկովկասի քրիստոնեաների վրայ, թէև այդ վերջիններն անդադար տեղեկութիւններ էին տալիս իրանց աննախանձելի դրութեան մասին: Իշխան Պօտեմկինը և Յովսէփ արքեպիսկոպոսը մասնակցում էին ռուսաց արշաւանքներին. դրանք ևս, որ խիստ հետաքրքրուած էին Անդրկովկասով, այդ ժամանակ հազիւ թէ կարողանային իրանց ցանկութիւններն իրագործել:

Իսկ վերոյիշեալ պատերազմների ընթացքում, որպէս տեսանք, Ղարաբաղում կատարուեցան մի շարք աղէտալի անցքեր: Իբրահիմ-խանը ձեռք բերելով հայոց մելիքների ռուսաց հետ ունեցած թղթակցութիւնները, սկսեց հալածել նրանց: Նոյն խանի ձեռքով Յովհաննէս կաթողիկոսն սպանուեցաւ, Գանձասարի վանքը կողոպտուեցաւ, Տիզակի Մելիք-Բախտամն աքսորուեցաւ, Խաչէնի Հասան-Ջալալեաններից երկու մելիքներ սպանուեցան, և ամենացաւալին այն էր, որ նշանաւոր մելիքներից երկուսը, Մէջլումը և Աբովը, իրանց ժողովրդի հետ դուրս եկան Ղարաբաղից, այնտեղ մնացին խանին համակրող, կամ նրանից վախեցող մելիքները:

Այդ բոլոր տխուր անցքերն առիթ տուին Յովսէփ արքեպիսկոպոսին շտապել՝ կրկին ողորմած կայսրուհու ուշադրութիւնը դարձնելու հայերի վրայ:

Այդ ժամանակ արքեպիսկոպոսը կազմեց իւր նշանաւոր պատմական տեղեկագիրը, որ բովանդակում էր իւր

մէջ Ղարաբաղի տիրապետող մելիքների յարաբերութիւնը ռուսաց կառավարութեան հետ՝ սկսած Պետրոս Մեծի օրերից, և նրանց մատուցած նշանաւոր ծառայութիւնները Ռուսաստանին, և հասցրեց մինչև իւր օրերը: Յիշեալ տեղեկագիրն իշխան Պօտեմկինի միջնորդութեամբ ներկայացուեցաւ կայսրուհուն 1790—23 յունվարի:

Այդ տեղեկագիրը իւր առանձին ազդեցութիւնն ունեցաւ: Օմանցոց հետ ունեցած պատերազմը միայն արգելք էր լինում կայսրուհուն Անդրկովկասի քրիստոնեաների վերաբերութեամբ մի վճռական գործ սկսելու: Այդ պատճառով եռանդոտ արքեպիսկոպոսի խնդիրքները յետաձգվում էին, յուսադրելով նրան, թէ իւր բաղձանքները կըկատարուեն, միայն հարկաւոր է փոքր ինչ ևս համբերել:

Բայց մի ցաւալի կորուստ թէ՛ արքեպիսկոպոսին և թէ Ղարաբաղի մելիքներին սաստիկ յուսահատութիւն պատճառեց: Թուրքաց պատերազմը վերջանալու վրայ էր, երբ իշխան Պօտեմկինը կռուի դաշտից կանչուեցաւ Ս. Պետերբուրգ, և ապա կրկին յետ ուղարկուեցաւ (1791) թուրքերի հետ հաշտութեան պայմանների մասին բանակցելու համար: Նոյն տարուայ աշնան սկզբումն իշխանը վախճանուեցաւ: Նրա մահը սուգի մէջ դրեց հանգուցեալի մտերիմ բարեկամ Յովսէփ արքեպիսկոպոսին: Սրբազանը ոչինչով իրան մխիթարել չէր կարողանում. նա իւր հիմնած մեծ շէնքը բոլորովին կործանուած էր համարում և նրա աւերակների տակ խորտակուած էր տեսնում իւր սրտին խիստ մօտիկ ցանկութիւնները...:

1791 թուի դեկտեմբերի 29-ին հաշտութեան պայմանը ստորագրուեցաւ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ: Կայսրուհին կրկին ուշադրութիւն դարձրեց Անդրկովկասի վրայ: Այդ ժամանակ թէ հայերը և թէ վրացիներն աւելի մեծ տագնապի մէջ էին: Պարսկաստանում զօրացել էր

Աղա-Մամադ-խան ներքինին, և մի քանի տարի անդադար արշաւանքներ էր գործում դէպի Արարատեան նահանգը և վտանգ էր սպառնում Վրաստանին։ Վրաց Հերակլ իշխանը մի կողմից, Թիֆլիզի Հայերը միւս կողմից, սարսափած ներքինի-խանի բարբարոսութիւններից, սկսեցին օգնութիւն խնդրել։ 1795—4 սեպ. բարձրագոյն հրովարտակով հրամայուեցաւ կոմս Գուդովիչին, ռուսաց զօրքով օգնութեան հասնել և պաշտպանել Վրաստանը։ Բայց նա ուշացաւ...։

XXIX

Աղա-Մամադ-խանի արշաւանքը։

Կուրացրած Շահ-Ռուխից յետոյ Պարսկաստանն ամբողջ ութը տարի խռովութեան մէջ էր, կեղեքվում էր զանազան ինքնիշխան տիրապետողների ձեռքում, որոնք շարունակ միմեանց հետ պատերազմելով, երկիրը դարձրել էին արեան ընդարձակ դաշտ։ Այդ տիրապետողներն էին՝ Ալի-Մուրադ-խանը, Զէնդ-Քէրիմ-խանը, Ազատ-խանը, Մուհամէդ-Հասան-խանը և ուրիշ շատերը։

Վերջը յաղթող հանդիսացաւ լուրիստանցի Զէնդ-Քէրիմ-խանը և նստեց Շիրազ քաղաքում, թէև ոչ իբրև թագաւոր, բայց Պարսկաստանի իշխող։ Այդ միջոցներում նրա մօտ իբրև պատանդ Շիրազ քաղաքում պահվում էր ներքինիացրած Աղա-Մամադ-խանը, որ վերոյիշեալ Մուհամէդ-Հասան-խանի որդին էր, ցեղով ղաջար, իսկ տեղով մազանդարանցի։

Քէրիմ-խանի մահից յետոյ (1779) Աղա-Մամադ-խանը փախաւ Շիրազից, և գալով Մազանդարանի կողմերը, հաւաքեց իւր շուրջը մեծ բազմութիւն, ապստամբուեցաւ, և տիրելով Արաղստանին, իրան պարսից թագաւոր հրա-

տարակեց, Թէհրան քաղաքը իւր համար աթոռանիստ ընտրելով *)։

1795 թուի գարնանը Աղա-Մամադ-խանը Թէհրանից արշաւանք գործեց դէպի Ատրպատական, նուաճեց այդ պարսկական ընդարձակ նահանգը, տիրեց Թաւրիզը և ուրիշ շատ քաղաքներ, յետոյ իւր եղբայր Ալի-Ղուլի-խան սարդարին ուղարկեց դէպի Երևանի կողմը։ Այդ վերջինը, տիրելով Նախիջևանը, նոյն տարուայ յուլիս ամսում, բանակ դրեց Երևանի պարիսպների մօտ։ Ս. Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը, սարսափելով նրա մօտ եկաւ, ներկայացնելով ծանրագին ընծաներ, աղաչում էր խնայել իւր վանքը։ Ներքինի Շահի եղբայրը պատւով ընդունեց կաթողիկոսին, խոստանալով, թէ ո՛չ հայերին և ոչ վանքին վնաս չի հասցնի, եթէ հայերը հաւատարիմ կմնան Պարսկաստանին, ինչպէս միշտ եղել են։

Երևանն առանց պատերազմի անձնատուր եղաւ. տեղային խանը իւր կնոջը և որդիներին պատանդ տալով, հպատակութիւն խոստացաւ։ Այդ միջոցին ինքը Աղա-Մամադ-խանը, ուրիշ ճանապարհով դիմում էր դէպի Ղարաբաղի կողմերը, որ այնտեղից անցկենայ Թիֆլիզ։ Նա Խուդափիրինի կամրջով անցաւ Երասխ գետը, և լուր տուեց եղբօրը, որ դադարեցնէ արշաւանքը և Երևանի կողմով շտապէ իւր մօտ։ Երկուսի նպատակն էլ այն էր, որ նուաճէին Վրաստանը և պատժէին Հերակլ իշխանին։

Պէտք է ի նկատի ունենալ, որ Վրաստանն այն ժամանակ և նրանից առաջ, ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի պարսկական նահանգ, որ հարկ էր վճարում Պարսկաստանին։ Նրա մի մասը օսմանցիների ձեռքումն էր և Ախալց-

---

*) Աղա-Մամադ-խանի տոհմից սկսուեցաւ Պարսկաստանի այժմեան թագաւորող տան գահակալութիւնը։

խայի մէջ նստած էր Թիւրք փաշա։ Իսկ երբ Հերակլը, պարսիկներից ազատուելու համար, Վրաստանը դրեց ռուսների հովանաւորութեան ներքոյ, նրա վարմունքը, ի հարկէ, չէր կարող չզրգռել պարսից Շահի բարկութիւնը, որ ճանաչում էր Վրաստանն իբրև պարսից պետութեան մի մասը, իսկ վրաց իշխաններին՝ իբրև պարսից Դռնից նշանակուած կառավարիչներ կամ վալիներ։

Աղա-Մամադ-խանը մտադիր էր անցկենալ դէպի Թիֆլիզ Ղարաբաղի և Գանձակի գաւառների միջով։ Ահարկու ներքինիի արշաւանքը մի նոր և ամենասաստիկ հարուած պիտի տար Ղարաբաղի մելիքների նպատակներին և միանգամայն պիտի ոչնչացնէր նրանց ունեցած յոյսերը իրանց հայրենիքի ազատութեան մասին։ Նրանք վաղուց իմացում էին տուել ռուսաց կառավարութեանը ներքինիի դէպի Հայաստան և դէպի Վրաստան կատարելիք արշաւանքների մասին *)։ Թէև կոմս Գուդովիչին հրամայուած էր հայերին և վրացիներին օգնութեան հասնել, բայց Աղա-Մամադ-խանի բանակն արդէն դրած էր Շուշի բերդի մօտ, իսկ կոմսը տակաւին չէր յայտնուել։

Չպէտք է մոռանալ, որ Աղա-Մամադ-խանը թէև սիրում էր իւր նախկին «խան» տիտղոսով կոչուել, բայց նա արդէն Պարսկաստանի ինքնակալ Շահն էր։ Նրան յայտնի էին Ղարաբաղի մելիքների ձգտումները, նրանց յարաբերութիւնները ռուսների հետ և այդ վերջինների խոստմունքները հայերի վերաբերութեամբ, և այլն։ Նրան յայտ-

*) Աղա-Մամադ-խանը մի քանի անգամ պատրաստուեցաւ արշաւանք գործելու դէպի Հայաստան և Վրաստան, բայց ժամանակ չունեցաւ անցնելու Երասխ գետը, որովհետև ամեն անգամ Պարսկաստանի խորքերում նորանոր ապստամբութիւններ էին ծագում և նա ստիպուած էր լինում յետ դառնալ, ապստամբութիւնները զսպելու համար։

նի էին նաև Իբրահիմ-խանի բռնակալութիւնը և նրա գործ դրած բարբարոսութիւնները հայերի դէմ։ Այդ էր պատճառը, որ դեռ Երասխ գետից չանցած, նա հրաման ուղարկեց Ղարաբաղի մելիքներին, հրաւիրելով նրանց որ խոնարհուեն իրան, խոստանալով, որ ինքը կըվերահաստատէ նրանց իրանց վաղեմի իշխանութիւնների և արտօնութիւնների մէջ և կըոչնչացնէ Իբրահիմ-խանին։

Աղա-Մամադ-խանը թէև բարբարոս, բայց միևնոյն ժամանակ խելացի և քաղաքագէտ մարդ էր։ Նա շատ լաւ հասկանում էր, որ հայերի առաջնորդութեամբ ռուսներն աւելի հեշտութեամբ կարող էին մուտք գործել իւր տէրութեան մէջ. ուրեմն հայոց մելիքներին գոհացնելով, նա կըփակէր ռուսների յառաջընթացութեան ճանապարհը դէպի Պարսկաստան։

Բայց հայոց մելիքներն աւելի բարւոք համարեցին հաւատարիմ մնալ ռուսներին, և Աղա-Մամադ-խանին ընդդիմադրելու համար միացան մինչև անգամ իրանց վաղեմի թշնամի Իբրահիմ-խանի հետ, մտածելով որ նրան յետոյ հեշտ կըլինի ոչնչացնել, բայց եթէ միանգամ հպատակուեն Աղա-Մամադ-խանին, այնուհետև անհնարին կըլինի հայրենիքն ազատել պարսից լծից։ Միայն Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումը չհամաձայնուեցաւ միւս մելիքների հետ։

Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը և Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբովը հայոց զօրքերով ամրացան Շուշի բերդի մէջ և Իբրահիմ-խանի հետ միասին սկսեցին պաշտպանել բերդը։

Բերդի պաշարումը տևեց ամբողջ քառասուն օր։ Հայ և Թիւրք զօրքերի քաջութիւնը՝ միացած բերդի բնական ամրութիւնների հետ, ի չիք դարձրին Աղա-Մամադ-խանի բոլոր ջանքերը բերդը գրաւելու համար։

Այդ ժամանակ Աղա-Մամադ-խանի բանակի մէջ իւր զօրքերով գտնվում էր Մելիք-Խորայէլեան Մելիք-Մէջլումը և Գանձակի Ջաւադ-խանը, որոնք երկուսն էլ Իբրահիմ-խանի թշնամիներն էին և միացած էին Աղա-Մամադ-խանի հետ։

Մելիք-Մէջլումի վարմունքը բացատրութեան կարօտ է։

Մելիք-Մէջլումն ազնիւ երիտասարդ էր, բայց չափազանց վրէժխնդիր և ոչ մի միջոցների դէմ չզողացող՝ թշնամուն ոչնչացնելու համար։ Մենք յիշում ենք այն սպառնալիքը, երբ Թիֆլիզից վիրաւորուած դուրս գալու ժամանակ, վրացի սայլապանների բերանով լուր ուղարկեց նա իշխան Հերակլին. «ասեցէք ձեր իշխանին, որ Մելիք-Մէջլումը չի մոռանայ նրա հիւրասիրութիւնը»...։

Այդ երիտասարդը վշտացած և դառնացած էր անդադար իւր բարեկամներից խաբուած լինելուց։ Հօր մահից յետոյ նա տարիներով շարունակ պատերազմում էր Իբրահիմ-խանի հետ։ Նրան յոյսեր էին տալիս, օգնութիւններ էին խոստանում, բայց խաբում էին...։ Վերջը դարձեալ մեծ խոստմունքներով նա հրաւիրուեցաւ Թիֆլիզ. իսկ Հերակլը փոխանակ իւր խոստմունքները կատարելու, կամենում էր իւր հիւրին կալանաւորել և մատնել նրա թշնամու՝ Իբրահիմ-խանի ձեռքը...։

Նախընթաց գլուխներում տեսանք, որ ամեն կողմից խաբուած, ամեն տեղից յուսահատուած, Մելիք-Մէջլումն ապաստան գտաւ իւր հօր վաղեմի բարեկամի՝ Գանձակի Ջաւատ-խանի մօտ։ Նրա ժողովուրդը թողեց Ղարաբաղը և հիւրասիրուեցաւ նոյն խանի երկրում։ Ջրաբերդի հայրենազուրկ իշխանը իւր ժողովրդի հետ օտար հողի վրայ էր բնակվում որպէս մի ժամանակաւոր հիւր, իսկ նրա հայրենի երկրին տիրել էր Իբրահիմ-խանը...։

Մելիք-Մէջլումը խելացի երիտասարդ էր։ Նա շատ

լաւ էր իմանում, որ եթէ իրանց նախնիքն ունեցել են և պահպանել են Ղարաբաղի լեռների մէջ մի ինքնուրոյն հայկական իշխանութիւն, այդ եղել է ոչ թէ քրիստոնեայ թագաւորների օգնութեամբ, այլ պարսից շահերի շնորհիւ։ Այդ էր պատճառը, որ երբ Աղա-Մամադ-խանն անցաւ Երասխ գետը և հրաւէր կարդաց Ղարաբաղի մելիքներին, խոստանալով որ եթէ կըմիանան իւր հետ, նա կըոչնչացնէ Իբրահիմ-խանին և կըհաստատէ նրանց իրանց հայրենական իշխանութիւնների մէջ, բոլոր մելիքները մերժեցին շահի հրաւէրը, և միայն Մելիք-Մէջլումը միացաւ նրա հետ։

Պէտք է խոստովանուել, որ բացի ընդհանուր շահերից, Մելիք-Մէջլումն ունէր և իւր նեղ, անձնական հաշիւները ևս։ Նա Իբրահիմ-խանի հին թշնամին էր, նա դեռ նոր թշնամացել էր Հերակլ իշխանի հետ. Աղա-Մամադ-խանի ձեռքով նա կամենում էր պատժել թէ առաջինին և թէ երկրորդին։

Բայց Շուշի բերդի պաշարումը երկար տևեց։ Այդ բերդը, որ Ղարաբաղի մելիքութիւնների քայքայման պատճառը դարձաւ, այժմ միևնոյն մելիքները նոյն բերդի միջից պատերազմում էին պարսից շահի դէմ, որ խոստանում էր կրկին վերանորոգել նրանց վաղեմի իշխանութիւնը, եթէ կըթողնեն Իբրահիմ-խանին և կ՚անցնեն իւր կողմը։

Ժամանակ չկորցնելու համար Մելիք-Մէջլումը խորհուրդ տուեց շահին թողնել Շուշի բերդի պաշարումը, ասելով, թէ աւելի նպատակայարմար կըլինի նախ գնալ Թիֆլիզը գրաւել, իսկ Շուշին այնուհետև ինքն իրան անձնատուր կըլինի։

Աղա-Մամադ-խանին հաւանական երևեցաւ Մելիք-Մէջլումի խորհուրդը, նա իւր զօրքերի մի մասը թողեց

ձուշի բերդի մօտ, իսկ մնացածը իւր հետ առնելով, գնաց դէպի Թիֆլիզ։ Նրան առաջնորդում էին Մելիք-Մէջլումը և Գանձակի Ջաւատ-խանը։

XXX

Աղա-Մամադ-խանը դեռ Գանձակից չէր անցել, իսկ Թիֆլիզն արդէն սարսափի մէջ էր գտնվում։ Հերակլը հրաւիրեց իւր ազնուականներին, որ պատրաստուեն թշնամու առաջն առնելու։ Բայց նրա հրաւէրքին ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց։ Ազնուականներն զբաղուած էին իրանց քէֆերով։ Նրան օգնութեան հասաւ միայն Իմերէթիայի Սոլոմոն իշխանը մի քանի հազար հոգով։

Բայց պէտք է ասած, որ Հերակլի երկչոտութիւնը սաստիկ վհատեցրեց նրա զօրքերին։ Նա իւր ընտանիքը Թիֆլիզից տեղափոխեց Վրաստանի խորքերը։ Այդ տեսնելով, նրա զօրապետները և զօրքերը նոյնը խնդրեցին, որ իրանց ընտանիքները հեռացնեն, յետոյ կըգան պատերազմելու։ Բայց գնացողն այլևս յետ չդարձաւ։ Եւ այսպէս, դեռ թշնամուն չհանդիպած, զօրքերի մեծ մասը ցրիւ եկաւ։

Իւր մօտ մնացած զօրքերով Հերակլը դուրս եկաւ Թիֆլիզից, և Ղազախի Ինջա կոչուած գետի մօտ բանակ դնելով, սպասում էր թշնամուն։ Բայց երբ լսեց, որ Աղա-Մամադ-խանն արդէն անցաւ Գանձակից, նա թողեց իւր դիրքը, և վերադառնալով կրկին մտաւ քաղաք։

Նա սկսեց կարելոյն չափ ամրացնել քաղաքը։ Այստեղ նրան օգնութեան եկած խմբերլները քաղցածութիւնից սկսեցին, նախքան թշնամու աւարառութիւնը, իրանք կողոպտել քաղաքացիներին։

1795 թ. սեպտեմբեր ամսի 12-ին Աղա-Մամադ-խա-

նը հասաւ Սօղանլուղ գիւղի մօտ, և գիշերն այնտեղ բանակ դնելով, վաղ-առաւօտեան յարձակուեցաւ Թիֆլիզի վրայ։ Հերակլը դուրս եկաւ նրա առաջ, բայց մի փոքրիկ ճակատամարտից յետոյ վրացիները ջարդուեցան և փախչելով մտան քաղաք։

Այդ միջոցին պարսից զօրքերի մի մասը Մելիք-Մէջլումի առաջնորդութեամբ Սօլօլակի կողմից, իսկ միւս մասը իւր՝ Աղա-Մամադ-խանի առաջնորդութեամբ բաղանիքների կողմից, նոյնպէս մտան քաղաք։ Հերակլը Հաւլաբարի կամուրջով մի ջորեպանի հետ փախաւ դէպի Կախէթիայի կողմերը և թագնուեցաւ լեռների մէջ։ Իսկ նրա աւելի ևս երկչոտ զօրքերը բոլորը ցիրուցան եղան։

Անպաշտպան քաղաքը մնաց գազանաբարոյ պարսիկների ձեռքում։ Ամբողջ ութ օր շարունակվում էր կոտորածը և աւարառութիւնը։ Աղա-Մամադ-խանը՝ 12 հազար գերի իւր հետ առնելով, հեռացաւ աւերակ քաղաքից։ Մելիք-Մէջլումն առաւ իւր վրէժը Հերակլ իշխանից, բայց նրա անգթութիւնը ոչինչով արդարացնել չէր կարելի։ Մինչև այսօր Հաւլաբարի հին կանանց բերանում կարդացվում է մի այսպիսի անէծք.

«Մելիք-Մէջլումը շուն դառնայ,
«Ջաւատ-խանը—պստիկ կուճի.
«Մելիք-Մէջլումի ազգէմէն
«Թող չմնայ մէկը ձուշի...։

Որովհետև Աղա-Մամադ-խանը իւր յաղթութիւնով առաւել պարտական էր Մելիք-Մէջլումին, ճանապարհին, հէնց առաջին իջևանում, հրամայեց իւր զօրապետներին, որ աւարից նրա մարդկանց համար բաժին հանեն, ասելով «քրիստոնեայքն պատկանածը քրիստոնեայքն տուեցէք»։ Մելիք-Մէջլումի ձիաւորներն իրանց եափնջիները տարածեցին գետնի վրայ, և պարսից զօրքերը որքան խաչեր,

եկեղեցական անօթներ և զգեստներ էին կողոպտել Թիֆլիզի եկեղեցիներից, բոլորը թափեցին նրանց եափնջիների վրայ: Մելիք-Մէջլումը այս բոլորը յետ ուղարկեց Թիֆլիզ. բայց դրանով չկարողացաւ գրաւել Թիֆլիզեցիների սիրտը...:

Շահը շնորհեց Մելիք-Մէջլումին այս երեք արտօնութիւնները՝ ա. երբ և կամենայ, կարող է անարգել կերպով ել և մուտ գործել իւր մօտ. բ. ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կըկատարուի. գ. արքունի գանձարանը նրա տրամադրութեան ներքոյ կըլինի:

Բայց Մելիք-Մէջլումն այն աստիճան հպարտ և անշահասէր երիտասարդ էր, որ Շահից ուրիշ ոչինչ չպահանջեց, այլ միայն Թիֆլիզն աւերակ դարձնելուց յետոյ, խընդրեց նրա օգնութիւնը Շուշի բերդը նոյնպէս կործանել, Իբրահիմ-խանին ոչնչացնել և աւելի հաստատութիւն տալ Ղարաբաղի մելիքների իշխանութեանը:

Շահը յօժարուեցաւ ուղղակի գնալ Ղարաբաղ՝ Շուշին գրաւելու և Մելիք-Մէջլումի ցանկութիւնները կատարելու համար, բայց դժբախտաբար այդ միջոցներում Ղանդահարի և Հերաթի կողմերում խռովութիւններ ծագեցան, և նա ստիպուեցաւ շտապել դէպի Պարսկաստան ապըստամբութիւնները զսպելու համար: Նա յանձնեց Ջաւատ-խանին և Մելիք-Մէջլումին սպասել, խոստանալով որ շուտով կըվերադառնայ:

Ջաւատ-խանը Մելիք-Մէջլումի հետ գնացին Գանձակ, իսկ Շահը ուրիշ ճանապարհով դիմեց դէպի Պարսկաստան:

Թիֆլիզն աւերակ դառնալուց 25 օրից յետոյ Հերակլը մտաւ մոխիր դարձած քաղաքը:

XXXI

Աղա-Մամադ-խանի հեռանալուց յետոյ, Հերակլը իւր դժբախտութիւնը յայտնելով Եկատերինա կայսրուհուն, սկըսեց նրանից օգնութիւն խնդրել: Բոլորը սարսափելով սպասում էին, որ այդ գազանը կրկին պիտի վերադառնայ:

Աղա-Մամադ-խանի արշաւանքը մեծ հարուած տըւեց ռուսաց արևելեան շահերին: Ռուսներն աշխատում էին իրանց ազդեցութիւնը տարածել Անդրկովկասի ոչ միայն քրիստոնեաների, այլև մահմեդականների վրայ. բայց Աղա-Մամադ-խանը բոլորովին վայր ձգեց նրանց վարկը: Դեռ 1783 թուին, Եկատերինայի թագաւորութեան հէնց առաջին տարում, իշխան Պօտեմկինի աշխատութեամբ, Վրաստանն ընդունեց իւր վրայ Ռուսաստանի գերիշխանութիւնը և մտաւ նրա հովանաւորութեան ներքոյ: Հասկանալի է, թէ ռուսները որքան պիտի կորցնէին իրանց համարումը, որ չկարողացան պաշտպանել իրանց հոգաբարձութեան ներքոյ առած երկիրը, որին շատ բան էին խոստացել:

Իրանց համարումը վերականգնելու համար ռուսներն ստիպուած էին սկսել մի նոր արշաւանք պարսիկների դէմ: 1796 թ. 19 փետրվարի գրուած հրովարտակով հրամայուեցաւ գեներալ կոմս Վ. Ա. Զուբովին, որ Անդրկովկասի քրիստոնեաներին օգնութեան հասնէ: Նոյն հրովարտակի մէջ ի թիւս այլոց յիշուած էր, որ Ռուսաստանը զէնք է բարձրացնում յանուն ճնշեալ ազգերի ազատութեան:

Ռուսաստանի հայոց Յովսէփ արքեպիսկոպոսը, որպէս երևում է նրա Հերակլ իշխանին գրած մխիթարական նամակներից, սաստիկ յուսահատուած և վշտացած էր Աղա-Մահմադ-խանի բարբարոսութիւններից և Թիֆլիզի աւե-

րակ դառնալուց։ Բայց ռուսաց զօրքերի նոր արշաւանքը պարսիկների դէմ նրան կրկին սիրտ և հոգի տուեց, կրկին կենդանացան նրա յոյսերը հայրենիքի ազատութեան մասին։

Յովսէփ արքեպիսկոպոսը հրաւիրուեցաւ ռուսաց կառավարութիւնից, որ անձամբ մասնակցէ արշաւանքին։ Ծերացած, ուժից ընկած արքեպիսկոպոսը պատրաստ էր ամեն զոհողութիւններ յանձն առնել, միայն թէ ռուսաց սուրը յաջողութիւն գտնէր. այն սուրը, որ պիտի պատերազմէր Անդրկովկասի քրիստոնեաների ազատութեան և նրանց մի խաղաղ կեանք տալու համար։

1796 թ. մարտ ամսում, Ղզլարում արքեպիսկոպոսը տեսնուեցաւ կոմս Զուբովի հետ՝ արշաւանքի մասին խորհրդակցելու և զանազան նախապատրաստութիւններ կարգադրելու համար։ Այնտեղից արքեպիսկոպոսը գաղտնի նամակներ գրեց հայոց մելիքներին, որոնց աւետում էր ռուսաց զօրքերի գալուստը, յորդորում էր պատրաստուել թէ զէնքով և թէ պաշարներով ռուսներին օգնելու համար։ Բացի արքեպիսկոպոսի մասնաւոր նամակներից, լոյս ընծայուեցաւ կայսրուհու՝ հրովարտակի բովանդակութեան մտքով մի շրջաբերական հրաւէրք, որ ուղղուած էր Անդրկովկասի և Պարսկաստանի բնակիչներին։ Արքեպիսկոպոսն այդ շրջաբերականի թարգմանութիւնը Հաշտարխանում տպել տուեց և մի քանի հազար օրինակ տարածեց հայերի մէջ։

Նոյն տարուայ գարունքին ռուսաց զօրքը Ղզլարից ճանապարհ ընկաւ։

Զուբովը մօտեցաւ Դերբէնդին (մայիս ամսում), տեղային Ֆաթալի-խանի որդի Շխալի-խանն ընդդիմացաւ նրան և պատրաստվում էր պատերազմելու։ Բայց Դերբէնդի հայ բնակիչները քաղաքը մատնեցին Զուբովի ձեռքը. բա-

ցի դրանից, բռնեցին Շխալի-խանին և նոյնպէս մատնեցին Զուբովի ձեռքը։ Ռուսները համարեա առանց պատերազմի՝ հայերի աջակցութեամբ տիրեցին Դերբէնդին։

Զուբովը Դերբէնդից անցաւ Ղուբա, իւր հետ տանելով Շխալի-խանին։ Ղուբան նոյնպէս առանց արիւնի գրաւուեցաւ։ Այստեղ մի օր, ձիարշաւի հանդէս կատարելու ժամանակ, որին հանդիսատես էր ինքը Զուբովը, Շխալի-խանը մտրակելով իւր նժոյգին ասպարէզից դուրս եկաւ, փախաւ դէպի Պարսկաստան. ոչ ոք չկարողացաւ բռնել նրան։ Բայց Բագուի մէջ նրան կալանաւորեցին, երբ այդ քաղաքը առանց պատերազմի անձնատուր եղաւ ռուսներին։

Նոյն թուի յուլիս ամսում Զուբովը մօտեցաւ Շամախի քաղաքին։ Տեղային Մուստաֆա-խանը պատրաստուել էր պատերազմելու։ Բայց Յովսէփ արքեպիսկոպոսն առաջուց անձամբ գնաց նրա մօտ, աշխատեց համոզելու, որ ընդդիմութիւնն ապարդիւն կլինէր, աւելի լաւ էր առանց արիւնհեղութեան ընդունել ռուսաց հպատակութիւնը։ Մուստաֆա-խանը համաձայնուեցաւ ընդունելու արքեպիսկոպոսի առաջարկութիւնը, բայց երբ նրանից մի յուսալի պատանդ պահանջեցին, նա դրժեց իւր խոստմունքին, և դիմեց Շուշի բերդի Իբրահիմ-խանին, որ միանայ իւր հետ, և երկուսը միասին պատերազմեն ռուսաց դէմ։ Այդ ժամանակ (օգոստոս ամսում) արքեպիսկոպոսը կրկին ուղարկուեցաւ Մուստաֆա-խանի մօտ և տեսնուեցաւ նրա հետ սուրբ Ստեփաննոսի վանքում։ Այս անգամին արքեպիսկոպոսին կատարելապէս յաջողուեցաւ կատարել իւր միջնորդութեան խորհուրդը, և Շամախին՝ նրա աշխատութեամբ առանց արիւնհեղութեան անցաւ ռուսների ձեռքը։

Վերոյիշեալ քաղաքները դիւրութեամբ գրաւելուց յե-

տոյ, ձմեռն անվտանգ անցկացնելու համար, Զուբովն անցաւ Մուղանի անապատը և ձմերեց Սալիանում:

Հետեւեալ տարուայ գարունքին Զուբովը դիմեց դէպի Գանձակ:

Մելիք-Աբովն այդ ժամանակ գտնվում էր Գանձակում, տեղային Ջաւատ-խանի մօտ: Մինչեւ ռուսաց զօրքերի հասնելը Մելիք-Աբովը Յովսէփ արքեպիսկոպոսի խորհրդով կամեցաւ համոզել Ջաւադ-խանին, որ առանց պատերազմի անձնատուր լինի ռուսներին: Ջաւադ-խանը պատրաստեց իւր սեպհական պալատը և յարգանքով ընդունեց թէ՛ կոմս Զուբովին և թէ Յովսէփ արքեպիսկոպոսին իւր քաղաքում:

Այդ ժամանակ Ջաւադ-խանն ընծայեց նորին սրբազնութեանը Կենաց փայտի մի մասը, որ Հաղբատայ վանքից բերուած էր Թիֆլիզ և այդ քաղաքի աւարառութեան ժամանակ ընկել էր պարսից զինուորների ձեռքը, որոնցից գնել էր խանը:

Այդ միջոցներում Շուշի բերդի Իբրահիմ-խանը տեսնելով որ հայերը միասիրտ և միահոգի կերպով միացած են ռուսների հետ, տեսնելով որ միւս գաւառների մահմեդական խաները հնազանդուեցան, ինքն եւս անճար մնալով, իւր որդի Աբդուլ-Փաթիհ-խանին ուղարկեց կոմս Զուբովի մօտ և յայտնեց իւր հպատակութիւնը: Կոմսը սիրով ընդունեց նրա որդուն և յարգանքով ճանապարհ դրեց, ուղարկելով նրա ձեռքով ընծաներ Իբրահիմ-խանին, այլեւ մի թանկագին գաւազան Շուշի բերդի մահմեդական հոգեւորականների գլխաւոր մօլլա Փանահին:

Կոմսի բարեկամական ցոյցերը դէպի Շուշի բերդի բռնակալը բաւական խախտեցին Ղարաբաղի հայոց մելիքների հաւատը դէպի ռուսները: Նրանք բոլորովին ուրիշ բան էին սպասում. Նրանք յոյս ունէին, որ Իբրահիմ-խա-

նի իշխանութիւնը կըոչնչացնեն, և Ղարաբաղում կըկին կըհաստատեն մելիքների վաղեմի իշխանութիւնը: Դրա համար էլ մելիքներն ամեն զոհողութիւն յանձն առան ռուսների տիրապետութիւնը հեշտացնելու համար: Բայց Յովսէփ արքեպիսկոպոսը դարձեալ հանգստացնում էր նրանց, ասելով, թէ դա քաղաքագիտական առժամանակեայ խաղ էր միայն, թէ Իբրահիմ-խանը երկար չի մնայ իւր տեղում և թէ մելիքները դարձեալ տէր կըլինին Ղարաբաղին, ինչպէս միշտ եղել են, եւայլն:

Գուցէ արքեպիսկոպոսի յոյսերը երազներ չէին, գուցէ այդ բոլորը կըկատարուէր, բայց երեւում է, որ ինքը Նախախնամութիւնը վճռել էր պատժել հայերին իրանց մեղքերի համար...:

Յանկարծ հասաւ Եկատերինա կայսրուհու մահուան բօթը (1796 թ. 6 նոյեմ.): Եւ մինչդեռ կոմս Զուբովը պատրաստվում էր կատարելու իւր արշաւանքի այլ խորհուրդները, հրաման ստացաւ վերադառնալու Ռուսաստան: Նրա հետ ռուսաց զօրքերը թողեցին Անդրկովկասը (1797 թ. գարունքին):

Այդ անակնկալ դժբախտութիւնից յետոյ, հասկանալի է Յովսէփ արքեպիսկոպոսի անմխիթար սրտի դառնութիւնը: Նրա ողորմած կայսրուհին վախճանուեցաւ, նրա բոլոր բարձր գաղափարները, որոնցով ոգեւորուած՝ առաջնորդում էր նա ռուսաց զօրքերին, նրա բոլոր ծրագիրները հայրենիքի ազատութեան մասին, միանգամայն խորտակուեցան:

Նա անմխիթար, յուսահատ սրտով ինքն եւս վերադարձաւ Ռուսաստան:

XXXII

Ռուսաց զօրքերի յանկարծ հեռանալը բոլորովին այլ կերպով էին բացատրում Անդրկովկասի մահմեդականները։ Արդէն Պարսկաստանից լսւում էր, որ Աղա-Մամադ-խանը պատրաստւում է մի նոր արշաւանք գործելու դէպի Անդրկովկաս։ Այդ պատճառով ռուսների հեռանալը վերաբերում էին նրանց վախենալուն, նրանց երկչոտութեանը, երբ թէ Շահի գալուստը լսածին պէս, սկսեցին փախչել։ Թէև այդ ենթադրութիւնը պարծենկոտ մահմեդականների երևակայութեան ցնորքն էր միայն, այսուամենայնիւ ռուսաց հեռանալը մեծ հարուած տուեց Անդրկովկասեան քրիստոնեաներին, առաւելապէս հայերին։

Մենք տեսանք, թէ որպիսի եռանդով և որքան անձնազոհութեամբ աշխատում էին հայերը ռուսաց յաղթութիւնները հեշտացնելու համար։ Բոլոր գաւառների տիրապետող խաները, համարեա առանց պատերազմի, անձնատուր եղան։ Ինչու.—որովհետև ժողովուրդը խաների դէմ էր և ռուսների բարեկամ։ Իսկ ժողովուրդը բաղկացած էր ըստ մեծի մասին հայերից։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ խաները և առհասարակ մահմեդական ամբոխը, ռուսների հեռանալուց յետոյ, պիտի սկսէին իրանց բոլոր վրէժխնդրութեան թոյնը թափել հայերի վրայ։

Մենք տեսանք, որ Ղուբայի և Դերբէնդի հայ բնակիչները իրանք բաց արին այդ քաղաքների դռները ռուսաց զօրքերի առջև, և տեղային Շէխալի-խանին բռնելով, մատնեցին կոմս Զուբովի ձեռքը։ Ի հարկէ ռուսաց զօրքերի հեռանալուց յետոյ նոյն հայերն այլևս չէին կարող մնալ իրանց տեղերում. նրանք թշնամացան մահմեդական-

ների հետ. նրանք դաւաճան յայտնուեցան խանի աչքում։ Եւ այդ էր պատճառը, որ Դերբէնդի ու Ղուբայի հայերը համարեա բոլորը գաղթեցին ռուսաց զօրքերի հետ և գնացին Ռուսաստան։ Դրանցից աւելի քան հազար ընտանիք կոմս Զուբովը բնակեցրեց Ղզլարի գաւառում։

Շամախու Մուստաֆա-խանը նոյնպէս՝ որ վիրաւորուած էր իւր քաղաքի հայերից, նրանց դէպի ռուսներն ունեցած համակրութեան մասին, սկսեց հալածել նրանց։ Նա սպանել տուեց Յովհաննէս վարդապետին, որ գրգռում էր հայերին խանի դէմ յօգուտ ռուսների։

Իբրահիմ-խանը միայն լուռ մնաց, պահելով իւր սրտում Ղարաբաղում գտնուած մելիքների վերաբերութեամբ սաստիկ ոխակալութիւն։ Նա խորամանկ և միևնոյն ժամանակ իւր գործը հասկացող մարդ էր. նա մելիքների մէջ դեռ ևս շատ պէտք ունէր. մի կողմից լսւում էր Աղա-Մամադ-խանի նոր արշաւանքի ձայնը դէպի Ղարաբաղ, միւս կողմից նա մտադիր էր վրէժխնդիր լինել Մելիք-Մէջլումից, որ Աղա-Մամադ-խանի հետ միանալով, պաշարեց նրա բերդը՝ Շուշին։

XXXIII

Վրաց Հերակլ իշխանը չէր մոռացել Թիֆլիզի աւերումը Մելիք-Մէջլումի և Ջաւատ-խանի ձեռքով։ Շուշի բերդի Իբրահիմ-խանը նոյնպէս չէր մոռացել, որ յիշեալ երկու անձինքը, առաջնորդելով Աղա-Մամադ-խանին, պաշարեցին իւր բերդը և ահագին վնասներ պատճառեցին։ Ուստի երկուսն էլ միաբանելով, կամեցան իրանց այդ ոխերիմ թշնամիներից վրէժխնդիր լինել։

Համարեա կոմս Զուբովի Դերբէնդը տիրելուց մի ամիս յետոյ (1796 թ. ապրիլ ամսում) Հերակլը վրացի և

վարձուած լեզգի զօրքերով, այլև իւր հետ վեր առնելով Թիֆլիզում գտնուած ռուսաց զօրքերի մի մասը, իսկ Իբրահիմ-խանը Ղարաբաղի հայ և թուրք զօրքերով պաշարեցին Գանձակի բերդը։ Նրանց օգնութեան հասաւ և Աւարիայի Օմար-խանը։

Իբրահիմ-խանի զօրախմբի մէջ գտնվում էր Մելիք-Ռուստամը. բացի դրանից, Ղարաբաղի միւս մելիքներից ոչ ոք չմասնակցեց խանի արշաւանքին։ Այդ փոփոխամիտը, որպէս տեսանք XXVII գլխում, իւր կնոջ պատճառով թշնամացաւ խանի հետ, բայց Մելիք-Մէջլումի դէմ պատերազմելու համար կրկին հաշտուեցաւ։ Նա վաղեմի թշնամութիւն ունէր Մելիք-Մէջլումի հետ, որովհետև այդ վերջինը, որպէս ցոյց տուինք XXVI գլխում, մի դաւադրութեան համար հրացանի բռնել տուեց Մելիք-Ռուստամի եղբօրը և փեսային։

Գանձակի բերդի մէջ իւր զօրքերով գտնվում էր Մելիք-Մէջլումը, տեղային Ջաւատ-խանի մտերիմ բարեկամը։ Բացի նրանից, Գանձակի հայ մելիքները իրանց մարդկանցով նոյնպէս բերդի մէջն էին, պաշտպանում էին նրան։ Բերդի ութն աշտարակներից չորսը հայերի պաշտպանութեան ներքոյ էր, իսկ մնացածը պաշտպանում էր ինքը Ջաւատ-խանը։

Պաշարումը տևեց երկար, աւելի քան չորս ամիս։ Ռուս, թուրք, վրացի և լեզգի զօրքերը, ահագին քանակութեամբ շրջապատել էին բերդը և անդադար յարձակումներ էին գործում, բայց պաշարուածները քաջութեամբ պատասխանում էին նրանց։ Վերջը Հէրակլ իշխանն անճարացած մի գաղտնի պատգամաւորութիւն ուղարկեց Ջաւատ-խանի մօտ, յայտնելու նրան, որ եթէ Մելիք-Մէջլումին իւր ձեռքը կըտայ, դրանով ամեն ինչ կըվերջանայ։

Ջաւատ-խանը խիստ արհամարհանքով պատասխանեց,

ասելով թէ մի այդպիսի վարմունք միայն իրան՝ Հէրակլին կըվայելէ, իսկ ինքը չէ կարող իւր բարեկամին և դաշնակցին մատնել թշնամու ձեռքը։ Այդ խօսքերով Ջաւատ-խանը կամեցաւ յիշեցնել վրաց իշխանին նրա անազնիւ վարմունքը Մելիք-Մէջլումի վերաբերութեամբ, երբ նա Թիֆլիզում կամենում էր կալանաւորել իւր հիւրին և մատնել Իբրահիմ-խանի ձեռքը, որի համար և սաստիկ պատժուեցաւ, Թիֆլիզը աւերակ դարձաւ...։

Այդ պատասխանից յետոյ Հէրակլը և Իբրահիմ-խանը սաստկացրին իրանց յարձակումները։ Երկու կողմից ևս սարսափելի կռիւներ էին լինում, բայց բերդի գրաւելն օրըստօրէ անհնարին էր դառնում։ Թշնամին սկսեց աւարի առնել, աւերակ դարձնել Գանձակի շրջակայ գիւղերը։

Կռիւների մէջ առանձին հերոսութեամբ հանդիսացան Մելիք-Մէջլումի երկու քաջերը՝ Դալի-Մահրասան և Թիւլի-Արզումանը. առաջինը լեզգիների դէմ, իսկ երկրորդը վրացիների դէմ։ Այդ երկուսը իրանց խմբերով շատ անգամ դուրս էին գալիս պաշարուած բերդից, և կայծակի նման նետուելով թշնամու բանակի վրայ, սարսափելի կոտորածներ գործելով, յետ էին դառնում։ Բայց երկու քաջերը ևս իրանց յանդուգն յարձակումների զոհը դարձան. Թիւլի-Արզումանը գնդակի հարուած ստացաւ Գանձակի այգեստանի մէջ տեղի ունեցած կռւում, իսկ Դալի-Մահրասան, որպէս նկարագրեցինք XII գլխում, սպանուեցաւ Գանձակի գերեզմանատան մէջ։ Այդ քաջերի կորուստը Մելիք-Մէջլումին սաստիկ ցաւ պատճառեց։

Երեք ամիս անցաւ, բայց բերդը դեռ աներկիւղ պաշտպանվում էր։ Այդ միջոցներում մի ծերունի, որ չնայած գլխի ալևոր մազերին, դեռ պահպանել էր մարմնի ժրութիւնը և սրտի աշխոյժը, թշնամու բանակից բաժանուելով, աննկատելի կերպով մտաւ բերդի մէջ։ Նա մօտեցաւ

այն աշտարակներից մէկին, որ գտնվում էին Հայերի պաշտպանութեան ներքոյ։ Այդ ծերունու ներկայութիւնը՝ կարծես մի գիւթական զօրութեամբ ազդեց աշտարակի հայ պահակների վրայ, որոնց թիւը մի քանի հարիւր հոգի էր, և գիշերը բոլորն էլ ապստամբուեցան, աշխատում էին բաց անել թշնամու առջև բերդի դռները։ Մելիք-Մէջլումն այդ լսելով թողեց իւր բռնած դիրքը, շտապեց զսպելու ապստամբութիւնը։ Գիշերային խառնութեան մէջ նա գնդակի հարուած ստացաւ. Նրան վիրաւորուած տարան Ջաւատ-խանի պալատը։ Ծերունին բռնուեցաւ։ Ո՞վ էր այդ չարագործը։

Դա Խորայէլ կաթողիկոսի հայր Ապրես-աղան էր։ Նրա օծեալ որդին դաւաճանութիւն գործեց Ղարաբաղի բոլոր հայ մելիքների դէմ և նրանց թղթերը բռնելով, մատնեց Իբրահիմ-խանին և Ղարաբաղի կործանման պատճառը դարձաւ. այժմ ծերունի հայրը նոյն եղեռնագործութեան դերը կատարեց։ Նրա փեսան *)՝ Մելիք-Ռուստամը, որ թշնամու բանակի մէջն էր, կամեցաւ նրան և Իբրահիմ-խանին մի մեծ ծառայութիւն անել։

Նոյն գիշերուայ առաւօտեան պահուն Ջաւատ-խանը Ապրես-աղայի գլուխը կտրել տուեց և որպէս ընծայ ուղարկեց թշնամու բանակը նրա փեսայ Մելիք-Ռուստամին. ապստամբներից շատերը նոյնպէս պատժուեցան։

Մելիք-Մէջլումը, այդ վիրաւոր արիւծը, խնամվում էր Ջաւատ-խանի պալատում։ Երրորդ օրը նա վախճանուեցաւ։ Բայց Ջաւատ-խանը երկու ամբողջ շաբաթ նրա մարմինը պահեց իւր տան մէջ. բժիշկը գնում-գալիս էր, իւր ժամանակին նրա սենեակը ընթրիք և ճաշ էին տա-

*) Ապրես-աղայի աղջիկը՝ Վարդ-Խաթունը, Մելիք-Ռուստամի կինն էր։

նում, և ամեն օր Ջաւատ-խանն ուրախութեամբ յայտնում էր հայոց զօրքերին, թէ շուտով Մելիք-Մէջլումը բոլորովին առողջացած դուրս կըգայ։ Դրանով խանը կամենում էր պահպանել հայոց զօրքերի եռանդը, որպէսզի իրանց իշխանի մահը լսելով չվհատուեն, մինչև ինքը թշնամու հետ գործը վերջացնէ։

Գանձակի բերդի պաշարման չորրորդ ամիսը լրանալու մօտ էր, երբ Ջաւատ-խանը, առանց որևիցէ գիջում անելու, հաշտուեցաւ իւր թշնամիների հետ։ Իբրահիմ-խանը հեռացաւ դէպի Ղարաբաղ, Հերակլը գնաց Թիֆլիզ, իսկ Օմար-խանը դէպի Դաղստան։ Մելիք-Մէջլումի մահն իմացան նրանք այն ժամանակ միայն, երբ հաշտութեան պայմաններն արդէն կնքուած էին։

Չնայելով որ Թիֆլիզն աւերակ դարձնելուց յետոյ Մելիք-Մէջլումը փոքր ինչ կորցրել էր իւր համարումը հայ հասարակութեան աչքում, բայց Ջաւատ-խանը, յարգելով իւր հանգուցեալ բարեկամի յիշատակը, ուշադրութիւն չդարձրեց հայերի դժգոհութեան վրայ և նրա մարմինը հանդիսաւոր կերպով թաղել տուեց Գանձակի մայր եկեղեցու տաճարի աջակողմեան խորանի մէջ։ Նոյն եկեղեցու գաւթում ամփոփուեցան Դալի-Մահրասայի և Թիւլի-Արզումանի մարմինները։

Ջաւատ-խանը իւր հոգաբարձութեան ներքոյ առաւ Մելիք-Մէջլումի միակ որդի Մելիք-Աթամ II-ին։

Նրա հայրը, դեռ Թիֆլիզում եղած ժամանակ, նշանադրել էր իւր որդու համար տեղացի երևելի ազնուական Եասսէի *) կրտսեր աղջկան, գեղեցիկ Ռեհանին։ Երբ Մելիք-Մէջլումի մահից յետոյ Ջաւատ-խանը հարսնախօսներ

*) Այդ Եասսէն չգիտենք Թիֆլիզի հայոց ո՛ր ազնուականների տոհմից էր։

ուղարկեց Թիֆլիզ Ռեհանին բերելու, նրա հայրը փոխանակ գեղեցիկ Ռեհանին տալու, տուեց նրա երէց քրոջը՝ Թամարին, որ բաւական տգեղ էր։ Այդ դժբախտ ամուսնութեան պատճառով Մելիք-Աթամ II-ը երկար չապրեց. նա մեռաւ երիտասարդական հասակում, թողնելով մի աղջիկ միայն Սհար-Նազ անունով։

Իսկ Թամարը թէև շատ գեղեցիկ չէր, բայց խելացի և ճարպիկ կին էր։ Ամուսնու մահից յետոյ նա երկար կարողացաւ կառավարել Մելիք-Իսրայէլեանների թողած մեծ ժառանգութիւնը և նրանց հպատակներին, որ այն ժամանակ գտնվում էին Գանձակի գաւառում։ Յետոյ իւր աղջկան՝ Սհար-Նազին, կնութեան տալով Նախիջևանցի Աղրի-բէկի որդի Սայի-բէկին, տիկին Թամարն ընտրեց նրան իբրև տնային փեսայ, և Մելիք-Իսրայէլեանների ժառանգութիւնն անցաւ այդ Սայի-բէկի ձեռքը, որ սկսեց այնուհետև կրել իւր կնոջ տոհմանունը։

XXXIV

Մելիք-Մէջլումի մահը զրկեց Ջաւատ-խանին իւր լաւ դաշնակցից, իսկ Ղարաբաղը զրկուեցաւ իւր քաջ հայրենասէրից։ Նա իւր հետ գերեզման տարաւ աւելի ընդարձակ և հիմնաւոր ծրագիրը Ղարաբաղի մելիքութիւնների վերականգնման մասին, որ բոլորովին տարբերվում էր միւս մելիքների և Յովսէփ արքեպիսկոպոսի գաղափարներից։ Երբ միանգամ նրա նիզակակից Դալի-Մահրասան համարձակուեցաւ յանդիմանել նրան Թիֆլիզի աւերակ դարձնելու պատճառով, երիտասարդ մելիքը դառնացած կերպով պատասխանեց նրան. «Բաւական խաբուեցանք... մինչև երբ պէտք է երազներով հրապուրուենք... մեր բարեբարները մեզ կռուեցնում են իրանց թշնամիների

հետ, իսկ իրանք մէջտեղից շահվում են...։ Մենք աւելի հաստատ պատճառներ ունինք հաւատալու պարսից շահերին, քան թէ ուրիշներին։ Շահ-Աբասը հաստատեց Ղարաբաղի մելիքութիւնները, Նադիրը վերահաստատեց, իսկ Աղա-Մամադ-շահը խոստացել է ինձ աւելի, քան թէ իւր նախորդները *)...։

Ինչ էլ որ լինէր Աղա-Մամադ-խանի խոստմունքը, Մելիք-Մէջլումն այժմ նրանից օգուտ քաղել չէր կարող։ Նրա թշնամիները — Իբրահիմ-խանը և Հերակլ իշխանը — աւելի լաւ էին հասկանում այդ բոլորը. և այդ էր պատճառը, որ մինչև Աղա-Մամադ-խանի կրկին վերադարձը, աշխատեցին Մելիք-Մէջլումին ոչնչացնելու։

Հերաթի և Ղանդահարի ապստամբութիւնները զսպելով, Աղա-Մամադ-խանը վայելում էր իւր յաղթութիւնների փառքը իւր նոր աթոռանիստ Թէհրան քաղաքում, երբ Գանձակի Ջաւատ-խանից նամակ ստացաւ Անդրկովկասում պատահած անցքերի մասին։ Նամակագիրը տեղեկացնում էր նրան կոմս Զուբովի արշաւանքների և խաների ռուսաց հպատակութիւնն ընդունելու մասին, յետոյ կոմս Զուբովի անակնկալ վերադարձի մասին դէպի Ռուսաստան. տեղեկացնում էր Հերակլ իշխանի միաբանութեան մասին Իբրահիմ-խանի հետ, և իւր բերդի, Գանձակի, պաշարման մասին յիշեալ երկու դաշնակիցներից, և վերջապէս Մելիք-Մէջլումի սպանման մասին, որ շատ սիրելի էր շահին։ Այդ բոլորը լսելով, Աղա-Մամադ-խանը 1797 թուի ամառը կատարեց մի նոր արշաւանք դէպի Անդրկովկաս։

*) Մի հին ձեռագրի մէջ կարդում ենք, որ Աղա-Մամադ-խանը խոստացել էր Մելիք-Մէջլումին՝ ոչ միայն Իբրահիմ-խանին ոչնչացնելով բարձրացնել Ղարաբաղի մելիքութիւնները, այլև պիտի յանձնէր նրան եւ Վրաստանի կառավարութիւնը։

Դեռ նա Երասխ գետից չէր անցած, որ Իբրահիմ-խանը տեսնելով թէ չէ կարող ընդդիմադրել պարսից ահագին զօրութեանը, և մանաւանդ յոյս չունենալով, որ հայոց մելիքներն այս անգամ ևս կ'օգնեն իրան Աղա-Մամադ-խանի դէմ, վեր առաւ իւր ընտանիքը և գիշերով թողնելով Շուշի բերդը, փախաւ Բալաքան իւր աներոջ՝ Օմար-խանի մօտ:

Այդ ժամանակ հայոց մելիքները նոյնպէս մեծ երկիւղի մէջ ընկան: Նրանք դեռ Աղա-Մամադ-խանի առաջին արշաւանքի ժամանակ մերժել էին Շահի հրաւէրքը, որով կոչում էր նրանց ընդունել Պարսկաստանի հովանաւորութիւնը, խոստանալով ոչնչացնել Իբրահիմ-խանին և վերահաստատել Ղարաբաղում մելիքների վաղեմի իշխանութիւնը: Բայց մելիքներն այնքան անխոհեմ գտնուեցան, որ բռնեցին Իբրահիմ-խանի կողմը և որպէս տեսանք XXIX գլխում, սկսեցին իրանց բոլոր ուժերով պաշտպանել նրան և Շուշի բերդը Շահի ահագին զօրութեան դէմ: Իսկ այժմ ինչ պիտի անէին, երբ նոյն Շահը աւելի մեծ պատրաստութեամբ յարձակուեցաւ Ղարաբաղի վրայ:

Մելիքների զօրքերը իրանց ժողովուրդն էր, իսկ ժողովուրդն սկսել էր ցրիւ գալ ո՛չ այնքան Աղա-Մամադ-խանի երկիւղից, որքան մի նոր և աւելի անգութ թշնամուց, որ այդ միջոցներում վրայ հասաւ: Դա էր Ղարաբաղի սարսափելի սովը, որին հետևեց ժանտախտը:

Մենք յետոյ ցոյց կըտանք, թէ սովն ու ժանտախտը՝ խառնուելով քաղաքական տագնապների հետ, որպէս կործանիչ ներգործութիւն ունեցան Ղարաբաղի հայ իշխանութիւնների վրայ, իսկ այժմ այսքանը կ'ասենք, որ մելիքները՝ որքան էլ ցանկանային, չէին կարող դէմ դնել Աղա-Մամադ-խանին, որովհետև նրանց ժողովուրդն այդ

ժամանակ միայն հացի համար էր մտածում և վազում էր դէպի այն կողմը, ուր կարող էր հաց գտնել:

Դեռ Աղա-Մահմադ-խանը չհասած Շուշի բերդին, Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբովը գնաց Վրաստանի կողմերը, իսկ Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը կամենում էր գնալ Թիֆլիզ, բայց ճանապարհին պատահեց Աղա-Մամադ-խանի խմբերին, և նրանց հետ կռիւ ունենալով, գլխից վէրք ստացաւ: Նրան վիրաւոր բերեցին Աղա-Մամադ-խանի մօտ, երբ նա արդէն բանակ էր դրած Ասկարանի աւերակների մօտ, Շուշի բերդից մի քանի մղոն հեռաւորութեան վրայ:

Քսան հազար թուման տուգանքը հազիւ կարողացաւ ազատել Մելիք-Ջումշուդի գլուխը Շահի դահիճների ձեռքից: Նրա տունը կողոպտուելուց ու կայքը յափշտակուելուց յետոյ Շահը նրան ներում շնորհեց:

Մելիք-Ջումշուդն անձամբ առաջնորդեց նրան, տարաւ Շուշի բերդը, որ առանց ընդդիմութեան իւր դռները բաց արաւ ներքինի թագաւորի առջև: Հայոց հոգևորականութիւնը հանդէսով դուրս եկաւ նրա առաջ և տարաւ Իբրահիմ-խանի պալատը:

Այդ հանդիսի ժամանակ Շահի մանկահասակ սենեկապետներից մէկի՝ որ կոչվում էր Սաֆար-Ալի-բէկ, ուշադրութիւնը գրաւեց սուրբ Աստուածածնի պատկերը, ոսկեզօծ շրջանակի մէջ, որ կրում էր իւր կրծքի վրայ մանուկ Յիսուսին: Նա հարցրեց՝ ո՞ւմ պատկերն է այդ. երբ պատասխանեցին, մօտեցաւ և համբուրեց: Նոյն րոպէում նրա աչքերում երևեցան մի քանի կաթիլ արտասուքներ. իսկ այդ մի քանի կաթիլները պատճառ եղան շատ արեան կաթիլների...:

Աղա-Մամադ-խանը մնաց Շուշի բերդում 25 օր: Այդ ժամանակ կամեցաւ նա պատժել այն բոլոր հայ և թուրք

աւագներին, որոնք իրան ընդդիմութիւն էին գործել Շուշի բերդի առաջին պաշարման ժամանակ և որոնք Իբրահիմ-խանի կուսակիցներ էին: Դրանց թւումն էին՝ Մելիք-Ռուստամը, Մելիք-Միրզախանեան Մելիք-Ալլահվերդին և մի քանի հայ հոգևորականներ, յուզբաշիներ և տանուտէրներ. ինչպէս նաև Իբրահիմ-խանի եղբօր որդի Մամադ-բէկը և մի քանի ուրիշ բէկեր: Ամենքն էլ բանտարկուած էին:

Մի գիշեր, որի առաւօտը բանտարկեալներին պիտի դուրս բերէին հրապարակի վրայ գլխատելու համար, Շահի մօտ մտաւ մեր վերև յիշած սենեկապետը՝ պատանի Սաֆար-Ալի-բէկը: Նա այնքան սիրելի էր Շահին, որ համարձակուեցաւ նրա ոտները համբուրելով աղաչել, որ ներումն շնորհէ այն դատապարտեալներին, որոնց միւս օրը պիտի գլխատէին: Երբ Շահից մերժում ստացաւ, նա սկսեց խնդրել, որ գոնէ խնայէ հայերին...: Վերջին խընդիրքը սաստիկ բորբոքեց Շահի բարկութիւնը և նա ասաց հետևեալ խօսքերը. «Կարմիր արիւնով ցողելով «սեւ այգին» *), ես նրան վարդի գոյն պիտի տամ...: Առաւօտեան այն բոլոր դաւաճանների գլուխներից հրապարակի վրայ մի աշտարակ պիտի կազմել տամ, իսկ քո գլուխը, Սաֆար-Ալի-բէկ, այդ աշտարակի գագաթի վրայ պիտի դնեմ»...:

Պատանին սարսափած դուրս եկաւ Շահի սենեակից:

Նրան ծանօթ էր իւր թագաւորի խստասրտութիւնը. նա գիտէր՝ ինչ որ ասաց նա, անպատճառ կըկատարէ: Յղացաւ մի չար խորհուրդ...:

Նոյն գիշերը պալատում տեսնուեցաւ նա Շահի մի այլ սենեկապետի հետ, որ իրան խիստ մտերիմ էր: Այդ վերջինը կոչվում էր Աբաս-բէկ: Դեռ առաւօտեան լոյսը

*) Ղարաբաղ թուրքաց լեզուով նշանակում է սև այգի:

չբացուած, երկուսն էլ մտան Շահի քնարանը: Աբաս-բէկը այնքան սրտի արիութիւն չունենալով, երկիւղից ուշաթափ եղաւ և ընկաւ քնարանի յատակի վրայ: Շահը խորին քնի մէջ էր. նրա թանկագին մահճի չորս կողմում, ոսկեայ աշտանակների վրայ, դեռ վառվում էին ճրագները: Սաֆար-Ալի-բէկը մօտեցաւ և խէնջարի մի քանի հարուածով վերջացրեց գործը...:

Առաւօտեան ամբողջ բերդի մէջ շշուկ տարածուեցաւ թէ Աղա-Մամադ-խանը սպանուած է: Բայց ոչ ոք չէր հաւատում, մինչև նոյն Սաֆար-Ալի-բէկը, թագաւորի կտրած գլուխը իւր ձեռքին բռնած, դուրս եկաւ պալատից և բերեց ու գլորեց հրապարակի վրայ: Այդ միջոցին բերդի հայ և թուրք բնակիչները թափուեցան պալատի վրայ ու սկսեցին կողոպտել Շահի գանձերը:

Պարսից զօրքերն անմիջապէս թողեցին բերդը և փախան դէպի Պարսկաստան: Սադղ-խան շաղաղին, որ Աղա-Մամադ-խանի նշանաւոր զօրապետներից էր, հազիւ կարողացաւ երկու արքայասպաններից մէկին միայն՝ Աբաս-բէկին, կալանաւորել և իւր հետ տանել Պարսկաստան, իսկ Սաֆար-Ալի-բէկը թաղնուեցաւ:

Մեզ համար շատ պարզ չէ այդ արքայասպանի ինչ ազգից կամ ով լինելը. միայն մի ձեռագիր պատմութեան մէջ, որ գրուած է Ղարաբաղի վանքերից մէկում, կարդում ենք, որ Սաֆար-Ալի-բէկը ազգով հայ էր. մանկութեան հասակում իբրև գերի տարուած էր Պարսկաստան և այնտեղ բռնի մահմեդականութիւն էին ընդունել տուել: Բայց նրա սրտում դեռ բոլորովին չէին հանգած հայութեան և քրիստոնէական կրօնի կայծերը, որոնք իսկոյն բորբոքուել սկսան, երբ նա Շուշի բերդը մտնելու ժամանակ տեսաւ հայոց եկեղեցական հանդէսը և համբուրեց

տուրբ Աստուածածնի պատկերը *)…:

Ձնայելով, որ Աղա-Մամադ-խանի սպանման լուրը տարածուեցաւ ամեն տեղ, բայց Իբրահիմ-խանը տակաւին չէր համարձակվում Բալաքանից վերադառնալ Շուշի բերդը: Նրա բացակայութիւնից օգուտ քաղելով, բերդին սկըսեց տիրել Իբրահիմ-խանի եղբօրորդի Մամադ-բէկը:

Այդ Մամադ-բէկն առաջարկեց հայոց Մելիք-Թուստամին միանալ իւր հետ, հակառակել Իբրահիմ-խանին, պայման

*) Մեր ծանօթութեան մէջ հարկաւոր ենք համարում դնել մի քանի քաղուածքներ յիշեալ ձեռագիր պատմութիւնից. «Բայց նա (Աղա-Մամադ-խանը) զօրօքն եկն մտանել ի բերդաքաղաքն Շուշի։ Յայց վասն երկիւղի ելին ընդ առաջ նորա դասուք քահանայից, խաչիւ և խաչվառաւ և ամենայն զարդիւք։ Իբրև ետես զխումբս հայոց մեծ բռնաւորն, զկայ առեալ անդ ի տեղի, և եհարց ի մերձակայ նախարարաց իւրայնոց. թէ արդեօք ո՞յք են դոքա, զի այսպէս հրաշափառ զգեստուք և զարդուք գան ընդ առաջ մեր։ Եւ որք հմուտք էին և տեղեակք իրացն գործելոց, ետուն զարժանն պատասխանի. թէ ի հայս կան հնական սովորութիւնք այսպիսիք, գնալ ընդ առաջ թագաւորաց ի մեծարանս և ի պատիւ երեսաց նոցա, առ ի շարժել ի գթածութիւն և ի խնամս վասն ողորմելի ազգին իւրեանց։ Առ այս պատասխան սիրայորդոր բանիւք մխիթարեաց և քաջալերեաց զազգս մեր տառապեալ, բայց վերին երեսօք, զի գաղեալ նենգութիւնն ծրարեալ պահէր ծածկաբար ի մտի իւրում։

«Մինչ խօսէր բռնաւորն ընդ ազգիս մերոյ իշխանաց, ընդ իւր ունելով պատանեակ մի մտերիմ, և ամենայն ինչ ի ձեռս նորա էր. ի ձեռաց նորա կերակրիւր։ Պատանին էր յազգէս հայոց ի վաղուց գերեալ և տարեալ ընծայեալ էին նմա։ Ետես ի նմին ժամու զպատկեր Տիրամօրն, որ ունէր ի գիրկս զմանկացեալն Յիսուս, կարի իմն գեղեցկազարդ և ոսկեզօծ նկարեալ։ Եհարց պատանին թէ պատկերս այս որո՞յ է. նոքա չծանեան, զի անդ յիշեաց զտառապանս ազգի մերոյ»…:

Յետոյ մանրամասնաբար նկարագրում է այն շարժառիթները, որ դրդեցին պատանուն սպանելու թագաւորին։

դնելով, որ Ղարաբաղի հայերի գլխաւորը ինքը՝ Մելիք-Թուստամը կլինի, իսկ Թուրքերի գլխաւորը՝ Մամադ-բէկը:

Հայերն ըստ մեծի մասին տիրասէր են դէպի օտարները, իսկ անհաւատարիմ դէպի իրանց հարազատ ազգայինները. այդ իսկ պատճառով Մելիք-Թուստամը մերժեց Մամադ-բէկի առաջարկութիւնը և չկամեցաւ անհաւատարիմ լինել Իբրահիմ-խանին, որ այնքան չարիքներ էր հասցրել Ղարաբաղի հայ ժողովրդին:

Մելիքը նամակով յայտնեց Իբրահիմ-խանին բոլոր անցքերը, խոստացաւ նրան իւր օգնութիւնը, փութացնելով, որ առանց ժամանակ կորցնելու վերադառնայ Բալաքանից և կրկին ձեռք առնէ Շուշի բերդի իշխանութիւնը: Իբրահիմ-խանն ինքը չվստահացաւ գալ, այլ ուղարկեց իւր որդի Մէհտի-խանին: Մելիք-Թուստամը կէս ճանապարհի վրայ իւր ձիաւորների խմբերով հանդիպեց Մէհտի-խանին, և նրան գիշերով մտցնելով Շուշի բերդը, ուղղակի տարաւ նրա հօր պալատը, որի մէջ այդ ժամանակ բնակվում էր Մամադ-բէկը:

Մամադ-բէկն իրան արդէն բերդի տէրը համարելով, ընդունեց Մէհտի-խանին իբրև մի հիւր: Բայց Մելիք-Թուստամը՝ առանց ժամանակ կորցնելու, հայերից պահապաններ դրեց նրա տան վրայ և կալանաւորեց Մամադ-բէկին:

Այդ միևնոյն Մելիք-Թուստամը՝ որ նոյն տարուայ մէջ Իբրահիմ-խանին առաջնորդելով, պաշարեց Գանձակի բերդը և Մելիք-Մէջլումին սպանել տուեց,— այժմ նոյն մարդը, Մամադ-բէկին կալանաւորելով և Իբրահիմ-խանի որդուն պաշտպանելով, կրկին հաստատեց Ղարաբաղի բռնակալների իշխանութիւնը մի այնպիսի ճգնաժամի ժամանակ, երբ խիստ յարմար միջոցներ կային ոչնչացնելու նրանց…:

Երբ ամեն ինչ խաղաղացած էր Շուշի բերդում, Իբրահիմ-խանը վերադարձաւ Բալաքանից: Մամադ-բէկն այդ ժամանակ բանտից փախաւ, գնաց Շամախի Մուստաֆախանի մօտ: Այնտեղից երկու աչքերը կուրացրած կրկին յետ բերին փախստականին:

Աւելորդ չէր լինի մի երկու խօսք ասել, թէ ինչ եղաւ արքայազան Սաֆար-Ալի-բէկը:

Աղա-Մամադ-խանի սպանումից յետոյ պարսից գահը ժառանգեց Ֆաթալի-շահը:

Իբրահիմ-խանը ցոյց տալու համար, թէ սպանութիւնը կատարուել է ոչ միայն առանց իր կամքի, այլև հակառակ իր կամքի, փառութեամբ կալանաւորեց նրան և ուղարկեց Պարսկաստան: Այստեղ մէջ ենք բերում աշխարհաբար թարգմանութիւնը այն տողերի, որ քաղում ենք վերոյիշեալ անտիպ պատմութիւնից.

«Բռնելով ողորմելի պատանու ձեռքից, տուեցին մարդախանձ և գիշատիչ գազանների ձեռքը: Այդ կատաղիները կանչեցին նոյն ժամում մի պայտառ *) արհեստաւոր. պատուիրեցին նրան կոփել և շինել մի նոր օրինակով պայտ, որ վշտակիր պատանու ոտների չափին համեմատ լինէր: Նա փութաց անմիջապէս կատարելու նրանց պատուէրը: Յետոյ նրա ոտները մերկացնելով, և ամեն կողմից երկաթէ կապանքներով պնդացնելով, դրեցին մահացու պայտերը նրա ոտների տակ և սրածայր մեխերով գամեցին: Առուակի նման վազում էր հորդահոս արիւնը տանջուողի վէրքերից և ներկում էր այն տեղը: Յետոյ շղթաներով կապեցին նրա ձեռները, ոտները, նաև պարանոցը և վեր առնելով տարան Դավրէժ քաղաքը: Այնտեղ կանգնացրին նրան ատեանում դատաւորի առջև, և բազմատեսակ հարցաքննութիւններից յետոյ, մահուան դատապարտեցին, հրամայելով որ չարաչար կերպով տանջեն նրան և անդամ-անդամ կտրատեն, յետոյ թողնեն գազաններին ու թռչուններին ուտելու համար: Դատաւորի հրամանի համեմատ արիւնարբու դահիճները խստագոյն չարչարանքներով տանում էին նրան կատարման տեղը: Այդ միջոցին մահապարտը բացեց իր բերանը, սկսեց անարգել Մուհամէդի աղանդը, և խոստովանեց թէ իսկապէս ինքը հաւատում էր քրիստոնեաների կրօնին: Երբ որ լսեցին նրա հայհոյութիւնները, կատաղի գազանների նման յարձակուեցան նրա վրայ և ամեն մարդ իր սրի ծայրը ներկում էր նրա արիւնով: Այսպէս տանջելով, հասցրին նրան մահապարտների տեղը, քաղաքից դուրս: Այնտեղ անտանելի չարչարանքներ տալով, մաս-մաս կտրատեցին նրա մարմինը, և թողեցին այնտեղ, որ արքունի հրամանի համեմատ թռչունների ու գազանների կերակուր դառնայ:

*) Պայտառ նշ. պայտ—նալ շինող:

«Որովհետև հայերը վաղուց գիտէին նրա քրիստոնեայի զաւակ լինելը, նաև Քրիստոսին հաւատալը, այդ պատճառով մեծ աղաչանքով խնդրում էին, որ նահատակի մարմինը տան իրանց թաղելու համար: Ասացին նախարարները, թո՛ղ տուեցէք, որ հայերը իրանց անարգ օրէնքի համեմատ թաղեն: Որովհետև աւելի վատթար էին համարում հայոց թաղումը, քան գազանների կերակուր լինելը»:

Շարունակութեան մէջ նկարագրուած է, թէ ինչպէս գիշերը լոյս ծագեց նրա գերեզմանից, և այլն:

Բայց ինչ որ ճշմարիտ է, այն է, որ այդ սենեկապետը առանձին համակրութիւն ունէր դէպի հայերը. նա Մելիք-Մէջլումի լաւ բարեկամն էր, և մելիքը նրա միջնորդութեամբն էր ազդում Աղա-Մամադ-շահի վրայ:

XXXV

Մենք համարեա մոռացութեան տուեցինք, թէ ինչ եղաւ Տիզակի իշխան Մելիք-Աւանեան Մելիք-Բախտամը, որ իբրև քաղաքական յանցաւոր աքսորուած էր Պարսկաստանի Արդաւիլ բերդում (տես գլ. XXI)։

Այն օրից անցել էր ամբողջ տասն տարի, այդ հերոսը դեռ մաշվում էր հեռաւոր բանտարկութեան մէջ։

Երբ Աղա-Մամադ-խանը վերջին անգամ արշաւանք գործեց դէպի Ղարաբաղի կողմերը և Շուշի բերդում սպանուեցաւ (1797), նա գալու ժամանակ անցաւ Արդաւիլի բերդաքաղաքով։ Այստեղ գտնվում է այն երևելի մէչիդը, որի մէջ գետեղուած են Շէյխ-Սէֆիի և միւս Սէֆէվի թագաւորների շիրիմները։ Պարսից նոր թագաւորների սովորութեան համեմատ, Աղա-Մամադ-խանը, որպէս ուխտաւոր, այցելութիւն գործեց արքաների գերեզմաններին։ Այդ ծէսը կատարելուց յետոյ, նա պէտք է այցելութիւն անէր բերդի բանտարկեալներին՝ նաև ում որ արժան էր ներումն շնորհելու համար։

Այդ բերդում պահվում էին նշանաւոր քաղաքական յանցաւորները միայն։ Աղա-Մամադ-խանը նրանց շատերին ներումն շնորհեց, որոնց թւում և Մելիք-Բախտամին, մանաւանդ երբ իմացաւ, որ նա Մելիք-Աւան-խանի թոռն է, որի նախնիքը Պարսկաստանին մեծ ծառայութիւններ են արել։

Շահն առաջարկեց Մելիք-Բախտամին իւր հետ գնալ Ղարաբաղ և այնտեղ վարել իւր հայրենի իշխանութիւնը։ Իսկ մելիքը թէև քաջ, պատերազմական մարդ էր, բայց ունէր և իւր կրօնական մոլեռանդութիւնները։ Երկար տարիներ պարսկական աքսորանքի մէջ ապրելով, զուրկ

եկեղեցուց, զուրկ պահեցողութիւնից,—այդ համարում էր նա մի մեծ յանցանք կրօնի և եկեղեցու դէմ։ Այդ պատճառով փոխանակ Աղա-Մամադ-խանի զօրքերի հետ իւր հայրենիքը գնալու, նա ուղղակի դիմեց Ս. Էջմիածին իւր մեղքերը քաւելու համար։

Ս. Էջմիածնից վերադարձաւ նա Ղարաբաղ այն ժամանակ, երբ Աղա-Մամադ-խանը Շուշի բերդում սպանուած էր և Իբրահիմ-խանն աւելի մեծ վստահութեամբ վարում էր տեղային իշխանութիւնը։

Մելիքը գտաւ իւր հայրենիքը թշուառ վիճակի մէջ. սովը սարսափելի կոտորածներ էր անում և ժողովրդի մեծ մասը ցրիւ էր եկած։ Իսկ ինքն աւելի անբաղդ գտնուեցաւ. Իբրահիմ-խանը լսելով նրա գալուստը, սկսեց բարեկամական կեղծ ցոյցերով հրապուրել նրան, մինչև իւր սեղանի վրայ կարողացաւ թունաւորել նրան *)։

Տիզակի տիրապետողների իշխանութիւնը ամենավտանգաւորն էր Իբրահիմ-խանի համար։ Նրանք Պարսկաստանին աւելի մօտ լինելով, ուղղակի յարաբերութիւններ ունէին պարսից բարձր Դռան հետ։ Մելիք-Բախտամի ազատութիւն գտնելը Արդաւիլի բանտից Աղա-Մամադ-խանի շնորհիւ և վերջինի սպանուելը Շուշի բերդում, շատ հասկանալի է, որ աւելի կըսաստկացնէր Իբրահիմ-խանի երկիւղը Տիզակի տիրապետողներից, և այդ պատճառով Մելիք-Բախտամին տմարդութեամբ ոչնչացնելուց յետոյ, սկսեց նա որոգայթներ լարել նրա ժառանգների համար։

---

*) Նրա գերեզմանի արձանագրութեան մէջ պահպանուած է նենգաւոր խանի ցած դաւաճանութեան յիշատակը. «Յայսմ տապանի հանգչի մարմին՝ քաջ և արի Մելիք-Բախտամին. սա էր որդի Մելիք-Արամին. մահ և վախճան պատմեն սորին՝ մահադեղով Իբրահիմ-խանին. և որք հանդիպիք ի տապան սորին, միով բանիւ ողորմի ասէ.ք. ամէն»։

Մելիք-Բախտամին յաջորդեց նրա որդին՝ Մելիք-Աբասը:

Մեր ձեռքում գտնուած մի ձեռագիր պատմութիւնից քաղում ենք հետեւեալը Մելիք-Աբասի յատկանիշների մասին.

«Նրանց (Մելիք-Աւանեանների) ազգի և սերունդների մէջ տակաւին չէր ծնուած, արդարև, մի այնպիսի տղամարդ պարթեւական, հսկայագօր կերպարանքով և ահագնակերպ հասակով: Իւր քաջագործութիւններով սկսեց հետզհետէ նուաճել նա ոչ միայն իւր բոլոր հայրենիքը, այլև մահմեդականների ազգը: Այդ պատճառով, տարածուելով սփռուեցաւ նրա քաջութեան և անաչառ դատաստանների համբաւը, որով պատժում էր յանցաւորներին և վնասակար անձինքներին: Առանց արծաթասիրութեան և կաշառքի էր կատարում նա իւր դատավճիռները. մահապարտներին պատժում էր առանց խնայելու. շատերին կախում էր մեծ ճանապարհների վրայ կախաղաններից և շատերին տալիս էր իւր ծառաների ձեռքը, որ սրախողխող անեն հասարակութեան և աւազակ մարդկանց աչքի առջև, որպէսզի ոչ ոք այնուհետև չխտահանայ նոյն չարութիւնները գործելու: Արդարև, սարսափելով դողում էր ամբողջ գաւառը նրանից: Նրա քաջագործութիւնների համբաւը շատ վաղ հասել էր մեծ բռնաւորի (Իբրահիմ-խանի) ականջին…: Բայց նա իւր սրտի ոխը ծածկած ունէր, չէր կամենում յանկարծ յայտնել մեր նախարարին (Մելիք-Աբասին), որովհետև նրա նպատակն այն էր, որ դարձնի նրան հայկական դաւանութիւնից մահմեդական դէնին»…:

Յետոյ երկար խօսվում է այն միջոցների մասին, որ Իբրահիմ-խանը գործ դրեց իշխանի հաւատքը խախտելու համար:

Իբրահիմ-խանը, արդարև, այժմ փոխել էր իւր քա-

ղաքականութեան եղանակը հայոց մելիքների վերաբերութեամբ: Նա տեսնում էր, որ դաւադրութիւնը, սպանութիւնը, թոյնը և այլ որոգայթները նրանց կեանքի դէմ, չեն հասցնում իւր ցանկացած նպատակին: Սպանուած հօր փոխարէն իշխում էր որդին, կամ նրա տոհմակիցներից մէկը: Վերջ ի վերջոյ համոզուեցաւ, որ փոխանակ թոյնի, աւելի լաւ էր նրանց ընդունել տալ մահմեդական կրօնը: Կրօնը փոխելով՝ նրանք աւելի հեշտութեամբ կըոչնչանային և կըխառնուէին թուրքերի հետ:

Առաջին փորձը կատարեց նա Մելիք-Աբասի վրայ, բայց նրա բոլոր խորամանկութիւնները փշրուեցան առաքինի իշխանի հաստատամտութեան առջև: Իբրահիմ-խանը մինչև անգամ աշխատեց հրապուրել նրան իւր աղջիկների գեղեցկութեամբ. բայց երբ նկատեց, որ նրա հաւատքը խախտելու հնար չկայ, կրկին ձեռք առաւ սպանութեան հնարները…:

Մի անգամ Մելիք-Աբասն անձամբ գնացել էր Ցոր գիւղը մի քրէական գործ քննելու համար. գիշերն ստիպուեցաւ այնտեղ մնալ և հիւրասիրուեցաւ տեղային աւագ քահանայի տանը: Գիշերը նոյն տան վրայ յարձակուեցան մի խումբ ձիաւորներ, որ պատրաստուած էին Իբրահիմ-խանից: Նրանք գտան մելիքին քնած և անպատրաստ վիճակի մէջ: Սրերի տակ կտրատեցին նրան:

Սպանուածի մարմինը բերուեցաւ իւր Տող բերդը: Նոյն ժամում, երբ եկեղեցու մէջ պատարագ էր մատուցվում և պատրաստվում էին թաղման հանդէսը կատարելու, Իբրահիմ-խանի հրամանով կատարուեցաւ մի այլ չարագործութիւն: Յանկարծ եկեղեցի ներս մտան խանի զինուած մարդիկը և աշխատում էին յափշտակել հանգուցեալի մարմինը, ասելով, թէ նա կենդանութեան ժամանակ խոստովանուել էր մահմեդական կրօնը, ուստի իրաւունք չէ նրան

քրիստոնէական ծէսով թաղելու: Զայրացած ժողովուրդը մի կողմից, հանգուցեալի բարեկամները միւս կողմից, յարձակուեցան խանի մարդկանց վրայ, նրանցից շատերին կոտորեցին, ջարդեցին. տեղի ունեցան բաւական մեծ թուով սպանութիւններ: Խանի մնացած մարդիկը փախչելով, իրանց ջարդուելու մասին լո՛ւր տարան Շուշի բերդը: Այս անգամ զայրացած խանը զօրքեր ուղարկեց: Բայց մինչև զօրքերի հասնելը թաղման խորհուրդը կատարուած էր:

Նրանք կամեցան գերեզմանից դուրս հանել հանգուցեալի մարմինը: Այդ յանդգնութիւնը պատճառ տուեց մի աւելի սարսափելի կռուի հայերի և թուրքերի մէջ: Բայց որովհետև հայերն անպատրաստ էին և չէին սպասում մինչև այս աստիճան բռնութիւն խանի կողմից, այս պատճառով յաղթուեցան: Հանգուցեալի մարմինը դուրս հանեցին իւր տոհմային գերեզմանատնից *) և տարան մահմեդականների գերեզմանատան մէջ թաղեցին:

Ի՞նչ նպատակ կար այդ բարբարոսութեան մէջ: —Այն, որ յետոյ Իբրահիմ-խանն առիթ ունենայ ասելու հանգուցեալի ժառանգներին, թէ ձեր հայրը մահմեդական էր և մահմեդականութեան մէջ մեռաւ, դուք ևս պէտք է ընդունէք նոյն կրօնը: Այդպէս էլ եղաւ: Այնուհետև խանը, կալանաւորելով Մելիք-Աւանեանների արդէն բաւական ուժից ընկած ժառանգներին, սկսեց բացարձակ կերպով կրօնական հալածանքի ենթարկել նրանց:

Այդ միջոցներին Ղարաբաղում սով և ժանտախտը սարսափելի կոտորածներ էին անում: Գիւղերը հետզհետէ դատարկվում էին. ժողովուրդը գաղթում էր: Այդ ժամանակն էր, որ հանգուցեալ Մելիք-Աբասի որդի Մելիք-Ղահրամանը (որ և կոչվում էր Բաղր-բէկ) Տիզակի ժողովրդի

*) Մելիք-Աւանեանների տոհմային գերեզմանատունը գտնվում է Տող բերդի եկեղեցու գաւթում:

մի մասը իւր հետ առնելով գաղթեց դէպի Վրաստան:

Մելիք-Աւանեան Բաղդադ-բէկը (Մելիք-Եսայու որդին) *) մնաց Իբրահիմ-խանի բանտում: Երկար չարչարանքներ կրելուց յետոյ, ստիպուեցաւ նա իւր երկու որդիների հետ, որոնք կոչվում էին Ասլան և Վահան, ընդունել մահմեդականութիւն: Դրանց իշխանութիւնը կարճատև եղաւ, որովհետև Բաղդադ-բէկը մի հակառակութեան համար խեղդամահ եղաւ նոյն Իբրահիմ-խանի ձեռքով: Իսկ նրա որդի Ասլանը, կամենալով կրկին վերադառնալ դէպի քրիստոնէական կրօնը, նոյն խանի մահադեղով սպանուեցաւ: Վահանի վախճանը մեզ յայտնի չէ:

Եւ այսպէս՝ Մելիք-Աւանեանների՝ Տիզակի հզօր տիրապետողների, համարեա ամբողջ սերունդը կամ մահադեղով կամ սպանութիւնով ոչնչացաւ Իբրահիմ-խանի ձեռքով: Եւ չմոռանանք, որ այդ նշանաւոր տոհմի առաջին ներկայացուցիչն էր այն մեծ մարդը, որ Պետրոս Մեծի հետ թղթակցութիւններ ունէր, որ փառաւոր ընդունելութիւն գտաւ Աննա Իվանովնա և Ելիզաւետա Պետրովնա կայսրուհիների պալատում, որ ռուսաց կառավարութիւնից ստացաւ գեներալի աստիճան, իսկ Նադիր-Շահից — խանութեան աստիճան:—Դա գեներալ Մելիք-Աւան-խանն էր, որի կատարած մեծագործութիւնների հետ ծանօթացանք մեր պատմութեան սկզբի գլուխներում:

Մելիք-Աւանեանների տոհմի վերջին ներկայացուցիչների մի ճիւղը մահմեդական դարձաւ, միւսը մնաց քրիստոնեայ: Նրանց ընդարձակ կալուածներին, Շուշի բերդի խաների օգնութեամբ, տիրեցին մահմեդական ժառանգները, իսկ քրիստոնեայ մնացածները զրկուեցան ժառանգութիւնից **): Այդ տոհմի մի այլ ճիւղը, որպէս էին՝ իշ-

*) X, XI և հետևեալ գլուխներում:

**) Տող բերդում, Մելիք-Աւան-խանի պալատում այժմ

խան Մելիքովները, Իշխան-Սումբատովները, Հայրապետեանները, Ռուսաստանում մեծ-մեծ պաշտօնների մէջ մըտան, փայլեցին, իսկ թէ յետոյ ինչ եղան, մեզ յայտնի չէ։

XXXVI

Սովը, ժանտախտը և Ղարաբաղի գաղթականութիւնը.

1795 թուից մինչև 1798 թուի սկիզբը պարբերաբար կատարուեցան մի՛ քանի՝ մինը միւսից աւելի կորստաբեր, աւելի փոթորկալի արշաւանքներ։ Ղարաբաղը և նրա շրջակայ գաւառներն անընդհատ պատերազմների, ասպատակութեան և արեան ասպարէզ դարձան։ Աղա-Մամադխանի առաջին արշաւանքից յետոյ տեղի ունեցաւ կոմս Զուբովի արշաւանքը, յետոյ Գանձակի պաշարումը, յետոյ Աղա-Մամադ-խանի երկրորդ արշաւանքը։ Այդ արիւնահեղ կռիւների ժամանակ, որ տևեցին ամբողջ երեք տարի, շինականների կեանքն այն աստիճան անապահով դրութեան մէջ էր, որ չկարողացան ոչ իւր ժամանակին ցանել և ոչ իւր ժամանակին հնձել։ Եւ երբ տեղի ունեցաւ 1797 թուի սարսափելի երաշտութիւնը, որ ցամաքացրեց բոլոր բուսականութիւնը, այդ ժամանակ եղած ցանքերն էլ իսպառ ոչնչացան։

Կարծես, ինքը բնութիւնը միաբանուել էր մարդկային

բնակվում է մի Ֆարհադ-բէկ անունով թուրք ազնուական, որ պարծանքով յիշում է, թէ ինքը Մելիք-Աւանեանների նշանաւոր տոհմի ժառանգներիցն է։ Եւ իրաւ, նա Բաղդադ-բէկի թոռը և Մելիք-Ասլանի որդին է. իսկ Մելիք-Աւանեանների քրիստոնեայ մնացած ժառանգները այժմ թշուառ աղքատութեան մէջ բնակվում են նոյն Տող բերդում, թէև ազնուականներ են համարվում։

գազանութիւնների հետ Ղարաբաղը բոլորովին ամայի և անապատ դարձնելու համար։ Մարդիկ սպառեցին բոլորը, ինչ որ կարելի էր ուտել, յետոյ անասունների նման սկսեցին կերակրուել խոտերով և արմատներով։ Դա այն դարհուրելի սովերից մէկն էր, որոնց սարսափելի նկարագրութիւնները մեծ տեղ են բռնում Հայաստանի պատմութեան մէջ, Լանկ-Թէմուրների և այլ այսպիսի մարդկային հրէշների կատաղի արշաւանքներից յետոյ։

Անկարգ, անսովոր սնունդի պատճառով երկրները ծածկուեցան դիակներով։ Սովից յետոյ տեղի ունեցաւ 1798 թուի ժանտախտը, որ լրացրեց ժողովրդի դժբախտութեան պակասը։

Վաթսուն հազար տուն հայ բնակիչ ունեցող Ղարաբաղը համարեա թէ դատարկուեցաւ։ Այդ ժամանակ տեղի ունեցաւ Սիւնեաց աշխարհի մեծ գաղթականութիւնը։ Սարսափած ժողովուրդն սկսեց ցրիւ գալ, սկսեց թողնել հայրենիքը և հեռանալ դէպի Տաճկաստան, դէպի Պարսկաստան, դէպի Ռուսաստան և դէպի Վրաստան։

Թէ ինչ եղան Տաճկաստան, Պարսկաստան և Ռուսաստան գաղթողները, մենք նրանց մասին խիստ փոքր տեղեկութիւններ ունինք, բացի դրանից մեր պատմութեան նպատակից դուրս է նրանց վրայ խօսելը. միայն կըխօսենք Վրաստանի գաղթականների մասին։

Ղարաբաղի հայոց գաղթականութիւնը գլխաւոր պատճառը դարձաւ Ղարաբաղի հայկական իշխանութիւնների կործանման։ Փանահ-խանը, Իբրահիմ-խանը և այլ դրանց նմաններն այնքան չվնասեցին հայոց մելիքութիւններին, որքան վնասեցին իրանք մելիքները, երբ թողնելով հայրենի հողը, սկսեցին իրանց ժողովրդի հետ օտար հողի վրայ ապահովութիւն որոնել։ Կտրուելով հայրենի աշխարհից, նրանք զրկուեցան ամեն բանից…։

Թէև Ղարաբաղի մելիքներն այն նախատեսութիւնն ունէին, որ ամեն անգամ և հայրենիքում կեանքն անտանելի էր դառնում և ստիպուած էին լինում գաղթել մի օտար երկիր, նրանք միշտ պահանջել են թէ իրանց և թէ իրանց ժողովրդի համար առանձին արտօնութիւններ: Բայց այդ արտօնական կացութիւնը մի օտար հողի վրայ չէր կարող կատարելապէս լրացնել այն կորուստը, որ նրանք պիտի կրէին հայրենիքը թողնելով:

1798 թուի յունվար ամսում վախճանուեցաւ վրաց Հերակլ իշխանը. նրան յաջորդեց որդին՝ Գիօրգի XII-րդը:

Հերակլի մահից յետոյ իշխանական ընտանիքի թէ տղամարդկանց և թէ կանանց մէջ ծագեցան անհաշտ կռիւներ և անվերջանելի երկպառակութիւններ: Ռուսաստանի Յովսէփ արքեպիսկոպոսը, որ վրաց իշխանական գերդաստանի մտերիմ բարեկամներից մէկն էր, շատ աշխատեց միաբանութիւնն ու խաղաղութիւնը նրանց մէջ վերականգնելու համար, բայց նրա բոլոր ջանքերը ցանկալի արդիւնքը չունեցան: Արքեպիսկոպոսն այդ երկպառակութիւնները վնասակար էր համարում Վրաստանի համար:

1797 և 1798 թուականներին, այսինքն սովի և ժանտախտի ամենասաստիկ ժամանակներում, Վրաստանում խմբուեցաւ Ղարաբաղի հայերի ահագին բազմութիւն: Հայերի և վրացիների այդ միախմբումը Յովսէփ արքեպիսկոպոսն աւելի նպաստաւոր էր համարում իւր նպատակների իրագործմանը: Բայց այդ բոլորը շատ ուշ էր արդէն: Եթէ յարգելի արքեպիսկոպոսը իւր անչափ եռանդի և հայրենասիրութեան հետ փոքր ինչ լուրջ քաղաքագիտութիւն ևս ունենար, կարելի է այն սխալանքների մէջ չընկնէր, որոնց հանդիպեց նա իւր ամբողջ քաղաքական գոր-

ծունէութեան ասպարիզում: Նա սաստիկ շուտ յափշտակուող և հեշտ խաբուող մարդ էր...:

Եկատերինա II-ի վախճանուելուց և Պօղոս I կայսրի գահակալութիւնից յետոյ ռուսաց կառավարութեան քաղաքական հայեացքը Անդրկովկասի քրիստոնեաների վերաբերութեամբ բոլորովին փոխուեցաւ: Այժմ ոչ ոք չէր մտածում իրագործելու Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի ունեցած նպատակները արևելքի քրիստոնեաների մասին: Այժմ Վրաստանը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի ռուսական նահանգ:

Այդ էր պատճառը, որ երբ Ղարաբաղի հայոց երկու իշխանները՝ Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը և Մելիք-Բէգլարեան Մելիք-Փրէյդունը, կամեցան Վրաստանում հաստատ գաղթարաններ հիմնել, նրանք վշտացած Հերակլ իշխանի և նրա յաջորդ Գիօրգիի վարմունքից, այլևս չկամեցան վերջինի հետ բանակցութիւններ ունենալ, այլ ուղղակի դիմեցին Ս. Պետերբուրգ Պօղոս I կայսրին:

Վրաստան գաղթած Ղարաբաղի հայերն սկզբում խիստ անմարդասիրաբար ընդունուեցան վրացիների կողմից: Սովից տանջուած, աղքատ եկան նրանք այդ երկիրը. շատերը վրացիների դռներն ընկած մուրացկանութիւն էին անում: Վրաց իշխաններն ստիպում էին նրանց որ ճորտ գրուեն, որպէսզի փոխարէնը կերակրեն նրանց: Ողորմելիները մի կտոր հացի համար վաճառում էին իրանց զաւակներին և ստրկութեան էին մատնում *): Վրաց ազնուականների այդ անողորմ վարմունքն էր գլխաւոր պատճառը, որ ստիպեց հայոց մելիքներին Ս. Պետերբուրգ դիմել:

---

*) Վրաստանում մինչև վերջին ժամանակները գտնուած հայ ճորտերի մեծ մասն այս տեսակ հանգամանքների զոհ պէտք է համարել:

Հայոց մելիքներն իրանց հպատակների հետ *) գաղթել էին մի երկիր, ուր այդ ժամանակ տիրում էր ճորտութիւնը։ Բայց հայ ժողովուրդը սովորած չէր ճորտութեան։ Թէ Հայաստանի անկախութեան ժամանակ, թէ պարսից և թէ օսմանցիների տիրապետութեան ժամանակներում հայ գիւղացին վայելում էր կատարեալ ազատութիւն։ Մելիքները ցանկանում էին, որ իրանց ժողովուրդը պահպանէր իւր վաղեմի ազատութիւնը, իսկ իրանք վայելէին նոյն իրաւունքները, որ միշտ ունեցել են իրանց հպատակների վերաբերութեամբ։ Նրանք պահանջում էին, որ Վրաստանի սահմաններում, որ այդ ժամանակ գտնվում էր ռուսաց հովանաւորութեան ներքոյ, տային իրանց ազատ հողեր, որպէս մշտական սեպհականութիւն, և այդ հողերի վրայ նրանք հիմնէին իրանց գաղթարանները, և բնակուէին իրանց վաղեմի օրէնքներով ու սովորութիւններով։

Այդ նպատակներով Մելիք-Բէգլարեան Մելիք-Փրէյդունը **) և Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը գնացին Ս. Պետերբուրգ ***) անձամբ աղերսամատոյց լինելու կայսրին իրանց պահանջների մասին։

---

*) Վրաստան գաղթեցին գլխաւորապէս Գիւլիստան և Վարանդա գաւառների ժողովուրդը, այսինքն Մելիք-Բէգլարեանների և Մելիք-Շահնազարեանների հպատակները։ Մելիք-Մէջլումի (որ արդէն մեռած էր) հպատակները մնացին Գանձակի գաւառում Ջաւադ-խանի հովանաւորութեան ներքոյ։ Իսկ Խաչէնի և Տիզակի ժողովուրդը մասամբ մնացին իրանց տեղերում, մասամբ գաղթեցին ուրիշ երկրներ, և մասամբ եկան Վրաստան և խառնուեցան վերոյիշեալ երկու մելիքների ժողովրդի հետ։

**) Մելիք-Փրէյդունը Մելիք-Աբովի եղբօր՝ Մելիք-Բէգլար II-ի որդին էր (տես գլ. XVI)։

***) Մելիքների շքախմբի մէջ գտնվում էր և պատանի

Մելիքները Ս. Պետերբուրգում արժանաւոր ընդունելութիւն գտան։ Պօղոս I կայսրի 1799 թ. 2 յունիսի բարձրագոյն հրովարտակով հրամայուեցաւ տալ մելիքներին Ղազախի գաւառը բնակութեան համար, և պահպանել իրանց հպատակների վերաբերութեամբ միևնոյն իրաւունքները, որ նրանք վայելում էին իրանց հայրենիքում։ Այդ հրովարտակը գրուեցաւ Վարանդայի իշխան Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարեանի և Գիւլիստանի իշխան Մելիք-Փրէյդուն Մելիք-Բէգլարեանի անունով։ Նոյն մելիքներին շնորհուեցան գերազանցութեան մեդալներ և նշանակուեցաւ մշտական թոշակ. Մելիք-Ջումշուդի համար տարեկան 1400 ռ., նրա որդու համար 600 ռ., իսկ Մելիք-Փրէյդունի համար 1000 ռ.։

Յիշեալ բարձրագոյն հրովարտակի մտքի համեմատ կայսրը նոյն թուով առանձին հրովարտակ ուղղեց վրաց իշխան Գիոր-

---

Ռոստոմը, որ Մելիք-Շահնազարի ջորեպանի որդին էր։ Նրա հօրը կոչում էին Մեհրաբենց Գիւքի։ Դեռ 14 տարեկան հասակում Ռոստոմը Ղարաբաղից փախչելով գնաց Հաշտարխան, այնտեղ մի «պօլկովոյ մարկիտանտի» մօտ աշակերտ դարձաւ։ Այդ պարապմունքը միջոց տուեց նրան սովորելու ռուսաց լեզուն։ Երբ մելիքները Հաշտարխանից անցնում էին Ս. Պետերբուրգ գնալու, պատանի Ռոստոմը խառնուեցաւ նրանց շքախմբի հետ, որ բաւական բազմաթիւ էր։ Նրան վեր առան, մտածելով թէ ճանապարհին հարկաւոր կլինի, որպէս ռուսաց լեզուի թարգման։ Ս. Պետերբուրգն այն աստիճան գրաւեց պատանի Ռոստոմին, որ նա այլևս վերադառնալ չցանկացաւ։ Մելիք-Ջումշուդը իւր հօր ջորեպանի որդուն ազնուականութեան թուղթ շնորհեց և նրա խնդրելով պատանի Ռոստոմը մտաւ զինուորական դպրոց։ Ահա այդ պատանին էր, որ վերջը դարձաւ հռչակաւոր իշխան գեներալ Մադաթովը, որ այնքան նշանաւոր գործեր կատարեց ռուսաց՝ տաճկական, ֆրանսիական և պարսկական արշաւանքների ժամանակ։

գլին· բացի դրանից նոյն թուի ապրիլի 16-ից առանձին բարձրագոյն հրահանգով հրամայուեցաւ ստատսկի սովետնիկ Կովալենսկուն (որ այդ ժամանակ նշանակուած էր Վրաստանի մինիստր) հետեւեալը.

«Հայոց մելիքները՝ Ջումշուդ և Ֆրէյդուն, որոնք գտնվում են այստեղ (Ս. Պետերբուրգ) և միւսները, որոնք մնացել են Վրաստանում և Պարսկաստանում (Ղարաբաղում) իրանց այլ հայրենակիցների հետ, դիմեցին Նորին Կայսերական Մեծութեան հովանաւորութեան ներքոյ և ստացան ամենաողորմած թոյլտուութիւն բնակուելու Վրաստանում այն պայմանով, որ թագաւորը (վրաց Գիօրգի XII) պէտք է տայ նրանց հողեր բնակութեան համար թէ իրանց հպատակների հետ և թէ Պարսկաստանի այն բնակիչների հետ, որոնք կարող կլինեին հետ դուրս գալ այնտեղից: Թագաւոր Կայսրը ցանկանալով, որ մի այսպիսի քրիստոնեայ ժողովուրդ, որքան կարելի է, ծաղկէր Վրաստանում հէնց նոյն իսկ երկրի օգուտների համար,— դուք (Կովալենսկին) պէտք է աշխատէք, որ թագաւորը (Գիօրգին) հողերի այնպիսի գիջումներ անէր, որ մելիքների համար ամենաշահաւէտ պայմաններով լինէր. և որովհետև մի այսպիսի հասարակութիւն չէ կարող բնակութեան հաստատ հիմք ունենալ և ընդարձակել իւր յառաջադիմութիւնը, մինչև որ պահպանուած չլինեին նրա սովորութիւնները և կառավարութեան ձեւերը, որոնք հին ժամանակներից յատուկ են եղել նրան, այդ պատճառով և ցանկալի կլինէր, որ նա (հայոց հասարակութիւնը) ոչ այլ տեսակ կախումն ունենար Վրաստանից, բայց միայն վասալների տեսակով, վճարելով այնուամենայնիւ թեթև հարկ թագաւորին, և բաժանելով նրա հետ այն ամենը, ինչ որ հարկաւոր կլինի թէ ծախքերի

վերաբերութեամբ և թէ մարդկանց գործակցութեամբ երկրի պաշտպանութեան դէպքերում»:

Վրաստանն այդ ժամանակ այն աստիճան խռովեալ դրութեան մէջ էր, որ իշխան Գիօրգին խիստ նպաստաւոր համարեց հայոց մելիքների և նրանց հպատակների ահագին բազմութեամբ վրաց հողի վրայ բնակութիւն հաստատելը: Մելիքները կարող էին նրան զօրաւոր դաշնակիցներ լինել: Կովկասեան լեռնաբնակների յարձակումները մի կողմից, վրաց իշխանական գերդաստանի անդամների երկպառակութիւնները միւս կողմից, երկիրն անդադար ալէկոծութեան մէջ էին պահում: Գիօրգիի եղբայրները, նրա ազգականները ամեն օր նորանոր խռովութիւններ էին յարուցանում: Եղբայրներից մէկը՝ իշխանազն Աղէքսանդրը, հակուած էր պարսիկների կողմը և գործում էր հակառակ ռուսների և հակառակ իւր եղբօր:

Այդ հանգամանքներն էին պատճառ, որ մելիքների պահանջը կատարուեցաւ: Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդն ստացաւ Գիօրգի իշխանից Լօռիի գաւառը իւր սահմաններով և Բօրչալուի մի մասը, որոնց մէջ նա իւր հպատակների հետ բնակութիւն հաստատեց: Մելիք-Բէգլարեան Մէլիք-Ֆրէյդունն ստացաւ Բօրչալուի մնացած մասը և Աղջա-Ղալան: Իսկ Մելիք-Աբովը (Մելիք-Ֆրէյդունի հօրեղբայրը) ստացաւ Բօլնիսը իւր սահմաններով: Այնուհետև մելիքները ձեռք բերեցին և ուրիշ հողեր այն չափով, ինչ չափով որ հետզհետէ աւելանում էր նրանց հպատակների թիւը:

XXXVII

Երբ Ղարաբաղի հայ ժողովրդի մի մասն իրանց մելիքների հետ զետեղուեցան Վրաստանում, այդ ժամանակ

Ղարաբաղի երեք կաթողիկոսները գտնվում էին զանազան տեղերում: Նրանցից երկուսը մնացին Ղարաբաղում. Խորաչէլ կաթողիկոսը նստած էր Ամարասայ վանքում, իսկ փոքր Սիմոն կաթողիկոսը Երիցմանկանց վանքում. երրորդը՝ Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը գտնվում էր Ղարաբաղի սահմաններից դուրս՝ Գանձակ քաղաքում (տես. գլ. XVII):

Բայց մի ճակատագրական դժբախտութեամբ կարծես անխուսափելի էր դարձել, որ Ղարաբաղի մելիքները ուր և գնային, պէտք էր որ մի եկեղեցական կռիւ չար դևի նման հետևէր նրանց:

Հէնց նոյն տարուայ մէջ, երբ մելիքներն իրանց ժողովրդի հետ գաղթեցին Վրաստան, Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը, իւր եղբօրորդի Բաղդասարի (որ արդէն վարդապետ էր ձեռնադրուած) և իւր այլ ազգականների ու մերձաւորների հետ, Գանձակից տեղափոխուեցան Թիֆլիզ (1797 թ. 25 մարտի): Հերակլ իշխանը սիրով ընդունեց կաթողիկոսին և մեռնելուց առաջ յանձնեց իւր ժառանգ Գէօրգիին, որ աւելի յարգանք ցոյց տուեց իւր վեհափառ հիւրին:

Թիֆլիզում այդ ժամանակ, որպէս Վրաստանի հայոց առաջնորդ, Ս. Էջմիածնի բարձր իշխանութեան կողմից նըստած էր Յովհաննէս արքեպիսկոպոս պօլսեցին, որ յայտնի էր «Գեղարդակիր» մականունով: Դա խիստ գործունեայ և հաստատուն բնաւորութեան տէր մի եկեղեցական էր և մեծ ազդեցութիւն ունէր Ս. Էջմիածնում:

Սարգիս կաթողիկոսի Թիֆլիզում բնակութիւն հաստատելը, ի հարկէ, շատ հաճելի չէր կարող լինել «Գեղարդակրին», մանաւանդ երբ նկատում էր նա իշխան Գէօրգիի համակրութիւնը դէպի կաթողիկոսը և վերջինի

ձգտումները՝ Վրաստանում այդ ժամանակ զետեղուած ղարաբաղցի գաղթականների հովիւը լինելու:

Պէտք է ասած, որ ղարաբաղցի գաղթականների ցանկութիւնն էլ հէնց այդ էր: Այդ ժողովուրդը սովորած էր Ս. Էջմիածնից անկախ իւր առանձին հոգևոր կառավարութիւնն ունենալ, որպէս էր բազմադարեան Աղուանից կաթողիկոսութիւնը: Իսկ Սարգիսն այդ կաթողիկոսութեան ներկայացուցիչներից մէկն էր:

Ղարաբաղի հայերը մի ժամանակ Գանձակի գաւառում զետեղուելով, նոյն Սարգսին իրանց համար կաթողիկոս օծել տուին: Այժմ Վրաստան գաղթելով, դարձեալ ցանկանում էին ունենալ իրանց առանձին իշխանութիւնը անկախ Ս. Էջմիածնից, նոյն Սարգսի հովուութեան ներքոյ:

Իշխան Գէօրգիի յարաբերութիւններն այդ ժամանակ Ս. Էջմիածնի հետ լարուած լինելով, նպաստում էր ղարաբաղցոց ցանկութեան իրագործելուն *):

---

*) Իշխան Գէօրգիի յարաբերութիւնների՝ Ս. Էջմիածնի հետ լարուած լինելու պատճառները թէև ինքն ըստ ինքեան շատ հասարակ բաներ էին, բայց կրօնական կէտից նայելով, մեծ նըշանակութիւն ունէին: Ղարաբաղում ժանտախտ յայտնուելու ժամանակ, երբ ժողովուրդը տեղափոխուեցաւ Վրաստան, այդ սարսափելի ախտը տարաւ իւր հետ: Այդ ժամանակ վրաց Գէօրգի իշխանը դիմեց Ս. Էջմիածին, խնդրելով Ղուկաս կաթողիկոսից որ ուղարկէ Թիֆլիզ Գեղարդը, որ Ս. Էջմիածնի հրաշագործ սըրբութիւններից մէկն է, և հռչակուած է որպէս փարատող վարակիչ հիւանդութիւնների: Ղուկաս կաթողիկոսը չկատարեց իշխանի խնդիրքը, նախ այն պատճառով, որ ժանտախտը Վաղարշապատում էլ յայտնուել էր և սուրբ Գեղարդի օգնութեանն իրանք աւելի կարօտութիւն ունէին, իսկ երկրորդ պատճառն այն էր, որ վստահութիւն չունէր վրաց իշխանի վրայ, թէ կարող էր յիշեալ սրբութիւնը Վրաստանից կրկին յետ ստանալ:

Երբ Գէօրգին սկսեց աւելի և աւելի թախանձել, կաթո-

Այդ բոլորը, յայտնի բան է, պիտի հակառակէին «Գեղարդակիրի», որպէս Վրաստանի հայոց առաջնորդի, շահերին մի կողմից, իսկ Ս. Էջմիածնի իրաւասութեանը միւս կողմից: Այդ էր պատճառը, որ երբ իշխան Գիօրգին առաջարկեց Ս. Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսին, խնդրելով որ Սարգիս կաթողիկոսը Ղարաբաղի գաղթականների առաջնորդ նշանակուի, Ղուկասը բացարձակապէս մերժեց իշխանի խնդիրքը, և այդ առիթ տուեց երկար դժգոհութիւնների վրաց իշխանի և Ս. Էջմիածնի միջև:

Գիօրգին Ղուկասի յամառութիւնից վշտացած, յայտնեց, որ եթէ իւր խնդիրքը չկատարուի, ինքն այնուհետև կարգելէ, որ Ս. Էջմիածնից ոչ մի հոգևորական իրաւունք չունենայ Վրաստանի սահմաններից անց կենալու և տեղային հայերից հոգևոր տուրք հաւաքելու:

Ղուկաս կաթողիկոսը տեսնելով, որ դրանով Վրաստանի հայերը բոլորովին պիտի կտրուեն Ս. Էջմիածնից, ստիպուեցաւ զիջումն անել: Նա խոստացաւ, թէ իշխանի ցանկութիւնը կկատարէ, միայն պէտք է Սարգիս կաթողիկոսն անձամբ գնայ Ս. Էջմիածին, իւր խոնարհութիւնը յայտնելու և իւր պաշտօնն ստանալու համար:

Սարգիս կաթողիկոսը իւր եղբօրորդի Բաղդասար վարդապետի հետ գնացին Ս. Էջմիածին: Թէև այնտեղ խիստ

ղիկոսն ստիպուած եղաւ յիշեալ ‹գեղարդակիր› Յովհաննէս արքեպիսկոպոսի ձեռքով ուղարկել: Բայց սրբութիւնը Թիֆլիզ հասնելուց և հանդիսաւոր թափօրներ կատարելուց յետոյ կալանաւորուեցաւ: Ս. Էջմիածնից քանիցս անգամ խնդրեցին յետ ուղարկել, բայց վրաց իշխանը, միշտ զանազան պատճառներ բերելով, խաբում էր: Վերջը Յովհաննէս արքեպիսկոպոսը Մելիք-Աբովի օգնութեամբ մի գիշեր վեր առաւ սրբութիւնը և մի քանի ձիաւորների հետ ծածուկ փախաւ Ս. Էջմիածին: Գուցէ այդ դէպքի պատճառով նա ստացաւ ‹գեղարդակիր› մականունը:

սառն ընդունելութիւն գտան, այսուամենայնիւ Ղուկաս կաթողիկոսը՝ վրաց իշխանի հետ ունեցած վիճաբանութիւններին վերջ տալու համար, Սարգսին կարգեց Հաղբատու վանքի վանահայր և միևնոյն ժամանակ Ղարաբաղի գաղթականների առաջնորդ: Նոյնը հաստատեց իշխան Գիօրգին իւր երկու հրովարտակներով, որոնցից մէկն ուղղած էր Ղարաբաղի գաղթականների հասարակութեանը, իսկ միւսն իրան՝ Սարգսին:

Բայց Ս. Էջմիածնում Սարգսից խոստումն առան, որ նա իրաւունք չունենայ կաթողիկոսական կնիք կամ տիտղոս գործ ածելու, այլ պէտք է կրէ արքեպիսկոպոսի աստիճան և գործ ածէ առաջնորդական կնիք: Թէև Սարգիսը պահպանեց այդ պայմանները, այսուամենայնիւ նրա հակառակութիւնները Թիֆլիզի էջմիածնական ներկայացուցիչների հետ խպառ չվերջացան:

Սարգսի գործը հազիւ թէ փոքր ինչ կարգի էր դրուած, որ Ղարաբաղից յայտնուեցաւ մի նոր կաթողիկոս: Դա էր Երիցմանկանց վանքի փոքր Սիմոն կաթողիկոսը, որ Իբրահիմ-խանից նեղուելով, փախաւ Թիֆլիզ:

Բայց այս անգամ Թիֆլիզի էջմիածնականները նրա հետ «ցերեմօնիա» չարեցին: «Ճահազէզան» Յովհաննէս վարդապետի *) քթախոտի տուփը՝ ձեռնածուի արկղիկի նման երկու խորշ ունէր, մէկից ինքն էր քաշում, միւսից առաջարկում էր այն անձինքներին, որոնց հարկաւոր էր ուղարկել ոգիների աշխարհը: Սիմոն կաթողիկոսին վիճակուեցաւ վերջին խորշի մէջ ածած քթախոտով կազ-

*) Մեզ յայտնի չէ Յովհաննէս վարդապետի ով լինելը, կամ ինչու էր կրում նա ‹շ ա հ ա գ է զ ա ն› մականունը, որ նշանակում է Շահի մօտ գնացող: Միայն այսքանը յայտնի է, որ նա Եփրեմ կաթողիկոսի ժամանակ Ս. Էջմիածնում դեր խաղացող միաբաններից մէկն էր:

դուրուել։ Նա թունաւորուեցաւ. թողեց Թիֆլիզը և գնաց Գանձակ։ Սակայն դեռ տեղ չհասած, կաթողիկոսի մօրուքի և գլխի մազերը թափուեցան և Գանձակում վախճանուեցաւ։ Դա Երիցմանկանց վանքի վերջին կաթողիկոսն էր։

XXXVIII

Մեր պատմութեան նախընթաց գլուխներից մէկում՝ Ղարաբաղի մինը միւսին հակաթոռ բազմաթիւ կաթողիկոսների առիթով նկատեցինք, թէ դարերի ընթացքում, ամեն անգամ, երբ ծագել են բուն ազգային կամ ժողովրդական ամենակարեւոր խնդիրներ, միեւնոյն ժամանակ սատանան մէջ է գցել մի ուրեւիցէ եկեղեցական կռիւ, երկպառակութիւն։ Այդ թէև շատ տխուր է, բայց փաստ է։

Ռուսներն արդէն տիրել էին Վրաստանին և պէտք է տիրէին ամբողջ Անդրկովկասին։ Հայերի համար սկսվում էր մի նոր կեանք. պարսկական բռնապետութիւնը քայքայվում էր և տեղի էր տալիս քրիստոնեայ պետութեան կառավարութեանը։ Հայոց մելիքներն աշխատում էին պահպանել իրանց վաղեմի իրաւունքներն այդ նոր պետութեան հովանաւորութեան ներքոյ։ Ժողովրդի կեանքը գտնվում էր փոխանցական տագնապի մէջ. հազար ու մէկ կարիքներ կային, հազար ու մէկ հարցեր պիտի վճռուէին, իսկ հէնց այդ ժամանակ Ս. Էջմիածնում սկսուեցան կաթողիկոսական կռիւները, որ զբաղեցրին հայոց մտքերը այնքան ժամանակ, մինչև ռուսները բոլորովին հաստատուեցան Անդրկովկասում։

1799 թ. 27 դեկտեմբերի վախճանուեցաւ Ս. Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը։ Հայրապետական աթոռը ժառանգելու համար յայտնուեցան բազմաթիւ նախանձորդներ,

որոնք մինը միւսին տեղի տալով, կռուի դաշտի վրայ մնացին հինգը։ Դրանք էին՝ Ռուսաստանի արքեպիսկոպոս Յովսէփը, Կ. Պոլսի պատրիարք Դանիէլը, Հաշտարխանի եպիսկոպոս Եփրեմը և Էնադետցի Դաւիթ եպիսկոպոսը, որ սաստիկ խորամանկ մարդ էր և միջոցների ընտրութեան մէջ ամենևին խտրութիւն անել չգիտէր, իսկ հինգերորդն էր թիֆլիզեցի «բոկոտն» (բոբլիկ) կոչուած Ստեփան արքեպիսկոպոսը *)։

Ռուսաց կառավարութեան նպատակն այն էր, որ Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռի վրայ նստէր մի մարդ, որ նշանաւոր ծառայութիւններ էր մատուցել Ռուսաստանին, մանաւանդ նրա արևելեան պատերազմների ժամանակ՝ թէ պարսիկների և թէ օսմանցիների հետ։ Դա էր մեզ նախածանօթ Արղութեան Յովսէփ արքեպիսկոպոսը։ Այդ գործունեայ, եռանդոտ եկեղեցականը դեռ ևս պէտք էր ռուսաց տիրապետութիւններն առաջ տանելու համար։ Պարսիկների հետ գործը տակաւին վերջացած չէր. Երեւանեան նահանգը և ուրիշ շատ խանութիւններ դեռ մահմեդականների ձեռքումն էին։

Ինքը Յովսէփ արքեպիսկոպոսը վաղուց ձգտում էր այդ նպատակին, որ ընդհանուր հայոց կաթողիկոսը դառնայ, և նրա մի այդպիսի փառասիրական ձգտումը սաստիկ վայր ձգեց նրա համարումը մտածող հայերի աչքում, երբ նա իր աւելի ընդարձակ և աւելի ազգօգուտ գաղափարները թողնելով, սկսեց հետևել իր նեղ, եսական շահերին...։

---

*) Համարեա այդ ժամանակից սկսուեցան Դաւթի և Դանիէլի կռիւները, որոնք Ս. Էջմիածնի վերջին կաթողիկոսների պատմութեան մէջ խիստ տխուր, միևնոյն ժամանակ բաւական ընդարձակ տեղ են բռնում։

Թէև նա Ս. Էջմիածնում և Հայ հասարակութեան մէջ բազմաթիւ հակառակորդներ ունէր, բայց ռուսաց կառավարութեան և օսմանցոց Բ. Դռան համաձայնութիւնն ստացած, Ռուսաստանից ճանապարհ ընկաւ դէպի Անդրկովկաս, որ գնայ Ս. Էջմիածին հայրապետական օծումն ընդունելու համար: Արքեպիսկոպոսի վարմունքը, որ բոլորովին հակառակ էր հայոց վաղեմի ընտրողական կարգերին, շատ կարելի է, որ մեծ խռովութիւնների պատճառ տար, եթէ ճակատագիրն այլ կերպ չտնօրինէր: 1801 թ. փետրվարի 10-ին փառաւոր հանդէսով մտաւ նա Թիֆլիզ: Նա գրտաւ իւր բարեկամ վրաց Գիօրգի իշխանին արդէն դրած դագաղի մէջ*): Իշխանի մահն արքեպիսկոպոսին սաստիկ տխրութիւն պատճառեց: Նրա հետ մեռան սրբազանի սրտին խիստ մօտ՝ խորին բաղձանքները...:

Իշխանի դագաղը դեռ դրուած էր Սիօնի մայր եկեղեցում, երբ 1801 փետրվարի 16-ին նոյն եկեղեցում կատարուեցաւ Վրաստանի Ռուսաստանի հետ միաւորութեան տօնախմբութիւնը և կարդացուեցաւ Պօղոս I կայսրի հրովարտակը, որ աւետում էր այդ միաւորութիւնը:

Այդ ժամանակ Թիֆլիզում էր գտնվում գեներալ-մայօր Լազրեվը, որ կարգուած էր իբրև Վրաստանի զինուորական իշխանութեան ներկայացուցիչ:

Կայսրի հրովարտակի ընթերցումից երեք օր յետոյ կատարուեցաւ իշխան Գիօրգիի թաղման հանդէսը, որին ներկայ էր ինքը Յովսէփ արքեպիսկոպոսը: Գիօրգիի թաղման հետ վրաց իշխանութիւնը վերջացաւ:

Այդ թաղմանից յետոյ ինքը Յովսէփ արքեպիսկոպոսն անկողին մտաւ և կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեցաւ, առանց Ս. Էջմիածինը տեսնելու, առանց կաթո-

*) Գիօրգին վախճանուեցաւ 1800 թ. դեկտեմբեր ամսում:

ղիկոսական ս. օծումն ընդունելու: Նրա հետ մեռան և հայոց մելիքների մնացած յոյսերը...:

Նոյն տարւայ մէջ (1801 թ. 12 մարտի) վախճանուեցաւ Պօղոս I կայսրը և ռուսաց գահի վրայ նստեց Աղէքսանդր I:

Գիօրգիի մահից յետոյ աւելի սաստիկ կերպով յուզուեցաւ երկպառակութիւնը վրաց իշխանազն ժառանգների մէջ: Գտնուեցան նրանց մէջ այնպիսիները, որ սկսեցին բողոք յայտնել Վրաստանի Ռուսաստանի հետ միաւորութեան մասին, սկսեցին գրգռել Կովկասի լեռնաբնակներին և պարսիկներին ռուսների դէմ *):

Այդ բողոքողներից ամենանշանաւորը և ամենահաստատամիտն էր հանգուցեալ Գիօրգիի եղբայր Աղէքսանդրը: Նրա գործողութիւնները բաւական մեծ տեղ են բռնում այդ ժամանակի պատմութեան մէջ. բայց մենք համառօտ կերպով մէջ կբերենք այնքանը միայն, ինչ որ վերաբերում է հայոց մելիքներին:

Վրաստան գաղթած հայոց մելիքներից աւելի ույժ և նշանակութիւն ստացաւ Մելիք-Բէգլարեան Մելիք-Աբովը: Նա ինչպէս որ քաջ և պատերազմասէր էր Ղարաբաղում, նոյնը եղաւ և Վրաստանում: Բացի Ղարաբաղից իւր հետ բերած հպատակներից, նա սկսեց հետզհետէ իւր իշխանութեան ներքոյ հաւաքել և այն գաղթականներին, որոնք Հայաստանի զանազան կողմերից փախչելով, Վրաստանում ապաստան էին գտնում: Այդպիսով նա այնքան բազմացրեց իւր ժողովրդի թիւը, որ կարող էր ամեն անգամ մի քանի հազար ձիաւոր կռուի դաշտը դուրս բերել: Դրանով չբաւականանալով, Մելիք-Աբովն աշխատում էր 1,000 հայ

*) Այդ ժամանակ տեղի ունեցաւ Աւարիայի Օմար-խանի երկրորդ արշաւանքը Վրաստանի վրայ:

ընտանիքներ Ախալցխայի վիճակից (որ այդ ժամանակ օսմանցոց իշխանութեան ներքոյ էր գտնվում) տեղափոխել Վրաստան իւր կալուածների վրայ։ Այդ մտքով նա իւր ձիաւորների խմբերով անդադար արշաւանքներ էր գործում, անցնում էր Տաճկաստանի սահմաններից և ամեն անգամ աճապին աւարով յետ էր դառնում։ Շատ անգամ նրա ասպատակները հասնում էին մինչև Էրզրումի պարիսպների մօտ։ Եւ որովհետև այդ բոլորն այն ժամանակ սովորական իրերի կարգումն էր, այդ պատճառով Մելիք-Աբովի վտանգութիւններին սահման չէր դրվում։

Մելիք-Աբովն այնքան նշանակութիւն ստացաւ իւր քաջ ձիաւորների խմբերով, որ երկրի մէջ վաճառականական յարաբերութիւններն ապահով դրութեան մէջ պահելու և ճանապարհների վրայ կարաւանների երթևեկութիւնն աւազակների յարձակումներից անվտանգ պահպանելու համար յանձնուեցաւ նրան **քարվանբաշիութեան** պաշտօնը։ Այդ պաշտօնի նշանակութիւնն այն էր, որ նա պիտի պահէր ճանապարհների վրայ պահականոցներ, նրա ձիաւորները պէտք է ուղեկցէին կարաւաններին մի իջևանից մինչև միւսը, որ վտանգ չպատահէր։ Այդ հսկողութեան համար Մելիք-Աբովի մարդիկը իւրաքանչիւր բեռից հարկ էին ստանում 1 ռուբլի, յօգուտ մելիքի, որի տարեկան գումարը հասնում էր 500 թումանի *), որպէս խոստովանվում է Մելիք-Աբովը իւր նամակներից մէկի մէջ։

---

*) 500 թումանը մօտաւորապէս հաւասար է 1,500 ռուբլու։ Եթէ իւրաքանչիւր բեռից ստացվում էր 1 ռուբլի, ուրեմն այդ հաշուով, ամբողջ տարուայ մէջ Վրաստան մտնող և դուրս եկող մթերքների քանակութիւնը պէտք է հաշուել 1,500 բեռ։ Այդ ցոյց է տալիս երկրի այն ժամանակուայ վաճառականութեան ամենաստոր աստիճանի վրայ կանգնած լինելը։

Վրաց իշխանազն Աղէքսանդրը՝ այդ բոլորը նկատելով տեսնում էր Մելիք-Աբովի մէջ մի լաւ օգնական իւր նպատակներն իրագործելու համար։ Գեռ Գիօրգիի կենդանութեան ժամանակ նա թափառում էր երբեմն Դաղստանի լեռնաբնակների մէջ, երբեմն Ղազախի և Շամշադինի թարաքամաների մէջ և երբեմն Երևանի կողմերում, և ամեն տեղ գրգռում էր մահմեդականներին ռուսների և իւր եղբայր Գիօրգիի դէմ։

Նա շատ անգամ՝ թէ նամակներով և թէ առանձին պատուիրակներ ուղարկելով, դիմում էր Մելիք-Աբովին, առաջարկելով միանալ իւր հետ և ռուսների հակառակ գործել։ Թէև Մելիք-Աբովը, հաւատարիմ մնալով այն երդմանը, որ տուել էր ռուսաց կառավարութեանը, ամեն անգամ մերժում էր իշխանազն Աղէքսանդրի առաջարկութիւնները, այսուամենայնիւ Թիֆլիզի ռուս աստիճանաւորները կասկածելով Մելիք-Աբովի վրայ, նրան կալանաւորեցին։ Նա մի քանի ամիս մնաց բանտում, մինչև Վրաստանի համար նշանակուած մինիստր Կովալենսկին Թիֆլիզ գալով (18(0 թ.), արձակեց նրան։

Մելիք-Աբովն ունէր երեք որդի՝ Ռոստոմ-բէկ, Սայիբէկ և Մանաս-բէկ։ Դրանցից իւր քաջութեամբ նշանաւոր եղաւ Ռոստոմ-բէկը։

XXXIX

1804 'թուին ռուսաց զօրքերն իշխան Ցիցիանովի հրամանատարութեան ներքոյ մօտեցան Երևանի պարիսպներին և բանակ դրեցին Ս. Էջմիածնի մօտ։ Միևնոյն ժամանակ պարսկական բազմաթիւ զօրքեր, պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի անձնական հրամանատարութեան ներքոյ, շտապեցին Երևանն ազատելու և Ցիցիանովի ար-

շուանքների առաջն առնելու: Պարսից զօրապետների թւում գտնվում էր վրաց իշխանազն Աղէքսանդրը մի քանի վրաց ազնուականների հետ: Դրանք իրանց հետ առնելով մի քանի գունդ պարսկական հեծելազօր և միանալով Ղազախի ու Ճամշադինի թարաքամաների հետ, և մի կողմից էլ ապստամբեցնելով լէզգիներին, բոլորովին կտրեցին Վրաստանի հաղորդակցութիւնը Ցիցիանովի բանակի հետ, որ գտնվում էր Երևանի պարիսպների մօտ:

Ցիցիանովը, որ կամենում էր պաշարել Երևանը, ինքը պաշարման դրութեան մէջ մնաց: Պարսիկներն ամեն կողմից շրջապատեցին նրան: Այդ ժամանակ պակասեց Ցիցիանովի զօրքի պաշարը: Թէև Ս. Էջմիածնի վանքը իւր հացի ամբարներից մեծ օգնութիւն մատակարարեց, բայց Ցիցիանովը կարօտութիւն ունէր և ռազմամթերքի. վառօդը սպառուելու վրայ էր. նրան պէտք էին աւելի շատ թուով թնդանօթներ:

Այդ միջոցին Մելիք-Աբովի որդի Ռոստոմ-բէկը, իւր հետ առնելով 500 ռուսաց զինուոր, երկու անգամ դարմանալի քաջութեամբ անցաւ պարսիկների միջից և Ցիցիանովի բանակին Թիֆլիզից վառօդ, թնդանօթներ և այլ ռազմամթերք հասցրեց:

Երբ նա այդ նպատակով պիտի կատարէր իւր երրորդ արշաւանքը, Փամբակի ձորում, Ղուրսալու գիւղի մօտ պատահեց պարսից զօրքերին: Նրանց թիւը 800 հոգի էր, գտնվում էին Փիր-Ղուլի-խան անունով մէկի գլխաւորութեան ներքոյ: Այդ միջոցին պարսից զօրքերի հետ միացաւ վրաց իշխանազն Աղէքսանդրը 3,000 ձիաւորով: Չնայելով պարսից ուժերի անհամեմատ գերազանցութեանը, նրանք ամբողջ երեք օր կանգնած մնացին և չէին վստահանում կռիւ սկսել Ռոստոմ-բէկի փոքրաթիւ խմբի հետ: Երբ վերջապէս սկսուեցաւ կռիւը, Ռոստոմ-բէկն ըն-

կած ռուսաց զօրքերի առաջ, երկար քաջութեամբ պատերազմում էր: Յանկարծ նրա ձին գնդակահար լինելով, ցած գլորուեցաւ: Ռոստոմ-բէկը նստեց մի այլ ձիու վրայ և կրկին նետուեցաւ կռուի մէջ: Չնայելով որ նա արդէն երկու վէրք էր ստացել, բայց տակաւին շարունակում էր կռուել: Երբ երրորդ վէրք ստացաւ աջ ձեռքի վրայ, այդ ժամանակ արիւնաշաղախ ցած ընկաւ: Նրա ընկնելուց յետոյ պարսիկները մայօր Մօնտրեզորին սպանեցին և ռուսաց բոլոր զինուորներին կոտորեցին:

Ռոստոմ-բէկին տարան պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի բանակը:

Վրաց իշխանազն Աղէքսանդրը լաւ ծանօթ էր Ռոստոմ-բէկի հետ, ճանաչում էր և նրա հօրը՝ Մելիք-Աբովին, որ, ինչպէս ցոյց տուինք նախընթաց գլխում, մերժեց Աղէքսանդրի առաջարկութիւնները, երբ նա խնդրում էր միանալ իւր հետ՝ ռուսների հակառակ գործելու համար: Այժմ յամառ մելիքի աւելի ևս յամառ որդին առաջնորդելով ռուսաց զինուորներին, ընկաւ թշնամու ձեռքը: Աղէքսանդրը կամեցաւ հօր վրէժն առնել որդուց: Առաջուց տեղեակ լինելով, թէ պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան ո՛ր աստիճան ատելութիւն ունի դէպի Ղարաբաղի մելիքները, որոնք Աղա-Մամադ-խանի սպանման պատճառը դարձան Շուշի բերդում, — այդ մտածութեամբ, իբրև մի լաւ առարկայ Աբաս-Միրզայի վրէժխնդրութեանը բաւականութիւն տալու, — Աղէքսանդրն ուղարկեց Ռոստոմ-բէկին Աբաս-Միրզայի մօտ:

Պարսից թագաժառանգն իսկոյն սպանել չտուեց նրան, այլ շղթայակապ ուղարկեց Թաւրիզ, հրամայելով որ այնտեղ բանտարկեն և խնամք տանեն նրա վէրքերը բժշկելու համար:

Այդ հերոսը երեք ամիս բանտարկուած մնաց Թաւ-

բիզում: Միևնոյն բանտում կալանաւորուած էր այդ ժամանակ և Ս. Էջմիածնի՝ ռուսաց կուսակից Դանիէլ կաթողիկոսը: Այդ վերջինը յետոյ Թաւրիզեցի Օհանէս-աղայի երաշխաւորութեամբ ազատուեցաւ: Բայց Ռոստոմ-բէկը մնաց բանտում այնքան ժամանակ, մինչև Աբաս-Միրզան ռուսներից յաղթուած և բարկացած, վերադարձաւ Թաւրիզ: Նա իսկոյն տուեց քաջին դահիճների ձեռքը և հրամայեց գլխատել նրան: Թաւրիզի հայերը մեծ սուգով նրա մարմինը թաղեցին իրանց եկեղեցու բակում գտնուած գերեզմանատանը, և սովորեցրին իրանց զաւակներին երգել մի երգ, որ ինքը երիտասարդը գրել էր բանտում եղած ժամանակ: Երևում է որ Ղարաբաղի հերոսը որքան յաջողակ էր զէնք գործ ածելու մէջ, նոյնքան հմուտ էր և բանաստեղծութեան մէջ: Այժմ այդ երգը բոլորովին մոռացուած է: Վաղեմի տխուր յիշողութիւնները կրկին զարթեցնելու համար մենք կրդնենք նրա ամբողջ օրինակը.

«Մունետիկն ի ձայն բարձր աղաղակէ,
Փանտ դահիճն սուր ի ձեռին անյագ սրէ,
Վաղեր հանդոյն զիմ կենաց թել կտրել խնդրէ,
Ի կախաղան և կամ ի սպանդ,—ո՞ւր զիս տանէ:
Քաղաքս համայն մահմեդական, աստ խուռն գան, զիմ մահ ոգան,
Դառնագին լան զիս Աբովեան՝ քաջ ախոյեան:
Մի՞թէ չի՞ք ոք աստ քրիստոնեայ, զիս փրկեսցէ
Յայս ամեհի և մահագոյժ վայրագ դահճէ:
Ընդէ՞ր զանմեղ արիւն թափել, յէ՞ր ցանկայ,
Նուիրական զենման իմոյ լերուք վկայ:
Սէր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց,— ուրախ մեռայց,
Եւ դասեցայց ընդ դիւցազանց իմոց նախնեաց:
Փշրանք մնացեալ եմ սիրելի հայոց ազգի,

Որք գտանիք ի ձեռս պարսից յայս քաղաքի,
Մի՛ մոռասջիք պատմել և զայս յորդւոց յորդի,
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի:
Թէպէտ ցաւիմ զի չմեռանիմ ի մարտ ընդդէմ թշնամեաց իմ,
Այլ յօժարիմ, զի զոհ լինիմ այսպէս վսեմ:
Այս քաջ բազուկք յարեաց պարսից հսկայ հզօրս
Տապաստ արկին ի բազում նուագս հարիւրաւորս.
Աւա՜ղ, կնատ անգութ դահճի եղէ ես որս,
Պատմեսջի՛ք զայս վեհ դիւցազին՝ զառամեալ հօրս.
Քաջ նահատակ որդիդ միակ ի ձեռս վայրագ պարսից էանկ,
Իւր յաղթանակ մահ դժնդակ եառ պսակ:
Մեծդ յարեաց, արքայորդիդ Աբաս-Միրզա,
Սուր ի ձեռին դահիճն հէգ առ ընթեր կայ,
Զիս թշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ
Զիա՞րդ կամիս սպանանել՝ շուտ հրամայեա:
Միայն ոգամ, զի կապեալ կամ. թէ միւս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,—զբազուկս իմ ձեզ ցուցանեմ»...:

Սիրելի որդու աղետալի վախճանից յետոյ, նրա ալեւոր հայրը՝ Մելիք-Աբովը, երկար չապրեց: Ծերունի հերոսի վերջին օրերն անցան ցաւերով և տրտմութեամբ...:

Ահա ինչ է գրում նա Ս. Պետերբուրգ իւր 1807 թ. նոյեմբեր 23-ի նամակի *) մէջ աղա Մինաս Լազարեանին, որին, Յովսէփ արքեպիսկոպոսի վախճանուելուց յետոյ, ստէպ դիմում էին Ղարաբաղի մելիքները՝ իրանց զանազան վըշտերը յայտնելով.

*) Այդ նամակի հայերէն բնագիրը մեր ձեռքում չունենալով, թարգմանուած է ռուսերէնից, որ տպուած էր պ. Երիցեանի «Кавказская Старина» ամսագրի համար 2, դեկտեմբեր ամսի 1872 թուի տետրակում:

«Իմ մատուցած մեծ ծառայութիւնները Ռուսաստանի սուրբ գահին և Շուշիում իմ ցոյց տուած քաջագործութիւնները, դեռ Զուբով զօրավարի ժամանակից,—բոլորին յայտնի են: Կարելի է, որ ձեզ ևս անյայտ չէ, թէ որպէս հալածական արինք և ցրուեցինք երկրի երեսից Աղա-Մամադ-խանի ահարկու զօրախումբը: Այս պատճառով Հերակլ թագաւորը կամենալով մեզ (Ղարաբաղի մելիքներին) իրան օգնական ունենալ, երդումներով և թղթերով հաւատացրեց մեզ, որ գայինք իւր մօտ, բնակուէինք իւր տէրութեան մէջ և համարուէինք հաւասար նրա առաջնակարգ թաւադների ու կնեազների հետ: Մենք եկանք: Իւր խոստման համեմատ թագաւորը տուեց մեզ Բօլնիսը, իսկ իւր պալատում մեզ տեղ նշանակեց իւր բոլոր աւագներից բարձր: Մեր մի այսպիսի դրութիւնը տեւեց Հերակլի և Գիօրգիի թագաւորութեան ընթացքում: Իսկ այժմ մենք զրկուած ենք թէ հողից, թէ կալուածներից և թէ յարգանքից. որովհետև ամենքը նեղացնում են մեզ, աշխատում են խլել մեզանից Բօլնիսը և պահանջում են տասներորդ մասը մեր հունձքերից: Այդ բոլորն այն աստիճան անախորժ է մեզ, որ մենք այսուհետև ամենևին ցանկութիւն չունինք այլևս բնակուել այստեղ (Բօլնիսում): Երբ որ ես շինութիւններով և բնակիչներով ծաղկեցրի այս գաւառը, մաքրեցի նրան բոլոր թշնամիներից և վայրենիներից,—ապա այնուհետև միայն յայտնուեցան զանազան տէրեր, որոնցից մէկը տէր է կանգնում ջրանցքներին, միւսն աշխատում է սեպհականացնել իրան լեռները, երրորդը՝ հողը...: Այս բոլորից յետոյ, եթէ նոյնիսկ Բօլնիսի բոլոր քարերը ոսկի դառնալու լինին, այն ժամանակ ևս հրաժարուելով կըհրաժարուենք այս երկրից: Ո՛չ փող մնաց մեր քսակներում և ոչ համբերութիւն...: Մեր

օրերն անց ենք կացնում ատենական տեղերի դռներում, և ոչ մի տեղից օգնութիւն չենք գտնում...:

«Այդ բոլորի առիթով ես մատուցի յանուն Կայսրի ամենախոնարհաբար խնդիր, որպէսզի ամենաողորմածաբար թոյլ տրուէր մեզ մեր ժողովրդի հետ տեղափոխուել մեր հայրենիքը՝ Ղարաբաղ, ապրելու և բնակութիւն հաստատելու այնտեղ: Բոլորը, ինչ որ ես թղթի վրայ խոստացել եմ ամենաողորմած Թագաւորին, միևնոյնը այժմեանից երդումով խոստանում եմ կատարել յօգուտ արքունի գանձարանի:

«Թէ որքան մեծ է եղել իմ ծառայութիւնը իմ ամենաողորմած Թագաւորին, այդ մասին դեռ չգիտէ բարձր կառավարութիւնը: Այլևս ինչ է մնում ինձ անել: Ունէի ես անդրանիկ որդի—Ռոստոմ-բէկը, իմ ծերութեան գաւազանը և իմ նախնեաց ժառանգը, և նրան ես զոհ բերեցի իմ ամենաողորմած և ինքնակալ Կայսրին...: Ինչ որ ես գործել եմ և ինչ որ այժմ կատարում եմ, դրանից աւելին ոչ ոք կարող չէ անել:

«Ես ունիմ մի կաթիլ արիւն, և այն ամեն րոպէ պատրաստ է թափուելու իմ Թագաւորի անուան համար: Դրանից աւել էլ ինչ կարող եմ անել ես:

«Իսկապէս երևում է մի բան միայն, այն է, որ ես Հ ա յ եմ, և այդ պատճառով բոլոր գլխաւոր հրամանատարները և զօրավարները չարանում են ինձ վրայ՝ իմ կատարած յաղթութիւնների և քաջագործութիւնների համար: Իմ գործողութիւնների մասին նրանք չեն կամենում տեղեկութիւն տալ, ուր որ հարկն է, որովհետև ցանկանում են, որ ես յուսահատուեմ և տխրութիւնից մեռնեմ անյայտութեան մէջ: Աստուծոյ օգնութեամբն այդ չի լինի: Մինչև գերեզման չմտնեմ, տխրութիւնն ու յուսահատութիւնը չեն կարող վհատեցնել ինձ: Ընդհակառակն,

ես և այսուհետև նպատակ ունիմ կատարելու այնպիսի յաղթութիւններ, որ զարմացնէին բոլորին։ Իսկ գերեզման կըմտնեմ իմ քաջագործութիւնների և արիութիւնների ժամանակ. երբէք չեմ մեռնի տկարների և հիւանդների նըման, որոնք հոգի են տալիս անկողնու մէջ»։

Յետոյ մի առ մի թուելով իւր կատարած ծառայութիւնները Ռուսաստանին, ծերունի հերոսն աւելացնում է.

«Ես շատ անգամ խնդրել եմ կոմսին (Գուդովիչին) որ թոյլ տայ մեզ, Մելիք-Ջումշուդի նման տեղափոխուել մեր հայրենիքը՝ Ղարաբաղ։ Բայց նա չյօժարեցաւ, պատասխանելով որ եթէ մենք թողնելու լինինք այս երկիրը (Վրաստանը), այն ժամանակ Բօլնիսը կըոչնչանայ, իսկ ախալցխացիները, լէզգիները և այլ վայրենիներն ու աւազակները կըոչնչացնեն Թիֆլիզի շրջակայ գիւղերը։ Բայց երբ որ մենք ասում ենք՝ որովհետև Հերակլ թագաւորը շնորհել է մեզ Բօլնիսը իւր բոլոր հողերով, ջրերով, անտառներով և այլ պատկանելիքներով,—ուրեմն խնդրում ենք ձեզ, որ այդ բոլորը հաստատէք մեր անունով, այն ժամանակ կոմսը մեր պահանջին պատասխանում է, ասելով՝ ես չեմ կարող ուրիշների կալուածները տալ ձեզ, և դրա նման խօսքեր։ Ես չեմ կամենում ձանձրացնել ձեզ բոլոր մանրամասնութիւններով»...։

Մելիք-Աբովը վերջացնում է նամակը, խնդրելով Լազարեանի միջնորդութիւնը Կայսրի մօտ իւր առաջարկած մի քանի պահանջների մասին, որոնց մէջ դառնացած ծերունին առանձին կերպով շեշտում է, որ թոյլ տրուի իրան իւր հպատակների հետ վերադառնալ Ղարաբաղ։

Մեր ընթերցողներին յայտնի է՝ որ Պօղոս I կայսրի բարձրագոյն հրովարտակի համեմատ վրաց Գիօրգի իշխանը իւր առանձին հրովարտակներով Բօլնիսի գաւառը շնորհեց Մելիք-Աբովին, իսկ Լօռիի գաւառը շնորհեց Մե-

լիք-Ջումշուդին, որոնց մէջ նրանք առանձին արտօնութիւններով գաղթականութիւն էին հիմնել դեռ Հերակլ իշխանի օրերում (տե՛ս գլ. XXXVI)։ Մելիք-Ջումշուդը, որպէս յետոյ կըտեսնենք, նկատելով Գիօրգիի մահից յետոյ Վրաստանում տեղի ունեցած անախորժ հանգամանքները, և մելիքների յարաբերութիւնների՝ տեղային ռուս պաշտօնակալների հետ աննպաստ կերպարանք ստանալը, վշտացաւ, և վաճառելով Լօռին ռուսաց կառավարութեանը, իւր հպատակների հետ վերադարձաւ Ղարաբաղ։ Նոյնը, նոյն հանգամանքների պատճառով, կամենում էր անել Մելիք-Աբովը։ Բայց նրան արգելում էին, որովհետև վրացիներն այժմ մելիքների մէջ շատ պէտք չունէին...։

Որքան էլ մեծ լինէր Մելիք-Աբովի ցանկութիւնը իւր հայրենիքը տեսնելու, իւր ժողովրդի հետ իւր նախահարց հողի վրայ ապրելու, այսուամենայնիւ նա իւր բաղձանքին հասնել չկարողացաւ։

Հետզհետէ նրա յարաբերութիւնները վրաց ազնուականների հետ՝ Բօլնիսի և այլ կալուածական խնդիրների պատճառով աւելի և աւելի թշնամական կերպարանք ստացան։ Եւ որպէս պատմում են, մի հրաւէրքի մէջ, Թիֆլիզում, թունաւորուած լօբին կարճատև հիւանդութիւնից յետոյ նրան գերեզման տարաւ (1808)։ Նոյն հրաւէրքի մէջ թունաւորուելով մեռաւ նաև նրա քարտուղարը՝ Միրզա-Խաբախշը։

Մելիք-Աբովի մահից յետոյ յաջորդութեան մասին երկպառակութիւններ ծագեցին Մելիք-Բէգլարեանների տոհմի մէջ։ Հանգուցեալի անդրանիկ որդին՝ Ռոստոմ-բէկը, որ մելիքների սովորութեամբ պէտք է յաջորդէր նրան, որպէս տեսանք, Թաւրիզում մահուան դատապարտուեցաւ։ Նրա միւս երկու որդիները՝ Մանաս-բէկը և Սահի-բէկը, դեռ բաւական երիտասարդ էին։ Տոհմի մէջ նշանաւոր

մնում էր հանգուցեալի եղբօրորդի *) Ֆրէյդունը, որ շատ խելացի և քաջ տղամարդ էր, և դեռ Մելիք-Աբովի կենդանութեան ժամանակ յայտնի էր իւր արժանաւորութիւններով։ Նա Ղարաբաղի մելիքների կողմից Ս. Պետերբուրգ ուղարկուած (1799 թ.) պատգամաւորներից մէկն էր, որ ներկայացաւ Պօղոս I կայսրին և արժանացաւ նրա ամենաողորմած շնորհներին (տես գլ. XXXVI)։

Ամենի ցանկութիւնն այն էր, որ Մելիք-Աբովի յաջորդը լինի Ֆրէյդունը և նա ընտրուեցաւ. բայց նրա իշխանութիւնը կարճատև եղաւ։ Նա գրգռեց իւր եղբօր՝ Սամի նախանձը, որ սաստիկ կատաղի մարդ էր։ Մի անգամ տաք վիճաբանութեան ժամանակ, Սամը յարձակուեցաւ Ֆրէյդունի վրայ և խէնջալով այնպիսի սաստիկ զարկ տուեց նրա գլխին, որ սպանեց հարազատ եղբօրը (1808)։ Այդ ցաւալի անցքից յետոյ եղբայրասպանն ատելի դարձաւ իւր տոհմի մէջ և չհասաւ այն փառքին, որին ձգտում էր։ Մելիք-Ֆրէյդունի **) փոխարէն յաջորդ ընտրուեցաւ յանգուցեալ Մելիք-Աբովի որդի Մանաս-բէկը։

Այդ վերջինի ժամանակ մելիքների նշանակութիւնը Վրաստանում բաւական ընկաւ։ Հակառակ Պօղոս I կայսրի բարձրագոյն շնորհուած արտօնութիւնների, հակառակ այն իրաւունքների, որ նրանք վայելում էին Հերակլ և Գիօրգի իշխանների օրերից,—այժմ սկսեցին փոքր առ փոքր սահմանափակել նրանց իրաւունքները, իսկ յետոյ աշխատում էին իսպառ ոչնչացնել։

Այդ բոլորի պատճառն էր այն ժամանակուայ ռուս կառավարիչների կամայականութիւնը, որի դէմ սաստիկ

*) Մելիք-Ֆրէյդունը Մելիք-Բէգլար II-ի որդին էր։

**) Մելիք-Ֆրէյդունը թողեց վեց որդի՝ Մելիք-Յովսէփ, Ջամիրխան, Դաւիթ, որ տեղափոխուեցաւ Հնդկաստան, Թալիշ, Թէյմուրազ և Բէգլար III։

բողոքում էին մելիքները, շատ անգամ դիմելով ռուսաց բարձր կառավարութեանը։ Երբ Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրէյդունի մահից յետոյ Մանաս-բէկը դիմեց գլխաւոր հրամանատար զօրապետ Տօրմասովին, խնդրելով որ հաստատեն իրան ժառանգական տիրապետողի իրաւունքներով Բօլնիսի բնակիչների վրայ, նրան բոլորովին մերժեցին, պատասխանելով, թէ ո՛չ Բօլնիսը և ոչ այդ գաւառի բնակիչները ոչ ոքին չեն պատկանում, բացի թագաւորից։ Եւ մինչև անգամ հրամայուեցաւ կալանաւորել Մանաս-բէկին և պահել Թիֆլիզում խիստ հսկողութեան ներքոյ, որ նա Բօլնիսի բնակիչների մէջ այլևս վրդովմունք չյարուցանէ։

Յայտնի է, որ Բօլնիսը բնակեցրած էր ղարաբաղցի գաղթականներով, որոնք Մելիք-Բէգլարեանների հպատակներն էին և տեղափոխուած էին նրանց հայրենի Գիւլիստան գաւառից։ Այն ևս յայտնի է, որ Բօլնիսը շնորհուեցաւ որպէս մշտական սեպհականութիւն Մելիք-Բէգլարեաններին իրանց հպատակների հետ բնակուելու համար։ Վրաստանում այդ ժամանակ տիրում էր ճորտութեան իրաւունքը։ Թէև մելիքները Վրաստան գաղթելով, չկամեցան իրանց հպատակների վերաբերութեամբ ընդունել ճորտութեան իրաւունքներ, այսուամենայնիւ նրանք պահպանեցին տիրապետողի և հպատակի իրաւունքները այն ձևերի մէջ, որպէս վաղուց սովորական էին Ղարաբաղում։ Երբ այդ իրաւունքներից ևս կամենում էին զրկել նրանց, այնուհետև ուրիշ ոչինչ չէր մնում, բայց միայն թողնել Վրաստանը և կրկին տեղափոխուել Ղարաբաղ։

Այդ էր պատճառը, որ Մելիք-Բէգլարեանների ժառանգները և նրանց հպատակները, երկու վերջին նշանաւոր իշխողների՝ Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրէյդունի մահից յետոյ սկսեցին հետզհետէ թողնեն Վրաստանը և տեղա-

փոխուել Ղարաբաղ *)։ Նրանք մնացին Վրաստանում մօտաւորապէս տասներկու տարի (1797—1809 թ.)։ Մելիք-Բէգլարեանների բացակայութեան ժամանակ նրանց գիւղերը, կալուածները, մի խօսքով՝ ամբողջ Գիւլիստանի գաւառը, որ այդ տոհմի հայրենական ժառանգութիւնն էր, անցել էր Իբրահիմ-խանի ձեռքը։ Բայց Մելիք-Բէգլարեանները կրկին յետ խլեցին խանից բոլորը և իրանց հայրենի երկրի տէրը դարձան **)։

XL

Ղարաբաղի հայոց գաղթականութիւնը Վրաստանում ***) բաղդաւոր լինել չկարողացաւ։ Դրա պատճառներն այնքան մթին են, որ այժմ անյարմար կըլինէր ամբողջութեամբ երևան հանել։ Թէ մելիքները և թէ նրանց ժողովուրդը շատ դժբախտութիւնների հանդիպեցան։ Ժանտախտը, որի պատճառով նրանք ցիրուցան եղան և եկան Վրաստան, այստեղ ևս յայտնուելով, շատ զոհեր տարաւ։

*) Մելիք-Բէգլարեանների տոհմը Ղարաբաղի միւս տիրապետող մելիքների մէջ կարելի է առաջինը համարել, որ կարողացաւ պահպանել մինչև վերջին ժամանակները իւր հայրենի ժառանգութեան եթէ ոչ ամբողջը, գէթ նրա մեծ մասը։ Այժմ Գիւլիստանի գաւառում, այդ տոհմի ներկայացուցիչների ձեռքում մնացել են 18 գիւղ, որ գտնվում են աւելի քան հարիւրհազար դեսեատին տարածութեան վրայ։ Գիւղերը բոլորը հայաբնակ են, մէկը միայն բնակեցրած է մալականներով։

**) Ժողովրդի ամենափոքր մասը միայն մնաց Վրաստանում որ գաղթեց 1812 թուին դարձեալ դէպի Ղարաբաղ։

***) Թէև մենք անգագար գործ ենք ածում Վրաստան բառը, բայց այն գաւառները, որպէս էին Բօլնիսը, Լօռին, Բորչալուն, որ տուել էին հայ գաղթականներին բնակութեան համար, իսկապէս հայկական գաւառներ էին։

Մելիքներից աւելի խելացի գտնուեցաւ Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդը։ Հերակլ և Գիօրգիի մահից յետոյ, զգուելով տեղային անախորժ հանգամանքներից, կամեցաւ Լօռին վաճառել և կրկին տեղափոխուել Ղարաբաղ, իւր հայրենի երկիրը՝ Վարանդա։

Նոյն ժամանակուայ Վրաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսին-Պուշկինը օգտաւէտ համարեց գնել Մելիք-Ջումշուդից Լօռին, գնահատելով այդ երկիրը 6000 ռուբլի։ Դրա հակառակ, նոյն ժամանակուայ գլխաւոր հրամանատար իշխան Ցիցիանովը (վրացի) զանազան պատճառներ բերելով, կամենում էր ցոյց տալ, որ Լօռին Մելիք-Ջումշուդի սեպհականութիւնը չէ և վաճառելու իրաւունք չունի։ Բայց Ս. Պետերբուրգում արդէն գիտէին իշխան Ցիցիանովի անհամակրութիւնը դէպի հայոց մելիքները, որ արտայայտել էր նա շատ դէպքերի մէջ *)։ Այդ էր պատճառը որ իշխանի կարծիքների հետ Ս. Պետերբուրգում չհամաձայնուեցան, և նևմտից նախարարի 1805 թ. 22 մայիսի կարգադրութեամբ իրաւունք տրուե-

*) Նոյն կոմս Մուսին-Պուշկինը իւր 1802 թ. 9 սեպտեմբերի առաջադրութեամբ խնդրեց Թագաւոր կայսրից պարգևատրել Մելիք-Ջումշուդին նրա ռուսաց կառավարութեանը ցոյց տուած ծառայութիւնների համար ոսկեայ թրով։ Իսկ իշ. Ցիցիանովը դրա հակառակ իւր 1804 թուի 20 յունվարի զեկուցումով հաղորդեց, որ մի այդպիսի պարգևատրութիւն հայոց մելիքին՝ կարող էր վիրաւորել վրաց իշխաններին, և ամեն մի համեմատութիւն հայ իշխանների վրաց իշխանների հետ, վերջինների համար վիրաւորական պէտք է համարել։

Իւր 1804 թ. 30 դեկտեմբերի հաղորդագրութեան մէջ ի Թիւս այլոց գրում է իշ. Ցիցիանովը Թագաւորին. «Իբրահիմխանը (Շուշի բերդի) ունէր մինչև 60,000 տուն միայն Ղարաբաղի հայեր, որոնք կառավարվում էին հինգ նշանաւոր մելիքներով, որոնցից ոմանք, որպէս ես մտածում եմ, յ ի մ ա ր ա բ ա ր իրանց ծագումը դուրս են բերում Հայաստանի Թագաւորներից»...։

ցաւ Մելիք-Ջումշուդին Լօռին վաճառելու և տեղային կառավարութեանը հրամայուեցաւ կալուածագիրը հաստատել:

Ի հարկէ եթէ մի քանի տարի ևս ուշացնելու լինէր Մելիք-Ջումշուդը, նա ամէն բանից կըզրկուէր, որպէս Մելիք-Աբովի ժառանգները զրկուեցան Բօլնիսից: Բայց Լօռին վաճառուելուց յետոյ, նոյն տարուայ մէջ (1805) Մելիք-Ջումշուդը թողեց Վրաստանը և իւր հպատակների հետ տեղափոխուեցաւ Ղարաբաղ, իւր հայրենի գաւառը՝ Վարանդա:

Այդ քաջ, միևնոյն ժամանակ խելացի պատերազմողը շատ նպաստեց ռուսաց տիրապետութեան տարածուելուն Անդրկովկասում: Դեռ 1803 թուի դեկտեմբեր ամսում, երբ իշ. Ցիցիանովը պաշարեց Գանձակը: Մելիք-Ջումշուդը իւր սեպհական ձիաւորներից կազմած հայկական գնդով կանգնած էր այդ բերդի պարիսպների մօտ: Նրա զօրքերի թւում գտնվում էին Թիֆլիզի հայոց առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսը և Ներսէս վարդապետը, որ վերջը հայոց անմոռանալի Ներսէս Ե-րդ կաթողիկոսը դարձաւ: Այդ եռանդոտ եկեղեցականը, իւր հայրենիքը պարսից լըծից ազատելու համար, մասնակցում էր իշ. Ցիցիանովի արշաւանքներին, որպէս Երկայնաբազուկ-Արղութեան Յովսէփ արքեպիսկոպոսը մի ժամանակ մասնակցում էր կոմս Զուբովի արշաւանքներին: Բերդի պաշարումը երկար տեւեց: Ջաւատ-խանը, որ արդէն ծանօթ է մեր ընթերցողներին, քաջութեամբ պաշտպանվում էր: Վերջը, 1804 թ. 3 յունվարի, ռուսաց և հայոց զօրքերը, սաստիկ հարձակում գործելով պարսպի մի մասը խորտակում են և ներս մտնում: Բերդի մէջ մի քանի ժամ շարունակվում էր կռիւը և կոտորածը, որ դադարեց այն ժամանակ, երբ Ջաւատ-խանը սուրը ձեռքին իւր որդիների հետ ընկաւ:

Այնուհետև Մելիք-Ջումշուդը միւս մելիքների հետ իրանց զօրքերով մասնակցեցին իշ. Ցիցիանովի շիրվանեան և երևանեան արշաւանքներին և ոչ սակաւ ծառայութիւններ ցոյց տուին:

Մելիք-Ջումշուդի խորհրդով և աշխատութեամբ Գանձակի բերդը գրաւելուց յետոյ, Շուշի բերդի Իբրահիմ-խանը՝ Ղարաբաղի մելիքների վաղեմի թշնամին, բոլորովին առանց պատերազմի ընդունեց ռուսաց հպատակութիւնը (1805 թ.):

Իսկ երբ մի քանի ամսից յետոյ (1806 թ. 8 փետ.) իշ. Ցիցիանովը սպանուեցաւ Բագուի Յուսէին-Ղուլի-խանի դաւադրութեամբ *), այդ քաղաքը ներս մտնելու միջոցին,

*) Իշխան Ցիցիանովի սպանման մանրամասնութիւնները յայտնի են Անդրկովկասի պատմութեան մէջ. բայց մեզ՝ հայերիս համար, հետաքրքիր է այն, որ Բագուի ամբողջ հայ հասարակութիւնը պէտք է ռուսաց գլխաւոր հրամանատարի վիճակին ենթարկուէր, եթէ մի բարեսիրտ պարսիկ չազատէր նրանց։ Դեռ Ցիցիանովը Բագուին չհասած, տեղային հայերը ցոյց տուին ռուսներին սաստիկ համակրութիւն և աջակցութիւն այդ բերդը տիրելու համար։ Բացի դրանից մի հայ, որ աւելի մօտ էր Յուսէին-Ղուլի-խանին, և տեղեակ նրա չար դիտաւորութիւններին, իւր գաղտնի նամակով առաջուց իմացում տուեց իշխանին, որ զգուշանայ, որովհետև նրա դէմ դաւադրութիւն կայ։ Իշ. Ցիցիանովը նրա նախազգուշութեան վրայ ուշադրութիւն չդարձրեց և պատժուեցաւ։ Այնուհետև խանը կամեցաւ պատժել Բագուի ամբողջ հայ հասարակութեանը, նրանց ռուսներին ցոյց տուած համակրութեան համար։ Նա խորհրդակցեց քաղաքի մահմեդականների նշանաւորների հետ և ստացաւ նրանց հաւանութիւնը բոլոր հայերին կոտորելու։ Այդ մտքով խանը հրամայեց հայերին հաւաքուել եկեղեցիների մէջ։ Բայց մի պարսիկ հաջի, որ խոհեմ և բարեսիրտ մարդ էր, շտապում է խանի մօտ, և ցոյց տալով նրա բարբարոսութեան վատ հետևանքները, կարողանում է ամոքել նրա բարկութիւնը և ազատում է հայերի կեանքը։ Այնուհետև Բագուի հայերը միշտ մեծ յարգանքով և երախտագիտութեամբ են վերաբերուել դէպի այդ մարդու տունը։

—Նոյն ժամանակ, հէնց որ ռուսաց զօրքերի գլխաւոր հրամանատարի մահուան լուրը տարածուեցաւ, Անդրկովկասի ամբողջ մահմեդական ազգաբնակութիւնը մեծ յուզմունքի մէջ ընկաւ. համարեա ամեն տեղ սկսեցին ապստամբական ցոյցեր անել:

Այդ ժամանակ պարսից զօրքերը գտնվում էին Երասխ գետի աջ ափերի վրայ, պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի անձնական հրամանատարութեան ներքոյ:

Նոյն ժամանակ Շուշի բերդի Իբրահիմ-խանը, չնայելով որ մի քանի ամիս առաջ հպատակութեան երդում էր տուել ռուսաց կառավարութեան, հէնց որ լսեց իշ. Ցիցիանովի մահը, կրկին դաւաճանեց իւր երդմանը: Նա գաղտնի կերպով ուղարկեց իւր որդի Մամադ-Հասան-աղային Աբաս-Միրզայի մօտ, և յայտնելով նրան երկրի թափուր դրութիւնը ռուսաց զօրքերից, այլև մահմեդականների կատաղութիւնը ռուսների դէմ, հրաւիրեց նրան փութով անցնել Երասխը, խոստանալով թէ ինքն էլ կըմիանայ պարսից զօրքերի հետ և կ՚առաջնորդէ նրանց ռուսներին ջարդելու:

Աբաս-Միրզան զօրքերի ահագին բազմութեամբ անցաւ Երասխը և մօտեցաւ Շուշի բերդին: Այնտեղ գտնվում էին մի քանի հարիւր ռուս զինուոր միայն փոքրաթիւ կազակների հետ, փոխ-գնդապետ Լիսանևիչի հրամանատարութեան ներքոյ, որ յայտնի էր տեղացիներին անունով դալի-մայօր, որ նշանակում է գիժ-մայօր:

Աբաս-Միրզան արդէն բանակ էր դրած Շօշի գիւղի *) մօտ գտնուած լեռան բարձրաւանդակի վրայ և այնտեղից պատրաստվում էր ռմբակոծել Շուշի բերդը: Այդ միջոցին Իբրահիմ-խանը, իւր հետ առնելով իւր ընտանի-

*) Շօշի հայաբնակ գիւղը գտնվում է մօտաւորապէս երեք վերստ հեռաւորութեան վրայ Շուշի բերդից:

քը, որ բաղկացած էր 24 հոգուց, գիշերով ծածուկ դուրս եկաւ բերդից, և կամենում էր դիմել դէպի Աբաս-Միրզայի բանակը: Ոչ ոք չկարողացաւ նկատել այդ բացի Մելիք-Ջումշուդից, որին առաջուց յայտնի էին խանի դիտաւորութիւնները: Մելիք-Ջումշուդն այդ ժամանակ իւր հեծելախմբով գտնվում էր բերդի մէջ: Նա անմիջապէս իմացում տուեց փոխ-գնդապետ Լիսանևիչին, և երկուսը միասին վերառնելով իրանց հետ մի խումբ ձիաւորներ, փութով հետամուտ եղան Իբրահիմ-խանին: Նրան բռնեցին կէս ճանապարհի վրայ: Խնայեցին կանանց և երեխաներին միայն, իսկ Իբրահիմ-խանին և հետը եղող նրա բոլոր ազգականներին կոտորեցին *) (1806 թ. մայիս ամսում):

Ղարաբաղի հայոց իշխանութիւնների կործանողը ըսպանուեցաւ: Մելիք-Ջումշուդն առաւ ոչ միայն իւր, այլև բոլոր մելիքների վրէժը Իբրահիմ-խանից: Նրա հայրը՝ Մելիք-Շահնազարը, բարձրացրեց այդ գազանին և բոլոր ղարաբաղցիների անէծքի ու նախատինքի առարկան դարձաւ: Իսկ անպիտան հօր պիտանի որդին քաւեց հօր մեղքերը…: Բայց արդէն շատ ուշ էր…: Իբրահիմ-խանի մահը չէր կարող բժշկել այն վէրքերը, որ ստացել էին Ղարաբաղի մելիքները Շուշի բերդի խաներից…:

Այս բոլոր ծառայութիւնների համար Մելիք-Ջումշուդն ստացաւ գնդապետի աստիճան:

Ահա ինչ է գրում Մելիք-Ջումշուդը իւր 1806 թ. 2 դեկտեմբերի նամակի մէջ Ս. Պետերբուրգ Աղա-Մինաս Լազարեանին.

*) Իբրահիմ-խանի որդի Մէհտի-խանը՝ հիւանդութեան պատճառով չկարողացաւ հետևել հօրը, մնաց Շուշի բերդում և այսպիսով ազատուեցաւ կոտորածից: Ռուսները յետոյ դրան Նրաշնակեցին Իբրահիմ-խանի տեղը:

«Թէև սրանից առաջ մի քանի անգամ պատասխանել եմ ձեր նամակներին, բայց որովհետև չգիտեմ՝ արդեօք հասնո՞ւմ են նրանք ձեր ձեռքը, այդ պատճառով հարկաւոր եմ համարում նորից պատասխանել ձեր բոլոր հարցերին:

«Նախ՝ դուք-դժգոհ էք այն մասին, թէ ինչո՞ւ մեր (մելիքների) անունները չեն յիշւում վրաց կնեազների անունների թւում, որոնք նշանաւոր են գտնուել զանազան կռիւներում:

«Այդ առարկայի մասին թէև ես ինքս վշտացած եմ, բայց դարձեալ կ՚ասեմ, որ մենք՝ Խ ա մ ս ա յ ի մելիքներս աւելի քան թէ նրանք (վրաց իշխանները) գերազանցել ենք պատերազմների մէջ և պէտք է արժանի լինէինք աւելի բարձր պարգևների ու շնորհների,—բայց հանդուցեալ իշխան Ցիցիանովի սրտում արմատացած ատելութիւնը դէպի հայոց ժողովուրդը (թէև Վրաստանում ծնուած հայերին նա վրացիներ էր համարում) թոյլ չէր տալիս նրան հասցնել ի տեղեկութիւն ամենաողորմած Թագաւորի մեր կատարած ամենադժուարին ծառայութիւնները, և այն քաջութիւնները, որ մենք ցոյց տուինք Գանձակի գրաւման ժամանակ, այլև Շիրուանի ու Երևանի արշաւանքների միջոցներում: Այնտեղ իշխանը (Ցիցիանովը) տեսնելով ինձ իմ գեղեցիկ կերպով կազմակերպուած զօրքերի հետ, որ ծառայում էին ռուսաց կառավարութեանը առանց որևէ շահի (ձրի, առանց ռոճիկ ստանալու), խոստացաւ աղերսամատոյց լինել ինձ համար կայսրից դ ր օ շ ա կ բերել տալու, որ կարելի է թէ ստանայի, եթէ չպատահէր իշխանի հետ մի այնպիսի դժբախտութիւն (Բագուի մէջ սպանուելը):

«Իշխան Ցիցիանովի մահից յետոյ ես գտնուելով այնտեղ (Թիֆլիզում) և տեղեակ լինելով պարսիկների բոլոր

չար դիտաւորութիւններին,—և որպէսզի կարելի լինի հաստատել Ռուսաստանի տիրապետութիւնը Ղարաբաղի նոր գրաւած երկրի վրայ,—գրաւոր կերպով բացատրեցի իմ մի քանի խորհրդածութիւններս գեներալ-մայոր Նեսվետայեվին, իսկ ես ինքս անձամբ գնացի Շուշի բերդը և միացայ ռուսաց զօրքերին:

«Երբոր պարսիկները լսեցին իշխան Ցիցիանովի մահուան լուրը, իսկոյն՝ Բաբա-խանի *) որդի Աբաս-Միրզայի առաջնորդութեամբ, նրանց բազմաթիւ զօրքերը թափուեցան Ղարաբաղի վրայ, և միանալով տեղային թաթարների հետ, կամենում էին կոտորել ռուսաց ամբողջ զօրքերը և այն բոլոր հայերին, որ գտնվում էին բերդում (Շուշի): Այդ մտքի հետ համաձայն էր նաև Շուշիի տիրապետող Իբրահիմ-խանը, և այդ պատճառով էլ ստացաւ իւր արժանի պատիժը (սպանուեցաւ):

«Միևնոյն ժամանակ գեներալ-մայոր Նեսվետայեվին հաճոյ թուեցան իմ գրաւոր առաջադրութիւնները, և նա իմ խորհրդով ուղարկեց Տրոյիցկիյ զօրագունդը Ղարաբաղ՝ յօգնութիւն այնտեղ գտնուած ռուսաց զօրքերի: Յիշեալ զօրագունդը, Գանձակից անցկենալու միջոցին, առաւ իւր հետ գնդապետ Կարեագինին նրա զօրքերի հետ և շտապեց մեզ մօտ (Շուշի) օգնութիւն հասցնելու: Բայց դեռ ճանապարհի վրայ գտնուած ժամանակ նրանք գրեցին ինձ, որ իմ ձիաւորների խմբով դուրս գամ նրանց առաջ: Թողնելով իմ զօրքից բաւականաչափ թուով բերդի (Շուշիի) պահպանութեան համար, ես վեր առայ իմ ձիաւորների մի մասը և գնացի, միացայ նրանց հետ. իսկ երեք օրից յետոյ մենք ամենքս միասին կռվում էինք, և Ամենաբարձրեալի օգնութեամբ կատարելապէս յաղթեցինք

*) Բաբա-խան կամ Բաբա-խան-շահ կոչում էին պարսից Ֆաթալի-շահին:

մեր թշնամիներին (պարսիկներին) և նրանց հալածեցինք մի այնպիսի արագութեամբ, որ (Աբաս-Միրզայի) 20,000-ի չափ հեծելազօրքը սարսափելի երկիւղով անցաւ Երասխի միւս կողմը։

«Գեներալ-մայօր Նեբօլսինը, միևնոյն Տրոյիցկիյ զօրագնդի շէֆը, և գնդապետ Կարեագինը՝ Եգերեան զօրագընդի շէֆը, տեսան ինձ կռուելու ժամանակ, տեսան իմ և իմ զօրքի քաջութիւնները, վերջապէս տեսան իմ հաւատարմութիւնը, — որովհետև հացի պակասութեան ժամանակ ես մատակարարեցի պաշար ռուսաց զօրքերին և ցոյց տուի նրանց բազմաթիւ ծառայութիւններ, — այդ բոլորը խիստ հաճելի թուեցան նրանց և այդ պատճառով հաղորդագրելով իմ մատուցած բոլոր ծառայութիւնների մասին, նրանք խնդրեցին գեներալ-մայօր Նեսվետայեվից, որ նա հասցնէ ի տեղեկութիւն մեր ամենաողորմած Թագաւորին։ Բայց դժբախտաբար և ինձ անյայտ պատճառներով նա (Նեսվետայեվը) չներկայացրեց։

«Իսկ երբոր ես եկայ այստեղ (Թիֆլիզ), այն ժամանակ խնդիր մատուցի նորին պայծառափայլութեան կոմս Ի. Վ. Գուդովիչին, որ, յոյս ունիմ, այն սիրոյ համար, որ ունի դէպի ձեզ և դէպի մեր ժողովուրդը (որին նա խնամք է ցոյց տալիս) կըվարձատրէ ինձ այն ամենի համար, ինչ որ ես մինչև այսօր կատարել եմ, ի հարկէ ես զրկուած չեմ լինի այդ դէպքում Ամենաբարձրեալի օգնութիւնից և ձեր ողորմածութիւնից։

«Երկրորդ՝ դուք գրում էք, թէ ինչո՞ւ մենք չենք կազմակերպում կանոնաւոր զօրագնդեր։ Դուք հաւատացած եղէք, որ մենք հեշտութեամբ կարող էինք անել այդ և այն ևս առանց ուրիշի օգնութեան, եթէ մենք այժմ տէր լինէինք մեր առաջուայ հարստութեան և ժողովրդին, որ սովի և ժանտախտի պատճառով ցրիւ եկաւ դէպի

Շիրվան և Վրաստան։ Իմ հայրը (Մելիք-Շահնազարը) և մեր նախնիքը միշտ պահում էին իրանց մօտ այդպիսի զօրագնդներ, որոնց կազմակերպելը դուք ինձանից էք պահանջում։ Բայց այն ժամանակ նրանք տիրում էին ամբողջ Ղարաբաղի վրայ, և բոլոր հայերն ու թուրքերը նրանց հպատակներն էին։ Ուրեմն եթէ դուք ցանկանում էք, որ հայոց ժողովուրդն ազատուէր բարբարոսների (թաթարների) բռնակալութիւնից, եթէ ցանկանում էք, որ բոլորը (գաղթականները) կրկին վերադառնային դէպի իրանց հայրենիքը, պահպանէին կանոնաւոր զօրագնդեր և լաւ ծառայութիւններ մատուցանէին մեր ամենաողորմած Թագաւորին, պէտք է դուք միջնորդէք. 1-ին՝ հրամայէին մեր ցրիւ եկած ամբողջ ժողովրդին, որոնք գտնվում են Շիրվանում և Վրաստանում, որ նրանք կրկին վերադառնային իրանց հայրենիքը (Ղարաբաղ). 2-րդ՝ որ նրանք ազատ լինէին բոլոր հարկերից և տուրքերից երեք տարի ժամանակով. իսկ 3-րդն այն է, որ հայերը չլինէին թուրքերի իշխանութեան ներքոյ, որովհետև դրանք չեն կարող միշտ հաւատարիմ մնալ մեր քրիստոսապսակ Թագաւորի կառավարութեանը *), այլ ընդհա-

---

*) Ռուսները Ղարաբաղի մելիքների ջանքերով տիրելով Ղարաբաղին, նոյն մելիքների վաղեմի թշնամի Իբրահիմ-խանին թողեցին որպէս այդ երկրի գլխաւոր կառավարիչ։ Իբրահիմ-խանը դաւաճանեց ռուսներին և սպանուեցաւ։ Նրա տեղը նշանակեցին դաւաճանի մեծ որդուն՝ Մէհտի-խանին, աւելի ընդարձակ իրաւունքներով. դա ևս աւելի մեծ դաւաճանութիւն գործեց. 1822 թուին Ղարաբաղից փախաւ Պարսկաստան և պարսից զօրքերի հետ վերադառնալով, սկսեց պատերազմել ռուսների հետ։ Անհասկանալի է, թէ նոյն ժամանակուայ ռուսաց պաշտօնակալներն, ինչ էին գտնում այդ նենգաւոր խաների մէջ, որ նրանց գերադասում էին հայոց մելիքներից, որոնք ամենայն զոհաբերութեամբ անձնատուր էին եղած Ռուսաստանին։

կուակն աշխատում են օրըստօրէ ուժաթափ անել Հայոց ժողովուրդը, որպէսզի դիւրութեամբ կարողանան կատարել իրանց չար դիտաւորութիւնները. 4-րդ՝ որ նշանակէին մեզ համար մի գումար, որով մենք կարողանայինք պատրաստել հարկաւոր եղած զէնքերը այն զօրագնդերի համար, որ պէտք է կազմակերպել, որպէսզի միշտ առանց որեւիցէ պակասութեան պատրաստ լինէին պատերազմ գընալու ռուսաց զօրքերի հետ:

«Եթէ մեր ամենաողորմած Թագաւորը ցոյց կըտայ մեզ այսպիսի գթածութիւն, այն ժամանակ դրանով Նա իրականապէս կըվերանորոգէ հայերի ուժերը և կըհարկադրէ նրանց ամեն կողմից դիմել Նորին Կայսերական Մեծութեան քաղցր հովանաւորութեան ներքոյ:

«Ես հարկաւոր չեմ համարում այդ մասին երկար ձանձրացնել ձեզ իմ խնդիրքներով, որովհետև դուք հազար անգամ աւելի քան թէ ես, աշխատում էք Հայոց ժողովրդի ծաղկելու համար, և գիշեր ու ցերեկ չէք դադարում այդ մասին հոգ տանելուց: Դրա համար ես յուսով եմ, որ առանց իմ խնդրելու էլ դուք եռանդով կ'աշխատէք այդ գործի ի կատար ածելու համար, որով կըթողնէք ձեզանից յետոյ յաւիտենական յիշատակ՝ ձեր մի այսպիսի բարեգործութեան համար»...:

Ստորագրած է Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարեան *):

1806 թուին, Ղարաբաղի տիրապետող հինգ մելիքները **), բոլորը միասին համարեա միեւնոյն բովանդակութեամբ

*) Թէ այս նամակը և թէ հետևեալը, որից քաղուածքներ ենք անում, թարգմանուած են պ. Երիցեանի «Кавказсвая Старина» ամսագրի № 2. 1872 թուի տետրակից:

**) Այդ նամակին ստորագրել են. 1. Վարանդայի տիրապետող փոխ-գնդապետ Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազա-

նամակ են գրում Աղա-Մինաս Լազարեանին Ս. Պետերբուրգ: Այդ նամակի մէջ մելիքները դարձեալ արտայայտում են միեւնոյն գանգատները, թէ նրանց մատուցած ծառայութիւնները ոչ միայն չեն գնահատվում, այլ մինչև անգամ հարկաւոր չեն համարում հաղորդել ի տեղեկութիւն թագաւոր կայսրի, եւայլն:

«Դուք (Լազարեանը) ասում էք, թէ ափսոսում էք և միանգամայն զարմանում էք, որ մեր անունները և մեր մատուցած ծառայութիւնները ոչ մի տեղ չեն յիշատակվում, և թէ մեր աշխատութիւնները ի զուր կորչում են: Այդ հարցին մենք պատասխանում ենք, թէ ահա հէնց դրա մէջն է կայանում մեր ցաւն ու դժբախտութիւնը. որովհետև մենք մինչև մեր արեան վերջին կաթիլը չենք խնայում մեր անձը ռուսաց հայրենիքի համար և միշտ աշխատում ենք, որ մեր ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքները հասնէին մինչև Նորին Կայսերական Մեծութեան ամենաողորմած գահը, բայց ինչ օգուտ, որ այդ բոլորը մնում է ծածկուած վարագոյրի տակ»:

Յետոյ իրանց նամակում ի միջի այլոց մելիքները խնդրում են. 1-ին՝ որ թոյլ տրուի նրանց հաւաքել իրանց զանազան երկրներում ցրիւ եղած ժողովուրդը Ղարաբաղում, իրանց՝ մելիքների կառավարութեան ներքոյ. 2-րդ՝ որ նրանք ազատ լինէին խանի իշխանութիւնից և նրանց ժողովուրդը բաժանուած լինէր թուրքերից, և խանի փոխարէն նշանակուած լինէր մի ռուս աստիճանաւոր. 3-րդ՝

րեանը, 2. Ջրաբերդի տիրապետող Մելիք-Ադամ Մելիք-Մէջլումեանը, 3. Գիւլիստանի տիրապետող Մելիք-Բաղիրը (հանգուցեալ Մելիք-Ֆրէյդունի եղբայրը) և Մելիք-Աբով Մելիք-Բէգլարեանը, 4. Խաչէնի տիրապետող Մելիք-Ալլահվերդին և Մելիք-Միրզախանեանը և 5. Տիզակի տիրապետող Մելիք-Ղահրաման Մելիք-Աւանեանը:

որ մելիքներին տրուէր, որպէս առաջուց խոստացել էին նրանց, նոյնպիսի ամենաողորմած արտօնութիւններ, որպիսին վայելում էր Նախիջևան քաղաքը (Դօնի վրայ), այսինքն նրանց օրէնքները և դատարանները հիմնուած լինէին իրանց երկրի վաղեմի սովորութիւնների և աւանդութիւնների վրայ: Եւ եթէ նրանց այսպիսի արտօնութիւններ տային, մելիքները խոստանում էին կազմել աւելի կանոնաւոր զօրքեր՝ օգնելու համար ռուսներին ամեն դէպքերում: Բացի դրանից, խոստանում էին որպէս հարկ վճարել ռուսաց կառավարութեան իւրաքանչիւր տարի 4000 չետվերտ հաց և 4000 ոսկի փող:

Այդ նամակից երևում է, որ մելիքներն այժմ իրանց պահանջները բաւական չափաւորել էին, նրանք այլևս չէին մտածում Ղարաբաղի վաղեմի հայկական իշխանութիւնները վերականգնելու մասին, այլ պահանջում էին մի տեսակ ինքնավարութիւն, ռուսաց հովանաւորութեան ներքոյ, խոստանում էին պահպանել իրանց երկիրը իրանց զօրքերով, ամեն տարի վճարելով մի որոշեալ քանակութեամբ հարկ:

Մելիքների զօրութեան թուլանալու գլխաւոր պատճառը պէտք է որոնել նրանց հպատակների գաղթականութեան մէջ: Սովը, ժանտախտը, և զանազան քաղաքական հանգամանքներ նրանց ցիրուցան արեցին դէպի ամեն կողմը: Ամեն տեղ նրանց փայլուն խոստմունքներ արեցին և ամեն տեղ նրանք խաբուեցան իրանց յոյսերի մէջ:

Կրկին ի մի վայր գումարել այդ ժողովուրդը, հայրենի հողի վրայ՝ նրանց ոչ միայն թոյլ չէին տալիս, այլ մինչև անգամ արգելում էին: Այդ քաջ ժողովուրդն աւելի հարկաւոր էին համարում այն երկրների պահպանութեան համար, ուր որ գետեղուած էին: Թէև Ղարաբաղի գաղ-

թականների մի մասը Վրաստանից տեղափոխուեցաւ իւր հայրենիքը, բայց դարձեալ դեռ բաւական թուով մնացել էին այնտեղ: Շամախու գաւառը գաղթողներից դեռ ոչ ոք չէր վերադարձել:

Ամենակորստաբերն այն էր, որ գաղթականութեան պատճառով Ղարաբաղի հայ ժողովրդի բացակայութեան ժամանակ նրանց երկրները, գիւղերը, հողերը մնացին անտէր, դատարկ: Այդ դէպքից օգուտ քաղելով Շուշի բերդի Իբրահիմ-խանը և նրա յաջորդ Մէհտի-խանը՝ գրաւեցին մելիքների երկրները և բնակեցրին մահմեդականներով: Երբ Ղարաբաղի գաղթականների մի մասը կրկին վերադարձաւ իւր հայրենիքը, մելիքներին մեծ ջանք էր հարկաւոր, որ կարողանային խաներից յետ խլել իրանց գիւղերն ու հողերը, և նոր բնակեցրած մահմեդականներին հեռացնելով, նրանց տեղը հաստատէին երկրի վաղեմի բնակիչներին—հայերին: Ռուսաց նոր տիրապետութիւնն այդ ժամանակ դեռ այն աստիճան անհաստատ դրութեան մէջ էր, որ ռուսները ոչ միայն ժամանակ չունէին, այլ մինչև անգամ հարկաւոր չէին համարում մելիքների և խաների կալուածական վէճերի մէջ մտնել, և այդ էր պատճառը, որ մելիքներից շատերը կորցրին իրանց ընդարձակ կալուածները, կամ ձեռք բերեցին նրանց մի մասը միայն: Ինչպէս ասում են, խաների «խաթրին» այդ ժամանակ չէին ուզում դիպչել, իսկ հաւատարիմ, քրիստոնեայ մելիքներին շողոքորթելու հարկ չկար:

XLI

Մնում է մեզ մի քանի խօսք ասել Գիւլ-Եաթաղ բերդի Մելիք-Ալլահվերդեան Մելիք-Ռուստամի մասին, և մենք շուտով կըվերջացնենք Խամսայի մելիքութիւնների պատմութիւնը:

Ընթերցողը յիշում է, որ Մելիք-Ռուստամը Խամսայի տիրապետող մելիքների կարգից չէր, այլ Ճուշի բերդի մահմեդական խաներին մատուցած ծառայութիւնների համար մելիքութիւն ստացաւ։ Նա իւր զօրքերով օգնեց Իբրահիմ-խանին Գանձակի պաշարման ժամանակ և Մելիք-Մէջլումի սպանման պատճառը դարձաւ (տես գլ. XXXIII)։ Նա Աղա-Մամադ-խանի սպանուելուց յետոյ օգնեց Իբրահիմ-խանին, և վերջինը կրկին Ճուշի բերդի տէրը դարձաւ (տես գլ. XXXIV)։ Նա ուրիշ շատ ծառայութիւններ կատարեց Ճուշի բերդի բռնակալի օգտին ի վնաս հայոց մելիքների. այդ բոլորն իրանց տեղերում պատմել ենք։

Ղարաբաղի մելիքների վերջին գաղթականութեան ժամանակ Մելիք-Ռուստամը իւր հայրենիքից չհեռացաւ։ Նրա յարաբերութիւնները Ճուշի բերդի Իբրահիմ-խանի հետ այնքան լաւ էին, որ նա կարիք չունէր օտար երկրներում ապահովութիւն որոնելու։ Բայց միւս կողմից նրան սպառնում էր մի վտանգ, այն է՝ Գանձակի Ջաւատ-խանի վրէժխնդրութիւնը։

Ջաւատ-խանը չէր կարող մոռանալ, որ նա Իբրահիմ-խանի հետ միանալով, պաշարեց իւր բերդը, դաւաճանութեամբ իւր աներ Ապրես-աղային մտցրեց բերդի մէջ, տեղային հայերին ապստամբացրեց իւր դէմ, Մելիք-Մէջլումին սպանել տուեց, և այլն։

1799 թուին, այսինքն Մելիք-Մէջլումի մահից երեք տարի յետոյ, Ջաւատ-խանը յարմար ժամանակ գտաւ Մելիք-Ռուստամից վրէժխնդիր լինելու։ Նա իւր զօրապետներից մէկի առաջնորդութեամբ, որին կոչում էին Մըրդ-հաջի, որ աւելի հսկայ էր, քան թէ հասարակ մարդ, բազմաթիւ ասպատակներ է ուղարկում Մելիք-Ռուստամի երկիրն աւերակ դարձնելու և նրան գերի բերելու համար։ Մելիք-Ռուստամն այդ լսելով, վեր է առնում իւր ձիա-

ւորների խումբը և դուրս է գալիս թշնամու հանդէպ։ Մելիքի հետ է լինում իւր քաջ նիզակակից Տէր-Յարութիւն քահանան *)։ Նրանք հանդիպում են թշնամուն Սուլթանի տափ կոչուած դաշտում **)։ Թշնամին մի քանի անգամ աւելի բազմաթիւ է լինում քան մելիքի զօրքերը։ Բայց որովհետև այդ ժամանակուայ կռիւների մէջ հակառակ կողմերի բախտը վճռվում էր շատ անգամ առաջնորդող անձինքների մենամարտութեամբ, քան թէ զօրքերի հաւաքական պատերազմով, այդ պատճառով Մըրդ-հաջին կայծակի արագութեամբ նետվում է Մելիք-Ռուստամի վրայ։ Վերջինը ժամանակ չէ տալիս նրան իւր մօտ հասնելու և հեռուից հրացանի գնդակով ցած է գլորում նրա ձին, և հսկան մնում է ձիու տակը։ Այդ միջոցին Մելիք-Ռուստամն արծուի արագութեամբ վրայ է հասնում, թուրը մերկացնում և պատրաստվում է սպանել նրան։ Բայց հսկան աղաչում է խնայել իւր կեանքին. յայտնելով թէ անձնատուր է լինում։ Մելիքը մեծահոգութեամբ խղճում է նրան, սակայն իւր թուրը պատեանում դնելու միջոցին, ուխտազանց թուրքը, որ թաւալուած էր նրա ոտների մօտ, տակից յանկարծ արձակում է ատրճանակը և մելիքին մահացու վէրք է պատճառում։ Այդ միջոցին վրայ է հասնում մելիքի նիզակակից Տէր-Յարութիւնը, գտնում է նրան հոգեվարքի մէջ։ Թողնելով նրան նոյն դրութեան մէջ, յարձակվում է Մըրդ-հաջիի վրայ և սպանում է նրան։ Բայց ինքը ևս սպանվում է նոյն կռուի

---

*) Այդ Տէր-Յարութիւնը Աստուածատուր քահանայի որդին և նշանաւոր Դալի-Մահրասայի տոհմից էր, Ջրաբերդի Մեծշէն կոչուած գիւղից, ուր մինչև այսօր ապրում են Դալի-Մահրասայի ժառանգները և յայտնի են իրանց քաջութեամբ։

**) Սուլթանի տափը գտնվում է Մարգակերտ գիւղի մօտ, Թարթար գետի աջ ափի մօտ։

մէջ, երբ կատաղած մահմեդականները՝ տեսնելով իրանց առաջնորդի գլխակը, աւելի սաստկացնում են կռիւը:

Մելիք-Ռուստամի գլուխը կտրում են, տանում Գանձակ և նուիրում նրա թշնամի Ջաւատ-խանին, որից տեղային հայերը խնդրելով առնում են քաջ մարդու գլուխը և թաղում իրանց եկեղեցու դռան մօտ: Իսկ մարմինը թաղվում է իւր հայրենի Գիւլ-Եաթաղ բերդի գերեզմանատանը *):

Մելիք-Ռուստամը որդի չթողեց **), այդ պատճառով նրա մահից յետոյ մելիք եղաւ նրա եղբայր Միրզա-բէկի որդի Բոլշանը:

Մելիք-Բոլշանը իւր նախորդների նման բարեկամ չմնաց Ճուշի բերդի խաներին և մասնակցում էր ռուսաց կռիւներին խաների դէմ: Գանձակի պաշարման ժամանակ նա իւր խմբով գտնվում էր իշ. Ցիցիանովի բանակի մէջ և քաջութեամբ կռվում էր Ջաւատ-խանի դէմ, որի հետ ունեցած թշնամութիւնը՝ թէ Մելիք-Ռուստամի սպանման պատճառով և թէ առաջ, մեր ընթերցողներին յայտնի է:

Երբ իշ. Ցիցիանովը գրաւեց Գանձակը, Մելիք-Բոլշանը թողեց Ջրաբերդը և իւր ընտանիքով տեղափոխուեցաւ այդ քաղաքը, վայելում էր իշ. Ցիցիանովի առանձին համակրութիւնը:

Այնուհետև նա շատ ծառայութիւններ արաւ ռուսաց զօրքերին՝ թէ նիւթապէս և թէ իւր քաջ ձիաւորների խմբերով օգնելով նրանց: Երբ գնդապետ Կարեագինը՝

---

*) Մելիք-Ռուստամի և նրա քաջ նիզակակից Տէր-Յարութիւն քահանայի շիրիմները կից են, դրած են միմեանց մօտ. երկուսի տապանաքարերը ևս կրում են միևնոյն թուականը՝ հայոց ռ. մ. խ. ը. (1799):

**) Մելիքի մահից չորս ամիս յետոյ նրա կինը՝ Վարթխաթունը, ծնեց Բալա-բէկին:

Ճուշի բերդի մօտ ջարդուելով պարսից բազմաթիւ զօրքերից, փախաւ և ամրացաւ Շահ-բուլաղի բերդի *) մէջ, այստեղ նրա հրամանատարութեան ներքոյ յանձնուած ռուսաց զօրագունդը, ամեն կողմից պաշարուած պարսից զօրքերով, անպատճառ կըոչնչանար քաղցածութիւնից, եթէ Մելիք-Բոլշանը նրանց օգնութիւն չհասցնէր: Նա իւր ձիաւորների խմբով պատառեց, անցաւ պարսից զօրքերի միջով և Կարեագինի զօրագնդին ուտեստի պաշար հասցրեց:

Այդ բոլորն այն ատրճան հռչակեցին Մելիք-Բոլշանի անունը, որ ռուսները կամենում էին ուղարկել նրան իւր ձիաւորների հետ դէպի Կարսի կողմերը տաճկաց սահմանների վրայ: Երբ նա պատրաստուել էր գնալու, մի գիշեր Գանձակի կամուրջից անցկենալու միջոցին, անյայտ ձեռքից հրացանի մի գնդակ արձակուեցաւ և նա մէջքից վէրք ստացաւ:

Մելիք-Բոլշանը ոչ ոքի վրայ չէր կարող կասկածել, բացի Մելիք-Մէջլումի որդի փոքր Մելիք-Աթամից, որ այդ ժամանակ Գանձակում էր գտնվում: Հին տոհմային թշնամութիւնը նորից զրգռուեցաւ երկու ոխերիմ ընտանիքների մէջ, որոնք, որպէս տեսանք մեր պատմութեան ընթացքում, շատ չարիքներ էին գործել միմեանց դէմ: Մելիք-Բոլշանը գանգատուեց և Գանձակի ռուս բերդապահը կալանաւորեց փոքր Մելիք-Աթամին: Բայց երբ ոչինչ չհաստատուեցաւ, մի քանի օրից յետոյ Մելիք-Աթամին արձակեցին: Այդ սաստիկ վիրաւորեց Մելիք-Բոլշանին և նա բողոքեց ռուսաց բարձր կառավարութեանը բերդապահի դէմ: Վերջինս սաստիկ յանդիմանութիւն ստացաւ

---

*) Շահ-բուլաղի բերդը մի ամայի բերդ էր այդ ժամանակ, կառուցած Թառնագիւրտի (Տիգրանակերտի) հին աւերակների վրայ: Այդ բերդը շատ մօտ է Ճուշի բերդին:

և մի քանի օր տնային բանտարկութեան ենթարկուեցաւ:

Բայց երբ իշ. Ցիցիանովը Բագուի մօտ սպանուեցաւ, այնուհետև Մելիք-Բոլշանը կորցրեց իւր պաշտպանին, և նրա յարաբերութիւնները Գանձակի բերդապահի հետ հետըզհետէ թշնամական դարձան: Մելիք-Բոլշանը մտածեց հեռանալ Գանձակից: Նա իւր հայրենիքը՝ Ջրաբերդ գնալ չկարողացաւ, որովհետև Շուշի բերդի Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի հետ նոյնպէս լաւ յարաբերութիւնների մէջ չէր: Կարեագինի անցքի պատճառով նա հրաւիրել էր իւր վրայ Շուշի բերդի խաների ատելութիւնը, որոնք թէև ռուսներին առերես հպատակութիւն էին ցոյց տալիս, բայց սրտով կապուած էին պարսիկների հետ:

Իւր անձնանուէր, բայց չվարձատրուած ծառայութիւնների համար վշտացած, Մելիք-Բոլշանը թողեց Գանձակը և գնաց Ճաքի Դաշ-բուլաղ գիւղը, որ հիմնել էր մի ժամանակ (տես գլ. XXVII) նրա հօրեղբայր Մելիք-Ռուստամը, և այնտեղ առանձնացաւ, իրան առժամանակ հեռու պահելով պատերազմի դաշտից: Դաշ-բուլաղում դեռ բնակվում էին Մելիք-Ռուստամի Ջրաբերդից տարած հայ գաղթականները: Մելիք-Բոլշանը նրանց իւր հպատակութեան ներքոյ առաւ և խաղաղ կեանք էր վարում: Այնտեղ մի քանի տարուց յետոյ վախճանուեցաւ նա այն վէրքի պատճառած հիւանդութիւնից, որ ստացել էր Գանձակի կամուրջի վրայ: Նա թողեց մի որդի Ալլահվերդի-բէկ անունով, որ այդ տոհմի մէջ Մելիք-Ալլահվերդի II-ն էր*), որի հետ այդ տոհմի մելիքութիւնը վերջացաւ:

Խօսելով Կարեագինի անցքի մասին, մենք չենք կարող չյիշել մի քաջ տղամարդի անուն, որ նշանաւոր ե-

*) Մելիք-Ալլահվերդի II-ից մնացին երեք որդի՝ Միսայէլ-բէկ, Ղահրաման-բէկ և Մէջլում-բէկ:

ղաւ ռուսաց զանազան կռիւների մէջ: Դա էր կապիտան Մելիք-Վանի Աթաբէկեանը:

Թէև Աթաբէկեանները հայոց հին ազնուականների ծագումից էին, բայց Վանիի հայրը, Զարգար-Թունին (Յարութիւն) մի հասարակ արհեստաւոր էր, պարապում էր ոսկերչութեամբ: Վանին իւր պատանեկութեան հասակում աշխատում էր հօր արհեստանոցում և նրա լաւ օգնականն էր: Բայց այդ զբաղմունքը շուտով ձանձրացրեց նրան, երբ Ղարաբաղում ամեն րոպէ լսվում էր զէնքի շառաչիւնի ձայնը, որոտում էր պատերազմների աղմուկը. Նրա տոհմային արիւնը եռ եկաւ, մտածեց թողնել ոսկերչի փուքսն ու մուրճը, վճռեց զէնք կրել և նետուել կռուի դաշտը: Նա առանց իւր դիտաւորութիւնը յայտնելու իւր ծնողներին, ծածուկ հեռացաւ հայրենի տնից: Մի ժամանակ իմացան, որ Վանին Ջրաբերդի Մելիք-Բոլշանի մօտ ծառայութեան է մտել, նրա հեծելազօրքի խմբերից մէկի գլխաւորն է դարձել և կոչվում է Վանի-խւզբաշի (հարիւրապետ Վանի):

1804 թուին Ջրաբերդի բնակիչներից 300 ընտանիք, Իբրահիմ-խանի գազանութիւնից ազատուելու համար, գաղթեցին Գանձակ և բնակուեցան այդ քաղաքի շրջակայքում: Տօթի և անսովոր կլիմայի պատճառով նոյն տարուայ ամառն այդ գաղթականներից մօտ 500 հոգի մեռան, մնացածները փախան Գանձակի գաւառի Ոսկանապատ գիւղը, ուր օդը համեմատաբար աւելի հովասուն էր:

Այդ գաղթականների հետ գտնվում էր և Վանի-խւզբաշին: Գանձակում նա ծանօթացաւ գնդապետ Կարեագինի հետ այն ժամանակ, երբ Կարեագինին հրամայուած էր Շուշի բերդին օգնութեան հասնել: Այդ այն ժամանակն էր (1805 թ.), երբ պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան բազմաթիւ զօրքերով պաշարել էր Շուշի բերդը, և տե-

ղային Իբրահիմ-խանը, թէև ռուսաց կառավարութեանը հպատակութեան երդում էր տուել, բայց հէնց որ Աբաս-Միրզայի զօրքերը մօտեցան Շուշի բերդին, նա իւր ընտանիքով դիմեց ռուսաց նենգաւոր թշնամու՝ Աբաս-Միրզայի բանակը և կէս ճանապարհի վրայ սպանուեցաւ Մելիք-Ջումշուդի և մայոր Լիսանևիչի ձեռքով (տես գլ. XL)։ Բայց Շուշին դարձեալ պաշարուած մնաց Աբաս-Միրզայի բազմաթիւ զօրքերով։ Մայոր Լիսանևիչը և Մելիք-Ջումշուդը, փակուած բերդի մէջ, ունէին իրանց ձեռքի տակ խիստ աննշան թուով զինուորներ՝ թշնամուն ընդդիմադրելու համար։ Նրանց գլխաւորապէս օգնում էին բերդի մէջ բնակուող հայերը և դրսից օգնութիւն էին սպասում։

Օգնութիւնը պիտի հասցնէր գնդապետ Կարեագինը, որ արդէն Գանձակից ճանապարհ էր ընկել և հայ հեծելախմբով նրան առաջնորդում էր Վանի-իւզբաշին։ Ռուսաց զօրախումբը բաղկացած էր 600 զինուորից և ունէր երկու թնդանօթ միայն։ Նրանք Գարգար գետի մօտ հանդիպեցին պարսից առաջապահ զօրքերին, թուով աւելի քան 10,000, որ գտնվում էին Փիր-Ղուլի-խանի հրամանատարութեան ներքոյ։ Կռիւն սկսուեցաւ յիշեալ գետի ափերի մօտ։ Չնայելով որ թշնամու զօրքը թուով անհամեմատ աւելի էր, քան թէ ռուսաց զինուորները և Վանի-իւզբաշու հեծելախումբը, այնուամենայնիւ պարսիկներն սկզբում սարսափելի կերպով ջարդուեցան, և իրանց թնդանօթներն ու այլ ռազմամթերքը թողնելով պատերազմի դաշտի վրայ, պատրաստվում էին փախչել, երբ նրանց օգնութեան հասաւ ինքը Աբաս-Միրզան աւելի բազմաթիւ զօրքերով։ Վանի-իւզբաշու հեծելախումբը և ռուսաց զինուորները մի քանի օր քաջութեամբ պաշտպանվում էին. բայց ի՞նչ կարող էր անել մի բուռն զօրքը Աբաս-Միրզայի ահագին բազմութեան դէմ։ Կարեագինը վէրք ստացաւ.

նրա զինուորներից կէսը չմնաց, մեծ մասն ընկաւ կռուի դաշտում, մնացածներն ամրացան մերձակայ Շահ-Բուլաղի ամայի բերդում *)։

Ռուսաց զօրքը բոլորովին կոչնչանար այդ ամայի բերդի մէջ՝ թէ քաղցածութիւնից և թէ թշնամու կրակից, եթէ ութն օրուայ սարսափելի պաշարումից յետոյ Վանի-իւզբաշին նրանց գիշերով դուրս չբերէր այնտեղից և չազատէր բոլորին՝ փախցնելով հայոց Մոխրաթաղ գիւղը։ Այստեղ նա իւր սեպհական ծախքով բաւական ժամանակ պահեց և կերակրեց ռուսաց զօրքերին, մինչև նրանք նոր օգնութիւն ստացան, և Աբաս-Միրզայի ահագին զօրութիւնը ցրիւ տալով, հալածեցին մինչև Երասխ գետի աջ կողմը։ Այդ կռիւների ժամանակ մեծ քաջութիւններ գործեցին Մելիք-Ջումշուդը, Մելիք-Ռովշանը և Վանի-իւզբաշին։

Այնուհետև Վանի-իւզբաշին իւր սեպհական հեծելախմբով մասնակցում էր ռուսաց զանազան կռիւների մէջ և ամեն տեղ յայտնվում էր իւր զարմանալի քաջութիւններով։ 1812 թուին ձմեռը Աբաս-Միրզան զօրքերի ահագին բազմութեամբ կրկին անգամ յարձակուեցաւ Ղարաբաղի վրայ։ Այդ ժամանակ ռուսաց Տրօյիցկիյ գնդի ջոկատը (բատալիօն) մայոր Փինէի զօրապետութեան ներքոյ, գտնվում էր Թարթար գետի մօտ, Սուլթան-Բուդ կոչուած ձմերանոցում։ Պարսից հեծելազօրները Ջաֆար-Ղուլի-խանի **) առաջնորդութեամբ յարձակվում են յիշեալ ձմերանոցի

---

*) Այդ ժամանակն էր, որ Մելիք-Ռովշանը՝ ուտեստի պաշար հասցնելով, ազատեց նրանց սովամահ լինելուց։ Իսկ Մելիք-Ջումշուդը, Շուշի բերդից իւր ձիաւորների խմբով վրայ հասնելով, ազատեց նրանց իսպառ կոտորուելուց։

**) Ջաֆար-Ղուլի-խանը Մամադ-Հասան-աղայի որդին էր, իսկ այդ վերջինը Շուշի բերդի Իբրահիմ-խանի որդին։

վրայ և ջարդում ռուսաց ամբողջ զօրագունդը: Այդ միջոցին Ձուշի բերդից օգնութիւն ուղարկեցին Վանի-խուզբաշուն 200 ռուս զինուորով, 2 թնդանօթով և իւր սեպհական հայ ձիաւորներով: Բայց մինչև նրա հասնելը պարսիկները գործն արդէն վերջացրել էին: Վանի-խուզբաշին այդ տեղեկութիւնն ստացաւ կէս ճանապարհի վրայ այն ժամանակ, երբ պարսիկները վերադառնում էին կոտորածից և պատահեցան նրան: Նա ստիպուեցաւ ամրանալ Ձահ-Բուլաղի բերդում, որ իսկոյն պաշարուեցաւ Ջաֆար-Ղուլի-խանի զօրքերով: Մեծ քաջութիւն էր հարկաւոր Վանի-խուզբաշուն, որ կարողանար իւր փոքրաթիւ զօրքով պատերազմել պարսից ահագին բազմութեան դէմ, իսկ այդ քաջութիւնն ունեցաւ նա, մի քանի օր շարունակ պատասխանելով թշնամու ամեն կողմից տեղացող կրակներին:

Վերջը թնդանօթների հարուածներից բերդի դռները խորտակվում են, պարսից զօրքերը կատաղութեամբ ներս են թափվում, բայց մեծ է լինում նրանց զարմացքը, երբ բերդի մէջ ոչ ոքի չեն գտնում: Վանի-խուզբաշին մի օր առաջ իւր զօրքերը գիշերով դուրս էր բերել բերդից և լեռների վրայով, սարսափելի բարձրաւանդակներից տարել էր հայոց Փարուղ կոչուած գիւղը: Բերդի մէջ թողել էր նա իւր մարդկանցից մի քանի հոգի միայն, որոնք թշնամուն խաբելու համար ժամանակ առ ժամանակ պատասխանում էին: Հէնց որ պարսիկները ներս մտան, այդ մարդիկը սատանայի նման աներևութացան:

Իրանց կամաւոր զօրքերով ռուսաց տիրապետութիւնը Անդրկովկասում հաստատելու գործին ամենայն անձնանուիրութեամբ նպաստող հայոց քաջերից մէկն էր Վանի-խուզբաշին: Երբ 1812 թուի հոկտեմբերի 2-ին զօրապետ Կոտլարևսկին ջարդեց Աբաս-Միրզայի զօրքերը Երասխի աջ

ափի վրայ, Ասլան-Դիւզի ճակատամարտում, Վանի-խուզբաշին իւր մարդկանցով կռվում էր պարսից դէմ: Հետևեալ տարին (1813 թ. 1 յունվարի), Լենքօրանի բերդը գրաւելու միջոցին, Վանի-խուզբաշին նոյն զօրապետ Կոտլարևսկու քաջ գործակիցներից մէկն էր:

Բայց հայերն առհասարակ օտարի ծառայութեան մէջ մի առանձին համեստութիւն ունին՝ մեծ գործեր կատարել, բայց փոքր պահանջներով բաւականանալ:

Վանի-խուզբաշին իւր մատուցած ծառայութիւնների համար ստացաւ ռուսաց կառավարութիւնից չինապետի (պրապօրչիկի) աստիճան, մեդալ և մշտական թոշակ: Իսկ Ձուշի բերդի Մէհտի-խանը (Իբրահիմ-խանի որդին) ընծայեց Վանի-խուզբաշուն որպէս սեպհականութիւն նրա հայրենի Կապատ գիւղը և շնորհեց մ ե լ ի ք ու թ ե ա ն տիտղոս: Նա կոչուեցաւ այնուհետև Մելիք-Վանի:

Ջրաբերդի հին տիրապետող մելիքների (Մելիք-Իսրայէլեանների) վերջին ժառանգը (Մելիք-Աթամ II-ը) տեղափոխուած լինելով Գանձակի գաւառը, իսկ նոր մելիքների (Մելիք-Ալլահվերդեանների) վերջին ժառանգը (Մելիք-Բոլշանը) տեղափոխուած լինելով Նուխուայ գաւառը, Ջրաբերդը մնացել էր առանց մելիքների կառավարութեան: Իւր արժանաւորութիւններով Ջրաբերդը կառավարելու և այդ գաւառը ժամանակի փոթորիկներից պահպանելու համար ընդունակ էր միայն Մելիք-Վանին, և նա ստացաւ Մէհտի-խանից ամբողջ Ջրաբերդի մելիքութիւնը:

Մելիք-Վանին իւր պատերազմական արժանաւորութիւնների հետ ունէր և կառավարչական ընդունակութիւններ: Նա ամբողջ 42 տարի խաղաղութեամբ վարեց Ջրաբերդի մելիքութեան պաշտօնը, աշխատեց այդ երկրի ցրուած բնակիչներին հետզհետէ վերադարձնել իրանց հայ-

ընիւքը և ծաղկացրեց երկրագործութիւնն ու արհեստը։ Նա վախճանուեցաւ խորին ծերութեան մէջ (1854 թ.) և նրանից յետոյ Աթաբէկեանների տոհմն աւելի և աւելի նշանակութիւն ստացաւ Ղարաբաղում *)։

XLI

1808 թուին վախճանուեցաւ Ղարաբաղի Իսրայէլ կաթողիկոսը։ Դա այն չարագործն էր, որ մատնեց հայոց մելիքներին, Յովհաննէս կաթողիկոսին սպանել տուեց և իւր դաւաճանութեամբ Իբրահիմ-խանի սիրելին դարձաւ (տես գլ. XX և XXI)։

Մեզ յայտնի է, որ նոյն չարագործից հալածուելով, սպանուած Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Հասան-Ջալալեան Սարգիս կաթողիկոսը Ղարաբաղի գաղթականների հետ ապրում էր Վրաստանի Հաղբատայ վանքում։ Այնտեղ մնաց նա ամբողջ 14 տարի (տես գլ. XXXVII)։

Երբ Սարգիս կաթողիկոսը լսեց իւր ոխերիմ հակառակորդի՝ Իսրայէլ կաթողիկոսի մահը, երբ իմացաւ որ Իբրահիմ-խանը՝ հայերի անհաշտ թշնամին, սպանուած է, և երբ տեսաւ որ հայոց մելիքներն իրանց հպատակների հետ Վրաստանից կրկին տեղափոխուեցան Ղարաբաղ, ինքը ևս մտածեց վերադառնալ Գանձասարի վանքը, և կրկին տիրանալ Աղուանից կաթողիկոսութեան աթոռին, որից բաւական ժամանակ անջատուած էր։

Նախ ուղարկեց նա իւր եղբօրորդի Բաղդասար վարդապետին, որ Գանձասարի վանքը կարգի գնէ, որ յետոյ ինքը գնայ։

*) Մելիք-Վանին թողեց չորս որդի՝ Յովսէփ-բէկ, Սարգիս-բէկ, Աթա-բէկ (գնդապետ) և Միքայէլ-բէկ։ Իսկ Մելիք-Վանիի եղբայր Յակոբ-իւզբաշին ունէր մի որդի միայն՝ Ասլան-բէկը. դրանից ծնուեցան՝ Ներսէս-բէկ, Մովսէս-բէկ և Նիկօլա-բէկ։

1808 թուին, այսինքն հէնց նոյն տարուայ մէջ երբ Իսրայէլ կաթողիկոսը վախճանուեցաւ, Բաղդասար վարդապետը Թիֆլիզից ճանապարհ ընկաւ դէպի Ղարաբաղ *)։ Նա գտաւ Գանձասարի վանքը բոլորովին ամայի դրութեան մէջ։ Եռանդոտ, գործունեայ և ժրաջան վարդապետը կարողացաւ փոքր ժամանակում ոչ միայն կարգի գնել վանքը, այլև նրան յաջողուեցաւ մասամբ յետ խլել վանքի ընդարձակ կալուածները, որ զանազան թուրք բէկեր, կամ հայ ազնուականներ տիրացել էին։

Երբ Գանձասարի վանքում ամեն ինչ կարգի էր դրուած, Սարգիս կաթողիկոսը թողեց Վրաստանը և Հաղբատայ վանքից տեղափոխուեցաւ Ղարաբաղ (1812)։ Նրա հետ գնացին Ղարաբաղի գաղթականներից նրանք, որ դեռ ևս մնացել էին Վրաստանում։

Սարգիս կաթողիկոսը Գանձասար տեղափոխուելով, շուտով նրա և Ս. Էջմիածնի մէջ նոր վիճաբանութիւններ ծագեցան։ Այդ վիճաբանութիւններին առիթ տուեց կաթողիկոսի փառասիրական վարմունքը։

Մեր պատմութեան XXXVII գլխում տեսանք, որ Սարգիս կաթողիկոսը Վրաստանում գտնուած ժամանակ, այնտեղից Ս. Էջմիածին գնալով, խոստումն տուեց, որ

*) Բաղդասար վարդապետի հետ Ղարաբաղ գնաց Սարգիս կաթողիկոսի միւս եղբօր (Գաբրիէլ-բէկի) որդի Մելիք-Գրիգորը։ Այս ծանօթութեան մէջ հարկաւոր ենք համարում նկատել և այն, որ Սարգիս կաթողիկոսի ազգականների թւում Վրաստանում գտնվում էր և նրա եղբայր Ալլահ-Ղուլի-բէկը։ Այդ դաւաճանը նոյն անձնաւորութիւնն է, որ Իբրահիմ-խանի մօտ մատնեց Ղարաբաղի մելիքներին՝ նրանց ռուսաց կառավարութեան հետ ունեցած գաղտնի յարաբերութիւնների համար (տես գլ. XX)։ Վրաստանում նա մի ժամանակ անպատիւ կերպով թափառում էր, մինչև Ղարաբաղի մելիքները վրէժխնդիր եղան նրանից և գլուխը կտրելով մարմինն անհետացրին...։

այլեւ չպիտի գործածէ կաթողիկոսական կնիք եւ տիտղոս, այլ պիտի բաւականանայ միայն արքեպիսկոպոսական տիտղոսով ու կնքով, եւ դրա համար նրան յանձնեցին Հաղբատայ վանքի վանահայրութիւնը եւ Վրաստանում գտնուած ղարաբաղցի գաղթականների առաջնորդութիւնը։ Եւ ամբողջ 13 տարի Վրաստանում կառավարում էր իւր հօտը որպէս արքեպիսկոպոս։ Բայց հէնց որ վերադարձաւ Ղարաբաղ, կրկին սկսեց իրան Աղուանից կաթողիկոս կոչել եւ կաթողիկոսական իրաւունքներ ի գործ դնել։ Սարգսի այդ վարմունքը, ի հարկէ, պէտք է յուզէր մի նոր կռիւ՝ նրա եւ Ս. Էջմիածնի միջեւ։

Ս. Էջմիածնից նրան ազդարարեցին, որ պահպանէ իւր խոստմունքը, բայց նա ոչ միայն ուշադրութիւն չդարձրեց, այլ դիմելով Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի պաշտպանութեանը, իրան բոլորովին Ս. Էջմիածնից անկախ յայտնեց։ Այդ երկպառակութիւնները տեւեցին երեք տարի, մինչեւ 1815 թ., երբ Ս. Էջմիածնի բարձր հոգեւոր կառավարութիւնը, ռուսաց իշխանութեան ուժով, հարկադրեց Սարգսին հրաժարուել կաթողիկոսական տիտղոսից եւ տուեց նրան միտրապօլիտութեան տիտղոս արքեպիսկոպոսի աստիճանով։ Այնուհետեւ վերջացաւ Աղուանից կաթողիկոսութիւնը, որ սկսուած էր Լուսաւորչի թոռ Գրիգորիսի ժամանակից։

Դեռ իւր կենդանութեան ժամանակ Սարգիս միտրապօլիտը իւր եղբօրորդի Բաղդասար վարդապետին ուղարկեց Ս. Էջմիածին, որ եպիսկոպոս ձեռնադրուի, որպէսզի իւր յաջորդը նա լինի։ Որպէս Աղուանից կաթողիկոսութիւնը դարերով շարունակւում էր Հասան-Ջալալեանների տոհմի մէջ, Սարգիսը ցանկանում էր որ Աղուանից միտրապօլիտութիւնը եւս, որ իրանից սկսուեցաւ, նոյնպէս շարունակուէր նոյն տոհմի մէջ։

Բաղդասարը Ս. Էջմիածին գնալով, 1820 թուին Եփրեմ կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, եւ վերադառնալով Գանձասարի վանքը, Սարգսի ծերութեան պատճառով համարեա ինքն էր կառավարում վիճակի հոգեւոր իշխանութիւնը։

1826 թուին Ղարաբաղը ենթարկուեցաւ մի նոր դժբախտութեան. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան 80,000 հոգով անցաւ Երասխը, տիրեց Ղարաբաղին. տեղային մահմեդականները միացան պարսիկների հետ. Շուշիի բերդապահ գնդապետ Րէուտը ռուսաց փոքրաթիւ զօրքով մնաց փակուած բերդի մէջ։ Աբաս-Միրզան 48 օր պաշարուած դրութեան մէջ պահեց բերդը։ Միեւնոյն ժամանակ Ֆաթալի-շահի փեսայ Ամիր-խան սարդարը եւ Աբաս-Միրզայի երէց որդի Մահմադ-Միրզան զօրքերի ահագին բազմութեամբ անցան Գանձակի գաւառը, տիրեցին Գանձակի բերդին, ու այնտեղից առաջացան մինչեւ Շամքօր. պատրաստւում էին գնալու, որ Թիֆլիզը եւս տիրեն։ Երկրի քրիստոնեայ ազգաբնակութիւնը գտնվում էր սարսափի եւ մահուան տագնապի մէջ։

Մեր պատմութեան հետագայ գլուխներում ցոյց կըտանք, թէ որպէս հայազգի իշխան գեներալ Մադաթովի փառաւոր յաղթութիւններով պարսիկները ջարդուեցան եւ կրկին փախան դէպի Պարսկաստան, իսկ այժմ կ՚ասենք այնքանը միայն, ինչ որ վերաբերում է Սարգիս միտրապօլիտին։

Հայերին սպասում էր ընդհանուր կոտորած։ Սարսափած ժողովուրդը, ամեն ինչ թողած, ցրիւ էր եկել, թագնուել լեռների ու անտառների մէջ։ Աբաս-Միրզան, Պարսկաստանի այդ հայրենասէր թագաժառանգը, Ղարաբաղի ռուսաց զօրքերով գրաւուիլը վերաբերում էր ոչ այնքան ռուս գինուորների յաղթական սուիններին, որքան

հայերի գործակցութեանը յօգուտ ռուսների. (և իրաւ ռուսները Ղարաբաղը տիրելու համար ամենևին արիւն չեն թափել:) Այդ էր պատճառը, որ նա կամենում էր պատժել հայերին, որոնք, նրա կարծիքով, դաւաճանել էին Պարսկաստանի դարևոր հպատակութեան դէմ:

Աբաս-Միրզայի բարկութիւնն ամոքելու և հայ ժողովրդին նրա վրէժխնդրութիւնից ազատելու համար՝ ծերունի Սարգիս միտրապօլիտը վեր առաւ իւր հետ Ջրաբերդի իշխող Մելիք-Վանի Աթաբէկեանին և Գիւլիստանի իշխող Մելիք-Յովսէփ II *) Մելիք-Բէգլարեանին, և երեքը միասին գնացին Աբաս-Միրզայի մօտ: Պարսից թագաժառանգն ընդունեց նրանց Խան-Քէնդի գիւղում, որ գտնվում է Շուշի բերդից մի քանի վերստ հեռաւորութեան վրայ:

Ծերունի միտրապօլիտը իւր արտասուքով և Աթաբէկեան Մելիք-Վանին իւր պերճախօսութեամբ կարողացան ոչ միայն ամոքել թագաժառանգի բարկութիւնը, այլև արժանացան նրա առանձին յարգանքին: Աբաս-Միրզան շնորհեց նրանց փառաւոր «խալաթներ» և հանգստացնելով ճանապարհ դրեց, խոստանալով թէ հայոց ժողովրդին ոչինչ վնաս չի հասցնի, եթէ հայերը հաւատարիմ կմնան Պարսկաստանին և կդադարեն ռուսներին օգնելուց:

Ի հարկէ հայերը չէին կարող չհամակրել ռուսներին, և որպէս յետոյ կտեսնենք, նրանք եղան, որ ամեն հնարներով նպաստեցին իշխան Մադաթովի յաղթութիւններին Աբաս-Միրզայի դէմ և Ղարաբաղը բոլորովին մաքրեցին պարսից զօրքերից: Այսուամենայնիւ Սարգիս միտ-

*) Մելիք-Յովսէփ II-ը հանգուցեալ Մելիք-Ֆրէյդունի երեց որդին էր:

րապօլիտի և նրա ընկեր երկու մելիքների տեսութիւնը Աբաս-Միրզայի հետ բաւական թանգ նստեց նրանց համար:

Երբ պարսից զօրքերը հեռացան Ղարաբաղից, իշխան Մադաթովը նրանց երեքին էլ կալանաւորել տուեց: Ռուսաց անհաշտ թշնամու հետ տեսութիւն անելը համարուեցաւ նրանց համար մի տեսակ դաւաճանութիւն: Սարգիս միտրապօլիտին ուղարկեցին Թիֆլիզ, ուր նա բանտարկուեցաւ. իսկ Աթաբէգեան Մելիք-Վանիին և Մելիք-Բէգլարեան Մելիք-Յովսէփին աքսորեցին Բագու, որ այնտեղից տանեն Սիբիր:

Ութն ամիս թէ մելիքները և թէ Սարգիս միտրապօլիտը բանտարկուած մնացին: Վերջը նրանց անմեղութիւնը յայտնուելով ազատուեցան:

Սարգիս միտրապօլիտն ազատուեցաւ Ներսէսի (վերջը կաթողիկոս) աշխատութեամբ: Բայց այն տանջանքները, որ նա կրեց իւր բանտարկութեան ժամանակ, սաստիկ մաշեցին նրա ծերացած կազմուածքը: Նա բոլորովին հիւանդ վերադարձաւ Թիֆլիզից և նոյն հիւանդութիւնով 1828 թուին վախճանուեցաւ:

Սարգսի մահից երկու տարի յետոյ (1830) Ղարաբաղի մելիքները խնդիրքով դիմեցին Ս. Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսին, որ հանգուցեալի եղբօրորդի Բաղդասար եպիսկոպոսը նրա փոխարէն միտրապօլիտ նշանակուի: Բաղդասարը կանչուեցաւ Ս. Էջմիածին և նոյն տարուայ մէջ ըստացաւ միտրապօլիտութեան աստիճան:

Պէտք է մի առանձին բախտ համարել, որ այն ժամանակներում, երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին և Երևանեան նահանգին, Ս. Էջմիածնում գտնվում էր Ներսէսի նման մի եկեղեցական, իսկ Գանձասարի վանքում Բաղդասար միտրապօլիտը: Այդ երկուսն իրանց գործունէութեամբ բաւական նման էին միմեանց, այն զանազանու-

թեամբ միայն, որ Ներսէսն ունէր քաղաքական լիդէրներ, իսկ Բաղդասարը եկեղեցական և վանքային բարեկարգութեան եռանդ։

Եթէ չլինէր Բաղդասար միտրապօլիտը, այսօր Գանձասարի վանքը և Ղարաբաղի միւս վանքերը չէին ունենալ մի քանի հարիւր հազար դեսեատին տարածութեամբ վանքային կալուածներ։

Ղարաբաղի մելիքների և Սարգիս միտրապօլիտի Վրաստանում գաղթած ժամանակ Ղարաբաղի վանքապատկան կալուածները անտէր մնալով, ընկել էին զանազան թուրք բէկերի ձեռքը։ Բաղդասար միտրապօլիտի մեծ ջանքերին ենք պարտական, որ կարողացաւ ազատել և կրկին վանքերի անունով հաստատել եթէ ոչ կորուսած կալուածների ամբողջը, այլ գոնէ նրանց մեծ մասը։

Պատմութեան դէմ չմեղանչելու համար պէտք է խոստովանել և այն, որ Բաղդասար միտրապօլիտը, որպէս առհասարակ մեր բոլոր բարձրաստիճան եկեղեցականները, ունէր և իւր թոյլ կողմերը։ Այն է՝ իւր աղքատ ազգականների—Հասան-Ջալալեանների—վիճակը ապահովելու համար, նրանց օգտին վանքային կալուածներից փոքրիկ բաժիններ հանեց...։ Այդ բաժիններից իւր մասն ըստացաւ և միտրապօլիտի վ է զ ի ր ը։

Բայց այդ բոլոր թուլութիւնները համեմատելով այն մեծ ծառայութիւնների հետ, որ նա կատարեց՝ վանքապատկան կալուածները կորզելով զանազան յափշտակիչների ձեռքից,—այդ թուլութիւնները, կրկնում ենք, պէտք է ներելի համարել...։

Ղարաբաղի վանքապատկան կալուածների վերաբերութեամբ աւելի անազնիւ կերպով վարուեցաւ Խարայէլ կաթողիկոսը, Սարգիս կաթողիկոսի (յետոյ միտրապօլիտի) ժամանակակիցը։ Չմոռանանք, որ այդ Խարայէլ կաթո-

ղիկոսը՝ Իբրահիմ-խանի սիրելին, հայոց մելիքների մատնիչը, Գանձասարի վանքի Հասան-Ջալալեան կաթողիկոսների տոհմից չէր, այլ Երիցմանկանց վանքի ինքնիշխան և հակաթոռ կաթողիկոսներից մէկն էր։ Ընթերցողը յիշելիս կլինի, որ Ղարաբաղի մելիքների և Սարգիս կաթողիկոսի Վրաստան գաղթած ժամանակ, Իբրահիմ-խանի պաշտպանութեամբ, այդ Խարայէլն էր վարում Աղուանից կաթողիկոսութեան իշխանութիւնը։ Այդ դաւաճանը վախճանուեցաւ իւր ազգականներից մէկի տանը, որի մռայլոտ անունը յիշելու ցանկութիւն չունինք։ Նոյն տան մէջ կաթողիկոսը հաւաքած ունէր Ղարաբաղի մի քանի հարուստ վանքերի արծաթեղէն անօթները, սրբութիւնները և թանկագին զգեստները։ Կաթողիկոսի վախճանուելուց յետոյ այդ բոլորը մնացին որպէս սեպհականութիւն նրա ազգականի։ Սակայն այդ մի մեծ կորուստ չէր լինի, եթէ նոյն տան մէջ չմնային և զանազան վանքերի կալուածագրերը։

Եթէ Բաղդասար միտրապօլիտին չյաջողուեցաւ ձեռք բերել Ղարաբաղի վանքապատկան բոլոր կալուածները, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ կալուածագրերը մնացել էին նոյն մարդու մօտ, որի տանը վախճանուեցաւ Խարայէլ կաթողիկոսը։ Այդ անպիտանը զանազան զարտուղի և մթին ճանապարհներով կամ ինքը տէր եղաւ նոյն կալուածքներին և կամ թոյլ տուեց որ թուրքերը տիրեն, ծածուկ նրանցից փողեր ստանալով և վանքային կալուածագրերը ոչնչացնելով, որ իւր գողութիւնը չյայտնուի։

Բաղդասար միտրապօլիտը սկզբում ուշադրութիւն դարձրեց Խաչէնի գաւառում գտնուող և Գանձասարի վանքին պատկանող կալուածները թափել յափշտակողների ձեռքից։ Այդ կալուածներն այնքան լայնատարած էին, որ նրանց վրայ զետեղուած էին 60-ի չափ վանքապատ-

կան գիւղեր՝ իրանց հարուստ անտառներով, արգաւանդ վարելահողերով և արօտատեղիներով։ Բայց նա կարողացաւ միայն 30,000 դեսեատինի չափ կրկին սեպհականացնել վանքին, իսկ մնացեալ մեծ մասը մնաց վիճելի։

Բաղդասար միտրապօլիտի աշխատութիւնների նպատակը վանքապատկան կալուածների վերաբերութեամբ այն չէր, որ նա դրանցով ապահովացնէր վանականների և վանքերի գոյութիւնը, այլ գլխաւորապէս այն էր, որ նրանք լինէին եկամուտների մշտական և հաստատուն աղբիւր Ղարաբաղի զանազան տեղերում դպրոցներ հիմնելու համար։

Ինքը, Բաղդասար միտրապօլիտը, թէև անուս և որպէս ղարաբաղցի՝ կոշտ-կոպիտ մարդ էր, բայց որպէս ղարաբաղցի, ունէր և բնական խելք, տոկունութիւն և հեռատեսութիւն *)։ Նա ուսում չունէր, բայց սաստիկ ուսումնասէր էր։ Սկզբում հիմնեց նա Գանձասարի վանքում մի դպրոց և Նուխիի կողմերից հրաւիրեց ճարտասան և լաւ հայկաբան Յովսէփ վարդապետին **) որպէս վարժապետ և նոյն դպրոցի կառավարիչ։

1836 թուին Շուշի բերդում հաստատուեցաւ վիճակային հոգևոր կառավարութեան կոնսիստորիա։ Բաղդասար միտրապօլիտը հրաւիրուեցաւ Ս. Էջմիածին, և այնտեղ հաւատարմութեան երդում տալով, Կարպեցի Յովհաննէս կաթողիկոսից նշանակուեցաւ Ղարաբաղի թեմական առաջ-

*) Բաղդասար միտրապօլիտի զուարճախօսութիւնները, նրա կեանքից ստեղծուած անեկդօտները, Ղարաբաղի հայի հասարակութեան մէջ նոյն ժողովրդականութիւնն են ստացել, որպէս Մօլլա-Նասրադդինի առակները։

**) Այդ Յովսէփ վարդապետը՝—որ բազմաթիւ հասցրած աշակերտներ ունի և մինչև այսօր լաւ անուն է թողել Ղարաբաղում, որպէս յետոյ իմացուեցաւ,—իսկապէս եպիսկոպոս է եղել, բայց իւր բարձր աստիճանը թագցնելով, պարապում էր մանկավարժութեամբ իբրև մի հասարակ վարդապետ։

նորդ (1837 թ.)։ Շատ հասկանալի է, որ դրանով Բաղդասարի իրաւունքները սահմանափակուեցան։ Մինչև այն օր նա համարվում էր Աղուանից միտրապօլիտ և ազատ էր իւր հոգևոր իշխանութեան մէջ, բայց կոնսիստորիայի հաստատուելուց յետոյ, նա բոլորովին ենթարկուեցաւ Ս. Էջմիածնի իրաւասութեանը, որ ոչ սակաւ խոչընդոտներ դրեց միտրապօլիտի ազատ գործունէութեանը...։

Կոնսիստորիայի հաստատուելուց յետոյ նա հարկադրուեցաւ թողնել Գանձասարի վանքը՝ Աղուանից բազմադարեան կաթողիկոսարանը և տեղափոխուել Շուշի բերդը։ Այստեղ սպասում էր միտրապօլիտի գործունէութեանն ընդարձակ ասպարէզ և միևնոյն ժամանակ ծանր աշխատանք։

Միտրապօլիտի առաջին ջանքն եղաւ դուրս կորզել Մէհտի-խանի Խուրշիտ անունով դստեր և ուրիշ մի քանի թուրք բէկերի ձեռքից Խօթայ վանքի *) լայնատարած կալուածները, որոնց՝ միևնոյն հանգամանքների պատճառով, որպէս Ղարաբաղի միւս վանքերի կալուածները, անիրաւութեամբ տիրել էին։

Այս անգամ միտրապօլիտի հակառակորդները բաւական զօրաւոր և ազդեցութեան տէր անձինք էին. բայց տոկուն և ո՛չ մի դժուարութիւնից չյուսահատուող Բաղդասարը մի քանի տարի շարունակ դատ վարեց խա-

*) Խօթայ կամ Խութայ վանքը գտնվում է Վերին-Խաչէնի մէջ, Թարթար գետի ափի մօտ։ 1214 թուին իւր սեպհական ծախքով այդ վանքը հիմնեց իշխանուհի Արզու-խաթունը Թադէոս առաքեալի անունով։ Չնայելով որ մի հարուստ լօրդի չափ կալուածքներ ունի այդ վանքը, բայց այսօր՝ մեր ծոյլ եկեղեցականների անհոգութիւնից, գտնվում է բոլորովին ամայի դրութեան մէջ և ծառայում է խաշնարած թուրքերի համար որպէս գոմանոց։

նի դստեր և միւս բէկերի հետ, մինչև կարողացաւ վերջապէս նրանցից յետ խլել յիշեալ վանքի կալուածները, որոնք մօտ 150,000 դեսեատինի չափ ընդարձակութեամբ տարածվում են Թարթառ գետի հիւսիսային և հարաւային ափերի երկարութեամբ և ընդհանուր անունով կոչվում են Գողխու-Բալբաջար, Լևա և Մարջումակ: Իւր դատավարութեան ծախքերի համար միտրապօլիտը գործ դրեց մինչև 30,000 ռուբլի, որ այն ժամանակ մեծ գումար էր:

Խօթայ վանքի կալուածները՝ այդ միլլիոնների արժէք ունեցող ազգային մեծ հարստութիւնը, կարելի է մի ամբողջ գաւառ համարել: Նրանց մէջ բացի հրաշալի, կուսական անտառներից, բացի ընդարձակ արօտատեղերից ու լեռներից, բացի լայնատարած և արգաւանդ վարելահողերից, զետեղուած էին թուով մինչև 100 գիւղ: Նրանց լեռների բարձրաւանդակների վրայ և հովիտներում թափառում էին թուով մինչև 20 զանազան խաշնարած ցեղեր, զանազան անուններով: Դրանք Խօթայ վանքին (այսինքն Ղարաբաղի հոգևոր իշխանութեանը) չնչին հարկ էին վճարում. եթէ ասեմ որքան, շատ ծիծաղելի կըլինի...:

Բաղդասար միտրապօլիտն՝ արդարև թողեց ազգի համար մի մեծ հարստութիւն, բայց նրա անպիտան յաջորդները հետզհետէ փատնեցին այդ հարստութիւնը *)...:

*) Մեր՝ 1881 թուի Սիւնեաց աշխարհի ճանապարհորդութեան մէջ, որ դեռ ևս ի լոյս ընծայուած չէ, մի օր կըկարդան Ղարաբաղի վանքապատկան կալուածների թշուառ դրութեան նկարագիրներն ընդհանրապէս, իսկ Խօթայ վանքի կալուածների բարբարոսաբար փատնումը մասնաւորապէս։ Իսկ առայժմ այսքանը կ'ասենք, որ Բաղդասար միտրապօլիտի վախճանուելուց յետոյ, Ս. Էջմիածնի բարձր հոգևոր իշխանութեան անհոգութիւնից և Ղարաբաղի թեմական առաջնորդների մի քանիսի կաշառակերութիւնից, Խօթայ վանքի կալուածների մի մասը դարձեալ անցաւ Մէհտի-խանի Խուրշիդ անունով դստեր ձեռքը, մի մասին տիրեց գեներալ Ջասան-բէկ Աղալարովը, մի մասն անցաւ ուրիշ բէկերի ձեռքը, մի մասը ևս անտէր, անխնամ մնալով, տիրեցին կամ մասնաւոր անձինք և կամ արքունի գանձարանը։ Այժմ զուտ, անվիճելի կալուածք Խօթայ վանքի տիրապետութեան ներքոյ մնացել է մօտ 100,000 դեսեատին, իսկ մնացեալ կէսը վիճելի է, և այս մի քանի տարի է, որ հոգևոր կառավարութիւնն սկսել է նորից դատ վարել, գուցէ յետ դարձնէ իւր կորուստը։

Բաղդասար միտրապօլիտի օգտաւէտ աշխատութիւնների թւում կարելի է յիշել նրա 1843 թուին կառուցած հոյակապ առաջնորդարանը, որ Շուշի բերդի փառաւոր տներից մէկը կարելի է համարել: Նոյն առաջնորդարանին կից գնեց նա ընդարձակ գետին, որի վրայ դիտաւորութիւն ունէր իւր արդէն բաց արած հոգևոր դպրոցի համար առանձին շէնք կառուցանել, բայց վաղահաս մահը միտրապօլիտի այդ ձեռնարկութիւնը թողեց անկատար *):

Բաղդասար միտրապօլիտի աշխատութիւններից մէկն էլ այն եղաւ, որ թուրքերի և ռուսների ձեռքից ազատեց Ամարասայ սուրբ Գրիգորիսի վանքը: Այդ վանքը բաւական ժամանակ անտէր մնալով, թուրքերը գրաւել էին, և տալով նրան իրանց հասկանալի մի անուն՝ Աղ-Օղլան**), համարում էին իրանց սրբավայր: Վանքի շրջակայ հողերը և Ամարասայ ձորի ամբողջ կալուածները թուրքերի

*) 1872 թուին Սարգիս արքեպիսկոպոս Ջասան-Ջալալեանն աւարտեց դպրոցի շէնքը և առաջնորդարանի շինութիւնն աւելի ընդարձակեց։ Այն օրից այդ տան մէջ զետեղուեցան Շուշիի թեմական դպրոցը, առաջնորդարանը և կոնսիստորիան։

**) Աղ-Օղլան նշանակում է սպիտակ տղայ։ Ամարասայ վանքում ամփոփուած է Լուսաւորչի թոռ Գրիգորիսի մարմինը, որ իւր մանկութեան հասակում կաթողիկոս ձեռնադրուեցաւ։ Երևի հէնց դրա համար էլ այլազգիք նրան կոչեցին «սպիտակ տղայ»։

տիրապետութեան ներքոյ էին։ Իսկ վանքի ընդարձակ սենեակները և ամբողջ շինութիւնը, բացի տաճարից, ռուսները ծառայեցնում էին որպէս մաքսատուն։

Միտրապօլիտի աշխատութեամբ 1848 թուին ռուսաց կառավարութեան հրամանով մաքսատունը տեղափոխուեցաւ Երասխի ափի մօտ, Ջաբրայէլ, իսկ վանքը իւր կալուածներով դարձաւ սեպհականութիւն հայոց հոգևոր կառավարութեան։

Բացի հոգևոր դպրոցից Բաղդասար միտրապօլիտը հիմնեց Շուշի բերդում տպարան, որի մամուլները և տառերը գնեց նա Ղարաբաղում այն ժամանակ գտնուած գերմանացի միսիօնարներից, երբ նրանց՝ ռուսաց կառավարութեան հրամանով հեռացրին Ղարաբաղից։ Նա բաւական նշանաւոր գումար ուղարկեց Վենետիկի Մխիթարեանների վանքը և բերել տուեց մի-մի օրինակ նրանց բոլոր հրատարակութիւններից, և կազմեց հոգևոր դպրոցին կից մի հարուստ գրադարան, այնտեղ հաւաքելով և Ղարաբաղի վանքերում գտնուած նշանաւոր գրչագիր մատեանները։ Այդ գրքերը հետզհետէ տպագրելու դիտաւորութիւն ունէր իւր սեպհական տպարանում *)։

Գուցէ այդ գործունեայ և եռանդոտ մարդն աւելի մեծ օգուտներ կըհասցնէր Ղարաբաղին, եթէ մի քանի տարի աւելի ևս ապրելու լինէր։ Մաշող յօդացաւը, որ ստացել էր նա վերջին ժամանակներում, սկսեց սաստկանալ և 1854 թ. յունիսի 27-ին նրան գերեզման տարաւ 79-ամեայ հասակում։ Նրա մարմինը թաղուեցաւ Գանձասարի

*) Այդ հարուստ գրադարանն այժմ համարեա բոլորովին կողոպտուած է. բազմաթիւ գրչագիր մատեաններն այս և այն անձանց ձեռքն են անցել. մենք գտանք այնտեղ մի գրչագիր Աղուանից պատմութիւն միայն, որի կէս մասը կտրած է։

վանքի գաւթում, իւր երկու հօրեղբայրների՝ Յովհաննէս կաթողիկոսի և Սարգիս միտրապօլիտի շիրիմների մօտ *)։ Նրա մահից յետոյ Աղուանից միտրապօլիտութիւնը բոլորովին վերջացաւ։

Բաղդասար միտրապօլիտից յետոյ, Ջալալեանների տոհմից միայն Սարգիս արքեպիսկոպոսը բաւական ժամանակ վարեց Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտօնը. Նրա մահից յետոյ Հասան-Ջալալեաններից այլևս նշանաւոր եկեղեցականներ չյայտնուեցան։

Խաչէնի Հասան-Ջալալեան վերջին մելիքներից նշանաւոր եղաւ Բաղդասար միտրապօլիտի եղբայր Մելիք-Ալահվերդի II-ը, որ վախճանուեցաւ 1827 թուին և նրանից յետոյ այդ տոհմի մելիքութիւնը վերջացաւ։ Նա թողեց չորս որդի՝ Երեմիա քահանայ, Մովսէս վարդապետ, Աբրահամ-բէկ և Յովսէփ-բէկ։

XLIII

1813 թ. հոկտեմբերի 12-ին կայացաւ Գիւլիստանի դաշնադրութիւնը Զէյվա բերդի **) մօտ, որի զօրութեամբ պարսից պետութիւնը թողեց յօգուտ Ռուսաստանի՝ Ղարաբաղի, Շամախու, Գանձակի, Շաքիի, Թալիշի, Բագուի, Ղուբայի և Դերբէնդի խանութիւնները։

Երևում էր, որ այդ դաշնադրութեամբ պիտի վերջանային պարսից կռիւները ռուսաց հետ, և պիտի դադա-

*) Գերեզմանը կրում է հետևեալ տապանագիրը.
«Այս է տապան միտրապօլիտին՝ Բաղդասարայ մեծի Արհին, կայսերապսակ հովուապետին, տանս Աղուանից հայոց ազգին։ Յազգէ Ջալալ մեծ իշխանին, տեառն արցախական աշխարհին։ Թուին ռ. չ. գ. 1854, յուլիս 9.

**) Զէյվա բերդը Մելիք-Բէգլարեանների բերդն է։

րէին պատերազմասէր Աբաս-Միրզայի անընդհատ յարձակումները ռուսաց նոր գրաւած երկրների վրայ: Բայց հաշտութիւնը երկար չտևեց: Այդ հաշտութիւնը Աբաս-Միրզայի կողմից աւելի ժամանակ վաստակելու համար էր, որ Պարսկաստանը կազդուրէ իւր ուժերը և նորոգուած զօրութեամբ յետ խլէ իւր կորցրած գաւառները:

Վերոյիշեալ խանութիւնները պահպանելու և դեռ չզսպուած Կովկասեան լեռնաբնակներին նուաճելու համար հարկաւոր էր մի մարդ, որ ծանօթ լինէր տեղային պայմանների հետ:

Այդ միջոցներին իւր գործունեայ յաղթութիւններով արդէն մեծ փայլ և հռչակ էր ստացել հայազգի իշխան գեներալ Մադաթովը՝ մանաւանդ այն կռիւների մէջ, որ Ռուսաստանն ունեցաւ Թիւրքերի հետ: Այդ հերոսը համարվում էր ռուսաց քաջ և ընդունակ զօրավարներից մէկը, և նրա արևելեան ազգերի սովորութիւններին և նրանց հետ պատերազմելու եղանակներին ծանօթ լինելը միշտ նպաստում էր նրա անվրէպ յաջողութիւններին:

Իշխանի այդ յատկութիւններն ի նկատի առնելով, գեներալ Երմօլովի առաջարկութեամբ, երբ այդ վերջինը նշանակուեցաւ Անդրկովկասի գլխաւոր կառավարիչ, միևնոյն ժամանակ, 1816 թուին, բարձրագոյն հրամանով իշխան Մադաթովը նշանակուեցաւ Անդրկովկասի առանձին զօրաբաժնի հրամանատար:

Իսկ 1817 թ. նշանակուեցաւ նա Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանութիւնների զինուորական-նահանգային գլխաւոր: Նրան յանձնուած էր հսկել յիշեալ խանութիւնների կառավարութեան և բարեկարգութեան վրայ:

Իշխան Մադաթովը դուրս էր եկել Ղարաբաղից տրեխներով, բայց վերադարձաւ իւր հայրենիքը գեներալ-լէյտենանտի աստիճանով, կուրծքը զարդարած բազմաթիւ շը-

քանշաններով: Բոլորը՝ ինչ որ ունէր նա, ստացել էր տոկուն զինուորի և քաջ պատերազմողի աշխատութեամբ: Հայրենիքը ուրախութեամբ ողջունեց նրան. բոլոր հայերի սրտերը լցուած էին պարծանքով և հպարտութեամբ: Մելիքների ոգևորութեանը չափ չկար. բոլորը յոյս ունէին, թէ իշխանի շնորհիւ կըվայելեն իրանց վաղեմի իրաւունքները:

Երկու տարի զբաղուեցաւ իշխանը Կովկասեան լեռնաբնակների հետ ամենադժուարին կռիւներով և նա պսակեց իւր յաղթութիւնները ամբողջ հիւսիսային Դաղստանը նուաճելով և տեղային կիսավայրենի, աւազակաբարոյ ցեղերը հանդստացնելով:

Վերադառնալով Ղարաբաղ, նա սկսեց զբաղուել իւր հսկողութեանը յանձնուած երեք խանութիւնների բարեկարգութիւններով. հիմնեց նրանց մէջ գաւառական դատարաններ կամ դ ի ւ ա ն ն ե ր, և ինքը շատ անգամ ներկայ էր գտնվում գործերի քննութեանը:

Իսկ Ղարաբաղի կառավարիչը դարձեալ մնացել էր Իբրահիմ-խանի յաջորդ Մեհտի խանը, որ այդ ժամանակ ռուսներից գեներալի աստիճան էր ստացել և պահպանում էր խաների՝ թէև սահմանափակուած, բայց վաղեմի իրաւունքները: Սահմանափակուած ասում ենք նրա համար միայն, որ նրան արգելուած էր պատժել, մահուան դատապարտել, իսկ միւս արտօնութիւնների վերաբերութեամբ, կարելի է ասել՝ որ նա այժմ աւելի իրաւունքներ էր բանեցնում, քան թէ ունէր պարսից տիրապետութեան ժամանակներում: Նա ինքնակամ կերպով հողեր, գիւղեր, կալուածներ էր ընծայում, ում որ ցանկանում էր (ի հարկէ ոչ իւր սեպհականութիւնից), կամ խլում էր մէկից և միւսին էր տալիս, մի խօսքով, վարվում էր երկրի, հողի և հպատակների հետ իբրև նրանց լիակատար տէրը:

Մէհտի-խանի այդ կամայականութիւնն առաջ եկաւ Ղարաբաղի նոր տիրապետող ռուսների սխալ հասկացողութիւնից առհասարակ խաների նշանակութեան և նրանց իրաւունքների ո՛ր աստիճան տարածուելու մասին: Ռուսները, որ իրանց երկրում տեսել էին ճորտութիւն, տեսել էին կալուածատէրերի անսահման իրաւունքներն իրանց հողերի և ճորտերի վերաբերութեամբ, որոնց մինչև անգամ որսորդական շների հետ էին փոխում,— հասկանալի է, որ ռուսներին չէր կարող օտարոտի երևալ խանի վարմունքը, մանաւանդ որ արդէն համարում էին նրան իբրև Ղարաբաղի տիրապետող և ժառանգական իշխան:

Այդ ժամանակ ռուսները շատ փոքր ծանօթութիւններ ունէին Պարսկաստանի կառավարչական կարգերի, օրէնքների ու սովորութիւնների մասին: Խանը եթէ ունէր մի գիւղ կամ այլ կալուածք, իբրև հասարակ սեպհականատէր, կարող էր վաճառել. բայց նա երկրի տէրը և թագաւորը չէր, որ իրաւունք ունենար հասարակաց հողերը բաշխելու, ընծայելու ո՛ւմ որ ցանկանար, կամ յետ խլելու ո՛ւմից որ ցանկանար: Կրկնում ենք, որ խանի այդ կամայականութիւնն առաջ եկաւ ռուսաց այն ժամանակուայ պաշտօնականների սխալ հասկացողութիւնից խաների նշանակութեան մասին, և այդ սխալից աշխատեցին օգուտ քաղել խաները: Այդ կտեսնենք յետոյ:

Մեր պատմութեան նպատակից դուրս է և շատ երկար կլինէր բացատրել, թէ այն ժամանակ կալուածական կամ հողատիրական (մուլքադարութեան) որպիսի օրէնքներ կամ սովորութիւններ էին տիրում Պարսկաստանում ընդհանրապէս և Ղարաբաղում՝ իբրև պարսկական մի գաւառ, մասնաւորապէս: Բայց այսքանը կ'ասենք, որ Ղարաբաղում, ինչպէս ամբողջ Պարսկաստանում, հողը համայնքի (էլլիդի) սեպհականութիւն էր ոչ այն կարգով,

որ համայնքը պարտաւորուէր իւրաքանչիւր ընտանիք կազմող անդամների թուի համեմատ հողը բաժանել գիւղացիների մէջ, այլ իւրաքանչիւր գիւղացի իւր ձեռքում գտնուած հողի տէրն էր. նա իրաւունք ունէր վաճառելու, գրաւ դնելու կամ իւր դրացուց աւելին գնելու: Իսկ միևնոյն ժամանակ իւրաքանչիւր գիւղ ունէր իւր գիւղատէրը. այդ գիւղատէրը կարող էր լինել մի որևիցէ մելիք, խան կամ այս և այն վանքը: Գիւղատէրը վայելում էր այն իրաւունքը միայն, որ ստանում էր գիւղացիների վարուցանքի կամ առհասարակ մշակութեան բերքի մի որոշ մասը (չօփբաշի): Բայց նա իրաւունք չունէր մէկ գիւղացու ձեռքում գտնուած հողը խլել և միւսին տալ, և մինչև անգամ եթէ ինքը՝ գիւղատէրը ցանկանալու լինէր իրան պատկանող գիւղի հողերի վրայ վարուցանք անել, գիւղացիները նրան թոյլ չէին տալ: Դրա համար գիւղատէրն ունէր իւր ազատ հողերը, որոնց վրայ նա վարուցանք էր անում:

Ամբողջ Ղարաբաղի գիւղատիրութիւնը*) պատկանում էր կամ հայոց մելիքներին կամ հայոց վանքերին: Խաներն սկզբում ո՛չ գիւղեր և ոչ մասնաւոր կալուածներ ունէին:

Մի քանի փաստեր բաւական են այդ իրողութիւնն ապացուցանելու համար: Փանահ-խանը, որպէս մեր ընթերցողներին յայտնի է, առաջինն եղաւ, որ հետզհետէ տկարացնելով մելիքների զօրութիւնը, Ղարաբաղի մահմեդական խանութեան հիմքը դրեց: Նա Ղարաբաղի ամբողջ գաւառում մի տեղ չունէր, որի վրայ բերդ հիմնէր. Շուշի բերդի տեղը գնեց Վարանդայի իշխան Մելիք-Շահնազա-

*) Գիւղատիրութիւն պէտք է հասկանանք մշակութեան բերքից մի որոշ մասն ստանալու իրաւունքը:

րից։ Նա ամբողջ Ղարաբաղում մի կտոր գետին չունէր, որ ծառայեցնէր իւր տոհմային գերեզմանատան համար, և այդ պատճառով Խաչէնի Հասան-Ջալալեան իշխաններից գնեց Աղդամը (Ասկարանի մօտ), որ մինչև այսօր ծառայում է նրա ժառանգների համար իբրև տոհմային գերեզմանատուն։

Փանահ-խանի որդի Իբրահիմ-խանը, որ աւելի զօրաւոր եղաւ քան թէ իւր հայրը, նոյնպէս զուրկ էր կալուածներից. Ղարաբաղում հողեր չունէր նա, թէև համարվում էր այդ գաւառի իշխող խանը։ Իւր ժառանգների և եղբայրների ապրուստը ապահովացնելու համար, Ղարաբաղի սահմաններից դուրս, Բարդայի մահալում, նա կալուածներ գնեց Նուխուայ բէկերից։ Այդ բոլորից երևում է, որ խաները ոչ թէ երկրի տէրերն էին, այլ երկրի կառավարիչները՝ նշանակուած պարսից պետութիւնից։

Երկրի արմատական տէրերը հայոց հինգ մելիքական տների ներկայացուցիչներն էին, որոնք դարերով, սերունդից սերունդ, ժառանգաբար տիրում էին Ղարաբաղին։

Երբ հայոց մելիքներն իրանց հպատակների հետ, որպէս ցոյց տուեցինք նախընթաց գլուխներում, գաղթեցին Վրաստանի, Շիրվանի և Գանձակի գաւառները, այդ ժամանակ նրանց հողերն ու գիւղերն անտէր ու դատարկ մնալով, իմաւ է, Իբրահիմ-խանը տիրապետեց և գաղթածների տեղը լցրեց մահմեդական բնակիչներով, բայց երբ, տարիներից յետոյ, մելիքներն իրանց ժողովրդի հետ վերադարձան գաղթականութիւնից, այդ ժամանակ հեռացրին մահմեդականներին և կրկին տէր եղան իրանց վաղեմի գիւղերին և հողերին։

Բայց որովհետև գաղթականների մի մասը մնաց օտար երկրներում և մելիքներից մի քանիսի (որպէս էին Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեանները և Տիզակի Մելիք-Աւանեանները) վերջին ժառանգները բոլորովին ոչնչացան, այդ պատճառով նրանց հողերն անտէր մնալով, Իբրահիմ-խանը տիրեց, այսինքն՝ սկսեց ինքն ստանալ մշակութեան բերքի այն մասը, որ առաջ ստանում էին այն հողերի նախկին տիրապետողները։ Բայց խսկապէս Իբրահիմ-խանը միայն վայելող էր և ոչ թէ սեպհականատէր իւր ընդարձակ նշանակութեամբ։ Բացի բերքի մի որոշեալ մասն ստանալուց նա ուրիշ իրաւունքներ չունէր ո՛չ հողի և ոչ հողը մշակող գիւղացիների վրայ։ Գիւղացիներն ազատ հպատակներ էին պետութեան, իսկ հողը սեպհականութիւն էր գիւղական համայնքի նոյն ձևով, որպէս ցոյց տուինք վերևում։

Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի ժամանակ հանգամանքները փոխուեցան։ Այն ժամանակ ռուսները թէև տիրել էին Ղարաբաղին, բայց կալուածական հարցը և խաների իրաւունքների չափը դեռ ևս որոշուած չէր։ Թողեալ այդ, ռուսները, որպէս վերևում յիշեցինք, խիստ բարձր կարծիք ունէին խաների նշանակութեան մասին։ Այդ հանգամանքներից օգուտ քաղելով Մէհտի-խանը, սկսեց աւելի իրաւունքներ բանեցնել, քան որ ունէր առաջ։

Թէ՛ խանը և թէ նրա շրջապատողները շատ լաւ հասկանում էին, որ իրանց իշխանութիւնն արդէն անցել է, հասկանում էին, թէ որքան ժամանակաւոր և անհաստատ է իրանց դրութիւնը, այդ պատճառով շտապեցին ժամանակից օգուտ քաղել։

Մէհտի-խանն սկսեց աջուձախ իւր մերձաւորներին, բարեկամներին, ազգականներին՝ ամբողջ գիւղեր, կալուածներ և հողեր պարգևել։ Նրա կամայականութեանն աւելի վստահութիւն տուողը եղաւ ինքը իշխան Մադաթովը, որ իբրև նահանգային-զինուորական գլխաւոր, ռուսաց կա-

ժավարութիւնից նշանակուած էր խանի գործողութիւնների վրայ հսկելու և նոր գրաւած երկրի մէջ կարգ պահպանելու համար:

Իշխան Մադաթովի ծագումը մենք մասնաւորապէս ցոյց տուինք մեր պատմութեան XXXVI-րդ գլխի մի ծանօթութեան մէջ: Նրա հայրը՝ Մեհրաբենց Գիւքին, հասարակ գիւղացի էր, բնակւում էր Չանախչի (Աւետարանոց) բերդում և մի ստորին պաշտօն էր կատարում Վարանդայի տիրապետող Մելիք-Շահնազարեանների տանը: Նրա մօրեղբայր Պետրոս-իւզբաշի Մադաթեանը Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդի տան նազիրը (տնտեսն) էր: Իշխանը կրեց իւր մօր տոհմի ազգանունը, որ փոքր ինչ պատուաւոր էր, և իւր Ռոստոմ անունը փոխելով, կոչուեցաւ Վալերեան Գրիգորեվիչ Մադաթով:

Ինչպէս որ իւր իշխանական տիտղոսն ստացաւ Ս.-Պետերբուրգում Մելիք-Շահնազարեան Մելիք-Ջումշուդի շնորհած վկայականով (տես գլ. XXXVI), նա այժմ իւր բարձր փառքով իւր հայրենիքը՝ Ղարաբաղ, վերադառնալուց յետոյ, ցանկացաւ նոյն Մելիք-Շահնազարեանների՝ իւր բարերարների, հայրենական կալուածքների վրայ ինքը կալուածատէր լինել: Մէհտի-խանն ընծայեց նրան Վարանդայի գաւառում 15 գիւղ իրանց ընդարձակ հողերով, սահմաններով և բնակիչներով: Այդ գիւղերը Մելիք-Շահնազարեանների դարևոր կալուածներն էին: Ամբողջ Վարանդան, որպէս ընթերցողին յայտնի է, ամենահին ժամանակներից Մելիք-Շահնազարեանների տիրապետութեան ներքոյ էր գտնվում:

Յիշեալ 15 գիւղերի թւում գտնվում էր և Չանախչի (Աւետարանոց) բերդը, որի մէջ զետեղուած էին Մելիք-Շահնազարեանների ամրոցները. այնտեղ էին՝ Մելիք-Յուսէին I-ինի, Մելիք-Բաղիի և Մելիք-Շահնազար II-րդի

պալատները: Իշխան Մադաթովն այդ վերջինի պալատը քանդել տուեց և նրա տեղում իւր համար մի նոր պալատ հիմնեց: Երբ նրանից հարցրին, թէ ինչո՞ւ է քանդել տալիս, նա ծիծաղելով պատասխանեց. «Երբ Մելիք-Շահնազարն այդ պալատը շինել էր տալիս, ես դեռ մանուկ էի. նա ինձ շատ քարեր է կրել տուել այդ պալատի շինուածքի համար. մինչև այսօր էլ այն ցաւն զգում եմ մէջքիս վրայ»...:

Մէհտի-խանի պարգևագրի բովանդակութիւնը, որով յիշեալ 15 գիւղերն ընծայուեցան իշխան Մադաթովին, ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս այդ պարգևագրի ինչ բնաւորութեամբ հեղինակուած լինելը: Խանը իւր պարգևագրի մէջ յայտնում է՝ որովհետև իշխան Մադաթովի նախնիքը վաղեմի ժամանակներից Ղարաբաղում տիրապետում էին յիշեալ 15 գիւղին իրանց ընդարձակ սահմաններով, իսկ իշխանի բացակայութեան ժամանակ այդ կալուածքները խլուեցան (ովքեր խլեցին), ուստի ինքը խանը այդ գիւղերը կրկին վերադարձնում է իշխանին, որպէս իւր նախնիքների օրինաւոր ժառանգին, և այլն:

Իսկ ո՞վքեր էին նրա նախնիքը,—յայտնի է: Ունէի՞ն արդեօք նրանք կալուածներ,—այն ևս յայտնի է...:

Թէ ո՛ր աստիճան իշխան Մադաթովի մատը գործել էր այդ պարգևագրի խմբագրութեան մէջ, յայտնի է նրանից, որ իշխանն ստացաւ այդ գիւղերը իրանց բնակիչների հետ ճորտութեան իրաւունքներով: Ճորտութիւնը թէ պարսկական և թէ տաճկական Հայաստանում երբէք գոյութիւն չէ ունեցել:

Իշխանը թէև ծնուած էր Ղարաբաղում, բայց իւր կրթութիւնն ստացած լինելով ռուսաց մայրաքաղաքների բարձր ազնուական շրջաններում, նոյն ժամանակուայ արիստոկրատիայի ոգով էլ դարգացած էր: Ռուսաստանում

այն ժամանակ ճորտութիւն կար. իսկ ճորտութիւնը նրա համար մի անհրաժեշտութիւն էր. նոյնը ցանկացաւ մըտցնել իրան ընծայուած գիւղերի մէջ:

Հասկանալի է, որ մի այսպիսի օտարոտի, միևնոյն ժամանակ անմարդասէր նորաձևութիւնը պիտի գրգռէր նրա դէմ գիւղացիների դժգոհութիւնը մի կողմից, իսկ Մելիք-Շահնազարեանների ժառանգների բողոքը միւս կողմից, որովհետև յիշեալ կալուածները նրանց տոհմին էին պատկանում:

Բայց ամենավնասակարն այն էր, որ իշխան Մադաթովի վարմունքը թուլացրեց Ղարաբաղի բոլոր տիրապետող մելիքների ժառանգական իրաւունքները, և դրա հակառակ բարձրացրեց խանի նշանակութիւնը:

Երբոր նա խանի պարգևագրով ընծայ ստացաւ 15 գիւղ, շատ հասկանալի է, որ այդ պարգևագիրը վաւերական դարձնելու համար, ինքը իբրև տեղային նահանգային-զինուորական գլխաւոր, որ կարգուած էր խանի գործողութիւնների վրայ հսկելու համար, ոչ միայն ստիպուած էր ճանաչելու խանի մէջ բաշխելու և ընծայելու իրաւունք, այլ պիտի աշխատէր այդ իրաւունքը ճանաչել տալ և ռուսաց կառավարութեանը, որ դեռ ևս տեղային գործերի հետ լաւ ծանօթ չէր: Միւս կողմից նա պիտի աշխատէր ոչնչացնել մելիքների տիրապետական իրաւունքները՝ երկրի տէր և իշխանը ցոյց տալով միայն խանին: Այդպէս էլ վարուեց նա:

Դրա հետևանքն այն եղաւ, որ Մէհտի-խանն սկսեց Ղարաբաղի բուն, արմատական կալուածատէրերին (որպէս էին հայոց մելիքները, վանքերը և հայ ժողովուրդը) զրկել և նրանց հողերը աջ ու ձախ բաժանել իւր ազգականներին և մերձաւորներին: Հայոց մելիքներից այդ ժամանակ նշանաւոր մարդիկ չէին մնացել, որ կարողանային

խանի զեղծումների մասին բողոքել, տեղեկութիւններ տալ ուր որ հարկն էր: Իսկ իշխան Մադաթովը, որպէս ասում են, մատների միջից էր նայում խանի անկարգութիւնների վրայ, և թոյլ էր տալիս նրան բախշումներ անել, պարգևներ տալ, որպէսզի իւր ստացածը ևս օրինական ձև ստանայ, այսինքն՝ խանի մէջ հաստատուի ընծայելու, պարգևելու իրաւունքը:

Ով որ ուշի-ուշով քննել է Ղարաբաղի խոշոր կամ մանր կալուածատէրերի ձեռքում գտնուած թղթերը, անպատճառ նկատած կըլինի, որ այդ թղթերը, խիստ սակաւ բացառութեամբ, գրուած են Մէհտի-խանի ժամանակներում և վաւերացրած են նրա կնիքով: Իսկ Մէհտի-խանի նախորդների՝ Փանահ-խանի և Իբրահիմ-խանի ժամանակներից, որոնք աւելի զօրաւոր մարդիկ էին և մի ժամանակ ամբողջ Ղարաբաղն իրանց իշխանութեան ներքոյ ունէին,—այդ խաներից տուած խիստ հազիւ են գտնվում այնպիսի թղթեր, որ դրանք որևիցէ մէկին գիւղ կամ մի մեծ կալուածք ընծայած լինէին:

Այդ առատ բաշխումները կատարուեցան Մէհտի-խանի ժամանակ, երբ ռուսները տիրել էին Ղարաբաղին և երբ իշխան Մադաթովը կարգուած էր տեղային նահանգային-զինուորական գլխաւոր և նրան յանձնուած էր հսկել խանի գործողութիւնների վրայ:

Թէ ո՛րպիսի մարդիկ էին ստանում գիւղեր, ընդարձակ կալուածներ, մենք կըբերենք մի քանի օրինակ.

Ֆարաջուլլա-բէկ, Ռահիմ-բէկ, Իբրահիմ-բէկ և Հասան-բէկ եղբայրներն ստացան Մէհտի-խանից 8 գիւղ: Դրանց հայրը (Ուզուբլուն) Մէհտի-խանի հօր մօտ ղահճի պաշտօն էր կատարում:

Մէհտի-խանի ղաթրչի (ջորեպան) Մուրադի որդիքը՝

Վալի-բէկն ու Թայիր-բէկը, նոյնպէս ստացան մի քանի գիւղ։

Տեղ անունով հայաբնակ գիւղը, որ մի քանի հարիւր տուն բնակիչ ունի, պատկանում էր հայազգի Մելիք-Գէորգին։ Այդ գիւղից մի հասարակ հայ մշակ տարել էին Շուշի բերդի պարիսպների վրայ բանեցնելու. որովհետև նրան շատ էին աշխատեցնում, նա բարկութիւնից մահմեդականութիւն ընդունեց և կոչուեցաւ Ղասըմ։ Այդ Ղասըմի որդի Ռոստոմ-բէկը դարձաւ Մէհտի-խանի տան նազիրը (տնտեսը), իսկ վերջինի որդի Ասատ-բէկը խանից պարգև ստացաւ Տեղ գիւղը։

Պատմում են, երբ Մէհտի-խանի եղբօրորդի Ջաֆար-Ղուլի-խանը նկատեց, որ նա Ղարաբաղի գիւղերն այսպէս առատութեամբ բաժան-բաժան է անում, ինքը ևս 12 գիւղի ցուցակ կազմեց, և որովհետև նրա յարաբերութիւնները իւր հօրեղբօր հետ լաւ չէին, վերոյիշեալ նազիր Ռոստոմ-բէկի միջնորդութեամբ ներկայացրեց Մէհտի-խանին, խնդրելով որ իւր անունով հաստատէ ցոյց տուած գիւղերը։ Ռոստոմ-բէկը 12 գիւղի պարգևագիրը գրել տուեց և խանի կնքով վաւերացնելով, յանձնեց Ջաֆար-Ղուլի-խանին։ Իսկ այդ վերջինը մի քանի օրից յետոյ փոշմանեց, թէ ինչու Հայոց Խնածակ գիւղը ևս չէ մտցրել այն ցուցակի մէջ, որովհետև այդ գիւղը Շուշի բերդին բաւական մօտ էր և կարող էր իւր համար լաւ ամարանոց լինել։ Նա կրկին դիմում է նազիր Ռոստոմ-բէկի միջնորդութեանը։ Նազիրը՝ պարսից սովորութեան համեմատ խանի պարգևագրի լուսանցքի (հաշիա) վրայ աւելացնում է Խնածակ գիւղի անունը և ներկայացնում է կնքելու։ Բայց Մէհտի-խանը զարմանում է, նա բնաւ չէ յիշում, որ մի այդպիսի պարգևագիր տուած լինէր իւր եղբօրորդուն, որին սաստիկ ատում էր։ Նա փոխանակ կնքելու,

թուղթը պատառում է և մի կողմ ձգում։ Բանից դուրս է գալիս, որ սկզբում այդ թուղթը խանին վաւերացնել էին տուել այն րոպէների մէջ, երբ նա բնական դրութեան մէջ չէր եղել...։

Մէհտի-խանը սովորութիւն ունէր սաստիկ մեծ քանակութեամբ ռօմ գործ ածելու և խիստ հազիւ էր պատահում, որ նա զգաստ դրութեան մէջ գտնուէր։

Եւ այսպէս Մէհտի-խանի ազգականները, ջորեպանները, ախոռապանները և այլ մերձաւորները, «բէկ» տիտղոս ստանալով, միևնոյն ժամանակ ստացան գիւղեր, ընդարձակ հողեր, և այլն։ Իսկ այդ բոլորը խլուեցաւ հայոց մելիքների սեպհականութիւնից։

Բայց այդ անկարգութիւնները երկար շարունակուել չէին կարող։ Ամենքը գիտէին, որ ռուսաց կառավարութիւնը վերջիվերջ կըհասկանար այդ զեղծումները և խանի կամայականութեանը սահման կըդնէր։

Միևնոյն ժամանակ գիտէին և այն, որ մշտական արբեցութեան մէջ գտնուող Մէհտի-խանը խիստ վատ յիշողութիւն ունի. նա իւր երեկուայ ասած խօսքը, տուած թուղթը կարող է այսօր մերժել։ Այդ էր պատճառը, որ խանի դրութիւնից օգուտ քաղողներն աշխատեցին մի կերպով հեռացնել նրան Ղարաբաղից, որպէսզի նրանից ստացած թղթերը պահպանէին իրանց նշանակութիւնը։

Մէհտի-խանը բաւական երկչոտ մարդ էր։ Ամեն կողմից սկսեցին վախեցնել նրան, թէ ռուսները դիտաւորութիւն ունին նրան սպանել տալու, Սիբիր ուղարկելու, և այլն։ Ասում են, թէ ինքը իշխան Մադաթովը նոյնպէս կողմնակի կերպով նպաստում էր խանի անվստահութեանը։

1822 թուին Մէհտի-խանը փախաւ Պարսկաստան *)։

---

*) Պատմում են, թէ խանի փախուստն այն աստիճան շտապով կատարուեցաւ, որ կնիքը մոռացութեամբ թողեց իւր

Բայց նրա փախուստը ճանապարհ բաց արաւ պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի 1826 թուի մի նոր արշաւանքին դէպի Ղարաբաղի և Գանձակի կողմերը, որ ռուսներին բաւական հոգսեր պատճառեց, և որի ժամանակ հայերը դարձեալ ցոյց տուին իրանց անձնանուիրութիւնը:

XLIV

1826 թուի ամառը պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան 80,000 զինուորով դարձեալ անցաւ Երասխ գետը: Ֆաթալի-շահի անձնավստահ որդին, որ առաջին փորձն էր արել իւր զօրքերի մէջ մտցնելու եւրոպական կրթութիւն, որ իրան նպատակ էր դրել վերականգնելու Պարսկաստանի վաղեմի փառքը, չէր կարող համբերել, որ Պարսկաստանի մի ամենալաւ մասին, որպիսին էր Անդրկովկասը, տիրէին ռուսները:

Նրա բանակի մէջ գտնվում էին Ղարաբաղի Մէհտի-խանը, Շաքիի Սէլիմ-խանը և Շիրվանի Մուստաֆա-խանը, որոնք առաջ ռուսաց կառավարութեանը հպատակութեան երդում էին տուել, իսկ յետոյ դաւաճանելով, փախել էին Պարսկաստան և պարսից զօրքերի հետ վերադառնալով, աշխատում էին ապստամբացնել Անդրկովկասի մահմեդականներին ռուսների դէմ: Նրա զօրապետների թւում գտնվում էր և վրաց իշխանազն Ալեքսանդրը մի քանի վրացի ազնուականների հետ, որոնք յուզում էին Ղազախի, Բորչալուի և Շամշադինի Թարաքամաներին ռուսների դէմ:

Անցնելով Երասխ և մտնելով Զանգեզուրի մահալը, Ա-

քարտուղար Միրզա-Ջամալի մօտ. և խանի բացակայութիւնից յետոյ այդ կնիքը երկար ժամանակ գործ էր ածվում...:

բաս-Միրզան բոլորովին ջարդեց ռուսաց մի ջոկատ (բատալիօն), որ գտնվում էր Կորիս գիւղում: Այստեղից արագութեամբ մտաւ նա Ղարաբաղի գաւառը և տիրեց ամեն տեղ:

Ղարաբաղի պահպանութեան համար ռուսները թողել էին Եգերեան զօրագնդից վեց վաշտ (ռոտա) միայն, գնդապետ Ի. Ա. Րէուտի հրամանատարութեան ներքոյ, որոնք գտնվում էին Չանախչի աւանում, որ այդ ժամանակ պատկանում էր իշխան Մադաթովին: Երբ պարսից զօրքերը մօտեցան, գնդապետ Րէուտը թողեց Չանախչին և իւր զինուորների հետ փախչելով, հազիւ կարողացաւ ամրանալ Շուշի բերդում:

Պարսիկները գրաւեցին Չանախչին և Աբաս-Միրզայի առաջին գործն եղաւ հրամայել, որ քանդեն իշխան Մադաթովի պալատը, որ կառուցել էր նոյն աւանում:

Նախընթաց գլխում տեսանք, որ իշխան Մադաթովն ստացաւ Մէհտի-խանից 15 գիւղ, որոնց թւում գտնվում էր նաև Չանախչին: Այդ գեղեցիկ աւանը Մելիք-Շահնազարեանների ամրոցն էր. այնտեղ էին գտնվում այդ տոհմի վաղեմի պալատները: Իշխան Մադաթովն այդ պալատները քանդել տալով, նրանց աւերակների վրայ հիմնեց իւր նոր պալատը, որի փառքը երկար վայելել չկարողացաւ նա...:

Աբաս-Միրզան Չանախչին աւերակ դարձնելով, անցաւ և պաշարեց Շուշի բերդը: Իւր առաջապահ զօրքերը իւր երէց որդի Մահմադ-Միրզայի և Ամիր-խան-սարդարի*) առաջնորդութեամբ ուղարկեց նա դէպի Գանձակի գաւառը, որոնք տիրեցին Գանձակի բերդին, բոլորովին ոչնչացրին մերձակայ գերմանական կալօնիաները, առաջացան մինչև Շամքորի գետը և այնտեղից պատրաստվում էին գնալ նաև Թիֆլիզը տիրելու:

*) Ամիր-խան սարդարը Աբաս-Միրզայի հօր՝ Ֆաթալի-շահի փեսան էր:

Ամբողջ Անդրկովկասեան քրիստոնեաները գտնվում էին սարսափի մէջ. ամենքն էլ սպասում էին, որ Աղա-Մահմադ-խանի բարբարոսութիւնները պէտք է կրկնուեն: Տեղային մահմեդականութիւնը մեծ յուզմունքի մէջ էր. բոլորը պատրաստուած էին միանալու պարսիկների հետ՝ ռուսներին ջարդելու և պարսկական իշխանութիւնը կրկին Անդրկովկասում վերականգնելու համար:

Իշխան Մադաթովն այդ ժամանակ գտնվում էր Կովկասեան հանքային ջրերում, ուր գնացել էր իւր առողջութիւնը կազդուրելու: Այնտեղ տեղեկութիւն ստացաւ Վրաստանի գլխաւոր հրամանատար զօրապետ Երմօլովից, թէ որպիսի վտանգ էր սպառնում Անդրկովկասին: Նա մոռացաւ իւր հիւանդութիւնը և երկու օրուայ մէջ ջրերից հասաւ Թիֆլիզ: Անմիջապէս (10 օգոստոսի) նրան առաջարկուեցաւ ընդունել այն զօրքերի հրամանատարութիւնը, որ պատրաստել էին ուղարկելու պարսիկների դէմ: Իշխանը մեծ ուրախութեամբ ընդունեց, որովհետև վտանգը գլխաւորապէս իւր հայրենիքին էր սպառնում:

Մինչև իշխան Մադաթովի հասնելը դառնանք դէպի Շուշի բերդը, տեսնենք այնտեղ ինչ էր կատարվում:

Աբաս-Միրզայի բոլոր ջանքերը բերդը տիրելու համար իզուր անցան: Իզուր նրա մօտ գտնուած ֆրանսիացի ու իտալացի ինժեներները գործ էին դնում իրանց բոլոր արհեստը: Բնութիւնից անառիկ ստեղծուած բերդը գրաւելու հնար չկար: Նա ընդդիմացաւ 48 օրուայ սարսափելի պաշարման:

Բայց միայն բերդի բնական ամրութիւնը չէր, որ նրան պահպանեց թշնամու յարձակումներից: Նրան պահպանեց գլխաւորապէս հայերի անձնազոհութիւնը:

Բացի բերդի մէջ բնակուող հայերից, այնտեղ շրջակայ գիւղերից հաւաքուել էին բազմաթիւ հայեր: Այնտեղ

կային, որպէս վերևում յիշեցինք, վեց վաշտ ռուս զինուոր միայն, գնդապետ Րէուտի հրամանի ներքոյ: Թէ ինչպէս էին գործում հայերը, մենք իբրև ապացոյց մէջ կբերենք մի փոքրիկ կտոր իշխան Մադաթովի կենսագրութիւնից.

«Ոչինչ չէր կարող խռովեցնել մի բուռն ռուսներին, որոնք ընկերաբար միանալով հայերի հետ (դրանք ըստ մեծի մասին իշխան Մադաթովի կալուածներից էին), քաջութեամբ պատասխանում էին պաշարուած բերդի բոլոր կէտերի վրայ թշնամու յարձակումներին, որ թուով երեսուն անգամ աւելի էր, քան թէ բերդի մէջ գտնուած պահապան զօրքը (գարնիզօն), որ չունէր ո՛չ բաւականաչափ ուտելու պաշար և ոչ հրանօթներ, որոնք մնացել էին Ջանախչիի մէջ, 42-րդ Եգերեան զօրագնդի բնակութեան տեղում: Տեսնելով գարնիզօնի այդքան յամառ ընդդիմադրութիւնը և յոյս չունենալով ուժով նուաճելու նրան, Աբաս-Միրզան աշխատում էր տկարացնել նրան գիշերային անընդհատ յարձակումներով և կրակ թափելով...: Վերջապէս դրա մէջ ևս յաջողութիւն չգտնելով, սկսեց զանազան խոստմունքներով հրապուրել բերդի մէջ գտնուած հայերին, աշխատելով համոզել նրանց, որ բաժանուին ռուսներից: Բայց և՛ այդ ձեռնարկութեան մէջ հանդիպեց հայերի կողմից միահոգի և հաստատուն մերժման: Սահմանագլխի այդ նշանաւոր բերդի գրաւումն անպատճառ կ'ունենար մեզ (ռուսների) համար չափազանց վատ հետևանքներ. որովհետև, Աբաս-Միրզան տիրելով նրան, այլևս արգելք չէր ունենայ կանգնեցնել իւր արշաւանքը, և ուղղակի առաջ կըխաղար դէպի Թիֆլիզ, ուր կարող էր հասնել, նախ քան մեր զօրքերը ժամանակ կըգտնէին միանալու, որ պաշտպանէին այդ քաղաքը: Շուշիի մէջ կատարուած գործողութիւնները սքանչելի էին: Գիշերով պատրաստուած վառօդի և գնդակների քանակութիւնը գործ

էր ածվում ցերեկով։ Մինչև անգամ (հայոց) կնիկները և մանկահասակ աղջիկները ցոյց էին տալիս եռանդ և քաջութիւն. օգնում էին պաշարուածներին հենց պատնէշների վրայ՝ կռուելու ժամանակ բաժանելով նրանց պատրոններ։ Դեռ մինչև այսօր պատմվում են շատ զրոյցներ Շուշիի բնակիչների այդ ժամանակի ինքնազոհութիւնների մասին»*)։

Այդ ինքնազոհութեան օրինակներից մենք կյիշենք մէկը միայն, որի մէջ փայլում է Ղարաբաղցի կնոջ հերոսութիւնը.

Հէնց նոյն օրը, երբ Աբաս-Միրզայի զօրքերը պաշարում են Շուշի բերդը, մի աղքատ կին իւր ամուսնու հետ մի պարկ ցորեն էր տարել ջրաղաց՝ աղալու համար։ Շուշի բերդի ջրաղացները գտնվում են Գարգար գետի ձորի մէջ, Հինոտ անունով գիւղի մօտ։ Ո՛վ որ տեսել է այդ անդնդախոր ձորը, ո՛վ որ տեսել է այն նեղ ճանապարհը, որ քարափների կրծքի վրայով, սարսափելի գահավէժներից բարձրանում է դէպի բերդը, կարող է երևակայել, թէ ո՛րքան քաջութիւն, ո՛րքան սրտի ամրութիւն պէտք էր մի կնոջ, որ նա կարողանար այդ ճանապարհով գնալու ժամանակ ո՛չ միայն իւր անձն ազատել պարսիկ սարվազների ձեռքից, այլև կոտորել նրանցից շատերին։

Աղքատ կնոջ ամուսինը ալիւրի պարկը շալակած, երկուսը միասին բարձրանում էին քարափներից, որ յանկարծ վրայ են հասնում մի խումբ սարվազներ։ Ամուսին այրը պարկը ցած է գցում և սկսում է փախչել։ Իսկ կինը մնում է և սկսում է քարերով կռուել սարվազների հետ։ Նրան յաջողվում է մէկին ցած գլորել և խլել նրանից հրացանն ու սուրը։ Այնուհետև մի կողմից պատերազմելով սարվազ-

*) ‹Жизнь генералъ-лейтенанта князя Мадатова›. Изданіе второе. Санктпетербургъ. 1863. Երես 115—116.

ների հետ, միւս կողմից ալիւրի պարկը իւր ետևից քարշ տալով, նա բարձրանում է դէպի բերդը։ Բերդի միջից հեռուից տեսնում են նրա կռիւը և աղաղակներով քաջալերում են։ Նա ազատում է իւր զաւակների ալրուստի պաշարը և մինչև բերդը մտնելը սպանում է մի քանի սարվազ։

Մինչև այսօր ամեն մի շուշեցի չէ մոռացել այդ կնոջ անունը. նրան կոչում էին Խաթայի *)։

Շուշի բերդը հայերի օգնութեամբ ամբողջ 48 օր պաշտպանուեցաւ Աբաս-Միրզայի բազմաթիւ զօրքերի դէմ։ Այդ սահմանագլխեան բերդը մի հզօր խոչընդոտն, մի մեծ արգելք էր նրա արշաւանքի առաջադիմութեանը դէպի Անդրկովկասի խորքերը։ Եթէ Աբաս-Միրզան այստեղ աջողութիւն գտնէր, գործերի դրութիւնը շատ պիտի դժուարանար ռուսների համար։ Ղարաբաղի Մէհտի-խանը, այդ՝ ռուսներից յարգուած և զօրապետի (գեներալ աստիճանի հասցրած դաւաճանը, արդէն ոտքի էր կանգնացրել Ղարաբաղի մահմեդական բոլոր խաշնարած, կիսավայրենի ցեղերին ռուսների դէմ։ Բացի Աբաս-Միրզայի կանոնաւոր զօրքերից, ռուսաց սահմանների մօտ թափառող պարսից բոլոր աւազակ ցեղերը, ինչպէս էին շահսեվանները, ղարադաղցիքը, ահագին խմբերով անցել էին Երասխը՝ աւարառութեան և կողոպուտի նպատակով։

Բայց Շուշին պաշտպանվում էր։

Այդ ժամանակ Աբաս-Միրզայի առաջապահ զօրքերը նրա երէց որդի Մահմադ-Միրզայի և Ամիր-խան-սարդարի առաջնորդութեամբ, տիրելով Գանձակին անցել էին մինչև Շամքօրի գետը. այդտեղից պատրաստվում էին գնալ Թիֆլիզը գրաւելու համար։

*) Գնդապետ Ռէուտի առաջարկութեամբ ռուսաց կառավարութիւնը նշանակեց այդ կնոջ համար ցմահ կենսաթոշակ։

Դեռ օգոստոսի 4-ին ռուսաց զօրքերը Թիֆլիզից ճանապարհ էին ընկած թշնամու առաջն առնելու համար։ Իշխան Մադաթովն սկզբում նրանց հետ չէր. նա արագութեամբ յետոյ հասաւ իւր հրամանատարութեանը յանձնուած զօրքերին Կարմիր-կամուրջի մօտ, և այնտեղից առանց ժամանակ կորցնելու ճանապարհ ընկաւ դէպի Գանձակ։

Զագամ գետի մօտ իշխան Մադաթովը հանդիպեց վրաց իշխանազն Ալեքսանդրին, որ 2,000 պարսիկ զօրքով և մի քանի վրացի ազնուականների հետ կամենում էր անցնել դէպի Նուխուայ գաւառը՝ լէզգիներին և տեղային մահմեդականներին ապստամբացնելու ռուսների դէմ։ Իւր զօրաբաժնից իշխան Մադաթովն առաւ փոքրաթիւ ձիաւորներ և յարձակուեցաւ Ալեքսանդրի վրայ։ Կարճատեւ կռուից յետոյ վրաց իշխանազը ստիպուեցաւ խոյս տալ դէպի Շամքօրի լեռները։

Յաջողակ ձեռքով ջարդելով թշնամու առաջապահ գնդերը, իշխան Մադաթովը սեպտեմբերի սկզբներին հասաւ Շամքօրի գետի մօտ, որի աջ ափի վրայ սպասում էր նրան պարսից գլխաւոր զօրութիւնը, պատերազմական կարգով։ Նրանց թիւն անցնում էր 10,000-ից, չհաշուելով Ղազախի և Շամշադինի թուրքերին, որոնք ահագին խմբերով միացել էին պարսիկների հետ։ Այդ խառնիճաղանճ բազմութեանն առաջնորդում էր Ամիր-խան-սարդարը, որ Շահի փեսան և նրա լաւ զօրապետներից մէկն էր. բացի նրանից, զօրապետների թւում գտնվում էր և Աբաս-Միրզայի երէց որդին։

Իսկ իշխան Մադաթովն ունէր իւր հրամանի ներքոյ միայն երկու ջոկատ (բատալիօն), 2 վաշտ (ռօտա) և 4 թնդանօթ։ Բայց քաջ և փորձուած զօրավարի անձնավստահութիւնը փշրեց թշնամու ահագին զօրութիւնը։

Նրա ահարկու անունը, որ արդէն մահմեդականների մէջ առասպելական նշանակութիւն էր ստացել, բաւական էր թշնամուն սարսափեցնելու համար։ Եւ իշխան Մադաթովը իւր պատերազմական ճարպկութիւնների մէջ գիտէր այնպիսի հնարքներ բանացնել, որ ազդէր արևելքցիների երևակայութեան վրայ։ Որպէս Հոմերոսի հերոսները Տրոյեան գրաւելու համար կազմեցին իրանց ամեհի փայտեղէն երիվարը, այնպէս էլ իշխան Մադաթովը սարքեց մի ահագին սայլ, որ իբրև մի հրէշաւոր մեքենայ, հանդարտ ընթացքով առաջ էր տանում իւր զօրքերի առջևից։ Սայլի միջից ոռնում էին թնդանօթները, որ կապուած էին նրա վրայ։ Սարսափած թշնամին կարծում էր թէ այդ վիթխարի հրէշը իւր բերանից էր հոսում անընդհատ կրակն ու գնդակները։

Պարսիկները չարաչար կերպով ջարդուեցան։ Նրանց գլխաւոր հրամանատարը, Ամիր-խան-սարդարն ընկաւ կռուի դաշտում։ Աբաս-Միրզայի որդի Մահմադ-Միրզան առաջինն եղաւ, որ փախչելով խոյս տուեց պատերազմի դաշտից։ Նրան հետևեցին յաղթուած սարվազները, թողնելով Շամքօր գետի ափերի մօտ իրանց բոլոր ռազմամթերքը։

Իշխանն սկսեց հալածել թշնամուն, որ նա Գանձակի մօտ կանգ չառնէ տեղային հայերին վնասելու համար։ Սեպտեմբերի 4-ին հասաւ նա Գանձակի պարիսպների մօտ։ Քաղաքի հայ հասարակութիւնը մեծ հանդէսով հանդիպեց նրան, շնորհաւորելով նրա փառաւոր յաղթութիւնը։ Ամբոխը երգում էր նրա անունով արդէն յօրինուած ժողովրդական երգերը։

Շամքօրի յաղթութիւնն ազատեց Գանձակը թշնամու բարբարոսութիւնից *) և փոքր ինչ հանգստացրեց յուզուած

*) Աբաս-Միրզայի Նազար-Ալի-խան անունով զօրապետը, 1,500 մարաղեցի սարվազներով թողուած էր Գանձակի բերդի

մահմեդականներին *)։ Բայց դեռ ամենագլխաւորը մնացել էր. Շուշի բերդը դեռ ևս գտնւում էր պաշարուած դրութեան մէջ Աբաս-Միրզայի զօրքերով, որոնց հետ միացան Շամքօրի պարտութիւնից յետոյ փախած պարսիկները։

Իշխան Մադաթովն արդէն պատրաստուել էր գնալու Շուշին ազատելու համար, երբ յանկարծ հրաման ստացաւ գեներալ Պասկևիչից (որ այդ ժամանակ եկել էր Թիֆլիզ), որ Գանձակում սպասէ նրան։

Սեպտեմբերի 11-ին ինքը Պասկևիչն անձամբ եկաւ Գանձակ և ընդունեց բոլոր զօրքերի հրամանատարութիւնը։

«Սեպտեմբերի 13-ին, գիշերը, պարսից բանակից յայտնուեցան երկու հ ա յ, որոնցից մէկը, իբրև ռուսաց լեզուի թարգման, գտնւում էր Աբաս-Միրզայի մօտ և մի ժամանակ ծառայել էր իշխան Մադաթովի տանը։ Նրանք թախանձանօք պահանջում էին, որ իրանց թողնեն իշխանի (Մադաթովի) մօտ, որին հաղորդեցին թէ պարսիկները, իրանց բոլոր ծանրութիւնները թողնելով Թարթար գետի միւս կողմում, արդէն անցան Քիւրակ-չայ գետը, և առաջ են ընթանում, որ յանկարծակի յարձակում գործեն մեր (ռուսաց) զօրքերի վրայ։ Իշխան Մադաթովն անյապաղ այդ մասին տեղեկութիւն տուեց գեներալ-ադիւտանտ

պահպանութեան համար։ Այդ գաղանը պատրաստուել էր կոտորել տալ տեղացին հայերին, բայց հէնց որ լսեց իշ. Մադաթովի Շամքօրի յաղթութիւնը, շտապով թողեց Գանձակը և փախաւ։

*) Պարսիկները տեղային մահմեդականներին յուզելու համար գործ էին դնում ամեն տեսակ միջոց։ Պարսկաստանի նշանաւոր հոգևորականներից մէկը, որ իրան կոչում էր Իմամ-Յուսէին, հաւատացնում էր տեղային մահմեդականներին, որ իւր աղօթքների զօրութեամբ ռուսների գնդակները չեն կարող վնասել նրանց։ Իշ. Մադաթովը բռնել տուեց այդ երևելի փանատիկոսին և հրամայեց խեղդել։

Պասկևիչին, որից ստուեցան այդ դէպքի համար բոլոր հարկաւոր եղած հրամանները» *)։

Եւ իրաւ, Աբաս-Միրզան Շամքօրի պարտութիւնից յետոյ իւր զօրքերի մի մասը թողնելով Շուշի բերդի մօտ և առնելով իւր հետ 15,000 կանոնաւոր հետևակ և 20,000 ձիաւոր, 26 թնդանօթով, այնքան առաջ էր եկել, որ գտնւում էր 7 վերստ հեռաւորութեան վրայ Գանձակ քաղաքից։ Եւ ռուսները նրա շարժման մասին հազիւ թէ տեղեկութիւն կ'ունենային, եթէ վերոյիշեալ երկու հ ա յ ը, որոնք Աբաս-Միրզայի ծառայութեան մէջ էին գտնւում, լրտեսի պաշտօն չկատարէին։

Գանձակի մօտ ռուսաց զօրքերը բաղկացած էին միայն 6 ջոկատ (բատալիօն) հետևակներից և երեք գունդ (պօլկ) ձիաւորներից, ունէին 24 թնդանօթ։ Զօրքերի այդ անհամեմատ սակաւութիւնը Աբաս-Միրզայի ահագին զօրութեան դէմ կարող էր միայն պաշտպանողական դիրք բռնել և ոչ յարձակողական, և այսպէս էլ վարուելու դիտաւորութիւն ունէր գեներալ Պասկևիչը։ Բայց իշխան Մադաթովը, որ աւելի լաւ ծանօթ էր արևելքցիների հետ, համոզեց նրան, որ թշնամուն ժամանակ տալով, նրա զօրութիւնն աւելի կըբարդուի, տեղացի մահմեդականները կըմիանան նրա հետ. բացի դրանից, հասկացրեց, որ ասիացիների հետ պատերազմելու համար զօրքերի թիւն այնքան նշանակութիւն չունի, որքան համարձակ և վճռական յարձակմունքը։

Վճռեցին կռուել։ Իշխան Մադաթովի պատերազմական տաղանդը, որպէս Շամքօրի ճակատամարտում, նոյնպէս և Գանձակի մօտ կատարուած կռւում, ցոյց տուեց նրա զինուորական բարձր արժանաւորութիւնները։

*) «Жизнь генералъ-лейтенанта князя Мадатова». Изданіе второе. 1863. Երես 116։

Աբաս-Միրզան յաղթուեցաւ: Պարսիկներն այնքան շտապով սկսեցին փախչել, որ պատերազմի դաշտում և ճանապարհների վրայ թողեցին իրանց բոլոր ծանրութիւնները: Աբաս-Միրզան սեպտեմբերի 15-ին, իսկ նրա ջարդուած զօրքերը նոյն ամսի 17-ին անցան Երասխ գետը: Իշխան Մադաթովը հալածեց նրանց մինչև պարսից սահմանները:

Թշնամու հեռանալովը Շուշի բերդի պաշարումն ինքն ըստ ինքեան լուծուեցաւ: Իշխան Մադաթովն շտապեց այնտեղ բերդի դրութիւնը տեսնելու համար: Մի քանի վերստ հեռաւորութեան վրայ ահագին բազմութեամբ նրա առաջ դուրս եկաւ գնդապետ Ռէուտը հայոց հոգևորականութեան հետ: Մինչև անգամ կանայքը, երեխաները ուրախութեան աղաղակներով արտայայտում էին իրանց շնորհակալութիւնը իրանց ազատչին:

Այստեղ իմացաւ նա, որ թշնամին ոչ միայն աւերակ էր դարձել նրա Չանախչի ամրոցը, այլ բոլորովին ոչնչացրել էր նրա գիւղերից 6-ը: Ինչ որ կարողացել էին տանել, տարել էին, ինչ որ չէին կարողացել, այրել էին:

Բայց կողոպտուած Ղարաբաղը տակաւին յուզման մէջ էր: Մէհտի-խանը դեռ ևս գրգռում էր մահմեդականներին զանազան անկարգութիւններ գործելու, յորդորում էր նրանց թողնել Ղարաբաղը, անցնել Երասխի միւս կողմ՝ պարսից հողի վրայ, և այնտեղից յարձակումներ գործել:

Իշխան Մադաթովը պէտք է իրան ցոյց տար Ղարաբաղի բնակիչներին, մանաւանդ որ պարսիկները նրա մասին սուտ լուրեր էին տարածել, որ կռուի մէջ սպանուած է:

Բայց նա իր ձեռքի տակ զօրք չունէր, որովհետև նրա հրամանատարութեան ներքոյ գտնուած զօրքն այդ ժամանակ յանձնուած էին գեներալ Պասկևիչին: Այդ դէպքում ևս նրան օգնութեան հասան հլու և հնազանդ հայերը: Շուտով կազմուեցան կամաւորների խմբեր, որոնց իր հետ առնելով, իշխանն սկսեց թռչել դէպի Ղարաբաղի զանազան կողմերը, և ամեն տեղ հանգցնել Մէհտի-խանի բորբոքած խռովութիւնները:

Հայերի օգնութեամբ իշխանը խաղաղացրեց մահմեդականների խռովութիւնները, որոնց անհաւատարմութիւնը շուտով մոռացուեցաւ, մոռացուեցաւ և հայերի անձնազոհութիւնը: Այդ բաւական չէր, իշխանն սկսեց այնուհետև աւելի շողոքորթել, աւելի նշանակութիւն տալ մահմեդականներին, որպէս դաստիարակութեան մէջ տգէտ մայրերը աւելի լրբացնում են չար երեխաներին՝ նրանց խոստումներ անելով, քաղցրաւենիք տալով, որ ձայները կտրեն, անկարգութիւն չգործեն: Այսպէս էին վարվում մահմեդականների հետ. իսկ հայերի համար ասում էին՝ «սրանք մերն են»...:

XLV

Բայց ովքեր էին այն երկու հայը, որ դեռ Գանձակի կռուից առաջ թողեցին Աբաս-Միրզայի բանակը և եկան իշխան Մադաթովի մօտ և նրան խիստ նշանաւոր տեղեկութիւններ հաղորդեցին պարսիկների գործողութիւնների մասին:—Նրանց անունները, կամ ով լինելը մեզ յայտնի չէ:

Մեզ յայտնի է միայն մէկ հայ երիտասարդի անունը, որ այդ միջոցներում թողեց Աբաս-Միրզայի ծառայութիւնը և եկաւ իշխան Մադաթովի մօտ: Բայց նախ քան նրա մասին խօսելը, մենք հարկաւոր ենք համարում խիստ համառօտ կերպով ցոյց տալ, թէ որպիսի հայեացք ունէր Աբաս-Միրզան իր հպատակ հայերի վերաբերութեամբ և ինչ վիճակի մէջ էին նրա ժամանակ հայերը Պարսկաստանում:

Աբաս-Միրզան՝ պարսից գահի թագաժառանգը, միևնոյն ժամանակ Պարսկաստանի մի նշանաւոր մասի՝ Ատրպատականի փոխարքան էր: Ատրպատականն աւելի խիտ բնակեցրած էր Հայերով և այլ քրիստոնեայ ազգերով, որպէս էին ասորի նեստորականները: Ատրպատականը սահմանակից էր պարսկական այն նահանգներին, որ ռուսները մասամբ գրաւել էին և մնացածը ևս ցանկութիւն ունէին գրաւելու, Երասխ գետը թողնելով իբրև սահմանագիծ երկու պետութիւնների մէջ:

Աբաս-Միրզան թէև Նադիրի, Աղա-Մամադ-խանի նման հզօր պատերազմող չէր, բայց խելացի քաղաքագէտ էր և երկրի լաւ կառավարիչ: Նա այն տեսակ անձնաւորութիւններից էր, որ գիտէր ամեն տեսակ ուժերից օգուտ քաղել: Իսկ Պարսկաստանի շինութեան համար մի մեծ ուժ նա տեսնում էր Հայերի մէջ: Այդ էր պատճառը, որ նա սկսեց Հայերին օր ըստ օրէ բարձրացնել՝ նրանց լայն ասպարէզ և ընդարձակ արտօնութիւններ շնորհելով: Նրա ողորմածութիւնը Հայերի վերաբերութեամբ համակրում էր և նրա հայրը, բարի և մարդասէր Ֆաթալի-շահը, որի թագաւորութեան ժամանակ Պարսկաստանի Հայերը վայելում էին կատարեալ բախտաւորութիւն:

Որպէս Շահ-Աբաս Մեծը մի ժամանակ Պարսկաստանի վաճառականութիւնը ծաղկեցնելու համար Սպահանի Հայերից առևտրական ընկերութիւններ էր կազմում և ինքը ևս իւր սեպհական դրամագլխով մասնակցում էր նրանց առևտրական ձեռնարկութիւնների մէջ, այնպէս էլ Աբաս-Միրզան ունէր իւր հայ վաճառականները, որոնք գործում էին նրա դրամագլխով:

Երկրի հայ ազգաբնակութիւնը մահմեդական կառավարիչների հարստահարութիւններից ազատ պահելու համար նա բարձրացրեց հայոց մելիքների նշանակութիւնը,

նրանց ընդարձակ իրաւունքներ տալով, նրանց համար ռոճիկներ սահմանելով, և այլն:

Ճանաչելով որ հայ ժողովուրդը սերտ կերպով կապուած է իւր եկեղեցու և եկեղեցականների հետ, նա ըսկսեց զսպել ոչ միայն մահմեդականների կրօնական հալածանքը քրիստոնեաների դէմ, այլ աշխատում էր աւելի ուժ և խրախոյս տալ քրիստոնէութեանը: Յաճախում էր հայոց եկեղեցին, ներկայ էր գտնվում հայոց եկեղեցական հանդէսներին, որ իւր օրինակով ցոյց տայ, թէ հայերի կրօնական պաշտամունքները ամենայն յարգանքի արժանի են: Նրա ժամանակ հայոց եկեղեցիներն սկսեցին զանգակ հարկանել, որ առաջ արգելուած էր:

Նոյն ժամանակուայ Ատրպատականի Իսրայէլ եպիսկոպոսը նրա ամենալաւ բարեկամն էր: Նա յատկացրեց եպիսկոպոսի համար նշանաւոր ռոճիկ. բացի դրանից, առաջնորդարանի ծախքերի համար, իբրև մշտական սեպհականութիւն, ընծայեց ընդարձակ կալուածներ, որ նրանց եկամուտներով պահպանուի առաջնորդարանը *):

Ատրպատականի հայոց վանքերի գոյութիւնն ապահովացնելու համար շնորհեց նա, իբրև մշտական սեպհականութիւն, իւրաքանչիւր վանքին մի-մի գիւղ՝ իրանց բնակիչներով, հողերով ու սահմաններով: Այդ գիւղերն ազատ թողեց նա արքունի հարկերից, այնպէս որ կառավարութեան փոխարէն ինքը վանքն իրաւունք ունէր ըս-

*) Այդ ժամանակ Ատրպատականի հայոց հոգևոր կառավարութեան առաջնորդարանը գտնվում էր Սալմաստ գաւառի Հաւթվան գիւղում, և կալուածները այդ գիւղի հողերիցն էին, որոնք հետզհետէ վաճառուեցան հետագայ թեմական առաջնորդների ագահութեամբ...:

տանալ ոչ միայն մշակութեան բերքերի մի մասը, այլև արքունի հարկերը *):

Թաւրիզը Աբաս-Միրզայի աթոռանիստն էր. այդ քաղաքի հայ հասարակութեան դրութիւնը բարուոքելու համար ազատեց նրանց ամեն տեսակ հարկերից: Նոյն արտօնութիւնը Թաւրիզեցի հայերը վայելում են մինչև այսօր, իսկ նրանց հարևան մահմեդականները հարկ են վճարում:

Երկար կըլինէր մի առ մի թուել, թէ որքան ողորմած էր նա դէպի հայոց ժողովուրդը և որքան բարձրացրեց նա այդ ժողովրդի դրութիւնը՝ նրան ամեն կերպ արտօնութիւններ շնորհելով: Բայց այն ևս պէտք է նկատել, որ Աբաս-Միրզան այդ բոլորի մէջ ունէր և իւր քաղաքական նպատակները: Նա ամեն հնար գործ էր դնում, որ հայերի սրտերն ամուր կերպով կապէ Պարսկաստանի հետ և նրանց համակրութիւնը դէպի ռուսները սառեցնէ: Այսուամենայնիւ ինչ էլ որ լինէին նրա քաղաքական նպատակները, բայց դարձեալ նրա համակրութիւնը դէպի հայերը բոլորովին անկեղծ էր **):

Աբաս-Միրզան և նրա նախորդները հայերի մէջ

*) Ատրպատականում երեք նշանաւոր վանք կայ. Նախավկայի վանքը, որ գտնվում է Երասխի ափի մօտ Հին-Ջուղայից ոչ այնքան հեռու. Թադէոս առաքեալի վանքը, Մակուի գաւառում, և Բարդուղիմէոս առաքեալի վանքը Հաղբակի գաւառում: Այդ վանքերը դեռ պահպանում են Աբաս-Միրզայի շնորհած կալուածները, բայց հոգևոր իշխանութեան անհոգութիւնից խիստ ողորմելի դրութեան մէջ են:

**) Նրա անկեղծութեանը կարող է ապացոյց լինել այն, որ 1827 և 1828 թուերում Պարսկաստանի հայոց դէպի Անդրկովկաս գաղթականութեան ժամանակ շատ աշխատեց նա, որ հայերը չգաղթեն: Բայց ռուսաց սուինները, Ներսէսը և Լազարեանները նրա բոլոր ջանքերը թողեցին ապարդիւն և աւելի քան 40 հազար հայ գաղթեցին դէպի Արարատեան նահանգը և այլ տեղեր:

գտնում էին ոչ միայն լաւ երկրագործի, վաճառականի և արհեստաւորի արժանաւորութիւններ, այլ և զինուորական տաղանդ և կառավարչական ընդունակութիւններ ևս: Նրա ժամանակ կամ նրանից առաջ հայերից շատերը ոչ միայն զինուորական բարձր աստիճանների հասան, այլև վարում էին ամբողջ նահանգների փոխարքայութեան պաշտօն, դեր էին խաղում դիպլօմատիայի մէջ, կառավարում էին պետական գանձը և մինչև անգամ իշխում էին շահերի կանանոցներում ներքինիների և ներքինապետների պաշտօնով *):

*) Պարսկաստանում այդ ժամանակուայ ծաղկած հայ աւագների պատմութիւնն առանձին գրքի կարօտ է. մենք կըյիշենք նրանց անունները միայն.

1. Իւսուփ-խան՝ սպանդիար (մարզպան) Արաղստանի:
2. Միւս Իւսուփ-խան՝ թօփչի-բաշին (թնդանօթաձիգների
գլխաւոր): 3. Մուսա-բէկ թօփչի-բաշի: 4. Աղա-Եաղուբ
ներքինապետ շահի: 5. Աղա-Իբրահիմ՝ ղարաբաղցի, ագ-
գեցութեան տէր ներքինի Ֆաթալի-շահի կանանոցում: 6. Միւս
Աղա-Եաղուբ՝ երևանցի, ներքինի և մատակարար Ֆաթալի-
շահի կանանոցում: 7. Բժշկապետ Դաւիթ-խան Մկրտչեան՝
Նոր-Ջուղայեցի, Ֆաթալի-շահի և Մամադ-շահի ժամանակներում
բարձր Դռան բժիշկ: 8. Խուդադադ-խան՝ սալմաստեցի,
կառավարիչ Ատրպատականի զանազան գաւառների: 9. Դաւիթ-
խան ասպետ և Միրզա-Իւսուփ-խան Մելիք-Ջահնա-
զարեան դը-Ջապուր. առաջինն էր թարգման Ֆաթալի-շահի մօտ
և իբրև Պարսկաստանի լիազօր դեսպան ուղարկուեցաւ Նապօլէ-
օն I-ինի մօտ, երկրորդը առաջինի հօրեղբօր որդին էր. դա Պարս-
կաստանից դժգոհ լինելով եկաւ Թիֆլիզ, յետոյ գնաց Ս. Պետեր-
բուրգ, ուր և վախճանուեցաւ: 10. Զոհրաբ-խան՝
խազնադար-շահրիար՝ այսինքն արքունի գանձապետ. դա Ֆա-
թալի-շահի գանձապետը և փեսան էր: 11. Միւս Զոհրաբ-
խան Վարդանեանցը՝ արքունի գանձապետ էր Սպահանում: 12.
Աղա-Բահրամ՝ ներքինի, ամիր-դիւանխանէ, այսինքն պե-
տական դիւանի գլխաւոր: 13. Զոհրաբ-խան՝ ղուլամ-փիշ-
տական դիւանի գլխաւոր:

Մենք վեր կ՚առնենք Աբաս-Միրզայի մօտ գտնուած հայ ծառայողներից մի անձնաւորութիւն միայն, որի գործունէութիւնը մեր պատմութեան հետ կապ ունի, և գուցէ դա լինի այն երկու հայերից մէկը, որ յիշում է Իշխան Մադաթովի ռուս կենսագրողը։ Այդ քաջը կոչվում էր Բայինդուրեան կամ Բահաթուրեան Աօրի-բէկ։

Մեր պատմութեան մէջ աշխատել ենք փոքր ինչ ընդարձակ տեղ տալ ոչ թէ նշանաւոր տոհմական ազնուականներին, այլ ժողովրդի ստորին ծալքերից յառաջնուած, ժողովրդի զօրութիւնը և ոգին արտայայտող հերոս-

---

խոգմաթ-բաշի—Շահի արքունիքի սենեկապետների գլխաւոր։ 14. Իւսուֆ-խան՝ ամիր-թօփխանէ—պարսից թնդանօթաձիգ զօրքի (արտիլերիայի) գլխաւոր, Թիֆլիզեցի, բաղկալ Գելօենց տնից։ 15. Զոհրաբ-խան՝ ամիր-թօփխանէ։ 16. Սպանդիար-խան իշխանազն Ամատունի՝ Թիֆլիզեցի, ղուլամ-փիշ-խոդմէթ՝ Շահի սենեկապետ։ 17. Բէժան-խան զօրապետ։ 18. Ալլահվերդի-բէկ՝ ղարաբաղցի, Մամադ-շահի մօհրդարը՝ կնքապահը. նրա հօրեղբայրը՝ Մէհտի-խան սարհանգը, Բհադրան կոչուած գնդի զօրապետն էր, իսկ Ոգա-Ղուլի-խանը Շահի փիշ-խոդմէթն (սենեկապետ) էր։ 19. Աղաջան-խան սարհանգ (գնդապետ)։ 20. Ոսկան-Սամուրի՝ սպահանցի, Ֆաթալի-շահի վաճառականը։ 21. Մահտեսի Յովհաննէս Ղազարեան՝ Թաւրիզեցի, Աբաս-Միրզայի վաճառականը. դա ազատեց Դանիէլ կաթողիկոսին բանտարկութիւնից։ 22. Մանուչար-խան, որ կրում էր մօհթամէդ-ուդդովլէ տիտղոսը, որ նշանակում է նեցուկ պետութեան։ Դա Էնիկոլոփեանների տնից էր. Պարսկաստանում այն աստիճան բարձրացաւ, որ մի ժամանակ վարում էր հետևեալ նահանգների փոխարքայութեան պաշտօնը՝ Ռաշտի, Սպահանի, Լօռիստանի, Բախտիարիայի, Շուշթերի և Դասֆիջի։ 23. Խոսրով-խան՝ վալի (տիրապետող իշխան)՝ Թիֆլիզեցի, Ղայթմազեանց տոհմից. դա չափազանց ուժեղ լինելու պատճառով կոչվում էր և Խոսրով-խան շիր (առիւծ)։ 24. Նազուբ-խան՝ սուլթան (զօրապետ)։ 25. Սէթ-խան՝ բուշեհցի, սկզբում ծառայում էր անգլիական

ներին, որպէս էին՝ Գալի-Մահրասան (Աւագ վարդապետը), Թիւլի-Արզումանը, Ձալաղան-Իւղբաշին, Մելիք-Վանին և դրանց նմանները։ Այդ տեսակ անձնաւորութիւններից մէկն էր և Բայինդուրեան Աօրի-բէկը, որ թողնելով Աբաս-Միրզայի ծառայութիւնը, եկաւ Իշխան Մադաթովի մօտ և նրա հետ մեծ քաջութիւններ գործեց։

Աօրի-բէկի նախապապը՝ Բայինդուրը կամ որպէս պարսիկները կոչում էին Բահաթուրը, դեռ Շահ-Սուլթան Յուսէինի թագաւորութեան ժամանակ Սիւնեաց աշխարհից գնաց Պարսկաստան և պարսից ծառայութեան մէջ մըտ-

---

դեսպանատանը, յետոյ պարսից ծառայութեան մէջ մտաւ. դրա որդի Ծատուր-խան սարհանգը (գնդապետ) այժմ Թաւրիզի արտաքին գործոց նախարարի պաշտօնէութեան առաջին թարգմանն է։ 26. Դաւիթ-խան կամ Ժան-Դաւութ-խան՝ զմիւռնացի, ներկայ Շահի առաջին թարգմանն է։ 27. Թադէոս-խան կամ Թուրաբ-խան՝ Թաւրիզեցի, ջաւահիրջի-բաշի, Բ. Դռան ակնագործների գլխաւորը։ 28. Ղուլամ-Յուսէին-խան՝ սպանդիար (մարզպան) Արաղստանի, Իւսուֆ-խան սպանդիարի որդին։ 29. Իսմայիլ-խան Մելիք-Մինասեան՝ Թաւրիզեցի, ջաւահիրջի-բաշի, Բ. Դռան ակնագործների գլխաւոր։ 30. Միրզա-Ֆարրուխ Ամիրխանեանց՝ ղարաբաղցի, նախ Ֆաթալի-շահի մօտ, իսկ յետոյ Մամադ-շահի մօտ քարտուղարի պաշտօն էր կատարում (որդին այժմ հայ-բողոքականների քարոզիչ է Թիֆլիզում)։ 31. Միրզա-Ռոստոմ Էնիկոլոփեանց։ 32. Աղալար-խան Էնիկոլոփեանց. թէ առաջինը և թէ երկրորդը ծառայում էին Աբաս-Միրզայի մօտ։ 33. Միրզա-Գիւրգին-խան Էնիկոլոփեանց՝ կուլամփիշ-խոդմաթ (սենեկապետ) Աբաս-Միրզայի մօտ։ 34. Իւսուֆ-բէկ Էնիկոլոփեանց, թիկնապահ Աբաս-Միրզայի։ 35. Սուլէյման-խան Էնիկոլոփեանց՝ իբրև երևելի զօրավար դա այն աստիճան բարձրացաւ Պարսկաստանում, որ կառավարութիւնը նրան շնորհեց սամը-դովլէ տիտղոսը, որ նշանակում է սուր պետութեան։ Երկար ժամանակ վարեց Շիրազի, Բախտիարիայի, Լօռիստանի, Շուշթերի և Դասֆիջի փոխարքայութեան բարձր պաշտօնը։ Դրա որդիներից մէկը, զօ-

նելով, Շահի քաջ և նշանաւոր զօրավարներից մէկը դարձաւ։ Յետոյ Պարսկաստանից զզուելով, եկաւ Վրաստան, այստեղ միացաւ Դաւիթ-բէկի հետ և գնալով իւր հայրենիքը, Սիւնեաց ապստամբութեան պարագլուխներից մէկը դարձաւ։ Դա մեր «Դաւիթ-բէկ» վէպի հերոսներից մէկը՝ Բայինդուր իշխանն է, որ իրան միշտ պարսից թագաւորի «բաթման-ղլիճ» էր կոչում։

Այդ Բայինդուրի թոռներից մէկն էր Սօրի-բէկը։ Նրա պապի քաջագործութիւններն աւանդութեամբ մնացել էին այդ տոհմի մէջ, և Սօրի-բէկը դեռ պատանեկութեան հասակում հրապուրուելով իւր պապի յիշատակներով, թողեց Ղարաբաղը և գնաց Պարսկաստան իւր բախտը փորձե-

րապետ Նարիման-խանը, այժմ պարսից Վիէննայի դեսպանն է, իսկ միւսը զօրապետ Ջհանգիր-խանը այժմեան Շահի աջուդանբաշին (համհարզների—ադիւտանտների գլխաւորն) է և միևնոյն ժամանակ ամբողջ Պարսկաստանի արտիլերիայի գլխաւորը։ 36. Դաւութ-խան սարթիփ (զօրապետ) և Զալ-խան սարհանգ (գնդապետ) Սագինեանց, քաջ և նշանաւոր զինուորականներ էին։ 37. Աւագ-խան Մելիք-Մեհրաբեանց՝ հին-Նախիջևանցի, ծառայում էր Թաւրիզի ռուսաց հիւպատոսարանում, միևնոյն ժամանակ տեղային ռուսահպատակ վաճառականների թաջիրբաշին, այսինքն առևտրական դիւանի գլխաւորն էր. իւր կատարած նշանաւոր գործերով նա մեծ յարգանք և հռչակ ստացաւ Պարսկաստանում և թողեց անմոռանալի յիշատակ տեղային քրիստոնեաների մէջ՝ երկու անգամ ազատելով Թաւրիզի հայերին մոլեռանդութիւնից կատաղած մահմեդականների սարսափելի կոտորածից։ Դրա որդին՝ Սուլէյման-խանը Թիֆլիզում արևելեան լեզուների աւագ գրաքննիչի պաշտօն ստացաւ։ 38. Միրզա-Իւսուֆ Ներսէսեանց՝ ղարաբաղցի, քարտուղար Շահի դիւանում (դա Մոսկվայի հանգուցեալ պրոֆեսոր Ներսէսեանի հայրն է)։ 39. Սօրի-բէկ Բրհաթուրեանց՝ Աբաս-Միրզայի մօտ թիկնապահի պաշտօն էր կատարում. դա միևնոյն

լու։ Համարձակ, վայելչահասակ պատանուն յաջողուեցաւ մի ձիարշաւի ժամանակ Աբաս-Միրզայի ուշադրութիւնը դարձնել իւր վրայ և մտաւ պարսից թագաժառանգի համհարզների խմբի մէջ։ Յետոյ զանազան դժուարին դէպքերում իւր ցոյց տուած քաջութիւններով նա աւելի և աւելի շնորհ գտաւ Աբաս-Միրզայի մօտ։

Ղարաբաղի արշաւանքների ժամանակ Սօրի-բէկը գտնվում էր թագաժառանգի թիկնապահների խմբի մէջ։ Այդ միջոցին Աբաս-Միրզան յանձնեց նրան մի վտանգաւոր ծառայութիւն, որ իւր ամենամտերիմ պաշտօնեաներին միայն կարող էր հաւատալ։ Անդրկովկասեան մահմեդականներին ռուսների դէմ ապստամբացնելու համար Աբաս-

անձնաւորութիւնն էր, որ թողեց պարսից ծառայութիւնը և եկաւ իշխան Մադաթովի մօտ։

Բացի զինուորական, քաղաքական, դիւանագիտական ասպարէզներից, բացի Շահի Բարձր Դռան մօտ զանազան նշանաւոր պաշտօններ վարելուց, հայերը երևելի գտնուեցան և պարսից հոգևորական դասակարգի մէջ, ի հարկէ կրօնափոխ լինելուց յետոյ։ Դրանցից կյիշենք Մօլլա-բաշի (մօլլաների գլխաւոր) Միրզա-Աբասի անունը և Հաջի-Մօլլա-Քարիմ Տէր-Գրիգորեանի անունը, որի եղբօր թոռն այժմ Թիֆլիզի Մողնու եկեղեցում քահանայ է։

Աւելորդ չենք համարում նկատել, որ վերոյիշեալ անձնաւորութիւններից ոմանք Աղա-Մամադ-խանի՝ Թիֆլիզից և Անդրկովկասի այլ տեղերից տարած (1795 թ.) և ոմանք Աբաս-Միրզայի՝ իշխան Ցիցիանովի հետ ունեցած կռուի ժամանակ (1804 թ.) Աբարանից տարած գերիներից էին, որոնք իրանց բնական ձիրքերով Պարսկաստանում այնքան առաջ գնացին, որ բարձր պաշտօնների հասան։ Անունների պարսկական ձևով փոփոխութիւնը թող չխաբեցնէ ընթերցողին, իբր թէ դրանք մահմեդականներ եղած լինին, ընդհակառակն՝ միայն մի քանիսի բացառութեամբ, մնացած բոլորը պահպանեցին իրանց հայութիւնը և քրիստոնէական կրօնը։

Միրզան զրել էր շրջաբերական թղթեր զանազան խաների, բէկերի և ազդեցութիւն ունեցող անձանց անունով. այդ թղթերը յանձնեց ճարպիկ Աօրի-բէկին տեղ հասցնելու համար: Նա մի ընդարձակ շրջան պիտի գործէր Թալիշի, Բագուի, Շիրվանի և Շաքիի գաւառներով, իսկ յետոյ պիտի անցկենար դէպի Դաղստանի կողմերը: Բայց Աօրի-բէկը քրիստոնեայ ռուսների շահերը գերադասելով պարսիկների շահերից, դաւաճանեց իր տիրոջը: Նա Աբաս-Միրզայի թղթերը փոխանակ իրանց նշանակած տեղը հասցնելու, ուղղակի գնաց Գանձակ և բոլորը յանձնեց իշխան Մադաթովին: Թէ որ աստիճան ծանրակշիռ նշանակութիւն ունէր ռուսների համար մի այդպիսի մատնութիւն պատերազմի ժամանակ, ինքն ըստ ինքեան հասկանալի է: Թողեալ այդ, որպէս Աբաս-Միրզայի մերձաւորներից մէկը, Աօրի-բէկին յայտնի էին պարսից բանակի բոլոր գաղտնիքները, նրանց թոյլ և զօրաւոր կողմերը, թագաժառանգի գիտաւորութիւնները, և այլն. այդ բոլորը հաղորդեց նա իշխան Մադաթովին այն ժամանակ, երբ պարսից զօրքերը գտնւում էին Գանձակից 7 վերստ հեռաւորութեան վրայ, իսկ գեներալ Պասկևիչը և իշխան Մադաթովը՝ Գանձակում նստած, ամենևին տեղեկութիւն չունէին:

Թէ որպէս վերջացաւ Գանձակի մօտի կռիւը, մեր ընթերցողներին յայտնի է: Այդ յաղթութեամբ իշխան Մադաթովը և գեներալ Պասկևիչը ազատեցին ամբողջ Անդրկովկասը:

Իշխան Մադաթովը մեծ խոստմունքներով ընդունեց Աօրի-բէկին իր թիկնապահների խմբի մէջ: Պարսից թագաժառանգի սիրելին դարձաւ նրա ձեռքում մի լաւ գործիք:

XLVI

Պարսիկներին մշտական սարսափի մէջ պահելու համար հարկաւոր համարուեցաւ նրանց մի սաստիկ հարուած տալ նոյն իսկ պարսկական հողի վրայ: Այդ նպատակով 1826 թուի դեկտեմբերի սկզբներում իշխան Մադաթովը զօրապետ Երմօլովից գաղտնի հրահանգ ստացաւ մի արշաւանք գործելու դէպի Երասխի միւս կողմը:

Ձմեռային արշաւանքը՝ մի անծանօթ և լաւ ճանապարհներից զուրկ երկրում սաստիկ պիտի դժուարացնէր իշխան Մադաթովին ցանկացած յաջողութիւնը գտնելու, եթէ նա չունենար իւր հետ մի այնպիսի ճարպիկ առաջնորդ, որպիսին էր Աօրի-բէկը: Այդ երիտասարդը երկար ժամանակ Պարսկաստանում մնալով, ծանօթ էր պարսից թէ երկրի և թէ բնակիչների բոլոր դրութիւնների հետ:

Իշխանն ունէր իւր հետ 42-րդ Եգերեան զօրագնդից մի ջոկատ միայն, նրա մնացած զօրքը բաղկացած էր Ղարաբաղի հայ հետևակներից և ձիաւորներից: Դեկտեմբերի 28-ին նա արդէն գտնվում էր Խուդափիրինի կամուրջի մօտ, որ այդ կողմից միակ անցքն է Երասխ գետից: Այստեղ միացաւ նրա հետ գնդապետ Մեաչէնկօն իւր զօրքով: Բայց կամուրջից անցկենալ անհնարին էր, պարսիկները նրա կամարներից մի քանիսը խորտակել էին: Չնայելով սաստիկ ցրտին, զօրքն անցաւ գետի միջով, ուր ջուրը հասնում էր մինչև նրանց թիկունքը:

Պարսից հողի վրայ նրանց ոչ ոք չհանդիպեց և Դիլախուրտի ձորամիջով սկսեցին առաջ գնալ դէպի Սամբուր գետը: Տարւայ այդ ժամանակ, այդ կողմերում, իրանց անասունների հետ գետնափոր ձմերանոցներում բնակվում էին զանազան խաշնարած ցեղեր, որպիսիք էին շահ-

ռէվանները, շաղաղինները, աջալբեյինները, եւայլն։ Դրանք երբեմն ասպատակութիւններ էին գործում Ղարաբաղի և ռուսաց նոր գրաւած միւս գաւառների վրայ և աւարառութիւններ էին անում։ Իշխան Մադաթովի առաջին գործն եղաւ պատժել դրանց՝ ասիացի աւազակների հետ վարուելով ասիական կերպով։ Յարձակուեցաւ նրանց ձմեռանոցների վրայ, յափշտակեց մինչև 20,000 ոչխար, բազմաթիւ ուղտ, ձի, տաւար և այլ իրեղէններ։

Մտնելով Միշկինի գաւառը և օգուտ քաղելով տեղային շահսէվանների միամտութիւնից, իշխանը լուր տարածեց, թէ կամենում է այնտեղից անցնել դէպի Թալիշի խանութիւնը։ Շահսէվանները հաւատալով, յօժարուեցան նրան ճանապարհ տալ իրանց երկրի միջով։ Բայց իշխանը փոխանակ դէպի Թալիշի խանութիւնը գնալու, յարձակուեցաւ խաղաղ շահսէվանների ձմեռանոցների վրայ և բարբարոսական կոտորածներից յետոյ, յափշտակեց նրանցից 2,000 ուղտ, 10,000 կով և եզն, 60,000 ոչխար։

Դէպի ամեն կողմ սարսափ տարածելուց յետոյ նա մտաւ Միշկինի գաւառաքաղաքը, Լօռի, ուր ներկայացաւ նրան տեղային կառավարիչ խանը, խնդրելով խնայել իրանց։ Այստեղ նա երդում ընդունեց մահմեդականների ներկայացուցիչներից, որ հաւատարիմ մնան ռուսաց կայսրին, թէև որի ուժով առած երդումը մի առանձին նշանակութիւն չունէր։

Թողնելով Լօռիի մէջ մի ջոկատ հետևակ և 600 կազակ, իշխանը մնացած զօրքերով սկսեց դիմել դէպի Ահար, որ Ղարադաղի գլխաւոր քաղաքն է։ Ճանապարհին, Նասիր-Աբադ գիւղում, նրա առաջն եկան Ղարադաղի խանի պատգամաւորները և յայտնեցին իրանց հնազանդութիւնը։ Այստեղ հանդիպեցին նրան Ղարադաղի հայոց քահանաները իրանց մելիքների և տանուտէրների

հետ, որոնք նոյնպէս հպատակութիւն յայտնեցին։ Իշխանը պահեց նրանց իւր մօտ և յունվարի 6-ին թնդանօթների որոտմունքով միասին կատարեցին սուրբ Ծննդեան և Մկրտութեան տօնի հանդէսը։ Բայց հայերն այդ համակրութեան համար սաստիկ պատժուեցան, երբ ռուսաց զօրքերը թողեցին պարսից հողը։

Յունվարի 7-ին իշխանը գտնվում էր Ղարադաղի գլխաւոր քաղաքի՝ Ահարի մօտ. 17 վերստ հեռաւորութեան վրայ հանդիպեցին նրան քաղաքի աւագները՝ յայտնելով իրանց հնազանդութիւնը։ Ահարից նա առաջ չգնաց և նոյն ամսի 9-ին կրկին վերադարձաւ դէպի Ղարաբաղ։

Այդ արշաւանքը կատարուեցաւ, որպէս վերևում յիշեցինք, տարուայ ամենացուրտ և վտանգաւոր ժամանակում։ Ռուսաց զօրքերը մեծ արգելքների և անյաջողութիւնների պիտի հանդիպէին, եթէ չունենային մի այնպիսի ճարպիկ և քաջ առաջնորդ, որպիսին էր Աղի-բէկը։

Այդ արշաւանքն այն օգուտն ունեցաւ, որ իշխանը տարածեց սարսափ բոլոր սահմանակից ցեղերի վրայ, բացի դրանից ծանօթացաւ Պարսկաստանի ներքին դրութեան հետ և իւր հաւաքած տեղեկութիւնները հաղորդեց կոմս Դիբիչին, որ այդ ժամանակ գտնվում էր Թիֆլիզում։ Արշաւանքն ունեցաւ և նիւթական օգուտ. նա բերեց իւր հետ ահագին աւար և կողոպուտ։ Իւր աւարի մի մասը բաժանեց նա հայոց կամաւորներին, որոնք ռուսաց կառավարութիւնից ոչինչ չէին ստանում, իսկ մնացած մասը թողեց ռուսաց զօրքերի վայելման համար։ 2,000 ուղտը գործ էին ածում նոր բորբոքուած ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ծանրութիւններ տեղափոխելու։

Ռուս-պարսկական նոր պատերազմն սկսուեցաւ 1827 թուի գարունքին։ Դեռ մարտի 17-ին գեներալ Երմօլովը յանձնեց իշխան Մադաթովին մի առանձին զօրաբաժնի

հրամանատարութիւնը և հրամայեց պատրաստ լինել գարնանային արշաւանքին մասնակցելու համար։ Նրան պատուիրուած էր իւր զօրքի պակասը լրացնել Ղարաբաղի կամաւորներով։ Այդ պատուէրն արագութեամբ կատարեց նա և կամաւորների մէջ հայերը մեծամասնութիւն էին կազմում։

Դեռ իրան խոստացուած զօրքի մեծ մասը չհասած, իշխան Մադաթովը իւր կամաւորներով և ձեռքի տակ գտնուած փոքրաթիւ պատրաստի զօրքերով առաջինն եղաւ, որ սկսեց յարձակողական գործողութիւններ դէպի Պարսկաստան։ Ապրիլի 18-ին նա արդէն գտնվում էր Խուդափիրինի կամուրջի մօտ։ Այս անգամ գտաւ կամուրջը բոլորովին ոչնչացրած պարսիկներից. կամարների սիւներն էին մնացել միայն։ Գարնանային հեղեղների յորդութեան պատճառով գետի միջով անցնել անկարելի էր։ Թուով 5,000 պարսիկ կանգնած էին գետի ափի մօտ։ Նրանց գնդակների տարափի տակ իշխանը հրամայեց կամուրջը պատել տախտակներով, որի վրայից անցաւ զօրքը։ Հէնց առաջին օրում նրան յաջողուեցաւ ցրուել պարսից զօրքը և ոտք դնել պարսից հողի վրայ Երասխի աջ կողմում։ Բայց այստեղից առաջ գնալ չկարողացաւ նա, հէնց այստեղ վերջացաւ նրա մասնակցութիւնը 1827 թուականի ռուս-պարսկական պատերազմին։

Ապրիլի 22-ին յանկարծ հրաման ստացաւ նա գեներալ Պասկևիչից, որ իւր հրամանատարութեանը յանձնուած զօրաբաժինը յանձնէ գեներալ-մայօր Պանկրատևին։

Տխուր, սրտաբեկ կերպով վերադարձաւ իշխանը Ղարաբաղ։ Այստեղ կանգ չառաւ նա, և մինչև անգամ առանց իւր կալուածները տեսնելու, հեռուից վերջին անգամ հայեացք ձգելով իւր հայրենիքի, իւր ծննդեան տեղի վրայ, հեռացաւ, գնաց Թիֆլիզ։

Թէ ինչ էր իշխան Մադաթովին այսպէս անակնկալ կերպով յետ կանչելու պատճառը,—այդ հարցը բացատրվում է միայն զանազան ենթադրութիւններով և զանազան տարակուսանքներով, որոնք ստուգութեան կարօտ են։ Այսքանը կ'ասենք, որ նա ամբողջ հինգ ամիս մնաց Թիֆլիզում կատարեալ անգործութեան մէջ, մինչև վերջապէս իրաւունք ստացաւ գնալ Ս. Պետերբուրգ։

Դեռ ռուս-պարսկական պատերազմը բոլորովին վերջացած չէր, երբ 1828 թ. ապրիլի 14-ին հրատարակուեցաւ ռուս-թիւրքական պատերազմը։ Իշխան Մադաթովը նշանակուեցաւ առանձին զօրաբաժնի հրամանատար և Դունայի կողմից գնաց թիւրքերի հետ կռուելու։ Այդ արշաւանքի մէջ ևս, որպէս կարելի էր սպասել նրանից, ամեն կռիւների մէջ փառաւոր յաղթութիւններ կատարեց։ Բայց դեռ պատերազմի վախճանին չհասած, հիւանդացաւ և նոյն տարուայ սեպտեմբերի 4-ին վախճանուեցաւ իւր բանակի մէջ Շումլայի պարիսպների մօտ, թշնամու երկրի վրայ։ Նրա մարմինը հանդիսաւոր կերպով տարուեցաւ նոյն բերդը, թաղուեցաւ սուրբ Գէորգ զօրավարի եկեղեցու գաւթում *)։ Նրա թաղման հանդէսին ներկայ էին մինչև անգամ նրա թշնամիները, թուրք օֆիցէրները և բազմաթիւ մահմեդականներ, որոնց նա շատ անգամ ռմբակոծել էր։

«Ճակատագրով վիճակուած էր իշխանին հանգչել իւր խաղաղ վախճանին թշնամու երկրի վրայ, որ վկայ էր եղել նրա յաղթութիւններին նրա երիտասարդական հասակում, որ տեսել էր նրա փառաւոր գործերը նրա այրական հասակում։ Նրա մարտակիցների անկեղծ սրտամու-

*) Յետոյ հանգուցեալի ամուսնու խնդրելով, բարձրագոյն հրամանով մարմինը բերուեցաւ Ռուսաստան և դրուեցաւ Աղեքսանդր-Նևեան մենաստանի մէջ (Александро-Невская Лавра)։

թիւնը և յաղթուած թշնամիների խորին յարգանքը յուղարկաւորում էին նրան դէպի գերեզման:

«Այդ խիստ փաղաքշական է. այդ է պարգևը կեանքի աշխատանքների և կռիւների:

«Մի հայեացք ձգելով նրա անցած ճանապարհի վրայ, նրա գործերի, բնաւորութեան և նրա թողած յիշատակների վրայ, համարձակ կարելի է յայտնել հետևեալ կարծիքը նրա մասին՝ թէ բնութիւնն ստեղծել էր նրան միայն պատերազմող լինելու համար: Չնայելով կրթութեան պակասութեանը, բայց բնականից ունենալով անհամեմատ լուսաւոր խելք և հասկացողութիւն, ունենալով բնաւորութեան զօրութիւն և հաստատամտութիւն, նա իւր պարզ և սուր ըմբռնողութեամբ փոխարինում էր այն հմտութիւնները, որոնց ուրիշները հազիւ կարողանում են ստանալ արհեստի և գիտութեան շնորհիւ: Հայեացքների ճշտութիւնը երբէք չէր սխալեցնում նրան՝ ոչ պատերազմական դիրք ընտրելու ժամանակ և ոչ թշնամու ուժերն ու դիրքերը հետազօտելու ժամանակ: Նրա կշռադատութեան ձիրքը երբեմն զարմացնում էր մինչև անգամ նրանց, որոնք ճանաչում էին նրան: Բաւական էր հարևանցօրէն հայեացք ձգել մի որևիցէ անծանօթ երկրի վրայ և նա արդէն կատարեալ հասկացողութիւն էր ստանում նրա տեղագրական դրութեան մասին: Մի քանի անգամ հանդիպելով իւր նոր ախոյեանին, նա արդէն կըչափէր նրա ուժերը: Երբէք չէր սխալվում նա, երբ նշանակում էր այն կէտերը, թէ ո՛րտեղ պէտք էր ընդդիմադրել թըշնամուն կամ ո՛րտեղ պէտք էր հարուածել նրան: Երբ հասնում էր յարձակման վճռական րոպէն, որ նա միշտ սկզբից նախագուշակում էր, գտնում էր նրան միշտ պատրաստ:

«Բայց հայեացքների և ըմբռնողութեան այդ ճշտու-

թիւնը, խելքի և հասկացողութեան այդ խորութիւնը գտնվում են նաև շատ զօրավարների մէջ, բայց մնում են ապարդիւն: Նրանք բաւական են մի խորհրդատուի համար, բայց բաւական չեն մի զինուորական առաջնորդի համար: Մադաթովը միացնում էր դրանց հետ և ուրիշ ամենանշանաւոր յատկութիւններ. անձնական քաջութիւն, որ չէր վհատում ոչ մի վտանգի առջև, սառցային սառնասրտութիւն, որ չէր վրդովվում ո՛չ մի անակնկալ դէպքի ժամանակ, և այն, որ ամենից հազուագիւտն է,—այդ էր նրա բարոյական արիութիւնը, որ չէր վախենում ո՛չ մի պատասխանատուութիւնից: Վճռելու մէջ խիստ համարձակ էր նա, իսկ իւր դիտաւորութիւնները կատարելու մէջ չափազանց շուտափոյթ: Այդ արագութիւնը, որ մեծ զօրութիւն է պատերազմի գործի մէջ, որ նրա պաշտած հանճարների՝ Նապօլէօնի և Սուվօրովի գլխաւոր յատկանիշն էր, միևնոյն ժամանակ հաստատ երաշխաւորութիւն էր իշխան Մադաթովի բոլոր ձեռնարկութիւնների յաջողութեանը:

«Այդ եզրակացութիւնները յակամայից ներկայանում են մեր մտքում, երբ քննում ենք իշխան Մադաթովի մշտական յաջողութիւնները անհամեմատ գերազանց ուժերի դէմ, երբ տեսնում ենք այն նշանաւոր հետևանքները, որոնց հասնում էր նա խիստ սահմանափակ միջոցներով, և երբ ի նկատի ենք առնում այն անհամեմատ փոքր կորուստը, որ կրում էին նրա զօրքերը ամենափառաւոր յաղթութիւնների մէջ: Երիտասարդական հասակում իւր ուրախ բնաւորութեամբ գրաւեց նա ընկերների սէրը. իւր ստորադրեալների հետ սրտաբաց էր նա. խիստ սաստիկ կարգապահութիւն պահպանելով հանդերձ, սիրում էր նա իւր զինուորներին, միշտ էլ նրանց մասին ջերմ հոգատարութիւն ունէր, բորբոքում էր նրանց ոգին, իւր

վարմունքով բարձրացնում էր նրանց բարոյական զօրութիւնը և գրանով ներշնչում իւր և նրանց մէջ այն փոխադարձ հաւատարմութիւնը, որ տանում է դէպի քաջագործութիւններ: Բախտաւոր գտնուելով իւր բոլոր ձեռնարկութիւնների մէջ, նա հաւատում էր իւր բախտին, որ երբէք չէր դաւաճանում նրան: Այդ հաւատը դէպի իւր աստղը շատ անգամ նկատուել է մեծ զօրավարների մէջ: Հարևանցօրէն դատողները ծաղրում են այդ հաւատը, իսկ աւելի խոր քննողները յարգում են նրան, որովհետև նրա մէջ միանում են մարդու թէ ճշմարիտ զօրութիւնը և թէ զօրութեան զգացմունքը: Աւելացնում ենք, որ նա հաւատում էր ռուսաց զինուորի ոգուն և նրա համակրութեանը դէպի իւր գլխաւորը, և այդ պատճառով նրա հրամանատարութեան ներքոյ զօրքն առաջ էր գնում ուրախութեամբ, ասելով. «Մենք գիտենք, որ նրա հետ ոչ մի մարդ ի զուր չի կորչիլ»:

«Սկսած կապիտանի աստիճանից իշխան Մադաթովը իւր քաջութեամբ միայն ստացաւ այն բոլոր գերազանցութիւնները, այն բոլոր պատուանշանները, որ ունէր նա: Այդպէս էր խօսում նա ինքը, և այդպէս կ՚ասեն ամենքը, որոնք ծանօթ են նրա կատարած ծառայութիւնների հետ:

«Նա ապրեց և մեռաւ որպէս հայրենիքի հաւատարիմ որդի, իւր անձնազոհութեամբ միշտ նուիրուած մնաց իւր Թագաւորին, մշտապէս հոգ տանելով Ռուսաստանի փառքի համար» *):

Մենք մեր կողմից կ՚աւելացնենք, որ Ղարաբաղն իրաւունք ունի պարծենալու, որ տուեց Ռուսաստանին մի այդպիսի հերոս, բայց ցաւում ենք, որ այդ քաջը իւր հայրենիքի սէրը գրաւել չկարողացաւ...:

*) «Жизнь генераль-лейтенанта князя Мадатова». Изданіе второе С. Петербургъ. 1863. Երես 188—191.

Իշխան Մադաթովն ուղղակի ժառանգ չթողեց: Մահից յետոյ նրա իշխանուհի տիկինը եկաւ Ղարաբաղ, որ հանգուցեալի ընդարձակ կալուածները բաժանէ նրա հեռաւոր և մերձաւոր ազգականների մէջ, և ինքն էլ իւր մասն ստանայ: Բայց ժառանգների և տիկնոջ մէջ անհամաձայնութիւններ ծագեցան, այդ պատճառով տիկինը վշտացած գնաց Ս. Պետերբուրգ և բոլոր 15 գիւղն էլ տուեց արքունի գանձարանին և փոխարէնն ստացաւ մի նշանաւոր գումար: Ժառանգները մնացին առանց բաւականութիւն ստանալու:

—

1827 թուի ռուս-պարսկական պատերազմը վերջացաւ յօգուտ Ռուսաստանի. Երասխ գետը նշանակուեցաւ սահմանագլուխ երկու պետութիւնների մէջ, և այդ գետի ձախ կողմում գտնուած բոլոր պարսկական խանութիւնները մըտան ռուսաց տիրապետութեան ներքոյ:

Ռուսաստանը Պարսկաստանի վրայ պատերազմական տուգանք դրեց, և որ ամենագլխաւորն էր, 40,000 հայեր Պարսկաստանից գաղթեցրեց և բնակեցրեց իւր նոր գրաւած երկրների վրայ:

Որպէս պարսից խաների, նոյնպէս էլ հայոց մելիքների իշխանութիւնը վերջացաւ: Այնուհետև հայոց մելիքների ժառանգներն այլևս ուրիշ բանի վրայ չէին մտածում, այլ աշխատում էին միայն մտնել ռուսաց ծառայութիւնների մէջ՝ աստիճան և շքանշաններ ստանալու համար: Այդ փառասիրական ձգտումն անգիտակցաբար այն օգուտն ունեցաւ, որ մելիքների ժառանգները ռուսաց ծառայութեան մէջ գտնուելով և ռուսաց օրէնքների ու ազդեցութեան տէր անձանց հետ ծանօթանալով, կարողացան ձեռք բերել իրանց հայրենական կալուածների մի մասը:

Բայց մի հարց կմնայ անվճիռ, թէ ինչու հայոց տիրապետող մելիքների ժառանգներն ընդունեցան իբրև տոհմական ազնուականներ և ոչ իբրև իշխանազներ, քանի որ Խամսայի հինգ մելիքութիւնները կազմող տներն իսկապէս իշխանական ծագումից էին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Խամսայի մելիքութիւնների պատմութիւնը վերջացաւ: Երբ այդ պատմութիւնը մաս-մաս լոյս էր տեսնում «Մշակի» համարների մէջ, ամեն անգամ երբ հանդիպում էի ծանօթներիս, նրանց առաջին խօսքն այս էր՝ «լաւ է»... իսկ յետոյ մի հարց՝ «որտեղից էք առել այդ տեղեկութիւնները»...:

Այդ հարցի մէջ, որ ամէպ առաջարկում էին ինձ, նշմարվում էր մի տեսակ կասկած, մի տեսակ անվստահութիւն...: Բարեկամներիցս մի քանիսը մինչև անգամ նկատեցին ինձ. «Միթէ մենք ունեցել ենք Ղարաբաղում այդպիսի իշխանութիւններ. եթէ կային, ինչու մենք չգիտէինք»...:

Այդ մարդիկ, որոնք Վանի բևեռագրների վրայ դատողութիւններ են անում, որոնք նախաջրհեղեղեան անցքերի վրայ են խօսում, զարմանալի է, որ իրանց քթի տակ, մեզանից կէս դար առաջ կատարուած իրողութիւնների վրայ նայում են իբրև առասպել, իբրև ֆանտազիայի ծնունդ:

Ընթերցողներիս կասկածը փարատելու համար ես հարկաւոր եմ համարում ցոյց տալ այն աղբիւրները, որոնցից քաղել եմ իմ պատմութիւնը:

Դեռ 1881 թուի յուլիս ամսում, նախ քան իմ ճանապարհորդութիւնը դէպի Սիւնեաց աշխարհը, «Մշակի»

համարներից մէկում ես տպեցի մի յօդուած, որի մէջ բացատրում էի իմ ճանապարհորդական նպատակը, այն է՝ հաւաքել Ղարաբաղի մելիքների պատմութեան համար թէ՛ գրաւոր և թէ՛ բերանացի տեղեկութիւններ, և հրաւիրում էի ձեռնհաս անձինքներին օգնել ինձ իմ ձեռնարկութեան մէջ, եթէ գտնվում էին նրանց մօտ որևիցէ պատմական նիւթ:

Որպէս մեր ամեն տեսակ հրաւէրքները մնում են ապարդիւն, իմ հրաւէրքը ևս մի առանձին հետևանքի չհասաւ: Ինձ մնում էր անձամբ գնալ Ղարաբաղ, մտնել ամբոխի մէջ և դիմել այն հարուստ պատմական աղբիւրին, որ դեռ ևս թարմ կերպով պահպանուած է ժողովրդական աւանդութիւնների մէջ:

Ես անցայ Ղարաբաղի հինգ գաւառները, որ կազմում էին Խամսայի հինգ մելիքութիւնների իշխանութեան տեղերը:

Գանձակից գնացի Գիւլիստանի գաւառը: Այստեղ են Մելիք-Բէգլարեանների կալուածները, այստեղ տիրում էին նրանց նախնիքը: Ղարա-Չինար գիւղում մի ամբողջ շաբաթ մնալով Մելիք-Բէգլարեան Սերգէյ-բէկ և Ալեքսան-բէկ եղբայրների տանը, տեղային ծերունիները գնում ու գալիս էին ինձ մօտ, ոգևորուած պատմում էին իրանց երկրի մելիքների պատմութիւնը: Ես գրում էի: Յետոյ սկսեցի ճանապարհորդել Գիւլիստանի զանազան տեղերը այլ և այլ յիշատակարաններ քննելու համար: Տեսայ Մելիք-Բէգլարեանների տոհմային գերեզմանատունը Հոռեկա վանքի մօտ, մի ամայի, անմարդաբնակ տեղում, մթին անտառի մէջ, և դարերով աճած թփերի, մացառների մէջ գտայ այդ տոհմի հերոսների մոռացուած շիրիմները: Մեծ դժուարութեամբ յաջողուեցաւ ինձ կարդալ մամռապատ տապանաքարերի արձանագրութիւնները, որոնք ժամանակագրական և տոհմագրական կողմից պատմութեան համար նշանակութիւն ունէին: Հէնց նոյն վանքի մօտ դեռ կանգնած է մի հոյակապ, սիւնազարդ ամրոց, բարձր աշտարակներով, բազմաթիւ սենեակներով, որոնց մէջ մի ժամանակ բնակվում էին Մելիք-Բէգլարեանների նախնիքը: Տեսայ և Գիւլիստանի ահռելի բերդը, որ իւր կիսաւեր դրութեան մէջ դարձեալ հրաշալի է: Գիւղերը պտտելով քննում էի եկեղեցիներում կամ մասնաւոր անձինքների մօտ գտնուած գրչագիր մատեանների յիշատակարանները, քննում էի եկեղեցիների կամ վանքերի պատերի վրայ գտնուած արձանագրութիւնները: Գանձասարի վանքի պատի վրայ մի ընդարձակ արձանագրութիւն նուիրուած է Մելիք-Բէգլարեանների յիշատակին:

Գիւլիստանից անցայ Ջրաբերդի գաւառը: Այստեղ հաւաքեցի այն աւանդութիւնները, որ պահպանուած էին Մելիք-Իսրայէլեանների մասին: Գետաշէն գիւղի եկեղեցում գտայ մի գեղեցիկ գրչագիր աւետարան *), արծաթէ կազմով, որի յիշատակարանի մէջ արձանագրուած էր Մելիք-Իսրայէլեանների տոհմագրութիւնը: Թարթար գետի հակառակ ընթացքով դէպի վեր բարձրանալով, ամեն քայլում հանդիպանում էին Մելիք-Իսրայէլեանների յիշատակարանները: Ես այցելութիւն գործեցի Եղիշէ առաքեալի ամայի վանքին, որ գտնվում է բոլորովին կուսական

*) Այդ աւետարանը մի ժամանակ գերի ընկած լինելով Պարսկաստան, Մելիք-Աթամ մեծը թափել է գերութիւնից, և գրել է տուել նրա վերջին թերթերի վրայ իւր տոհմի յիշատակարանը: Այդ գիրքը հայկական արհեստի ամենագեղեցիկ գործերից մէկը կարելի է համարել. արծաթէ կազմն այնպիսի հրաշալի քանդակներ ունի, մագաղաթն այնքան նուրբ է, պատկերներն այնքան կենդանի և գրիչն այնքան կանոնաւոր, որ կարող է ամենանշանաւոր թանգարանի զարդը լինել:

անտառների խորքում, սարսափելի լեռների բարձրաւանդակի վրայ։ Դա վանք չէ, այլ վանքերի մի խումբ է։ Աւելի քան ութն տաճարներ կանգնած են միմեանց մօտ, այնքան մերձ, որ մի մարդ հազիւ կարող է նրանց մէջտեղից անցնել։ Այդ տաճարներից մէկի մէջ դրած է Վաչական Թագաւորի գերեզմանը, իսկ նրա դուան հանդէպ գտայ Ջրաբերդի հզօր տիրապետողի՝ Մելիք-Աթամ մեծի փառաւոր շիրիմը։ Այդ վանքում տեսայ այն աշտարակը, որի մէջ բնակվում էր իմ պատմութեան հերոսներից մէկը՝ երեւելի Դալի-Մահրասան (Աւագ վարդապետը)։ Աշտարակի վերին յարկի միջից այժմ աճել է մի ահագին կաղնի ծառ։ Մատաղիս գիւղից ինձ հետ վեր առած ուղեցոյցը, որ այն ահռելի լեռների և անտառների համարձակ որսորդներից մէկն էր, առանց լռելու պատմում էր ինձ Դալի-Մահրասայի գործերը։ Վարդապետ-հերոսի քաջագործութիւնները արձագանք էին գտնել երիտասարդի տպաւորուող սրտում։

Եղիշէ առաքեալի վանքից անցայ Երիցմանկանց վանքը։ Այդ վանքի մօտ գտնվում է Ջրաբերդ կոչուած հռչակաւոր ամրոցը, որ և կոչվում է Ջերմուկի բերդ։ Այդ բերդի միջից վտանգի ժամանակ կռվում էին Մելիք-Իսրայէլեանները։ Երիցմանկանց վանքում մնացի մի օր։ Տէրունի Տօնի-ապէրը՝ միակ միաբանը այն վանքի, որի մէջ մի ժամանակ կաթողիկոսներ էին նստում, ամբողջ գիշեր պատմեց ինձ Չալաղան-իւզբաշու և Մելիք-Իսրայէլեանների տոհմի զանազան ներկայացուցիչների մասին, և զարմանում էր, որ իւր պատմածներին այնքան նշանակութիւն էի տալիս, որ գրի էի առնում։

Երիցմանկանց վանքից ոչ այնքան հեռու, Թարթար գետի աջ ափերի մօտ, մի անտառապատ ձորի մէջ գտնըվում են աւերակները մի հին քաղաքի, որի տեղը մինչև

այսօր կոչվում է «Մայրաքաղաք» կամ «Քղաքատեղ»։ Այստեղ տեսայ Մելիք-Աթամ մեծի կիսաւեր պալատը, որ իւր փոշիների մէջ դարձեալ հրաշալի է։ Իսկ Նոր Մոխրաթաղ գիւղի մօտ, Իննմասանց անապատի հանդէպ, տեսայ Մելիք-Աթամ մեծի ամրոցը, որ բոլորովին ամբողջութեամբ մնացած է։ Դռների ճակատների վրայ կան երկար արձանագրութիւններ, որոնք պատմական նշանակութիւն ունին։

Այստեղից ես յատկապէս գնացի Մարդակերտ անունով գիւղը՝ մօտ հարիւրամեայ մի ծերունի տեսնելու համար, որի մասին առաջուց լսած էի։ Նրան կոչում են Միրզա-Աղի, հմուտ է հայերէն, պարսկերէն, արաբերէն և թուրքերէն լեզուների գրագիտութեան մէջ. մի ժամանակ թարգմանի պաշտօն է կատարել Շուշի բերդի վերջին իշխողների՝ Իբրահիմ-խանի և Մէհտի-խանի մօտ. իսկ մի ժամանակ ծառայել է նոյն բերդում գտնուած գերմանացի միսիոնարների մօտ։ Այդ կենդանի պատմագրութիւնը երկու ամբողջ օր ինձ գրել էր տալիս Ղարաբաղի մելիքների և Շուշիի խաների անցքերը, որոնք նրա յիշողութեան մէջ խիստ անմոռաց կերպով պահպանուած էին։ Զառամեալ ծերունին երեխայի նման ուրախանում էր, որ վերջապէս գտնուեցաւ մի մարդ, որին հաղորդեց իւր սրտին մօտ եղած տեղեկութիւնները։ Ինքը գրելու անընդունակ էր դարձել, աչքերը լաւ չէին տեսնում, իսկ ձեռքերը դողում էին։ Նա տուեց ինձ մի հնամաշ տետրակ (թերթերից պակաս), որի մէջ կային զանազան ժամանակագրական նկատողութիւններ Ղարաբաղի նշանաւոր անցքերի մասին։ Մարդակերտից անցնելով Կոսապատ գիւղը, այստեղ տեղեկութիւններ հաւաքեցի Աթաբէկեանների մասին։ Յետոյ գնացի Գիւլ-Եաթաղ բերդը, որ պատկանում էր Մելիք-Ալլահվերդեաններին։ Այստեղ տեսայ Մելիք-Ռուստամի ամրոցը, տեսայ նրանց տոհմային գերեզմանատունը։ Մի քանի օր մնալով բժիշկ

Ազատարեանցի տանը, ինձ յաջողուեցաւ բաւական նիւթեր հաւաքել Մելիք-Ալլահվէրդեանների պատմութեան համար:

Այստեղից գնացի Խաչէն՝ Հասան-Ջալալեան իշխանների դարևոր բնագաւառը: Տեսայ Գանձասարի հռչակաւոր վանքը — Աղուանից կաթողիկոսի վեհարանը, որ վերջին ժամանակներում դարձաւ Ղարաբաղի մելիքների գաղտնի ժողովների խորհրդարանը: Գանձասարի վանքի տաճարի մէջ և նրա շուրջը գտնուած գերեզմանատնում ես քննեցի Հասան-Ջալալեան կաթողիկոսների և մելիքների շիրիմները:

Գանձասարի վանքի գիւղում, Վախթանգ-բէկ Հասան-Ջալալեանի տանը գտայ մի հնամաշ տետրակ (սկզբի թերթերը պակաս): Դա սկսած բայց չաւարտած մի պատմութեան սևագրութիւն է, գրուած Բաղդասար միտրոպոլիտի ձեռքով, գլխաւորապէս Հասան-Ջալալեանների տոհմի վերաբերութեամբ: Առաջին մասն այնքան հետաքրքիր չէ, որովհետև քաղած է մեզ արդէն յայտնի Կաղանկատուացու և Կիրակոս գանձակեցու գրքերից: Իսկ վերջին մասը բովանդակում է իւր մէջ հետաքրքիր տեղեկութիւններ Ղարաբաղի մելիքների՝ Պետրոս Մեծի և վրաց Վախթանգ իշխանի հետ ունեցած յարաբերութիւնների մասին. նրանց յարաբերութիւնների մասին Փանահ-խանի և Իբրհիմ-խանի հետ, վերջինիս կատարած բարբարոսութիւնները Հասան-Ջալալեան Յովհաննէս կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների վերաբերութեամբ. համառօտ կերպով նկարագրուած է Ղարաբաղի մելիքների իրանց հպատակների հետ դէպի Վրաստան գաղթականութիւնը և այնտեղից վերադարձը, ևայլն: Պատմութիւնը հասցրած է մինչև 1808 թուականը, այսինքն մինչև այն ժամանակը, երբ Բաղդասար միտրոպոլիտը հայ գաղթականների հետ ինքը ևս վերադարձաւ Վրաստանից: Տետ-

րակի մէջ տեղ-տեղ ջնջուած է և միևնոյն գրչով յետոյ ուղղուած: Լուսանցքների վրայ ժամանակ առ ժամանակ յաւելուածքներ են արել, գրիչը նոյնն է, բայց մելանի գոյները զանազանվում են: Ինչպէս յիշեցի, այդ տետրակը սևագրութիւն է միայն. ցանկալի կլինէր, որ դրա ամբողջը և սրբագրուածը գտնուէր: Հեղինակն անցքերի ժամանակակիցը լինելով, նրա գրուածն աւելի արժանահաւատ պէտք է համարել:

Խաչէնում տեսայ Հասան-Ջալալի բերդը, որ այժմ կոչվում է Թարխանայ (Խօխանայ) բերդ, տեսայ այդ բերդի ստորոտում իշխանի պալատի աւերակները, որ կոչվում են «դարպասներ». տեսայ հրաշալի Կաչաղակաբերդը, այցելութիւն գործեցի սուրբ Յակոբայ վանքին, վերջապէս տեսայ մի պատմական ժողովուրդ, որ ճանաչում է այդ յիշատակարանները և հազարաւոր բաներ է խօսում նրանց մասին:

Խաչէն գետի ընթացքով ցած իջնելով և թեքուելով դէպի Խնզիրիստան գիւղը, տեղեկութիւններ հաւաքեցի Մելիք-Միրզախանեանների մասին: Այստեղ մնացի միայն մէկ օր, որովհետև սաստիկ վատ ընդունելութիւն գտայ: Ինձ առհասարակ չէր յաջողվում այն տեղերում, ուր գըտնվում էին մելիքների ժառանգներ, և մանաւանդ երբ նրանց տոհմի պատմութեան մէջ կային արատաւոր կէտեր. իսկ Մելիք-Միրզախանեանների պատմութիւնը շատ էլ մաքուր չէ:

Այստեղից անցայ Շուշի բերդը: Իջևանելով տեղային առաջնորդարանում, ինձ յաջողուեցաւ քննել հոգևոր կոնսիստորիայի արխիւը: Ոչինչ չգտայ: Բոլոր հին վաւեթղթերը (դօկումէնտ), որոնք կարող էին Ղարաբաղի պատմութեան վրայ փոքրիշատէ լոյս ձգել, ինչպէս ասում էին, զանազան ժամանակներում գողացել էին: Այստեղ ես

ծանօթացայ ծերունի Հաթամի հետ, որ մի ժամանակ Բաղդասար միտրապօլիտի կանցլերն է եղել: Նա տուեց ինձ բաւական մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններ Ղարաբաղի կաթողիկոսների, մելիքների և խաների մասին: Յարգելի ծերունին իւր պատմութիւններն այնքան յաճախ անգամ էր կրկնել, որ «Հայր մեր»-ի նման անգիր սերտած ունէր:

Շուշիում Գրիգոր-բէկ Հասան-Ջալալեանը յանձնեց ինձ մի հարուստ հաւաքածու զանազան ֆիրմանների, հրովարտակների, պաշտօնական թղթերի, որ շնորհուած են եղել պարսից շահերից և օսմանցոց տիրապետողներից Ղարաբաղի կաթողիկոսներին ու մելիքներին: Այդ հաւաքածուի մէջ գտնվում է Հասան-Ջալալեան տոհմի ամբողջ ճիւղագրութիւնը ժամանակագրական կարգով. բացի դրանից հաւաքուած են օրինակները այն արձանագրութիւնների, որ մնացել են քարերի վրայ և որ վերաբերում են այդ տոհմին: Հաւաքածուն կազմել է Բաղդասար միտրապօլիտը և իւրաքանչիւր թղթի թարգմանութեան տակ իւր ձեռքով ստորագրել է՝ «ուղիղ է ընդ նախագաղափարին»: Թէ ո՛ր աստիճան տիրապետում էր Բաղդասար միտրապօլիտը պարսկերէն, թուրքերէն, ռուսերէն և վրացերէն լեզուներին, որ կարողանար այդ լեզուներով գրուած թղթերի թարգմանութիւնը համեմատել բնագրի հետ, այդ մեզ յայտնի չէ. միայն այսքանը կ'ասենք, որ թարգմանութիւնը սաստիկ անպիտան է, մանաւանդ աշխարհաբար թարգմանուածները. շատ տեղերում ոչինչ չէ հասկացվում: Բաղդասար միտրապօլիտը մեծ սխալ է գործել, որ պատմութեան համար այդ թանկագին հաւաքածուի բնագրների օրինակները չէ գրել թարգմանութիւնների հետ:

Շուշիում բաւական տեղեկութիւններ հաւաքելով այդ բերդի վաղեմի իշխողների՝ Փանահ-խանի, Իբրահիմ-խանի

և Մէհտի-խանի մասին, ես անցայ Վարանդայի գաւառը՝ Մելիք-Շահնազարեանների տիրապետութեան երկիրը: Երկու օր մնացի Չանախչի կամ Աւետարանոց բերդում, ուր բնակվում էին Մելիք-Շահնազարեանները, ուր մինչև այսօր տեսնվում են նրանց ամրոցների աւերակները, ուր դըրած են այդ տոհմի նշանաւոր ներկայացուցիչների շիրիմները: Այստեղ ամեն մի ծերունի դեռ ևս չէ մոռացել, թէ ինչեր են կատարուել այդ բերդում, գիտէ այդ բերդի իշխողների իւրաքանչիւրի կատարած գործերը:

Ցոյց տալու համար, թէ մեր գաւառներում որպիսի արգելքների և մինչև անգամ անախորժութիւնների կարող է հանդիպել մի ուղևոր, որ ուսումնական նպատակներով ճանապարհորդութիւն է անում, ես մէջ կբերեմ մի դէպք, որ տեղի ունեցաւ Չանախչի բերդում:

Այստեղ գնալու ժամանակ Շուշուայ հոգևոր իշխանութեան յաջորդն ինձ տուել էր տեղային կոնսիստորիայի անդամ քահանաներից մէկին իբրև առաջնորդ, որ ցանկացած տեղերը ման ածէ ինձ և գիւղացիներին հասկացնէ իմ ճանապարհորդութեան նպատակը: Բացի դրանից գերապատիւ յաջորդն ինձ պատիւ էր արել, տալով իւր սեպհական ձին նստելու: (Յաջորդի ձին էլ մեծ նշանակութիւն ունի գիւղացիների աչքում): Չնայելով այդ բոլոր նախապատրաստութիւններին, Չանախչի բերդում հազիւ կարողացայ ազատուել մի մեծ սկանդալից: Հիւրասիրուելով տեղային քահանաներից մէկի տանը, խնդրեցի ինձ մօտ կանչել մի քանի ծերունի, որոնք կարողանային ինձ բաներ պատմել Մելիք-Շահնազարեանների մասին: Շատերը ներկայացան: Նրանք խօսում էին, իսկ ես հարկաւոր համարած տեղեկութիւնները նշանակում էի իմ նկատողութեան գրքոյկի մէջ: Յանկարծ հայհոյանքներով ներս թափուեցան մի խումբ մարդիկ և պատմողներին բռնութեամբ դուրս

քաշեցին սենեակից և կամենում էին ծեծել նրանց: Ես շըւարուած մնացի: Ինձ հետ եկած քահանան հազիւ կարողացաւ հանգստացնել նրանց: Բանից դուրս եկաւ, որ այդ մարդիկը Մելիք-Ջահնազարեանների տոհմից էին և նրանց շատ հաճելի չէր, որ իրանց նախնիքների պատմութիւնը գրուէր:

Առհասարակ ժողովուրդը սաստիկ վախենում է գըրչից. հէնց որ նրա աչքի առջև մի բան ես գրում, նա սարսափում է: Ինձ շատ անգամ առաջարկում էին այսպիսի հարցեր. «Ա՛դա, դրանից խօ մեզ վնաս չի՞ լինի»...: Ի՞նչ անէ խեղճ ժողովուրդը, նա ամեն գրութիւնների վըրայ նայում է պաշտօնական կէտից: Օրինակ, եթէ մի գիւղատնտես, կամենալով ուսումնասիրել երկրի բեղմնաւորութեան չափը, հարցնելու լինի գիւղացուց, թէ քո ցանքը հարիւրին որքան արդիւնք է բերում, նա իսկոյն կըսկսէ ստել, մտածելով, թէ կամենում են հարկերն աւելացնել: Այսպէս էլ՝ երբ կամենում ես հարցնել մելիքների տոհմին պատկանող այս և այն անձնաւորութեան մասին, իսկոյն սկսում են մտածել, չլինի՞ թէ նոր քննութիւններ պիտի սարքեն. չլինի՞ թէ հողերի, ազնուականութեան մասին էլի նոր բան կայ...: Այդ մարդիկը միշտ գործ են ունեցել ստորին պաշտօնեաների հետ, իսկ ուսումնասէր գիտնականը, պատմաբանը նրանց չի հանդիպել:

Վարանդայից անցայ Տիզակի գաւառը, գնացի Տող բերդը: Այս բերդում իշխում էին Մելիք-Աւանեանները: Տեսայ նրանց տոհմային գերեզմանատունը, տեսայ Մելիք-Եգանի կիսաւեր պալատը, որի մէջ այժմ բնակւում է մի մահմեդական բէկ, որ այդ տոհմի՝ կրօնափոխ եղած ժառանգներից մէկն է:

Այստեղ ինձ յաջողուեցաւ ձեռք բերել երկու բաւական հաստ հատորների մէջ ամփոփուած զանազան պատմական գրուածքներ: Այս աշխատութեան հեղինակն է Գտիչ վանքի վանահայր Առաքել վարդապետ Կոստանեանցը: Եթէ մեր բոլոր վանքերի ծոյլ, հացկատակ վարդապետները հետևէին Առաքել վարդապետի օրինակին, և իրանց շրջապատող ժողովրդի ու պատմական տեղերի աւանդութիւնները հաւաքելով գրէին, դրանով աւելի մեծ ծառայութիւն արած կըլինէին մեր գրականութեանը, քան թէ իրանց աղօթքներով:

Առաքել վարդապետը, իրաւ է, իւր պատմութեան մէջ ժամանակագրական կարգ չէ պահպանել, նիւթերն իրանց տեսակի համեմատ չէ դասաւորել, և նրա աշխատութիւնն աւելի մի անկապ հաւաքածու է, քան թէ պատմութիւն, այսուամենայնիւ նրա գրքերը բովանդակում են իրանց մէջ թէև անմշակ, բայց բաւական առատ նիւթեր պատմութեան համար: Երկու հատորները բաղկացած են 75 ընդարձակ գլուխներից և 428 երեսներից:

Նրա նիւթերի մեծ մասը կարող էր ծառայել Հայոց Այսմաւուրքին, քան թէ պատմութեան. օրինակ, հանդիպում են սրանց նման շատ գլուխներ. «Պատմութիւն հրաշից ուրումն աղքատի». — «Յաղագս մարդակերպ հարսնաքար անուանեալ վիմին». — «Յաղագս հրաշագործ ջուզալու խաչին». — «Յաղագս ուրումն ագահ վաճառականի, թէ որպէս եղև այր կատարեալ ի ձեռն սատանայի», և այդպիսի գլուխների մէջ յանկարծ «Պատմութիւն Լանկ-թամուրայ» — մի բոլորովին անյայտ կտոր Լանկ-Թէմուրի արշաւանքներից:

Առաքել վարդապետի երկու հատորների մէջ կան և այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրև աղբիւր Ղարաբաղի մելիքների պատմութեան համար: Այդ տեսակ գլուխներից բաւական ընդարձակ տեղ է բռնում Տիզակի Մելիք-Աւանեանների մանրամասն պատմութիւնը՝ սկսեալ

Մելիք-Եգանից մինչև այդ տոհմի վերջին ժառանգները: Յետոյ Վարանդայի Մելիք-Շահնազար II-ի պատմութիւնը, նրա յարաբերութիւնները Շուշի բերդի խաների հետ. Աղա-Մամադ-խանի վերջին արշաւանքը, նրա սպանուելը Շուշի բերդում. Ղարաբաղի սովը և ժանտախտը Աղա-Մամադ-խանի արշաւանքներից յետոյ. ժողովրդի ցրիւ գալը դէպի զանազան կողմեր: Կան և այնպիսի գլուխներ, որ նուիրուած են ռուսաց զանազան գեներալների արշաւանքներին դէպի Ղարաբաղի կողմերը: Դրանց մէջ հետաքրքիր են՝ իշխան Մադաթովի ճակատամարտը Շամքօր գետի և Գանձակի բերդի մօտ, գեներալ Կոտլարևսկու Լէնքօրանի և Ասլան-Դիւզի կռիւները, իշխան Ցիցիանովի արշաւանքները. այդ բոլորը թէև իրանց բովանդակութեան կողմից շատ հետաքրքիր են, բայց ժամանակագրական կարգով չեն դասաւորուած: Գրքերի մէջ պատահում են զանազան հին ձեռագրերից արտագրած յիշատակարաններ, նշանաւոր անձինքների շիրիմների տապանագրեր, Ղարաբաղի այլ և այլ վայրերի մասին ժողովրդի մէջ մնացած աւանդութիւններ, և այլն: Իսկ որ ամենից հետաքրքիրն է, այդ է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանաւոր անցքերի մասին՝ սկսեալ 1721 թուականից մինչև 1813 թուականը: Այդ ժամանակագրութիւնը, հեղինակի ասելով, դուրս է բերել նա մի ձեռագիր Մաշտոցից, որ գրուած է եղել Տէր-Գասպար քահանայի ձեռքով:

Ինձ հետ առնելով Առաքել վարդապետի գրքերը, հեռացայ Տող բերդից, մի օր այնտեղ մնալուց յետոյ: Այստեղից գնացի Ամարասայ վանքը, իսկ յետոյ վերադարձայ կրկին Շուշի բերդը:

Եւ այսպէս ես անցայ Ղարաբաղի բոլոր հինգ գաւառները—Գիւլիստան, Ջրաբերդ, Խաչէն, Վարանդայ և Տիզակ, որոնք մի ժամանակ կազմում էին Խամսայի հինգ

մելիքութիւնները: Այդ ճանապարհորդութիւնը տևեց երկու ամիս: Որքան կարող էի՝ թէ՛ բերանացի և թէ գրաւոր տեղեկութիւններ հաւաքեցի մելիքների պատմութեան մասին: Միևնոյն անցքը ես պատմել էի տալիս զանազան անձինքների, համեմատում էի միմեանց հետ, ստուգում էի և յետոյ նշանակում իմ գրքոյկի մէջ:

Յայտնի բան է՝ միայն ժողովրդական աւանդութիւնների վրայ հիմնուելով, շատ դժուար կլինէր կազմել մի քանի դարերի շարունակ պատմութիւնը: Ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը, մէկի գործողութիւնը միւսին է վերաբերում, և ամենադժուարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշտութիւններ չէ պահպանում, պատմական իրողութիւնները տեղափոխում է կամ շատ առաջ և կամ շատ յետոյ: Բացի դրանցից, ժողովուրդն ունի իւր լեգէնդաները, իւր իդէալները, իւր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործութիւններ, որ չէին կարող նրանց կատարածը լինել: Օրինակ, ինձ շատ անգամ պատահում էր նկատել, որ միևնոյն պատմական իրողութիւնը ամեն մի գաւառի աւանդութիւնների մէջ ընծայում էին նոյն գաւառի մի յայտնի հերոսին, այն ինչ այդ անձնաւորութիւնը չէր կարող այն գործը կատարած լինել. որովհետև կամ այն ժամանակ նա դեռ ծնուած չէր, կամ վաղուց մեռած էր: Բայց պատմական փաստը դարձեալ մնում է իբրև իրողութիւն, միայն հարկաւոր է նրա կատարող տէրը գտնել:

Այդ բոլոր խառնաշփոթութիւններն ստուգելու և անցքերը, գործողութիւններն ու գործողները պատմական ճիշտ ձևի մէջ դասաւորելու համար ես օգուտ եմ քաղել գրաւոր աղբիւրներից, որ ցոյց կըտամ յետոյ: Իսկ որտեղ պակասել են ինձ գրաւոր աղբիւրներ, ես հիմնուել եմ աւանդութիւնների վրայ:

Պէտք է ասած, որ աւանդութիւնները Խամսայի մելիքների պատմութեան ամենահարուստ մասն են կազմում: Աւանդութիւնների հետ ես վարուել եմ նոյն կերպով, ինչպէս որ վարվում է բնագէտը մի հնագարեան անծանօթ կենդանու ոսկորների կոյտի հետ: Ընդհանուր կենդանաբանական օրէնքներով նա գիտէ խառնուած ոսկորների կտորները ջոկել միմեանցից, ամեն մի մասը իւր պատշաճաւոր տեղը դնել, և այսպիսով կազմել մի ամբողջ կմախք: Գուցէ անդամներից մի քանիսը կըպակասեն, բայց բնագէտը դարձեալ կարող է գաղափար ստանալ, թէ իւր գիւտը կենդանիների ո՛ր տեսակին էր պատկանում:

Իբրև գրաւոր աղբիւրներ ես ի նկատի եմ ունեցել հետևեալ՝ դեռ ևս չտպուած ձեռագիր աշխատութիւնները.

1. Բաղդասար միտրապօլիտի ժամանակագրութիւնը, որ գտայ ես Գանձասար գիւղում և որի մասին վերևում տեղեկութիւններ տուի:

2. Բաղդասար միտրապօլիտի հրովարտակների, ֆիրմանների, կալուածագրերի, արձանագրութիւնների և զանազան պաշտօնական թղթերի հաւաքածու, որ գտայ ես Շուշի բերդում և որի մասին վերևում տեղեկութիւն տուի:

3. Առաքել վարդապետ Կոստանեանցի երկու հատոր հաւաքածու, որ գտայ ես Տող բերդում և որի մասին վերևում տեղեկութիւն տուի:

4. Երկու տետրակներ, բաղկացած 84 երեսից, քաղուածք է արած Միրզա-Ադիգօզալի պարսկերէն պատմութիւնից: Այդ տետրակների մէջ բովանդակվում են հետևեալ գլուխները.—I. «Որպիսութիւնք խանացն Գանձակայ». —II. «Որպիսութիւնք խանացն Ղարաբաղու». այդ գլխի

մէջ խօսվում է Ղարաբաղի խաների ծագման մասին, Փանահ-խանի հետզհետէ զօրանալու մասին, թէ ոպէս այդ խանը միանալով Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարի հետ, հիմնեց Շուշի բերդը և նրա հետ միասին սկսեցին պատերազմել Խամսայի միւս մելիքների և Շիրվանի խանի դէմ: Նոյն գլխի մէջ պատմվում է Փանահ-խանի հիմնած Բայաթ և Շահբուլաղ բերդերի մասին, որ կործանեցին հայոց մելիքները:—III. «Համառօտ պատմութիւն Խամսայի հինգ մելիքութիւնների». այդ գլխի մէջ խօսվում է Տիզակի Մելիք-Եգանի, Վարանդայի Մելիք-Շահնազարեանների, Խաչէնի Հասան-Ջալալեանների, Ջրաբերդի Մելիք-Աթամի և Մելիք-Ալլահղուլու և Թալիշի (Գիւլիստանի) Մելիք-Բէգլարեանների մասին:—IV. «Հանդամանք Փանահ-խանին ընդ Խամսայ մելիքաց». այդ գլխի մէջ խօսվում է Փանահ-խանի կռիւների մասին հայոց մելիքների հետ:—V. «Հիմնարկութիւն Շուշի բերդին». այդ գլխի մէջ աւելի պարզ երևում է Մելիք-Շահնազարի գործակցութիւնը Փանահ-խանի հետ ի վնաս Ղարաբաղի միւս մելիքների:—VI. «Կալանաւորութիւն Քէրիմ-խանին, Քեազմ-խանին, Հէյդար-Ղուլի-խանին և ազատութիւն նոցա ի Հաջի-Չալապէն». այդ գլխի մէջ խօսվում է վրաց Հերակլ իշխանի նենգաւոր արշաւանքի մասին դէպի Ղարաբաղի կողմերը և նրա պարտութեան մասին Հաջի-Չելէբիից:—VII. «Գալուստ աւշար Ֆաթալի-խանին ուրմեցւոյ ի վերայ Ղարաբաղայ և պատերազմ նորա». այդ գլխի մէջ խօսվում է, թէ որպէս հայոց մելիքները միանալով Ֆաթալի-խանի հետ, սկսեցին կռուել Փանահ-խանի հետ և ստիպեցին նրան իւր որդի Իբրահիմ-աղային (յետոյ Իբրահիմ-խան) պատանդ տալ, որին Ֆաթալի-խանը տարաւ Պարսկաստան: Յետոյ Փանահ-խանի՝ իւր որդու ազատութեան համար Պարսկաստան գնալը, այնտեղ մեռնիլը

և Իբրահիմ-խանի վերադարձը Ղարաբաղ, որպէս այդ երկրի պարսից կառավարութիւնից նշանակուած կառավարիչ։—VIII. «Որպիսութիւնք Իբրահիմ-խանին». այդ գլխի մէջ պատմվում է Իբրահիմ-խանի զօրանալու մասին, Աղա-Մամադ-խանի առաջին արշաւանքի մասին, որ Շուշի բերդը պաշարելով և չկարողանալով գրաւել, Մելիք-Մէջլումի և Ջաւատ-խանի առաջնորդութեամբ գնաց Թիֆլիզն աւերակ դարձրեց. կոմս Զուբովի արշաւանքը. Իբրահիմ-խանի և ուրիշ մի քանի խաների ռուսաց հպատակութիւն ընդունելը. Աւարիայի Օմար-խանի .ասպատակութիւնը Վրաստանում. Հերակլի մահը և վրաց իշխանական գերդաստանի երկպառակութիւնները։—IX. «Յաղագս կրկնակի գալստեան Աղա-Մամադ-շահին ի վերայ Ղարաբաղայ և գնալոյ Իբրահիմ-խանին ի Բալաքիան». այդ գլխի մէջ պատմվում է Աղա-Մամադ-շահի Շուշի բերդում սպանուելու մանրամասնութիւնները։ Հետևեալ գլուխներում պատմվում է վրաց Հերակլ իշխանի մահը, Գէօրգիի յաջորդելը, Աւարիայի Օմար-խանի երկրորդ արշաւանքը դէպի Վրաստան, գեներալ Լազրովի յաղթութիւնը նրա դէմ. գեներալ Ցիցիանովի արշաւանքը, ևայլն։ Միրզա-Ադիգօզալի պատմութիւնից քաղած վերոյիշեալ երկու տետրակները ես ստացել եմ Ղարաբաղի հոգևոր իշխանութեան յաջորդ Կարապետ վարդապետ Այվազեանից։

5. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցի «Պատմութիւն աշխարհին Աղուանից» կոչուած անտիպ գրքոյկը։ Այդ գրքոյկը, որ Ղարաբաղի մելիքների պատմութեանն է վերաբերում և հեղինակը չգիտենք ինչու է նրան Աղուանից պատմութիւն կոչում, բովանդակում է իր մէջ հետևեալ գլուխները.-«Աւան-իւզբաշի».—«Յաղագս գալստեան տաճկաց ի Ղարաբաղ».—«Գաղթումն Աւանայ ի Ռուսաստան».—«Վերաբնակութիւն Մելիք-Եսայեայ ի

Սղնեաց յԱրցախ».—«Յաղագս Մելիք-Եգանայ և գործոց նորա».—«Յաղագս պատերազմին խանին Փանահայ ընդ Մելիք-Եգանայ».—«Դարձեալ վասն պատերազմին խանին Փանահայ ընդ Մելիք-Եգանայ».—«Յաղագս մելիքութեան Եսայեայ և յաղագս պատերազմի նորին».—«Պատերազմ խանին Ղարաբաղայ, որ է մասն Փայտակարանի, ընդ Մելիք-Եսայեայ».—«Տեղեկութիւն ի վերայ ազգին Մելիք-Շահնազարայ».—«Յաղագս պաշարելոյ մելիքաց զբերդն Աւետարանոց».-«Յաղագս միաբանելոյ Մելիք-Շահնազարայ ընդ խանին Փանահայ և յաղագս պատերազմին Հաջի-Չալաբիայ».—«Վասն հաստատութեան Մելիք-Միրզախանայ հայկազնւոյ ի թուին հայոց ռ. մ. դ.».—«Յաղագս պատերազմին Չալաբիայ ընդ արքային վրաց Թամրազայ».—«Վասն պատերազմի խանին Ուրմւոյ աւշար Ֆաթալի կոչեցելոյ ընդ խանին Փանահայ ի թուին ռ. մ. ժ.».—«Յաղագս պատերազմին Փանահայ ընդ Մելիք-Ադամայ ի թուին ռ. մ. գ.».—«Դարձեալ պատերազմ խանին Փանահայ ընդ Մելիք-Ադամայ».—«Ծագումն ազգին Մելիք-Յովսէփայ տէրապետողին նահանգին Իգիրմիդորդու (Գիւլիստանի), որ ի հնումն Գիւթական».—«Գաղթումն Մելիք-Աթամայ և Մելիք-Յովսէփայ ի Գանձակ».—«Յաղագս վերստին մարտի Իբրահիմ-խանին ընդ մելիքաց հայոց».—«Մահ խանին Շահվերդւոյ և գաղթումն Մխիթարայ Քալանթարին».—«Դարձ մելիքաց ի հայրենիս».—«Յաղագս դիմելոյ մելիքաց հայոց առանձին գրութեամբ առ կայսրուհին ռուսաց Եկատերինէ».—«Դաշնագիր մելիքաց».—«Մահ Յովհաննէս կաթողիկոսին Հասան-Ջալալեանց».—«Յաղագս պատճառաց հակառակ աթոռոյն Գանձասարայ».—«Յաղագս գաղթելոյ Մելիք-Մէջլումայ և Մելիք-Աբովայ».—«Գալուստ Սարգիս միտրապօլիտին ի Ղարաբաղայ ի Գանձակ».—«Արշաւանք մելիքաց հայոց».—«Հարցումն

Արզումանայ յումեմնէ ախունդէ».—«Յաղագս դարձի Մելիք-Աբովայ ի Ղարաբաղ».—«Գալուստ Աղա-Մամատ-խանին ի Ղարաբաղ».—«Գալուստ Աղա-Մամատ-շահին ի Վիրս».—«Յաղագս գալստեան Զօրովայ յաշխարհն Աղուանից».—«Դարձ Զուբովայ ի Ռուսաստան».—«Պաշարումն քաղաքին Գանձակայ և մահ Մելիք-Մէջլումայ».—«Դարձ Աղա-Մամատ-շահին ի Ղարաբաղ և մահ նորա».—«Դարձ Մելիք-Աբովայ ի Բօլնիսէ հանդերձ բնակչօք».—«Յաղագս մեծ սովուն Արցախու և յաղագս գնալոյ Մելիք-Ջումշուդայ առ Կայսրն ռուսաց», ընդամենը 39 գլուխ: Մնացեալ 8 գլուխները վերաբերում են ռուսաց զանազան գեներալների արշաւանքներին: Գրքոյկը բաղկացած է 124 երեսից: Սարգիս արքեպիսկոպոսը, թէև ինքը չէ յայտնում, բայց իւր պատմութիւնը կազմելու ժամանակ մեծ մասամբ օգուտ է քաղել վերև յիշած Միրզա-Ադիգօզալի պարսկերէն պատմութիւնից, իսկ մնացեալ մասը հաւաքել է աւանդութիւններից: Անցքերը ժամանակագրական կարգով չեն դասաւորուած. տեղ-տեղ հանդիպում են տոհմագրական սխալներ, որդին իւր հօր հայրն է դառնում, իսկ հարազատ եղբայրը՝ հօրեղբայր, ևայլն: Ժամանակագրական թուականներ համարեա թէ չկան: Այն տեղերում, որ քաղել է Միրզա-Ադիգօզալի պատմութիւնից, գործ է ածում հիջրէթի թուականները, որոնց շատերը չեն համապատասխանում իրանց ժամանակին: Ինչպէս Ղարաբաղի մելիքների պատմութիւնը նա «Պատմութիւն աշխարհին Աղուանից» է կոչում, այնպէս էլ աշխարհագրական զանազան տեղերի անունները գործ է ածում հին պատմական ձևով, որոնց շատերը չեն համապատասխանում այժմեան տեղերին: Զարմանալու է, որ Մելիք-Մէջլումին և Մելիք-Աբովին Հայկ կամ Արամ չէ կոչում: Ես միայն աչքի առաջ եմ ունեցել Սարգիս արքեպիսկոպոսի գրքոյկը, բայց նրան

չեմ հետևել: Այդ գրքոյկը ես ստացայ գնդապետ Յ. Դ. Լազրովից:

6. Մի այլ տետրակ, 16 մեծ երեսից բաղկացած, կրում է այսպիսի վերնագիր. «Ծ ա գ ո ւ մ ն Ղ ա ր ա բ ա ղ ո ւ մ ե լ ի ք ն ե ր ի» Սար. վ. Ջալալեանցի, բովանդակում է իւր մէջ միայն 4 գլուխ.—I. «Ծագումն ազգին Մելիք-Աթամայ տիրապետողին նահանգին Չարաբերդու».—II. «Ծագումն ազգին Մելիք-Յովսէփայ տիրապետողին նահանգին Իգլիմիգորդու, որ ի հնումն Գիւթական».—III. «Ծագումն ազգին Մելիք-Եգանայ տիրապետողին նահանգին Տիզակու».—IV. «Ծագումն ազգին Մելիք-Շահնազարայ տիրապետողին Վարանդու:» Ստորագրած է. «Համառօտեալ զայս ի պատմութեանց (?) յինէն յօրինելոյ. Սարգիս վարդապետ Ջալալեանց»: Այդ փոքրիկ տետրակն աւելի ամփոփ է և աւելի խղճմտանքով մշակուած, քան Ջալալեանի վերև յիշած ընդարձակ պատմութիւնը: Այդ տետրակը ես ստացայ պ. Սեդրակ Տէր-Առաքելեանից:

7. Հին գրչագիր մատեանների յիշատակարաններից քաղած Ղարաբաղի մելիքների վերաբերութեամբ արձանագրութիւններ.—եկեղեցիների, վանքերի, մելիքների ամրոցների, նրանց տոհմային շիրիմների վրայ գտնուած արձանագրութիւններ.—մելիքների ժառանգների կամ մասնաւոր անձինքների ձեռքում գտնուած հրովարտակների, ֆիրմանների, կալուածագրերի ու այլ պաշտօնական թղթերի օրինակներ.—մելիքների անունով կաթողիկոսների կոնդակների և օրհնութեան թղթերի պատճէններ.—յիշեալ վաւերաթղթերը (դօկումէնտ) որքան յաջողուել է ինձ հաւաքել ճանապարհորդութեանս ժամանակ, ծառայել են ինձ որպէս գլխաւոր աղբիւր ժամանակագրութեան և մելիքների տոհմային ճիւղագրութեան համար:

Մինչև այստեղ յիշած աղբիւրները դեռ ևս տպա-

գրութեամբ լոյս չտեսած, ձեռագրերի մէջ մնացածներն էին. այժմ դառնանք դէպի այն աղբիւրները, որոնք արդէն տպուած են.

1) Չամչեան Հ. Միքայէլ վարդապետ։ Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև յամ Տեառն 1784․ Հատոր III-րդ։ Վենետիկ 1786․

2) Առաքել Դաւրիժեցի։ Պատմութիւն սակս գերուածոց Հայաստանեայց և ևս գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի թուոյն Հայոց 1054 մինչև յաւարտ պատմագրութեանս (1601—1666), այլ և ի յիշումն ածեալ մասնաւորաբար աստի և անտի։ Ամստեղոդամ (Ամստերդամ) 1669։

3) Հասան-Ջալալեանց Եսայի կաթողիկոս Աղուանից։ Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից ի թուականին Հայոց 1160, իսկ ի թուականին Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի 1711։ Շուշի 1839։ Այդ փոքրիկ գրքոյկը, ինչպէս երևում է, համառօտութիւն է, քաղած մի ընդարձակ պատմութիւնից, որի իսկականը, եթէ գտնուէր, մեծ գանձ կարելի էր համարել մեր նոր ժամանակների պատմութեան համար։ Հեղինակը՝ Աղուանից Եսայի կաթողիկոսը, ինքը լինելով Ղարաբաղի մելիքների ապստամբութեան (1700—1728 թ.) գլխաւոր պարագլուխներից մէկը, գրել է իւր ժամանակի անցքերի մանրամասն պատմութիւնը։

4) Դաւիթ-բէկ. Պատմութիւն Դաւիթ-բէկին և պատերազմաց Հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722 և Հայոց 1171։ Վաղարշապատ 1871։ Այդ հետաքրքիր պատմութեան հեղինակը մինչև այսօր մնում է անյայտ. ձեռքից ձեռք անցնելով, հեղինակի անունը եղծուել է։ Ես այժմ անտեղի եմ համարում խօսել այդ մասին, միայն

կրկնեցնեմ հայկական առածը. «գողը գողից գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ»...։

5) Աբրահամ կաթողիկոս կրետացի։ Պատմութիւն անցիցն իւրոց և Նադիր-շահին պարսից։ Վաղարշապատ 1870։

6) Գիլանենց Պետրոս դի-Սարգիս։ Ժամանակագրութիւն 1722—1723։ Հայերէն բնագիրը, որ տպուած է եղել «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի 1863 թուի տետրակներում, ձեռքի տակ չունենալով, ես աչքի առաջ եմ ունեցել այդ ժամանակագրութեան Ք. Պատկանեանի ռուսերէն թարգմանութիւնը։ Ս. Պետերբուրգ 1870։

6) Արղութեանց-Երկայնաբազուկ Յովսէփ արքեպիսկոպոս։ «Ղարաբաղի ժառանգական տիրապետողների՝ որ կոչվում են մելիքներ, Ռուսաստան դեսպաններ ուղարկելու ստիպողական պատճառները և նրանց խնդիրքը Նորին Կայսերական Մեծութեան Պետրոս Մեծից»։ Այդ հետաքրքիր պատմական գրութիւնը շարադրուած է Ռուսաստանի Հայոց վիճակաւոր առաջնորդ Արղութեան-Երկայնաբազուկ Յովսէփ արքեպիսկոպոսի աշխատութեամբ և գեներալ-ֆելդմարշալ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտեմկինի միջնորդութեամբ 1790 թուին ներկայացրած է Եկատերինա II կայսրուհուն։ Այդ գրութեան հայերէն թարգմանութիւնը՝ Պետրոս Մեծի, Եկատերինա II-ի և Պօղոս I-ինի Ղարաբաղի մելիքներին շնորհած հրովարտակների հետ տպուեցաւ 1858 թուի Մանդինեանցի «Մեղու Հայաստանի» 4 և 5 համարներում, իսկ ռուսերէն բնագիրը կարելի է գտնել «Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа ч. I, с. 165—201 и ч. II. с. 52—62. Այլ և Сѣв. Архивъ 1823, т. 6. № 10, с. 233։ Նոյն Յովսէփ արքեպիսկոպոսի նոյն թուով (1790 թ. 23

յունվարի) կազմած մի այլ գրութիւն այսպիսի վերնագրով՝ «Հայոց տիրապետող իշխանների կամ Ղարաբաղի մելիքների մասին: Նրանց անունները և տիրած երկիրները: Շուշուայ Իբրահիմ-խանի Շուշին գրաւելու պատճառները:» Այդ գրութիւնը, որ նոյնպէս իշխան Պոտեմկինի միջնորդութեամբ ներկայացուեցաւ Եկատերինա II կայսրուհուն, բովանդակում է իւր մէջ Խամսայի հինգ տիրապետող մելիքների անունները, նրանց համառօտ պատմութիւնն ու յարաբերութիւնները Փանահ-խանի ու Իբրահիմ-խանի հետ: Ռուսերէն բնագիրը տպուած է նոյնպէս «Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа ч. II. с. 52—62: Պէտք է ասած, որ յիշեալ աքտերի հաւաքածուից ես քաղել եմ Ղարաբաղի կաթողիկոսների և մելիքների ռուսաց կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնների այլ և այլ մանրամասները՝ սկսեալ 1701—1801 թուականը:

7) Երիցեան Ա. Գ. Карабагскіе мелики въ Грузіи съ 1800 по 1808 годы. Кав. Стар. 1872, №2. Իւր պատմական յօդուածը կազմելու համար հեղինակը օգուտ է քաղել այն տեղեկութիւններից, որ բովանդակվում են 1—3 հատորների մէջ Актовъ Кав. Археогр. Ком. և աչքի առաջ է ունեցել ուրիշ մի քանի աղբիւրներ: Գ. Երիցեանի ամսագրի նոյն համարում զետեղուած են Յովսէփ արքեպիսկոպոսի և Ղարաբաղի մելիքների մի շարք խիստ հետաքրքիր նամակների ռուսերէն թարգմանութիւնները:

Ես ձեռքի տակ եմ ունեցել նաև հետևեալ գրքերը. Закавказье отъ 1803—1806 года. Н. Дубровина, С.-Петербургъ 1866.—Жизнь генералъ-лейтенанта князя Мадатова, изданіе второе, С.-Петербургъ, 1863.—Матеріалы для исторіи Кавказа П. Г. Бут-

кова 3 ч. С.-Петербургъ 1869: Պէտք է խոստովանել, որ ցանկանալով իմ աշխատութեանը տալ, որքան կարելի է, հայոց տոհմային պատմութեան ձև, ես շատ դէպքերում զերադասել եմ այն նիւթերը, որ յաջողուել է ինձ գտնել հայոց թէ՛ գրաւոր և թէ բերանացի աւանդութիւնների մէջ, և այդ պատճառով ռուսաց աղբիւրների վրայ նայել եմ որպէս օժանդակող նիւթերի վրայ:

Եթէ Խամսայի մելիքութիւնների առաջին հատորն ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութիւնից և տպուած գրքերը վաճառուեցան, այն ժամանակ ես կըտպեմ մի երկրորդ հատոր որպէս յաւելուածք առաջին հատորի: Այդ վերջին հատորի մէջ զետեղուած կըլինին այն բոլոր նիւթերը, որոնք ծառայել են իբրև աղբիւր առաջին հատորը կազմելու համար: Բովանդակութիւնը կըլինի հետևեալ կարգով.—զանազան անձինքների՝ զանազան ժամանակներում Ղարաբաղի կաթողիկոսների, մելիքների մասին գրած և անտիպ մնացած պատմական աշխատութիւններ.—մեր պարբերական հրատարակութիւնների կամ այլ և այլ գրքերի մէջ ցրուած յօդուածները Ղարաբաղի մելիքների մասին.—ռուսաց աքտերի մէջ գտնուած տեղեկութիւնները Ղարաբաղի մելիքների մասին, որպիսի են Կովկասեան հնագրութեան մասնաժողովի աքտերը (Акты Кав. Археогр. Ком.): Մոսկվայում տպուած հաւաքածու աքտերի, որ վերաբերում են հայոց ազգի պատմութեան հետազօտութեանը (Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа).—ռուսաց պատմագրների՝ Սօլովեվի, Բուտկովի, Դուբրովինի, Յ. Արարատսկու (հայ) և այլոց գրքերի մէջ գտնուած տեղեկութիւնները Ղարաբաղի մելիքների մասին, այլև պարսից պատմագրութեան մէջ հայոց մելիքների մասին գտնուած տեղեկութիւնները.—ռուսաց կայսրների, պարսից

շահերի, վրայ իշխանների և զանազան խաների Ղարաբաղի կաթողիկոսներին ու մելիքներին շնորհած անուանական հրովարտակների, ֆիրմանների օրինակները.— մելիքների տոհմերի վերաբերութեամբ գտնուած արձանագրութիւնների օրինակները՝ եկեղեցիների, վանքերի, շիրիմների քարերի վրայ, գրքերի յիշատակարանների մէջ. —մելիքների տոհմային ճիւղագրութեան աղիւսակները։ Այդ բոլորը տպուած կըլինին իմ սեպհական բացատրութիւններով և ծանօթութիւններով։

Այդ գիրքը կազմելու համար ես ձեռքի տակ ունիմ բաւական պատրաստի նիւթեր։ Անտարակոյս ուրիշների մօտ գուցէ գտնվում են և այնպիսի թղթեր, որոնք ինձ յայտնի չեն, որոնք աւելի լոյս կարող էին ձգել մելիքների դարու պատմութեան վրայ։ Եւ որովհետև մի լիակատար, ճոխ հաւաքածու կազմելն աւելի ընդհանրութեան օգնութեանը կարօտութիւն ունի, ուստի այդ մտքով ես հրաւիրում եմ օգնել ինձ նրանով միայն, որ իւրաքանչիւր ոք՝ եթէ գտնվում է նրա մօտ մի որևիցէ նիւթ, որ կարող էր ծառայել իմ նպատակին, ուղարկէր ինձ իմ հաւաքածուի մէջ զետեղելու համար։ Ես չեմ պահանջում թղթերի իսկականները, եթէ այդ հնարաւոր չէ, այլ թող ինձ ուղարկեն ճիշտ պատճէնները, միայն թէ այդ պատճէնները պէտք է վաւերացրած լինին, որ համեմատ են իսկականի հետ։ Վաւերացնել կարելի է կամ տեղային ուսուցչական խմբի մօտ, որտեղ կան թեմական դպրոցներ, կամ տեղային կոնսիստորիայում, եթէ կ'ընդունեն։

Ես աւելի շատ բան եմ սպասում մեր գաւառական վարժապետներից, որոնք թէ միջոցներ և թէ պատրաստականութիւն ունին պատմական նիւթեր հաւաքելու։ Իբրև օրինակ ես կըյիշեմ մի վարժապետի անունը. պարոնը Շուշուայ հոգևոր դպրոցում ուսուցիչ է՝ Խօջամիրեանց։

Նա իրան նպատակ է դրել ամեն տեղ պատահած գրչագիր մատեանների յիշատակարաններն արտագրելու, այլև հաւաքելու այն բերանացի աւանդութիւնները, որոնք ժողովրդի մէջ պահպանուած են զանազան աւերակների, բերդերի, ժայռերի, բլուրների և այլ վայրերի մասին։ Շուշիում եղած ժամանակ պարոնը տուեց ինձ իւր հետաքրքիր հաւաքածուն։ Մի աւետարանի յիշատակարանում կարելի է գտնել հայոց մի նշանաւոր իշխանական տան շարունակութիւնը, որ պատմութեան համար կորած էր։ Այսպիսի շատ գիւտեր կարող են պատահել, միայն թէ հետախուզողներ լինէին։

Ի դէպ է յիշել, որ Խամսայի մելիքութիւնների պատմութիւնը գրելու ժամանակ ինձ աւելի նուազ օգնեցին նոյն իսկ մելիքների ժառանգները, որոնց աւելի պիտի հետաքրքրէր իրանց նախահայրերի պատմութիւնը։ Նրանք կարող էին ուղարկել ինձ իրանց տոհմային վաւերաթղթերի (դօկումէնտ) օրինակները. սակայն բացի մի քանիսից, միւսները ուշադրութիւն անգամ չդարձրին կամ երկիւղ կրեցին...։

Ես մասամբ իրաւացի եմ գտնում այդ երկիւղը։ Մելիքների ժառանգներից ոմանք աղքատ, աննշան մարդիկ են, բայց իրանց ձեռքում պահում են նշանաւոր թղթեր։ Շատ անգամ պատահել է, որ աւելի ճարպիկները նրանց խաբել են, թղթերն առել են, կամ գողացել են, և իրանց ազգանունը փոխելով, նրանց ազգանունը կրելով, ազնուական են դարձել, տիրացել են նրանց թէ հողերին և թէ տիտղոսին...։ Բայց մի պատմագրից այդ տեսակ կասկածներ ունենալ, կարծեմ, շատ ծիծաղելի կըլինէր, երբ նրա խնդրածը միայն թղթերի պատճէնն է և ոչ թէ իսկականը։

Կան և այնպիսիները, որ մերժում են բոլորովին

տգիտութիւնից: Նրանց համար ոչինչ այնքան արժէք չէ ստանում, որպէս մի հին թղթի կտոր, որ ընկած է լինում նրանց տան փոշիների մէջ և իրանք էլ չգիտեն նրա նշանակութիւնը: Բայց հէնց որ սկսում ես այդ թղթի կտորին նշանակութիւն տալ, պահանջել, իսկոյն ծագում է նրանց գլխում մի այսպիսի միտք. «գրանում մի բան կայ»... (անպատճառ փողի բան) և թագցնում են թղթի կտորը: Այդպիսի շատ դէպքեր պատահեցան ինձ ճանապարհորդութեանս ժամանակ:

Ինչու ենք զարմանում ռամկի վրայ: Ես կարող եմ ցոյց տալ ուսեալ, զարգացած մարդիկ, որոնք լաւ հասկանում են, թէ ինչ է պատմութիւնը, և որոնք խոստացել էին ինձ տալ իրանց մօտ գտնուած այս և այն թղթերը, բայց վերջը չկատարեցին իրանց խոստմունքը: Ինչու.— միայն նախանձից: Որովհետև իրանք այնքան պատրաստականութիւն չունէին, որ կարողանան իրանց ձեռքի տակ եղած նիւթից օգուտ քաղել, իսկ ուրիշներին ևս թոյլ չէին տալիս օգուտ քաղելու: Իսկ եթէ նոյն թղթերը իրանց երեխաներն իրանց աչքի առջև պատառոտելու լինէին, ես հաւատացած եմ, որ ամենևին ցաւ չէին զգալ, միայն կընայեն և կըզուարճանան իրանց զաւակների խաղի վրայ:

Թէ այսպէս և թէ այնպէս, մենք ունինք մի պատմութիւն, որ դեռ ևս ուսումնասիրուած չէ, որ դեռ ևս գրուած չէ.—այդ է մելիքների տիրապետութեան ժամանակների պատմութիւնը: Հայաստանը զանազան դարեշրջաններում, կորցնելով իւր թագաւորութիւնը, ունեցաւ կուսակալների, մարզպանների, ոստիկանների, կիւրապաղատների դարերը: Իսկ վերջին ժամանակներում—մելիքների դարերը: Այդ դարերի պատմութիւնը պէտք է ներկայացնէ մեր նոր պատմութիւնը:

Մեր նախնի գրողներն աւելի փութաջան գտնուեցան մեզանից: Նրանք թողեցին մեզ իրանց ժամանակների պատմութիւնները: Իսկ մենք, տասնեւիններորդ դարու զաւակներս, ինչ պիտի թողնենք մեր ապագայ սերնդին: Մի ամբողջ պատմութիւն կորչում է, անհետանում է, իսկ մենք դրա վրայ ուշադրութիւն չենք դարձնում:

Յայտնի գրողներից մէկն ասում է. «քրքրէր մի ազգի հնութիւնները և մի գիշերուայ մէջ կըզարթնէր նրա թմրած հոգին»...: Պատմութիւնն այդպիսի ազդեցութիւն ունի ազգերի և ժողովուրդների համար: Պատմութիւնը մի վարդապետարան է, մի դասարան է, որի մէջ ապագայ սերունդը կրթվում է, զգուշանալով իւր նախահայրերի սխալներից և հետևելով նրանց լաւ գործերի օրինակին:

Կրկնում եմ, մենք ունինք մի պատմութիւն, որ կորչելու, անհետանալու վրայ է:

Խամսայի մելիքութիւնների պատմութիւնը գրելը միայն մի փորձ էր՝ ցոյց տալու համար, թէ ունինք նոր ժամանակների պատմութիւն, որի վրայ ուշադրութիւն չենք դարձնում: Թէ որքան յաջողուեցաւ ինձ այդ փորձը, այդ ուրիշ բան է. բայց կարծում եմ, որ ես կարողացայ ապացուցանել, թէ կայ պատմութիւն:

Իբրև փորձ ես վեր առայ մի գաւառ միայն Ղարաբաղը, և գրեցի այդ գաւառում եղած հայկական հինգ իշխանութիւնների պատմութիւնը և հասցրի մինչև ռուսաց տիրապետութեան ժամանակները: Բայց մելիքութիւններ Անդրկովկասում եղել են բոլոր հայաբնակ գաւառներում: Միայն Երևանի նահանգում կային եօթն նշանաւոր մելիքութիւններ, որոնց ներկայացուցիչները՝ Մուղանի դաշտում, Աբրահամ կաթողիկոսի հետ, ներկայ գտնուեցան Նադիր-շահի թագաւորութեան հանդիսին: Մելիք-Ագամալեանները, Գեղամեանները, Լօռի-Մելիքեանները, Ար-

ղութեանները և այլ իշխանական հին տներ յայտնի էին և ռուսաց տիրապետութեան սկզբի տարիներում:

Ես չեմ խօսում Շիրվանի, Շաքիի, Դերբէնդի և Բագուի գաւառների մասին, որովհետև այդ կողմերը չեմ եղել, այդ երկրների մելիքութիւնների մասին շատ փոքր տեղեկութիւններ ունիմ: Բայց իմ անցեալ տարուայ ճանապարհորդութեանս ժամանակ, բացի Ղարաբաղից, ես պտըտեցի Գանձակի, Զանգէզուրի, Սիսիանի, Բարգիւշատի, Չաւնդուրի, Ղափանի, Մեղրիի և Օրդուբադի վիճակներում, անցայ Հին-Նախիջևանի կողմերը և այնտեղից գնացի Պարսկաստան: Յիշեալ երկրներում կային հզօր մելիքութիւններ, որոնք 1722 թուի ապստամբութեան ժամանակ մասնակցում էին Դաւիթ-բէկի և Ղարաբաղի մելիքների կռիւներին: Օրինակ՝ Զանգէզուրի վիճակում յայտնի էին Մելիք-Հայկազեանները *), Սիսիանի մէջ (Տաթևի կողմերում) յայտնի էին Օրբէլեանները, Բարգիւշատի մէջ՝ Մելիք-Ֆրանգիւլը, Չաւնդուրի մէջ՝ Թորոս իշխանը, Ղափանի մէջ՝ Մելիք-Փարսադանեանները, Մեղրիի կողմերում՝ Շահումեանները, Օրդուբաթի կողմերում՝ Մելիք-Մուսան, և այլն:

Որքան կարող էի, որքան իմ ժամանակը և միջոցները ներում էին, ես տեղեկութիւններ հաւաքեցի վերոյիշեալ մելիքութիւնների մասին, բայց այդ տեղեկութիւնները դեռ այնքան թերի են, որ հազիւ թէ կարելի լինէր նրանց մասին մի ամբողջ բան գրել: Այդ մթութեան մէջ մնացած իշխանութիւններն ի լոյս ածելու համար պէտք է սպասել մինչև նիւթերի քանակութիւնը բաւա-

---

*) Շահ-Աբաս մեծի Մելիք-Հայկազին շնորհած մի փիրմանի մէջ տալիս է նրան ս ա դ ր - ն ի շ ի ն տիտղոսը, որ նշանակում է թագաւորի մօտ առաջին տեղում նստող՝ գահերէց:

կանաչափ հաւաքուի, որ կարելի լինի պատմութիւն գրելու ձեռնարկել:

Աւելորդ չեմ համարում յիշել որ իմ ճանապարհորդութիւնից Թիֆլիզ վերադառնալու ժամանակ գնացի Ս. Էջմիածնի վանքը: Ես մեծ յոյսեր ունէի, որ ընդհանուր հայոց Մայր-Աթոռի արխիւում կըգտնէի շատ թղթեր, որոնք նիւթ կըտային մեր նոր ժամանակների պատմութեանը: Մանաւանդ, որ դեռ 1858 թուին Մանդինեանցի «Մեղուի» № 15-ում կարդացել էի Սանահնի վանքի գրադարանի՝ մօտ 100 նշանաւոր գրչագիր մատեանների թւում հետևեալ գրքերի անունները, որոնք ինձ շատ հարկաւոր էին. «Պատմութիւն Դաւիթ-բէկի», —«Տետրակ պատմութեան խանից Ղարադաղու, թարգմանեալ ի պարսից լեզուէ», —«Պատմութիւն Ղալի-Մօլլայի յԱբրահամ քահանայէ», —«Պատմութիւն Մանուէլ վարդապետի անցիցն Ս. Էջմիածնի 1801 ամէ ց1835-ն», —«Վերլուծութիւն յԱրիստակէս վարդապետէ և հին նշանագիրք հայոց»:— Այդ պատմական գրքերը, ինչպէս և մօտ 100 հատոր միւս նշանաւոր գրչագրերի մեծ մասը Սանահնի վանքից այժմ անհետացել են, ես յոյս ունէի գոնէ իմ ցանկացած գրքերը գտնել Ս. Էջմիածնի մատենադարանում: Բացի դրանցից, «Մեղուի» նոյն տարուայ 11 համարում կարդացել էի Մխիթարեան Աբէլ վարդապետի (յետոյ եպիսկոպոսի) 11 հատոր զանազան անտիպ աշխատութիւնների ցուցակը, որոնց թւում գտնվում էր «Պատմութիւն հայոց ի 1761 թուականէ ց1857, շարունակութիւն Չամչեան պատմութեան:» —Աբէլ եպիսկոպոսը ներկայ դարու Ս. Էջմիածնի միաբանների մէջ, Կարապետ վարդապետ Շահնազարեանից յետոյ, միակ եկեղեցականն էր, որ իւր անձը նուիրել էր գրականութեան: Նա բանաստեղծ և լաւ պատմաբան էր: Մի ժամանակ Պարսկաստանի հայոց թեմա-

կան առաջնորդ լինելով, մի ամբողջ ձմեռ ապրում էր նա իմ տան մէջ, շատ անգամ գիշերները կարդում էր ինձ իւր հետաքրքիր պատմութիւնը։ Միայն նա՝ Ս. Էջմիածնում երկար ժամանակ ապրած լինելով և այդ վանքի բոլոր գաղտնիքներին տեղեակ լինելով, կարող էր գրել մի այդպիսի պատմութիւն, որ իսկապէս Չամչեանի շարունակութիւն կարելի էր համարել։ Բայց ո՞ւր մնաց նրա աշխատութիւնը.—ինչպէս հալածուեցաւ հեղինակը, այնպէս էլ հալածուեցաւ նրա գիրքը...։ Այդ բազմարդիւն և բազմաշխատ գրողին թոյլ չտուեցին մինչև անգամ իւր հողին աւանդել Ս. Էջմիածնի պարիսպների մէջ։ Նա քաղցածութիւնից մեռաւ իւր ծառայի տանը, դառն չքաւորութեան մէջ։ Իսկ նրա պատմութեան գիրքը և ուրիշ շատ անտիպ մնացած աշխատութիւնները մի քանի հարիւր ռուբլու կաշառքով անցան մէկի ձեռքը, ուր այժմ կամ մոխիր են դարձել, կամ երբէք դուրս բերելու հնար չկայ...։

Եւ այսպէս, Ս. Էջմիածնի մատենադարանում իմ նպատակներին համապատասխանող ոչինչ չգտայ։ Ես յոյս ունէի գոնէ արխիւում գտնել զանազան պաշտօնական թղթեր, որոնք կըծառայէին իբրև նիւթ պատմութեան համար. բայց իմ բարեկամ եպիսկոպոսներից երեքը, որոնք լաւ գիտէին, թէ Ս. Էջմիածնի արխիւում ինչ է մնացել, յայտնեցին, թէ ի զուր կ'անցնէր իմ աշխատանքը, որովհետև ոչինչ գտնել չէի կարող։ Ես չզարմացայ և հաւատացի։ Մի վանքում, ուր մի կաթողիկոս իւր նախորդների յիշատակը ոչնչացնելու համար փութերով այրել է տալիս նրանց ժամանակներից մնացած պաշտօնական թղթերը, այլ ևս ինչ կարելի է գտնել արխիւում։ Իսկ այդ բարբարոսութիւնը կատարուել է մի քանի կաթողիկոսների փոխուելու ժամանակներում։

Յայտնի է որ ռուսաց կառավարութիւնը մի ժամանակ արտօնութիւն էր տուած Ս. Էջմիածնի կաթողիկոսներին քննելու զանազան ազնուական տոհմերի ծագումը և կաթողիկոսները եթէ իրաւացի էին գտնում նրանց ազնուականութիւնը, շնորհուած կոնդակներն ընդունվում էին իբրև հաստատ վկայականներ։ Երբ կաթողիկոսներն այդ տեսակ վկայականներ էին տալիս, հարկաւ, քննութեան գործերը պէտք է մնային Ս. Էջմիածնի դիւանում։ Իսկ այդ գործերն այժմ կարող էին պատմութեան նիւթ տալ, եթէ պահուած լինէին։

Ինչևիցէ, մի այնպիսի ձեռնարկութիւն, որպիսին է հաւաքել և կազմել Անդրկովկասի նախ քան ռուսաց տիրապետութիւնը եղած մելիքների, տիրապետող իշխանների և զանազան նշանաւոր անձինքների պատմութիւնը,—այդ մի մարդու գործ չէ. այդ մի ամբողջ խմբի, մի ընկերութեան գործ է։ Բայց որովհետև մեզանում եսականութիւնն այն աստիճան տիրած է, որ խմբեր չեն կազմվում, իսկ ընկերութիւններից մի օրինաւոր բան սպասելը յիմարութիւն կլինէր, այդ տխուր երևոյթներն ի նկատի առնելով, աւելի նպատակայարմար կլինէր միջոցներ տալ մասնաւոր, ձեռնհաս անձինքներին գործելու։ Եւ փորձը մեր բոլոր ազգային հիմնարկութիւնների մէջ ցոյց է տալիս, որ մասնաւոր անձինք աւելի գործ են կատարում, քան թէ ամբողջ ընկերութիւններ։

Խամսայի մելիքութիւնների պատմութիւնը գրելով, ես կամեցայ ցոյց տալ, որ մենք ունինք մի պատմութիւն որ արդէն սկսուել է մոռացուիլ, կորչիլ, անհետանալ։ Ես իմ ծանօթներին անդադար ասում էի, թէ հարկաւոր է այդ պատմութիւնը ժամանակի հոսանքից ազատել, քանի որ դեռ աւանդութիւնները թարմ են, քանի որ մնացած գրաւոր նիւթերը բոլորովին չեն ոչնչացած զանազան ան-

յայտ անկիւններում: Եւ գլխաւորապէս իմ և մի քանի բարեկամներիս յորդորմունքն էր պատճառ, որ այս տարի ծագեց դէպի Սիւնեաց աշխարհը ճանապարհորդներ ուղարկելու միտքը գիտնական հետազօտութիւնների նպատակով: Միտքը գեղեցիկ էր և նպատակն օգտաւէտ: Սիւնեաց աշխարհը, ուր կատարուել են այնքան նշանաւոր գործեր, ուր մինչև վերջին ժամանակները պահպանուել էին հայկական իշխանութիւնները, ուր ճանապարհորդն ամեն մի քայլում հանդիպում է հոյակապ հնութիւնների, պատմական վաղեմի արձանների, — արդարև Սիւնեաց աշխարհն առանձին ուսումնասիրութեան կարօտ է: Մի քանի բարեմիտ անձինք ձեռնարկեցին ստորագրութեամբ մի գումար հաւաքելու այդ գիտնական արշաւանքի ծախքերը հոգալու համար: Հարցն սկսուեցաւ քննուել մինչև անգամ մեր մամուլի մէջ: Մամուլի մէջ էլ մնաւ:

Դեռ գումարը չհաւաքած' որ յայտնի լինէր, թէ նրա քանակութեան համեմատ ինչ գործ կարելի էր կատարել, սկսեցին վիճել պարապմունքների տեսակի և մարդկանց ընտրութեան վրայ (ի հարկէ իւրաքանչիւրն աշխատելով, որ իւր մարդը ներս խրէ և երևակայական գումարից նրան մի բաժին հանէ:) Դա միևնոյն պարզամտութիւնն է, որ դեռ երեխան չծնուած, դեռ աղջիկ կամ տղայ լինելը չյայտնուած, վիճում են այն բանի վրայ, թէ ինչ անուն պէտք է տալ երեխային:

Վիճում էին, թէ ինչ անուն պէտք է տալ այդ գիտնական արշաւանքին, այսինքն' նա ինչո՞վ պէտք է զբաղուի: Մէկն ասում էր, թէ պէտք է քարեղէն և բրօնզի դարեշրջանները քննել, պէտք է այրերի և գերեզմանների մէջ մտնել' տեսնելու համար, թէ Նոյ նահապետից առաջ ինչ ազգեր են անցել Սիւնեաց աշխարհի վրայով: (Կարծես մենք շատ ենք իմանում, թէ մի հա-

րիւր կամ երկու հարիւր տարի առաջ ինչ անցքեր են կատարուել այնտեղ, իսկ հիմա հարկաւոր է միայն նախաջրհեղեղեան դարերը քննել): Միւսն ասում էր, թէ երկիրը' բնագիտական, հանքաբանական, աշխարհագրական և չգիտեմ այլևս ինչ-ական կէտերից պէտք է ուսումնասիրել: (Կարծես կառավարութիւնը, ահագին գումարներ գործ դնելով, չի արել այդ բաները և չէ շարունակում անել, թողել է, որ մենք մեր մի քանի կոպէկներով երկիրը հազար ու մէկ տեսակէտից ուսումնասիրենք): Մէկ ուրիշն առաջարկում էր' ծերունի, ալեզարդ Ալիշանին' որ իւր սենեակի դռնից դուրս գալ չէ կարողանում, անպատճառ բերել տալ, դնել պատգարակի վրայ, Ղարաբաղի լեռների վրայ ման ածել, որ քարերի արձանագրութիւնները կարդայ: (Կարծես, հայր Ալիշանը իւր գեղեցիկ գիրքը կազմելու համար ինքն անձամբ եկաւ, Շիրակի գաւառում ճանապարհորդեց և արձանագրութիւնները հաւաքեց: Մըխիթարեանները իրանց միլիօնների հարստութեամբ մեր օգնութեան կարօտութիւն չունին, նրանք, եթէ հարկաւոր համարեն, կարող են իրանց երիտասարդ աբեղաներից մէկին Հայաստանի ամեն կողմերն ուղարկել, և ծերունի Ալիշանին երբէք չեն անհանգստացնի): Առաջարկւում էր և մի լուսանկար ուղարկել աւերակների պատկերը հանելու համար: (Կարծեմ լուսանկարի մի մեծ պէտք էլ չկար, այդ առևտրական մի գործ է. դրա համար հարկաւոր չէր ոչ օժանդակութիւն հաւաքել և ոչ գումար կազմել: Եթէ Բարկանովը և Ֆիլիպովիչը իմանան, որ հայերը այն աստիճան գժուած են իրանց հայրենիքի աւերակների լուսանկարներով, որ 5 ռուբլի արժէք ունեցող պատկերը գնում են 20 ռուբլիով, անպատճառ իրանց աշակերտներից մէկին կ'ուղարկեն և Հայաստանի բոլոր աւերակների պատկերները հանել կըտան, գուցէ աւելի լաւ, քան թէ հան-

գուցեալ Արտիւրի աշակերտի լուսանկարները)։ Ինչեւիցէ, խօսքս էլ ինչ երկարացնեմ, կարճ կ՚ասեմ. գիտութեան, արհեստի, ճարտարութեան մէջ ոչ մի ճիւղ չէր մնում, որ չկամենային այդ ողորմելի ուսումնական արշաւանքի վզին փաթաթել, և այնքան փաթաթեցին որ խեղդուեցաւ...։

Մեզանում ամեն օգտաւէտ առաջարկութիւններ, ամեն գեղեցիկ մտքեր շատ անգամ հէնց նրա համար են մնում անկատար, որ կամ ոչինչ չենք շինում, և կամ եթէ կամենում ենք մի գործ կատարել, ցանկանում ենք անպատճառ ամեն ինչ միանգամից կատարել, մինչդեռ այդ «ամեն ինչի» հարիւրերորդ մասն անգամ իրագործելու համար ոչ միջոցներ ունինք և ոչ պատրաստականութիւն։ Մենք գործը փոքրից սկսելու սովոր չենք։ Գոնէ օտարներից օրինակ առնէինք։ Կան ընկերութիւններ, որ միմիայն իրանց նպատակ են դրել ժողովրդական առակները, առածները, հէքեաթները, նախապաշարմունքները, սնոտիապաշտութիւնների նկարագիրները հաւաքել։ Բայց այս տեսակ ընկերութիւններ երբէք չեն զբաղուիլ նոյն ժողովրդի բնակած երկիրը՝ բնագիտական, աշխարհագրական կամ գիտութեան այլ կէտերից ուսումնասիրելու. դրանք կարող են մի ուրիշ ընկերութեան պարապմունք լինել։

Ես դարձեալ կրկնեմ միևնոյն միտքը, որ վերևում յիշեցի. մեզանում ընկերութիւնները կազմվում են ոչ թէ գործ կատարելու համար, այլ գործը սպանելու համար։ Իսկ մասնաւոր մարդիկ իրանց եռանդով, անձնանուիրութեամբ, տոկունութեամբ աւելի են գործում, աւելի արդիւնք են ցոյց տալիս, քան թէ մի ամբողջ ընկերութիւն։

Ինձ համար աւելի մեծ նշանակութիւն ունի մի երիտասարդ Նաւասարդեանցի աշխատութիւնը, որ աղքատ, ամեն միջոցներից զուրկ, բայց սիրտը լի եռանդով, դէրվիշի

նման ոտքով ման է գալիս հայոց գիւղերը, մտնում է ժողովրդի ամեն ծալքերի մէջ, հէքեաթներ է հաւաքում և մեր գաւառներին ընթերցանութեան տետրակներ է տալիս։ Բայց ինչ է շինում հայերէն գրքերի հրատարակչական Ընկերութիւնը,—ոչ ոք չգիտէ։

Այդ բոլորն ինձ յակամայից առել տուին մի քանի տխուր հանգամանքներ, որոնց վրայ երկար խօսելն աւելի հեռու կը տանէր։ Բայց ինչ որ ճշմարիտ է, այդ այն է, որ մեզանում մեծ պէտք է զգացվում մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր անցեալն ու ներկան ուսումնասիրելու։

Աշխատութեան բաժանութեան սկզբունքի վրայ հիմնուելով, ես միւս բաժինները թողնում եմ աւելի ընդունակներին, աւելի կարող անձինքներին։ Իսկ ես ընտրել եմ մի մասը միայն, այն է՝ գրել Անդրկովկասում վերջին դարերում ապրող հայոց իշխանների և մելիքների պատմութիւնը, և երջանիկ կըհամարեմ ինձ, եթէ յաջողուի իմ այս ձեռնարկութեամբ մի փոքրիկ ծառայութիւն անել մեր գրականութեանը։

ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Աբաշիձէ, վրաց ազնուական 103։
Աբաս-բէկ, սենեկապետ Աղա-Մամադ շահի 165։
Աբաս-Միրզա, թագաժառանգ Ֆաթալի-շահի 193, 195, 196, 197, 208, 209, 211, 212, 224, 225, 226, 231, 232, 233, 242, 254, 255 և այլն։
Աբարան 273։
Աբով I. (սև) Մելիք-Բէգլարեան, տիրապետող Գիւլիստանի 12, 14, 15։
Աբով II. (կաղ) Մելիք-Բէգլարեան, տիրապետող Գիւլիստանի 15, 16, 27, 45։
Աբովեան Ռոստոմ-բէկ 193, 194, 195, 197, 199, 201։
Աբուլ-Ֆաթհ-խան, որդի Շուշի բերդի Իբրահիմ-խանի 152։
Աբրահամ-բէկ Հասան-Ջալալեան 241։
Աբրահամ-իւզբաշի (հարիւրապետ), նախկին տիրապետող Գիւլիստանի 14։
Աբրահամ կաթողիկոս կրետացի 46։
Աբրօ զմիւռնացի 28։
Ագրախանա 39։
Ադիլ-շահ, Նադիր-շահի եղբօր որդին 51, 52, 53, 57։
Ազատ-խան 140։
Աթաբէգեաններ 223, 228։
Աթաբէգ Աթաբէգեան 228։
Ալեքսանդր I. կայսր ռուսաց 191։
Ալեքսանդր վրաց իշխանազն 183, 191, 193—195, 254, 260։
Ալի-Ղուլի-խան սարդար, եղբայր Աղա-Մամադ-շահի 141։
Ալի-Միրզա-խան, իշխան Կախէթիայի, որդի Իմամ-Ղուլի-խանի (Դաւիթ III) 46։
Ալի-Մուրադ-խան, կամ Ալի-Մարդան-խան 140։

Ալի-Սօլթան, Դաղստանի տիրապետողներից մէկը 26, 36։
Ալլահ-Ղուլի-բէկ Հասան-Ջալալեան մատնիչ, 105, 106, 108, 229։
Ալլահ-Ղուլի-սօլթան Մելիք-Իսրայէլեան, տիրապետող Ջրաբերդի 20, 45, 47, 51, 52, 54, 61, 66, 67, 68։
Ալլահ-վերդի-բէկ հայկազն՝ ղարաբաղցի, կնքապահ պարսից Մամադ-շահի 270։
Ալլահվերդի-խուզբաշի կամ Մելիք-Ալլահվերդի I. իշխող Գիւլ-Եաթաղ բերդի 89։
Ալլահվերդի-բէկ կամ Մելիք-Ալլահվերդի II., Մելիք-Ալլահվերդեան Գիւլ-Եաթաղ բերդի 222։
Ախալցխա բերդ 103, 141, 192։
Ականաչ բերդ Հասան-Ջալալ իշխանի 20։
Ահար, գիւղաքաղաք Ղարադաղի գաւառում 276, 277։
Աղա-Բահրամ հայկազն, ներքինի, պարսից պետական բարձր դիւանի գլխաւորը 269։
Աղա-բէկ Թիֆլիզեցի, Մելիք-Աշխալ-բէկի որդին, իշխան Բէհբուդեանների տոհմից 46։
Աղա-Եաղուբ հայկազն երևանցի, ներքինապետ և մատակարար Ֆաթալի-շահի կանանոցում 269։
Աղա-Իբրահիմ հայկազն, ներքինի Ֆաթալի-շահի կանանոցում 269։
Աղա-Մամադ-խան ներքինի, յետոյ Աղա-Մամադ-շահ, պարսից թագաւոր 130, 140—147, 149, 154, 155 և այլն։
Աղալար-խան Ենիկօլօփեան, նշանաւոր պաշտօնատար պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի մօտ 271։
Աղալարով Հասան-բէկ 239։
Աղաջան-խան հայկազն, պարսից դնդապետ 270։
Աղջա-ղալա բերդ 183։
Աղդամ (Ասկարանի մօտ) 246։
Աղուանք կամ Աղուանից աշխարհ 8, 9, 10, 12, 92, 121 և այլն։
Աղ-Օղլանի վանք (Ամարասայ վանք) 239։
Ամարասայ վանք, որի մէջ ամփոփուած են Լուսաւորչի թոռ սուրբ Գրիգորիսի նշխարները, 66, 139, 184, 239։
Ամարնան (Մարիամ) Մելիք-Բէգլար II-ի կինը 87։
Ամենափրկչի վանք 15։

Ամիր-Ասլան-խան, Ադիլ-շահի զօրավարը 52, 53։
Ամիր-խան սարդար, Ֆաթալի-շահի փեսան և նրա նշանաւոր զօրավարներից մէկը 231, 255, 260, 261։
Անգլիա 96։
Անդրկովկաս 8, 99, 100, 138, 139, 149, 150, և այլն։
Աննա Իվանովնա կայսրուհի 41, 45, 48, 175։
Աննա-խաթուն, Մելիք-Ձահնազարեան Մելիք-Յուսէյին I-ինի կինը 43, 59։
Անուշ բերդ Պարսկաստանում 109։
Ապրես աղա կսապատցի 91, 136, 158, 218։
Առան թագաւոր Աղուանից 12։
Առաքել պատմագիր Թաւրիզեցի 22։
Ասադ-բէկ, Ռոստոմ-բէկի որդին, Ծագումով հայ 252։
Ասլան-բէկ Մելիք-Աւանեան 175, 176։
Ասլան-բէկ Աթաբէգեան 228։
Ասլանդուզ 227։
Ասկարանի բերդ 54, 62, 75, 77 և այլն։
Աստուածատուր կաթողիկոս Ս. Էջմիածնի 30։
Աստուածատուր քահանայ Մեծ-շէնացի 219։
Աստրաբատ քաղաք Պարսկաստանում 26, 36, 38, 46։
Ասրի-բէկ Բահաթուրեան կամ Բայինդուրեան 270, 272—275, 277։
Ասրի-բէկ Նախիջևանցի 160։
Ատրպատական 16, 26, 39, 45, 51, 73, 141, 266, 267, 269։
Արաղստան նահանգ Պարսկաստանի 140։
Արդաւիլ, բերդաքաղաք Պարսկաստանում 107, 109, 135, 170, 171։
Արզու-խաթուն 237։
Արզուման կամ Թուլի (աւազակ) Արզուման, Մելիք-Իսրայէլեանների քաջ զօրապետը 69, 71, 72, 75, 108, 117, 118, 119, 124, 126, 157, 159, 271։
Արշակ II. թագաւոր հայոց 109։
Արշակունիք 7։
Արտու գիւղ Լօռի գաւառում 24։
Արցախ նահանգ, որ այժմ կոչվում է Ղարաբաղ 8, 120։
Արարատեան նահանգ 140, 268։

Աւագ-խան Մելիք-Մեհրաբեանց, Թաւրիզի առևտրական դիւանի գլխաւորը 272։
Աւագ վարդապետ՝ միաբան Եղիշէ առաքելոյ վանքի, հայոց մելիքների քաջ նիզակակիցը, որ յայտնի էր անունով **Դալի-Մահրասայ** (գիժ վարդապետ) 67, 69, 70, 75, 108, 124, 126 և այլն։
Աւան-Միրզա, կամ **Աւան-**իւզբաշի (Յովհաննէս իշխան) Նըշանաւոր մարտակից Ղարաբաղի մելիքների 34։
Աւարիա գաւառ հիւսիսային Դաղստանում 85, 102, 115, 156, 191։
Աւետարանոց կամ **Չանախչի** բերդ, Ղարաբաղի Վարանդայ գաւառում, Մելիք-Շահնազարեանների բնակութեան տեղը 10, 23, 42, 43, 44, 58, 60, 61, 75 և այլն։
Աւստրիա 28։
Բագու քաղաք 26, 36, 38, 46 և այլն։
Բագրատունիք 7։
Բալա, Գիւլիստանի Մելիք-Բէգլար II-ի սիրուհին 87, 88։
Բալա-բէկ, Գիւլ-Եաթաղ բերդի Մելիք-Ալլահվերդեան Մելիք-Ռուստամի որդին 220։
Բալաքան աւան հիւս. Դաղստանի Աջարիա մասում 133, 162, 166, 167, 168։
Բալլու-Կայեա, ամրոց Ղարաբաղի Խաչէն գաւառում 64։
Բալլու-Չայ գետ, հոսում է Ղարաբաղի Վարանդայ գաւառում, յետոյ խառնվում է Գարգար գետին 9։
Բաղդադ-բէկ, Տիզակի Մելիք-Աւանեան Մելիք-Եսայու որդին 175, 176։
Բաղդասար վարդապետ, յետոյ Աղուանից աշխարհի միտրապոլիտ, Հասան-Ջալալեան Դանիէլ-բէկի որդին, 35, 94, 119, 120, 184 և այլն։
Բաղի-իւզբաշի (հարիւրապետ), մինը այն պատգամաւորներից, որոնք Ղարաբաղի մելիքների կողմից ներկայացան Եկատերինէ I. կայսրուհուն 40։
Բայաթ բերդ Գարգար գետի մօտ 54, 61։
Բայինդուր կամ **Բահաթուր** իշխան Սիւնեաց 271, 272։
Բարգիւշատ գաւառ Սիւնեաց աշխարհում 44։

Բարդա, հին Պարտաւ, Ուտէացոց աշխարհի մայրաքաղաքը 12, 246։
Բարդուղիմէոս առաքելոյ վանք Աղբակի կամ Ալբակի գաւառում 268։
Բարսում գիւղ, Գանձակի գաւառում 123։
Բարսեղ քահանայ, որ և կոչվում էր «Ղարաքէշիշ», Շիրվանի Սօգութլու գիւղացի 77։
Բաւարիա 28։
Բէհբուդեաններ, հայկազն իշխաններ Թիֆլիզեցի 46։
Բէգլար-բէկ, Մելիք-Բէգլարեան Մելիք-Ֆրէյդունի որդին 202։
Բէժան-խան, հայազգի զորապետ պարսից 270։
Բիքա խանում, Շուշի բերդի Իբրահիմ-խանի կինը 85։
Բուրնաշով ռուսաց գեներալ 110։
Բօլնիս գիւղ Թիֆլիզի գաւառում 127, 128, 183, 198, 200 և այլն։
Բօրչալու վիճակ Թիֆլիզի գաւառում, Կուր գետի աջ ափերի վրայ 99, 103, 115 և այլն։
Գաբրիէլ-բէկ, որդի Հասան-Ջալալեան Մելիք-բէկ իշխանի 108, 229։
Գայիանէ, դուստր Մելիք-Շահնազարեան Մելիք-Յուսէին I-ինի 43։
Գանձակ քաղաք 9, 15, 17, 23, 26, 35, 37, 42, 45, 71, 72, 78, 79, 83, 94 և այլն։
Գանձասարի վանք Ղարաբաղի Խաչէն գաւառում, վեհարան Աղուանից վերջին կաթողիկոսների 10, 21, 22, 26, 28, 29, 31, 35, 92, 94, 95, 100, 101, 104, 106, 107, 108, 109, 117, 118 և այլն։
Գարգար գետ, հոսում է Ղարաբաղի միջով և խառնվում է Կուր գետին 62, 69, 75, 224, 258։
Գավրիլօ Դօլգօրուկի կոմս 39։
Գեղամայ գաւառ կամ **Գեղարքունեաց** երկիր 22, 23, 134։
Գեղամայ լիճ կամ **Սևանայ** լիճ 23։
Գենուազ գաւառ, այժմեան Մեղրիի վիճակը 44։
Գետաշէն գիւղ Գանձակի գաւառում 15, 123։
Գէորգ զօրավարի եկեղեցի Շումլա բերդում 279։

Գիլան գաւառ Պարսկաստանի Կասպից ծովի հարաւային ափերի մօտ 25, 36, 37, 38, 39, 46։
Գիւլ-Եաթաղ ամրոց, Ղարաբաղի Ջրաբերդ գաւառում, Մելիք-Ալլահվերդեանների բնակութեան տեղը 84, 89, 105, 110, 220։
Գիւլիստան գաւառ Ղարաբաղի, Մելիք-Բէգլարեանների տիրապետութեան երկիրը։ Այդ գաւառը Թարիջ կամ Թալիշ ամրոցի անունով կոչվում է և Թալիշի գաւառ։ Նա ունի և մի ուրիշ անուն Իգիրմի-դորդ, այսինքն քսան և չորս, իւր մէջ 24 գիւղեր պարունակելու պատճառով. 8, 9, 12, 14, 15, 19, 25, 27, 54, 61, 66, 68, 69, 73, 74, 84, 87, 88, 91, 101, 105, 122, 123, 128, 132, 180, 181 և այլն։
Գիւլիստան ամրոց, Մելիք-Բէգլարեանների բնակութեան տեղը 9, 14։
Գիւլիստանի բերդ վերոյիշեալ ամրոցի մօտ 14, 15, 16, 18։
Գիւմուշխանա բերդ Լօռի գաւառում 103։
Գիօրգի XII. որդի Հերակլ II-ի, վրաց իշխան 99, 178, 179, 181—186, 193 և այլն։
Գիօրգի-Ձահնաւազ վրաց իշխան, Վախթանգ V-ի որդին, 33, 35։
Գոհար խանում, Տիզակի տիրապետող Մելիք-Աւան-խանի կինը 50։
Գողթան գաւառ 44։
Գուդովիչ կոմս, ռուսաց գեներալ 140, 142, 200, 212։
Գտիչ վանք, կամ Թիլնաւան, Տիզակի գաւառում, Տող բերդի մօտ 10, 24։
Գրիգոր <եօրղայ> (արագընթաց), սուրհանդակ Ղարաբաղի մելիքների 104։
Գրիգոր Լուսաւորիչ 92, 138, 230, 239։
Գրիգորիս թոռն Լուսաւորչի, կաթողիկոս Աղուանից 92, 128, 230, 239։
Գօրանի գետ Գանձակի գաւառում 86։
Դաղստան 26, 39, 68, 85, 159, 193, 272։
Դանիէլ-բէգ Հասան-Ջալալեան, Մելիք-բէկ իշխանի որդին, 108, 119, 120։

Դանիէլ պատրիարք Կ. Պօլսի, յետոյ կաթողիկոս Ս. Էջմիածնի 189, 196։
Դաշբուլաղ գիւղ Նուխուայ գաւառում 137, 222։
Դաւիթ-բէկ Սիւնեաց իշխան, 34, 35, 36, 44, 270։
Դաւիթ-բէկ Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Փրէյդունի 202։
Դաւիթ եպիսկոպոս Էնագետցի, յետոյ կաթողիկոս Էջմիածնի 189։
Դաւիթ-խան Մկրտչեան, պարսից արքունի բժշկապետ Փաթալի-շահի և Մամադ-շահի օրերում 269։
Դաւիթ-խան Մելիք-Ձահնազարեան դր-Ձապուր, թարգման Փաթալի-Ձահի 269։
Դաւիթ-խան կամ Ժան-Դաւիթ-խան, զմիւռնացի հայ, դեսպան պարսից Դռան 271։
Դաւիթ-խան Սագինեանց գեներալ պարսից 272։
Դաւրէժ կամ Թաւրիզ մայրաքաղաք Ատրպատականի 34, 52, 141, 168, 196, 201, 268, 272։
Դերբէնդ քաղաք 16, 26, 35, 38, 40, 46, 79, 112 և այլն։
Դիբիչ կոմս, գեներալ ռուսաց 277։
Դիզափայտի լեռներ Ղարաբաղում 9։
Դիլաիւրտի ձոր Ատրպատականում 275։
Դիւթական գիւղ կամ Կաթողկասար, Ղարաբաղի Ջրաբերդ գաւառում 20։
Դոդխու-Ղալաբաջար, ընդարձակ կալուած Խօթայ վանքի, Ղարաբաղի Խաչէն գաւառում 238։
Դուզախ 9։
Դուլուսլու գիւղ Գանձակի գաւառում 15։
Դունայ գետ 279։
Դօլգորուկի իշխան, ռուսաց գեներալ 40։
Եաղուբ-խան սօլթան, հայկազն զօրապետ պարսից 270։
Եասսէ Թիֆլիզեցի հայ ազնուական 159։
Եգան տես Մելիք-Աւան։
Եգիպտոս 98։
Ելիսաւետա Պետրովնա կայսրուհի ռուսաց 49, 175։
Եկատերինէ I. կայսրուհի ռուսաց 40։
Եկատերինա II. կայսրուհի ռուսաց 95, 96, 112, 149, 153, 179։
Եղիշէ առաքելոյ վանք Ղարաբաղի Ջրաբերդ գաւառ. 69։

Երասխ գետ 9, 23, 26, 46, 48, 57, 58, 141 եւայլն։
Երեմիա կաթողիկոս Հասան-Ջալալեան, Գանձասարի վանքի աթոռակալ 22, 94։
Երեմիա քահանայ Հասան-Ջալալեան 241։
Երեւան քաղաք 26, 37, 39, 46, 99, 103 եւայլն։
Երիցմանկանց վանք, Ղարաբաղի Ջրաբերդ գաւառում 10, 72, 91, 92, 94, 95, 120, 121, 184 եւայլն։
Երմոլով ռուսաց գեներալ 18, 242, 256, 275, 277։
Երուսաղէմ 96։
Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալեան, աթոռակալ Գանձասարի վանքի, Ղարաբաղի մելիքների ապստամբութեան գըլխաւոր պարագլուխը, 22, 26, 33, 35, 40, 45, 94։
Եւրոպա 28, 38։
Եփրեմ կաթողիկոս Ս. Էջմիածնի 187, 189, 231։
Զագամ գետ Գանձակի գաւառում 260։
Զալ-խան Սագինեանց, պարսից գնդապետ 272։
Զանգէզուր գաւառ Սիւնեաց աշխարհում 254։
Զէյվա բերդ Գիւլիստանի գաւառում 241։
Զուբով Վ. Ա. կոմս, ռուսաց գեներալ 150—155, 161, 176, 198, 206։
Զօհրաբ-խան հայկազն, Փաթալի-շահի փեսան եւ արքունի գանձապետ 269։
Զօհրաբ-խան Վարդանեանց, արքունի գանձապետ Սպահանում 269։
Զօհրաբ-խան, պարսից շահի արքունիքի սենեկապետների գլխաւորը 269։
Զօհրաբ-խան պարսից արտիլերիայի գլխաւորը 270։
Զօհրա-խանում, Մելիք-Ջահնազարեան Մելիք-Յուսէֆին I-ինի կինը 59։
Էմին Յովսէփեան, համադանցի հարուստ դրամատէր 96։
Էրզրում կամ Կարին 34, 192։
Էրքէջ գիւղ Գիւլիստանի գաւառում 14։
Թագում (Թագուհի) Մելիք-Ջահնազար II-ի կինը 59, 129։
Թադէոս առաքեալ 237։
Թադէոս առաքելոյ վանք Մագուի կամ Արտազ գաւառում 268։
Թադէոս-խան կամ Թուրաբ-խան Թաւրիզեցի, պարսից արքունիքի ակնագործների գլխաւոր 271։
Թալիշ գաւառ Կասպից ծովի արեւմտեան ափի մօտ 241, 274, 276։
Թալիշ գաւառ Ղարաբաղում, որ եւ կոչվում է Գիւլիստանի գաւառ 8։
Թալիշ բերդ Գիւլիստանի կամ Թալիշի գաւառում 10, 13, 14։
Թալիշ-բէկ Մելիք-Բէգլարեան 202։
Թահմազ-Ղուլի-խան, տես Նադիր-շահ։
Թամար խանում, Մելիք-Իսրայէլեան Մելիք-Աթամ II-ի կինը 160։
Թայիր-բէկ, ջորեպան Մուրադի որդին 252։
Թարթար գետ Ղարաբաղում 9, 10, 13, 18, 90, 124, 225, 237, 238, 262։
Թարխանաբերդ կամ Խօխանաբերդ, Ղարաբաղի Խաչէն գաւառում 10։
Թաւրիզ, տես Դաւրէժ։
Թերէք գետ 39։
Թէհրան մայրաքաղաք Պարսկաստանի 141, 161։
Թէյմուրազ-բէկ Մելիք-Բէգլարեան 202։
Թէյմուրազ, վրաց իշխան Քարթալինայի 74—78։
Թըրղի գետ, մի ճիւղ Թարթար գետի 10 72։
Թիւլի-Արզուման, տես Արզուման։
Թիւրքիա 47, 99, 139։
Ժինէ ռուսաց մայեօր 225։
Իբրահիմ-բէկ, Իբրահիմ-խանի գահճի որդին 251։
Իբրահիմ-գաւուր, կամ Աբրահամ-իւզբաշի 14։
Իբրահիմ-խան Ճուշի բերդի, որդի Փանահ-խանի 22, 24, 59, 80—86, 90, 94, 100—111, 115, 117 եւայլն։
Իմամ-Ղուլի-խան (Դաւիթ III) իշխան Կախէթիայի 36։
Իմամ-Յուսէին, նշանաւոր հոգեւորական պարսից 262։
Իմերէթիա 36, 37, 146։
Ինդոս գետ 96։
Իննմասանց անապատ Ջրաբերդի գաւառում 21։
Ինջա գետ Բօրչալուի վիճակում 146։
Իսմայիլ-խան Մելիք-Մինասեան Թաւրիզեցի, պարսից արքունի ակնագործների գլխաւոր 271։

Իսրայէլ-բէկ Հասան-Ջալալեան 108։
Իսրայէլ կաթողիկոս Երիցմանկանց վանքի, կուսակից Իբրահիմ-խանի և մատնիչ Ղարաբաղի մելիքների 91, 95, 102, 106, 109, 110, 120, 121, 158, 184, 228, 234, 235։
Իսրայէլ եպիսկոպոս Ատրպատականի հայոց 267։
Իսրայէլ Օրի, առաջին պատգամաւոր հայ ժողովրդի կողմից Եւրոպայում, Հայաստանի անկախութեան խնդրի պատճառով 27—31, 96։
Իւսուբ-բէկ Ենիկօլօփեանց, Աբաս-Միրզայի թիկնապահ 271։
Իւսուֆ-խան Թիֆլիզեցի հայ, պարսից արտիլերիայի գլխաւոր 270։
Իւսուֆ-խան հայկազն, մարզպան Պարսկաստանի Արաղստան կոչուած մասի 269։
Իւսուֆ-խան հայկազն, պարսից թնդանօթաձիգների գլխաւոր 269։
Լազարեան Ղազարոս 268։
Լազրեվ ռուսաց գեներալ մայեօր 190։
Լալա, Մելիք-Բէգլար II-ի ծառան 87։
Լեհաստան 98։
Լենքօրան 227։
Լևա, Խօթայ վանքի կալուածների մի մասը 238։
Լիսանևիչ, ռուսաց գնդապետ 208, 209, 224։
Լօռի գաւառ 24, 99, 183, 201, 205, 206։
Լօռիս-Մելիքեաններ 24։
Լօռիստան գաւառ Պարսկաստանի 131, 270, 271, 276։
Լօրի կամ Լօռի գիւղաքաղաք Պարսկաստանի Միշկին գաւառում 276։
Խաթայի, քաջազնուհի կին շուշեցի 259։
Խամսայի մելիքութիւններ, որ բաղկացած էին Ղարաբաղի հինգ գաւառներից 8, 11, 109, 129, 136, 217, 284։
Խան-քէնդի գիւղ Շուշի բերդի մօտ 232։
Խաչակապ գիւղ Գանձակի գաւառում 123։
Խաչէն գաւառ Ղարաբաղում, Հասան-Ջալալեանների տիրապետութեան երկիրը 9, 10, 20, 21, 27, 54, 59, 63, 64, 66 ևայլն։

Խաչէն գետ Խաչէն գաւառում 9, 10, 64։
Խարխափուտ գիւղ Գիւլիստանի գաւառում 87։
Խնածակ գիւղ (Նոր) Վարանդայի գաւառում 252։
Խնզիրիստան գիւղ Խաչէն գաւառում, Մելիք-Միրզախանեանների բնակութեան տեղը 64, 65, 89, 105, 137։
Խուդադաթ-խան սալմաստեցի հայ, կառավարիչ Ատրպատականի զանազան գաւառների 269։
Խուդափիրինի կամուրջ, Երասխ գետի վրայ Ղարաբաղի կողմից 75, 141, 275, 278։
Խոսրով-խան Ղայթմազեանց, Թիֆլիզեցի, վալի այսինքն տիրապետող իշխան 270։
Խոսրով-սուլթան, Դաղստանի լեռնական տիրապետողներից մէկը 68։
Խորասան նահանգ Պարսկաստանի 41, 50, 52։
Խուրշիդ-խանում, Մէհտի-խանի դուստրը 237, 239։
Խօթայ կամ Խութայ վանք Վերին-Խաչէնում 237, 238, 239։
Խօխանաբերդ, տես Թարխանաբերդ։
Ծատուր-խան Սէթ-խանեան, պաշտօնատար պարսից 271։
Ծար գաւառ, Արցախի մի մասը 20։
Կաթուղկասար 20։
Կալկաթա քաղաք 97։
Կախէթիա, մասն Վրաստանի 36, 46, 147։
Կաչաղակաբերդ կամ Սաղսաղան-կալա, ամրոց Խաչէն գաւառում 10, 64։
Կասպից ծով 26, 32, 35, 39, 112։
Կարեագին ռուսաց գնդապետ 211, 212, 220—224։
Կարմիր-կամուրջ 260։
Կարս քաղաք 221։
Կուանք 20։
Կուր գետ 50, 53, 77։
Կոստանդնուպօլիս 189։
Կովալենսկի ստատս. սօվետ. 182, 193։
Կսապատ գիւղ Ջրաբերդի գաւառում 21, 227,
Կրատափ ձոր Գանձասարի վանքի մօտ 117։
Կրօպօտով ռուսաց գեներալ 39։

Կոտլարևսկի ռուսաց գեներալ 226, 227։
Կորիս գիւղ Զանգեզուրի գաւառում 255։
Հաթերք գիւղ Վերին-Խաչէնում 20։
Հալիձորի բերդ Ղափանի գաւառում 44։
Հաղբատ Լօռի գաւառում 103։
Հաղբատայ վանք նոյն գաւառում 152, 187, 228, 229, 230։
Հաղբակ, Աղբակ կամ Ալբակ գաւառ Վասպուրականում 268։
Հայրապետեաններ 50, 176։
Հանդաբերդ ամրոց 20։
Հաշտարխան 31, 35, 38, 50, 150, 181։
Հաջի-Մօլլա-Քարիմ Տէր-Գրիգորեան, հայազգի բարձր հոգևորական պարսից 273։
Հաջի-Չէլէբի իշխող Շիրվանի 54, 77, 78։
Հասան-բէկ, Իբրահիմ-խանի դահճի որդին 251։
Հասան-Ջալալ կամ Ջալալ-Դօվլա Վախթանգեան իշխան Խաչէնի 10, 21, 120, 241։
Հասան-Ջալալեաններ, Խաչէնի տիրապետողներ 21, 27, 54, 60, 63, 65 ևայլն։
Հասան Մելիք-Շահնազարեան 58։
Հաւթէվան գիւղ Սալմաստայ գաւառում 267։
Հաւլաբար, մասն Թիֆլիզ քաղաքի 147։
Հաւքախաղաց բերդ 20։
Հերակլ II. իշխան վրաց 74, 97, 102, 103, 110 ևայլն։
Հէյդար-Ղուլի-Խան Նախիջևանցի 67։
Հէրաթ քաղաք Աւղանստանի 148, 161։
Հէրիքնազ, Մելիք-Բէգլարեան Մելիք-Իւսուբի կինը 86։
Հին-Ջէյվա բերդ Գիւլիստանի գաւառում 122։
Հին-Խնածակ գիւղ Զանգեզուրի գաւառում 122։
Հին-Մոխրաթաղ, աւերակներ Ջրաբերդի գաւառում 21։
Հին-Ջուղայ գիւղ Նախիջևանի գաւառում 268։
Հիւնոտ գիւղ Շուշի բերդի ստորոտում 258։
Հնդկաստան 28, 41, 96 99։
Հոմերոս 261։
Հոռեկայ վանք Գիւլիստանի գաւառում 10, 14, 19, 286։

Հումայի, դուստր Մելիք-Շահնազար II-ի 129։
Հուրի-զադ, դուստր Մելիք-Շահնազար II-ի 82, 129, 137։
Հռոմ 29։
Հօլլանդիա 28։
Ղաբալա, Շիրվանի գաւառի մի մասը 77։
Ղազախ գաւառ 80, 146, 181, 193, 194, 254, 260։
Ղազար կամ գեներալ Լազար Խրիստաֆօրովիչ 32։
Ղազարխ գիւղ Ջրաբերդի գաւառում 90։
Ղահրաման-բէկ Մելիք-Ալլահվերդեան 222։
Ղամար-սօլթան Աբով II-ի կինը 15, 19, 79։
Ղամար-սօլթան Մելիք-Իսրայէլեան Մելիք-Աթամ I-ի կինը 95, 120։
Ղանդահար քաղաք Աւղանստանի 26, 148, 161։
Ղանլու-Չինար 19։
Ղանլու-Շաբան իշխող Ղափանի 60։
Ղասաբ-Ղուրբանալի, մահմեդականութիւն ընդունած հայ, որից առաջ եկան Շիրվանի խաները 77։
Ղասըմ, Տեղ գիւղացի, մահմեդականութիւն ընդունած հայ 252։
Ղարա-Իւզբաշի (սև հարիւրապետ) Աբով I-ինը, Մելիք-Բէգլարեանների նախապապը 12։
Ղարադաղ գաւառ Պարսկաստանի, հին Փայտակարանի մի մասը 57, 276։
Ղափան կամ Կապան, Սիւնեաց աշխարհի գաւառներից մէկը 34, 44։
Ղզլար քաղաք 32, 50, 150, 155։
Ղուբա քաղաք 151, 154, 155, 241։
Ղուլամ-Յուսէին-խան հայկազն, մարզպան Պարսկաստանի Արաղստան մասի 271։
Ղուկաս կաթողիկոս Ս. Էջմիածնի 141, 165—168։
Ղուկաս վարդապետ, հայր Մելիք-Եգանի՝ տիրապետողին Տիզակ գաւառի 24, 27։
Ղուրթղաչին գիւղ Շիրվանի գաւառում 77։
Ղուրսալու գիւղ Փամբակի ձորում 194։
Մագու քաղաք, որի անունով կոչվում է Մագուի գաւառը, հին Արտազը, 268։
Մադաթով իշխան, Վալերիան Գրիգորևիչ, գեներալ-լէյտե-

նանտ (պատանեկութեան հասակում կոչվում էր Ռոստոմ, Մեհրաբանց Գիւքիի՝ այսինքն Գրիգորի որդին) Աւետարանոց բերդի բնակիչ, յետոյ ռուսաց նշանաւոր զօրավար, 181, 231, 233, 242, 247,—251, 253, 155—157 և այլն։
Մազանդարան գաւառ Պարսկաստանի, Կասպից ծովի հարաւային ափի վրայ 26, 36—39, 46, 140։
Մազէ-կամուրջ Շուշի բերդի մօտ 69, 71։
Մազրա գիւղ Գեղարքունեաց (Գեօգչայի) գաւառում 22։
Մալայիկ-խանում ամուսին Մելիք-Շահնազար II-ի 59, 129։
Մահմադ մարգարէ 169։
Մահմադ-Միրզա, յետոյ Մահմադ-շահ, որդի Աբաս-Միրզայի, թագաւոր պարսից 231, 255, 259, 261։
Մահմադ-Ղուլի-խան (Կոստանդին II.) մահմեդականութիւն ընդունած վրացի իշխան Կախէթիայի 36։
Մամադ-բէկ, եղբօր որդի Շուշի բերդի Իբրահիմ-խանի 164, 167, 168։
Մամադ-խան Գանձակի 15, 79։
Մամադ-Հասան-աղա, որդի Շուշի բերդի Իբրահիմ-խանի 208, 225։
Մայրաքաղաք կամ Քաղաքատեղ, աւերակներ Ջրաբերդի գաւառում 20։
Մանաս-բէգ Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Աբով III-ի 193, 201, 202, 203։
Մանուչար-խան Ենիկօլօփեանց, փոխարքայ և կառավարիչ պարսից զանազան նահանգների 270։
Մաշհադ, գլխաւոր քաղաք Պարսկաստանի Խորասան նահանգի 51։
Մատիւշկին գեներալ ռուսաց 36, 39։
Մարաղա գիւղ Ջրաբերդի գաւառում 90։
Մարդակերտ գիւղ Ջրաբերդի գաւառում 219։
Մարիամ տիկին Մելիք-Ռուստամի 137։
Մարջումակ, կղուածք Խօթայ վանքի 238։
Մելիք-Աբաս Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Բախտամի, իշխան Տիզակի 172, 173, 174։
Մելիք-Աբով III. Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Իւսուբի, իշխան Գիւլիստանի 84, 86, 88, 101, 105, 107—111, 114, և այլն։
Մելիք-Աթամ I. Մելիք-Իսրայէլեան, որդի Մելիք-Իսրայէլի, իշխան Ջրաբերդի 19, 20, 21, 67, 68, 69, 71, 73, 75—80, 84 և այլն։
Մելիք-Աթամ II. Մելիք-Իսրայէլեան, որդի Մելիք-Աթամ I-ինի, իշխան Ջրաբերդի, 18, 160, 215, 291, 221, 227։
Մելիք-Ալլահվերդի I. Հասան-Ջալալեան, որդի Մուլքիբէկի, իշխան Խաչէնի, 22, 27, 54, 78, 60, 61, 63, 64, 65։
Մելիք-Ալլահվերդի II. Հասան-Ջալալեան, որդի Դանիէլ-բէկի, իշխան Խաչէնի 241։
Մելիք-Ալլահվերդի Մելիք-Միրզախանեան, որդի Մելիք-Միրզախանի, Շուշի բերդի խաներին կուսակից և նրանց օգնութեամբ բարձրացած, մելիք Խնզիրիստան գիւղի 65, 83, 105, 137, 164, 216։
Մելիք-Աշխալ-բէկ, իշխան Թիֆլիզեցի, Բեհբուդեանների տոհմից 46։
Մելիք-Արամ Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Աւանի, իշխան Տիզակի, 50, 55, 85։
Մելիք-Աւան-խան, կոչվում էր և Մելիք-Եգան, որդի Ղուկաս վարդապետի, իշխան Տիզակի, 24, 27, 47, 48, 49, 50, 57, 59 և այլն։
Մելիք-Աւանեաններ, Տիզակ գաւառի տիրապետողներ, 24, 25, 58, 61, 66 և այլն։
Մելիք-Բախտամ Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Արամի, իշխան Տիզակի, 85, 101, 105, 107 և այլն։
Մելիք-Բաղի Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Միրզաբէկ I-ինի, իշխան Վարանդայի 23, 58, 248։
Մելիք-Բաղիր Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Բէգլար II-ի, իշխան Գիւլիստանի 215։
Մելիք-Բէկ Հասան-Ջալալեան, որդի Մելիք-Ալլահվերդի I-ինի, իշխան Խաչէնի 22, 120։
Մելիք-Բէգլար I. որդի Աբով I-ինի, իշխան Գիւլիստանի, որի անունով այդ տոհմի ժառանգները սկսեցին կոչուել Մելիք-Բէգլարեաններ 14։
Մելիք-Բէգլար II. Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Իւսու-

րի, իշխան Գիւլիստանի 68, 86, 87, 88, 180։
Մելիք-Բէգլարեաններ, Գիւլիստան գաւառի տիրապետողներ 12, 18, 19, 27, 54, 61, 66, 84, եայլն։
Մելիք-Գրիգոր Հասան-Ջալալեան, որդի Մուլքի-բէկի, իշխան Խաչէնի 22։
Մելիք-Գրիգոր Հասան-Ջալալեան, որդի Գաբրիէլ-բէկի, իշխան Խաչէնի 229։
Մելիք-Գէորգ Տեղ բերդի 252։
Մելիք-Եգգար գետաշէնցի 123։
Մելիք-Եսայի Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Աւան-խանի, իշխան Տիզակի 50, 56, 57 եայլն։
Մելիք-Եսայի Մելիք-Իսրայէլեան, որդի Մելիք-Իսրայէլի, իշխան Ջրաբերդի 20, 27, 45։
Մելիք-Էլիզբար Լօռիս-Մելիքեան 24։
Մելիք-Թամրազ կամ Թէյմուրազ Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Բէգլար I-ինի, իշխան Գիւլիստանի, 14, 16—19։
Մելիք-Իսրայէլ, առաջին տիրապետող իշխան Ջրաբերդի, որի անունով այդ տոհմի իշխանները կոչուեցան Մելիք-Իսրայէլեաններ, 20, 47, 71։
Մելիք-Իսրայէլեաններ, տիրապետող իշխաններ Ջրաբերդի, 19, 27, 54, 61, 66, 84 եայլն։
Մելիք-Իւսուբ կամ Մելիք-Յովսէփ I. Մելիք-Բէգլարեան, որդի Աբով II-ի, իշխան Գիւլիստանի 16—19, 45, 54, 61, 66, 68 եայլն։
Մելիք-Իւնուբ Ոսկանապատ գիւղի 123։
Մելիք-Ղահրաման Մելիք-Միրզախանեան, որդի Միրզախանի, Խնզիրիստան գիւղի մելիքներից, որոնք Ճուշի բերդի խաների կուսակիցներ էին 65։
Մելիք-Ղահրաման Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Աբասի, իշխան Տիզակի 174։
Մելիք-Միրզա-բէկ I. Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-բէկ իշխանի, տէր Գեղամայ 23, 58։
Մելիք-Միրզա-բէկ II. Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Բաղիի, իշխան Վարանդայի 58, 59, 60։
Մելիք-Միրզալան, Ճուշի բերդի խաների օգնութեամբ բարձրացած մելիք Խնզիրիստան գիւղի 64, 65, 69, 75, 76, 78, 83, 137։
Մելիք-Միրզախանեաններ, Ճուշի բերդի խաներին կուսակից մելիքներ 89։
Մելիք-Մէջլում Մելիք-Իսրայէլեան, որդի Մելիք-Աթամ I-ի, իշխան Ջրաբերդի 79, 84, 89, 90, 91 եայլն։
Մելիք-Մովսէս Խաչակապ գիւղի 123։
Մելիք-Մնացական գետաշէնցի 123։
Մելիք-Մուհամէդ (մահմեդականութիւն ընդունած հայ) Ճիրվանի Ղարալա մասի իշխողը 77։
Մելիք-Յուսէին I. Մելիք-Շահնազարեան, իշխան Վարանդայի 23, 27, 42, 43, 44, 58, 61, 134, 248։
Մելիք-Յուսէին II. Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Շահնազար II-ի 129, 137։
Մելիք-Յովսէփ Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Յուսէին I-ինի, իշխան Վարանդայի 59, 60, 63։
Մելիք-Յովսէփ II. Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Ֆրէյդունի, իշխան Գիւլիստանի 202, 232, 233։
Մելիք-Շահնազար I. որդի Մելիք-բէկ իշխանի, տէր Գեղամայ (Գեղարքունի գաւառի), որի անունով նրա տոհմը կոչուեցաւ Մելիք-Շահնազարեան 22, 23, 132, 133, 134։
Մելիք-Շահնազարեաններ, տիրապետող իշխաններ Վարանդայ գաւառի 22, 24, 27, 58, 137 եայլն։
Մելիք-Շահնազար II. Մելիք-Շահնազարեան՝ որդի Մելիք-Յուսէին I-ինի, իշխան Վարանդայի (Փանահ-խանի և Իբրահիմ-խանի մտերիմ բարեկամը ի վնաս Խամսայի միւս մելիքների) 59—66, 69, 73, 75 եայլն։
Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Շահնազար II-ի, իշխան Վարանդայի 129, 132—137, 143, 163 եայլն։
Մելիք-Ջհանբախշ Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Շահնազար II-ի, իշխան Վարանդայի 129։
Մելիք-Ջհանգիր Մելիք-Շահնազարեան, որդի Մելիք-Շահնազար II-ի, իշխան Վարանդայի 129։
Մելիք-Ռուստամ (Նախ Ռուստամ-բէկ) Մելիք-Ալլահվերդեան,

տէր Գիւլ-Եաթաղ բերդի, որդի Ալլահվերդի-խւզբաշու, որ Ճուշի բերդի խաների օգնութեամբ մի ժամանակ կառավարում էր Ջրաբերդը 91, 105, 110, 136, 137, 156 և այլն։

Մելիք-Ռուստամ Խարսում գիւղի 123։

Մելիք-Վանի Աթաբէգեան, որդի Յարութիւնի, վերջին կառավարիչ Ջրաբերդի 223—227, 232, 233, 271։

Մելիք-Րուշան Մելիք-Ալլահվերդեան, որդի Միրզա-բէկի, տէր Գիւլ-Եաթաղ բերդի 221—223, 225։

Մելիք-Ֆրէյդուն Մելիք-Բէգլարեան, որդի Մելիք-Բէգլար II-ի, իշխան Գիւլիստանի 88, 179, 180, 182, 183, 202, 203, 222։

Մելիքով իշխաններ, ժառանգներ Մելիք-Աւան-խանի 50, 176։

Մելքում-զարգար, շուշեցի քաջ երիտասարդ, նիզակակից Թիւլի-Արզումանի 108, 117, 118, 124։

Մելիք-Դահրաման Մելիք-Աւանեան, որդի Մելիք-Աբասի, իշխան Տիզակի 174։

Մեհմէդ-Ղուլի-խան Մուսա-բէգեան, մահմեդականութիւն ընդունած հայ, ագուլեցի, պարսից կողմից նշանակուած կառավարիչ Երևանի 30։

Մեհրաբենց Գիւքի, իշխան Մաղաթոսի հայրը 181, 248։

Մեհրուժան Արծրունի 83։

Մեղրի բերդ Գենուազի գաւառում 44։

Մեսչէնկօ գնդապետ ռուսաց 275։

Մէհտի-խան, որդի Ճուշի բերդին տիրող Իբրահիմ-խանի 167, 209, 213, 222, 227, 227 և այլն։

Մէհտի-խան, ղարաբաղցի հայազգի զօրապետ պարսից 270։

Մէջլում-բէկ Մելիք-Ալլահվերդեան 222։

Մըրղ-Հաջի, զօրապետ Գանձակի Ջաւադ-խանի 219։

Մինաս-վարդապետ, պատգամաւոր Ղարաբաղի մելիքների կողմից ռուսաց կառավարութեան մօտ, յետոյ Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս 27, 29, 31, 33, 96։

Մինաս-Լազարեան 197, 200, 209, 215։

Միշկին գաւառ Պարսկաստանի 276։

Միսայէլ-բէկ Մելիք-Ալլահվերդեան, որդի Ալլահվերդի-իւզբաշու Գիւլ-Եաթաղ բերդի 84, 90, 91, 110։

Միսայէլ-բէկ Մելիք-Ալլահվերդեան, որդի Մելիք-Ալլահվերդի II-ի, Գիւլ-Եաթաղ բերդի 222։

Միսայէլ-բէկ Հասան-Ջալալեան, որդի Մելիք-բէկ իշխանի 108։

Մինիխ կոմս 49։

Միր-Մահմուդ-խան իշխող Ղանդահարի 26։

Միրզա-Աբաս հայազգի հոգևոր գլուխ պարսից 273։

Միրզա-բէկ Մելիք-Ալլահվերդեան, որդի Ալլահվերդի-իւզբաշու Գիւլ-Եաթաղ բերդի 220։

Միրզա-Գիօրգին, հայազգի քարտուղար Հերակլ II-ի 115։

Միրզա-Գիօրգին-խան Ենիկօլօփեանց, հայազգի սենեկապետ Աբաս-Միրզայի 271։

Միրզա-Թահիր, պարսից շահի հարկահանը 16։

Միզա-Իբրահիմ, Նադիր-շահի եղբօրորդին 51։

Միրզա-Իսաբախշ, քարտուղար Մելիք-Աբով III-ի 201։

Միրզա-Իւսուփ Ներսէսեան ղարաբաղցի, քարտուղար պարսից շահի 272։

Միրզա-Իւսուփ-խան Մելիք-Շահնազարեան դը-Ճապուր 269։

Միրզա-Ջամալ, Մէհտի-խանի քարտուղարը. դա գրեց Ճուշուայ խաների պատմութիւնը 254։

Միրզա-Ռոստոմ Ենիկօլօփեանց, նշանաւոր պաշտօնատար Աբաս-Միրզայի մօտ 271։

Միրզա-Փարրուխ Ամիրխանեանց, պարսից շահի քարտուղար 271։

Միքայէլ-բէկ Աթաբէգեան, որդի Մելիք-Վանիի 228։

Մխիթարեան միաբանութիւն 240։

Մուլքի-բէկ Հասան-Ջալալեան, որդի Բաղդասար-բէկ II-ի 21, 22։

Մուհամէդ-Հասան-խան հայր Աղա-Մամադ-խանի 140։

Մուղանի անապատ 46, 48, 50, 58, 152։

Մուսա-բէկ, հայազգի ծառայող, պարսից թնդանօթաձիգների գլխաւոր 269։

Մուսա-բէգեան Յուսէին-խան, ագուլեցի հայ, պարսից կուսակալ Շիրվանի գաւառի 30։

Մուսին-Պուշկին կոմս, լեռնային մասի կառավարիչ Վրաստանի 205։
Մուստաֆա-խան Ճամախու 130, 134, 151, 155, 168, 254։
Մուրադ չորեպան Մէհտի-խանի 251։
Մոխրաթաղ գիւղ Ճրաբերդի գաւառում 225.
Մոսկվա 37, 50։
Մովսէս-բէկ Աթաբէկեան 228։
Մովսէս վարդապետ Հասան-Ջալալեան 241։
Մռաւ լեռներ 20, 93, 118։
Մօլլա-Նասրադդին 236։
Մօլլա-Փանահ 152։
Մօնտրեզոր 145։
Յակոբ-իւզբաշի Աթաբէկեան 228։
Յակոբ-իւզբաշի Գիւլ-Եաթաղցի 34, 89, 90։
Յակոբ Ճահամիրեան Հնդկաստանցի 99։
Յարութիւն Աթաբէկեան 223։
Յարութիւն քահանայ նիզակակից Մելիք-Ռուստամի 219, 220։
Յովհաննէս արքեպիսկոպոս գեղարդակիր 184, 186, 206։
Յովհաննէս եպիսկոպոս Տաթեւի վանքի 73։
Յովհաննէս երէց պատգամ. Ղարաբ. մելիք. 33։
Յովհաննէս Լազարեան 96։
Յովհաննէս կաթողիկոս կարպեցի 236։
Յովհաննէս Աղուանից կաթողիկոս Հասան-Ջալալեան 94, 95, 100, 102, 104—109 եայլն։
Յովհաննէս վարդապետ շամախեցի 155։
Յովհաննէս վարդապետ շահազէդան 187։
Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան-Երկայնաբազուկ 96, 97, 112, 116, 138, 139, 150 եայլն։
Յովսէփ-բէկ Աթաբէկեան 228։
Յովսէփ-բէկ Հասան-Ջալալեան 241։
Յովսէփ վարդապետ հայկաբան 236։
Յուսէին-խան Մուսաբէկեան, տես Մուսաբէկեան Յուսէին-խան։
Յուսէին-Ղուլի-խան Բագուի 207։
Նադիր-շահ (Թահմազ-Ղուլի-խան) թագաւոր պարսից 41, 44—48, 50, 51, 52, 54, 55, 57, 58, 60, 67, 73, 85, 107, 161, 167, 175, 266։

Նազար-Ալի-խան (Հերակլ I.) իշխան Կախէթիայի 36։
Նազար-Ալի-խան զօրապետ պարսից 261։
Նշախավկայի (Ստեփաննոս) վանք 268։
Նախիջեւան քաղաք (հին) 26, 29, 37, 39, 45, 46, 59, 67, 141։
Նախիջեւան քաղաք (Դօնի վրայ) 216։
Նաւասարդ, ռուսաց քաղաքական գործակատար Պարսկաստանում 32։
Նապօլէօն I. 269, 281։
Նասիրապատ գիւղ Ղարաբաղի գաւառում 276։
Նարիման-խան հայազգի լիազօր դեսպան պարսից 272։
Նեբօլսին ռուսաց գեներալ 212։
Ներսէս-բէկ Աթաբէկեան 228։
Ներսէս կաթողիկոս Երիցմանկանց վանքի 33, 40, 45, 46, 91, 94։
Ներսէս վարդապետ, յետոյ կաթողիկոս Էջմիածնի 206, 233։ 234, 268։
Նեսվետաեվ ռուսաց գեներալ 211, 212։
Ներքի-շէն գիւղ Գիւլիստանի գաւառում 14։
Նիժ գիւղ Ուտէացոց աշխարհում 12։
Նիկօլա-բէկ Աթաբէկեան 228։
Նոր-Զէյվա գիւղ Բարգիւշադի գաւառում 122։
Նոր-Խնածակ, տես Խնածակ։
Նուխի, տես Ճաքի։
Նուսխալ-խան Աւարիայի 85։
Շահ-Աբաս մեծ թագաւոր պարսից 7, 8, 22, 134, 161, 266։
Շահ-Բուլաղ (Շահի-Աղբիւր), որի անունով կոչվում է մերձակայ բերդը, որ յայտնի է և Թարնագիւրդ (Տիգրանակերտ) անունով 54, 221, 222, 225։
Շահ-Թահմազ թագաւոր պարսից 38, 41, 45։
Շահ-Մանսուր գիւղ Խաչէնում 104։
Շահնավազ-Գիօրգի, տես Գիօրգի-շահնավազ։
Շահ-Ռուխ թագաւոր պարսից 51, 140։

Շահ-Սուլթան-Յուսէին թագաւոր պարսից 16, 18, 25, 29, 32, 38, 271։
Շահ-Վէրդի-խան Գանձակի 78, 79, 80, 119։
Շամախի կամ Շիրվան քաղաք, որի անունով կոչվում է և գաւառը 23, 27, 29, 39, 54, 77, 79, 121, 130, 151, 155 և այլն։
Շամիր-խան Մելիք-Բէգլարեան 202։
Շամշադին գաւառ 78, 123, 193, 194, 254, 260։
Շամքօր գետ, որի անունով կոչվում է և գաւառը 20, 123, 231, 255, 259—263։
Շաքի կամ Նուխի քաղաք 23, 79, 121, 137 և այլն։
Շէյխ-Նիզամի, տեղ Գանձակ քաղաքի մօտ 78։
Շէյխ-Սէֆի թագաւոր պարսից 170։
Շըխալի-խան իշխող Դերբէնդի 150, 151, 154։
Շիպով ռուսաց պօդպօլկովնիկ 36։
Շիրազ քաղաք Պարսկաստանում 81, 140։
Շիրվան, տես Շամախի։
Շումլա բերդ 279։
Շուշի բերդ 20, 64, 65, 69 և այլն։
Շօշի գիւղ, Շուշի բերդի մօտ 62, 208։
Ոսկան Սամուրի, սպահանցի հայ, Փաթալի-շահի վաճառականը 270։
Ոսկանապատ գիւղ Գանձակ գաւառում 123, 223։
Ուլու-պապի ամրոց Խաչէն գաւառում 64։
Ուղուրլու, Իբրահիմ-խանի դահիճը 251։
Ուղուրլու-խան իշխող Գանձակի 78։
Ուրմի քաղաք Ատրպատականի նահանգում 81։
Չալաղան-Իւզբաշի 69, 72, 269։
Չանախչի կամ Աւետրանոց 10։
Չարաբերդ 9։
Չաւանդուր գաւառ Սիւնեաց աշխարհում 34, 44։
Չէլէբի քօխվայ (տանուտէր) հայոց մելիքների պատգամաւորը 33, 40։
Պանկրատև ռուսաց գեներալ 278։
Պասկեւիչ (Երևանեան) ռուսաց գեներալ 263, 264, 278։

Պետրոս մեծ կայսր ռուսաց 22, 26—29, 32—35, 40, 45, 49, 54, 96, 98, 113 և այլն։
Պետրոս-իւզբաշի Մադաթեան, իշխան Մադաթովի մօրեղբայրը 248։
Պրտկէսի սուրբ Գէորգ, Խաչէն գաւառում 64։
Պօտեմկին իշխան Գրիգորից Ալեքսանդրովիչ (Տաւրիկեան 98, 100, 112, 113 114, 116, 138, 139, 149։
Պօտեմկին Պաւել Սէրգէյիչ, ռուսաց գեներալ 100, 104, 111, 112։
Պօղոս I. կայսր ռուսաց 179, 181, 190, 191, 200, 202։
Ջաբրայել գիւղ Երասխի ափի մօտ 240։
Ջալալբէկ Հասան-Ջալալեան 108, 119, 120։
Ջաւադ-խան իշխող Գանձակի 79, 102, 106, 117, 119, 121, 123, 124, 127, և այլն։
Ջափար-ղուլի-խան Շուշի բերդի Իբրահիմ-խանի թոռը 225, 226, 252։
Ջհանգիր-խան, հայազգի գեներալ և գլխաւոր պարսից արտիլերիայի 272։
Ջուանշիրի անապատ և ջուանշիրցիք 50, 53, 124, 132։
Ջրաբերդ ամրոց (կամ Ջերմուկի բերդ), որի անունով կոչվում է Ջրաբերդ գաւառը Ղարաբաղում 10, 20, 21։
Ջրաբերդ գաւառ 9, 10, 18, 19, 25, 27, 47, 51, 52, 54, 61, 66, 68, 69, 72, 73, 74, 79, 110, 222, 223, և այլն։
Ռահիմ-բէկ Իբրահիմ-խանի դահճի որդին 251։
Ռզա-ղուլի խան, Ղարաբաղցի հայ, պարսից շահի սենեկապետ 270։
Ռէհան, Մելիք - Իսրայէլեան Մելիք-Աթամ II-ի նշանածը 159, 160։
Ռմբոստեան լեռներ 20։
Ռուբինեաններ 7։
Ռուստամ-բէկ Մելիք-Ալլահվերդեան, տես Մելիք-Ռուստամ։
Ռոստոմ-բէկ Մելիք-Բէգլարեան, Աբով III-ի որդին 194—199, 201։
Ռոստոմ Մեհրաբենց, յետոյ իշխան Վալերիան Մադաթով 181, 248։
Ռոստոմ-բէկ (Ծագումով հայ) Մէհտի-խանի տան կառավարիչը 252։

Սաադի բանաստեղծ պարսից 60, 67։
Սաղդ-խան զօրապետ պարսից 165։
Սալիան 152։
Սալմաստ գաւառ Ատրպատականի նահանգում 267։
Սաղսաղան-կալա կամ Կաչաղակաբերդ Խաչէն գաւառում 10։
Սամ Մելիք-Բէկլարեան 202։
Սամբուր գետ 275։
Սայի-բէկ Մելիք-Բէգլարեան 160, 193, 201։
Սայի-բէկ Մելիք-Ջահնազարեան 60, 65։
Սայի-բէկ Ասրի-Բէկեան 160։
Սանահին գիւղ Լօռի գաւառում 103։
Սանկտ-Պետերբուրգ 18, 32, 38, 49, 50, 79, 139, 179 եւայլն։
Սաֆար-Ալի-բէկ արքայասպան 163, 164, 165, 168։
Սարգիս արք-եպիսկոպոս Ջալալեանց, որ սխալմամբ գրուած է Հասան-Ջալալեանների տոհմից 25, 239, 241։
Սարգիս (Թիւլի-Արզումանի հայրը) 71։
Սարգիս-բէկ Աթաբէկեան 228։
Սարգիս դի-Գիլանենց ժամանակագիր 32։
Սարգիս կաթողիկոս, յետոյ միտրոպոլիտ, Հասան-Ջալալեանց 96, 108, 109, 117, 118 եւայլն։
Սարի-Մուստաֆա փաշա, զօրապետ օսմանցոց 37, 41, 42։
Սարի-Ջալլու ցեղ 51։
Սարխաս գաւառ Պարսկաստանի 50։
Սարուխան-բէկ Մելիք-Բէգլարեան 19։
Սեւ Աբով կամ Աբով I. 12—16։
Սեւանայ լիճ 26։
Սէթ-խան Բուշեցի, հայազգի պաշտօնատար պարսից 270։
Սէլիմ-խան Շաքիի 137, 254։
Սէֆէվիներ, թագաւորող տոհմ պարսից 170։
Սըհար-նազ դուստր Մելիք-Աթամ II-ի 160։
Սնըղի կամուրջ Խրամ գետի վրայ 78։
Սիբիր 233, 253։
Սիմոն կաթողիկոս խոտորաշէնցի, Երիցմանկանց վանքի աթոռակալ 93։
Սիմոն կաթողիկոս փոքր, Երիցմանկանց վանքի 93, 120, 121, 184, 187։
Սիմոն կաթողիկոս Էջմիածնի 70։
Սիմոն Պապով պատգամաւոր Ղարաբաղի մելիքների 33։
Սիւնիք 20, 25, 44, 176, 271։
Սիօնի մայր եկեղեցի Թիֆլիզում 190։
Սմբատ Բագրատունի 83։
Սմօլենսկ 27։
Սիւլէյման-խան Էնիկօլօփեանց, փոխարքայ եւ կառավարիչ պարսից զանազան նահանգների 271։
Սիւլէյման-խան Մելիք-Մեհրաբեանց, որդի Աւագ-խանի 272։
Սիւլէյման փաշա, նահանգապետ օսմանցոց 103։
Սուլթան-բուդ, ձմերանոց Զրաբերդի գաւառում, Թարթար գետի մօտ 225։
Սուլթանի-տափ դաշտ-Ջրաբերդի գաւառում 219։
Սումբատեան իշխաններ 50, 176։
Սուվօրով ռուսաց գեներալ 281։
Սուրբ Խաչի բերդ Թարղուի Շամխալի երկրում, Կասպից ծովի մօտ 39։
Սուրբ Յակոբայ վանք Խաչէն գաւառում 10։
Սուրբ Ստեփաննոսի վանք Շամախու գաւառում 151։
Սուրխէյ-խան Դաղստանի 26։
Սպահան քաղաք պարսից 8, 26, 30, 96, 266։
Սպանդիար-խան իշխանազն Ամատունի 270։
Ստեփան արքեպիսկոպոս բոկոտն 189։
Ստեփան Դաւթեան, պատգամաւոր Ղարաբաղի մելիքների 100, 112։
Սողոմոն իշխան Իմերէթիայի 146։
Սօգութլու գիւղ Շիրվանի գաւառում 77։
Սօլօլակ մաս Թիֆլիզի 147։
Սօղանլուղ գիւղ Թիֆլիզի մօտ 147։
Սօնա-խանում, ամուսին Մելիք-Շահնազար II-ի, 59, 82, 129։
Վալի-բէկ ջորեպան Մուրադի որդին 252։
Վախամու բերդ 103։
Վախթանգ VI. իշխան վրաց, որ մահմեդականութիւն ընդունելով կոչուեցաւ Յուսէին-խան 35, 36, 37, 40։

Վահան Մելիք-Աւանեան 175։
Վահրամ-շահ 21։
Վաղարշապատ 185։
Վարանդա, մէկը Ղարաբաղի հինգ գաւառներից, ուր տիրում էին Մելիք-Շահնազարեանները 9, 10, 22—25, 42, 44, 58 եւայլն։
Վարդ-խաթուն ամուսին Մելիք-Ալլահվերդեան Մելիք-Ռուստամի 91, 136, 137, 158, 220։
Վենետիկ 240։
Վերին-Խաչէն 20, 237։
Վերի-շէն գիւղ Գիւլիստանի գաւառում 14։
Վերի-ջան-բէկ III. Հասան-Ջալալեան 21։
Տաթեւի վանք Սիւնեաց աշխարհում 73։
Տաճկաստան 177, 192։
Տեկէլի Պետր Աբրամովիչ, ռուսաց գեներալ 111, 113։
Տեղ գիւղ Զանգեզուրի գաւառում 252։
Տէր-Անտօն պատգամաւոր Ղարաբաղի մելիքների 33։
Տէր-Պետրոս պատգամաւոր Ղարաբաղի մելիքների 33։
Տիգրիս գետ 96։
Տիզակ կամ Դուզախ մէկը Ղարաբաղի հինգ գաւառներից, ուր տիրում էին Մելիք-Աւանեանները 9, 10, 24, 25, 27, 43, 47, 57, 59 եւայլն։
Տող աւան 10։
Տող բերդ Տիզակի գաւառում Մելիք-Աւանեանների բնակութեան տեղը 16, 24, 25, 49, 57, 83, 84, 173—176։
Տրոյիա քաղաք 261։
Տօրմասով ռուսաց գեներալ 203։
Րազումովսկի կոմս 49
Րէուտ ռուսաց գնդապետ 231, 255, 257, 259, 264։
Ցիցիանով (Ծագումով վրացի) ռուսաց գեներալ 193, 194, 205, 207, 210, 211, 220, 222, 273։
Ցոր գիւղ Տիզակի գաւառում 173։
Փամբակի ձոր 24, 194։
Փայտակարան գաւառ 57։
Փանահ-խան հիմնադիր Շուշի բերդի և Ղարաբաղի խանութեան 20, 50, 51, 52, 54, 55, 57, 58, 61—65 եւայլն։

Փիր-Ղուլի-խան զօրապետ պարսից 194, 224։
Փոքր-Սիւնիք 8։
Քազըմ-խան իշխող Ղարադաղի 57։
Քարամէջ կամ Օրախաչ գիւղ Խաչէն գաւառում 64։
Քարթալինա, մասն Վրաստանի 97։
Քէրիմ-խան կամ Զէնտ-Քէրիմ-խան լօրիստանցի տիրապետող Պարսկաստանի 81, 82, 130, 140։
Քիւրակ-չայ գետ Գանձակի գաւառում 8, 262։
Քօր-Օղլի հերոս 70։
Օհանէս-աղա Թաւրիզեցի, կամ մահտեսի Յովհաննէս Ղազարեան, Աբբաս-Միրզայի վաճառականը 196, 270։
Օրբէլեանի վրաց իշխան 109։
Օրդուբաթ կամ Օրդուար քաղաք Գողթնեաց գաւառում 44
Օրթա-ճալա կղզի Կուր գետի մէջ Թիֆլիզի մօտ 115։
Օմար-խան կամ Ումայի-խան Աւարիայի 85, 86, 102, 103, 115, 156, 159, 162, 191։
Ֆաթալի-խան Դերբէնդի իշխող 150։
Ֆաթալի-խան Օվշար ուրմեցի 73, 76, 80։
Ֆաթալի-շահ կամ Բաբախան-շահ թագաւոր պարսից 168, 211, 231, 254, 255, 266, 270, 271։
Ֆարաջուլլա-բէկ, Իբրահիմ-խանի դահճի որդին 251,
Ֆարհադ-բէկ Մելիք-Աւանեան (մահմեդականութիւն ընդունած) 176։
Ֆարուղ գիւղ Վարանդայի գաւառում 226։

—

Մի քանի անուններ, որպէս են՝ Թիֆլիզ, Ղարաբաղ, Շուշի, Հայաստան, Վրաստան, Պարսկաստան, Ս. Էջմիածին, Ռուսաստան եւայլն, խիստ յաճախ կրկնուելու պատճառով, չգրեցինք ցանկի մէջ։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР им. Г. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
16	1 ն.	աղեմի	վաղեմի
,,	4 ,,	տվրպատականի	Ատրպատականի
22	14 և 15 ,,	եղ-կայր	եղ-բայր
32	10 և 11 վ.	պետ-մութիւնը	պե-տութիւնը
52	3 ,,	Նագիրի	Նազ-իրի
55	8 ,,	շայի	շահի
65	9 և 10 ,,	սե-նակից	սե-նեակից
94	6 ն.	Իբէահիմ	Իբրահիմ
98	4 ,,	Ս. էջմիածնի կա- թողիկոսի և	Ս էջմիածնի կաթողիկոսի, Աղ- ուանից կաթողիկոսի և
109	13 ,,	և որպէս Արշակ Բ.-ը	և որպէս Արշակ Բ. պահվում էր Անոյշ բերդում, դա էլ նոյնպէս
120	5 ,,	Արձախայ	Արցախայ
201	2 ,,	Սահի-բէկը	Սայի-բէկը
228	5 վ.	XLI	XLII

ՐԱՖՖԻԻ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ. —

	Ռ.	Կ.
1. Հայ կինը և հայ երիտասարդութիւնը	1	50
2. Խենթ և Ջալալէդդին, երկուսը մէկ գրքի մէջ ամփոփուած	2	50
3. Դաւիթ-բէկ հ. I. II. III վերջաբանով (սպառուած)	3	—
4. Մինն այսպէս, միւսն այնպէս (պատկերազարդ) . . .	1	—
5. Կայծեր հ. Ա., երկ. տպագրութիւն	2	—
6. Կայծերի վերջը (սպառուած)	—	50
7. Վէպիկներ և պատկերներ հ. Ա.	2	—
8. Վէպիկներ և պատկերներ հ. Բ	2	—
9. Արծիւ Վասպուրականի	—	70
10. Խամսայի մելիքութիւնները *), երկ. տպագրութիւն.	2	—

Հրատարակչուհի՝ Այրի Աննա ՐԱՖՖԻ

*) Ծանօթ. Թէպէտ մենք յայտարարել էինք, որ Խամսայի մելիքութիւններին կից կլինի նաև անտիպ ծանօթութիւնները, սակայն նիւթերի շատութիւնն ստիպեց մեզ այդ մտադրութիւնից առայժմ հրաժարուել մինչև մի այլ աւելի յաջող հանգամանքի։

ՐԱՖՖԻԻ

ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

	Ռ.	Կ.
1. Փունջ I հատոր (սպառուած)	1	50
2. Փունջ II հատոր (սպառուած)	1	50
3. Խամսայի մելիքութիւնները, երկ. տպագրութիւն	2	—
4. Խաչագողի յիշատակարանը I և II մ. (սպ.)	1	20
5. Խաչագողի յիշատակարանը III և IV մ.	1	50
6. Ոսկի աքաղաղ (սպառուած)	1	—
7. Ղարաբաղի աստղագէտը (սակաւաթիւ)	1	20
8. Կայէնի կտակը (թարգմանութիւն)	1	20
9. Կայծեր I հատ., երկ. տպագրութիւն	2	—
10. Կայծեր II հատ. (սպառուած)	2	50
11. Կայծերի վերջը (սպառուած)	—	50
12. Հայ կինը և հայ երիտասարդութիւնը	1	50
13. Դաւիթ-բէկ հ. Ա. Բ և Գ. վերջաբանով, երկրորդ տպագրութիւն (սպառուած)	3	—
14. Սամուէլ (սպառուած)	5	—
15. Խենթ և Ջալալէդդին, երկ. տպագրութիւն	2	50
16. Մինն այսպէս, միւսն այնպէս (պատկերազարդ)	1	—
17. Վէպիկներ և պատկերներ հ. Ա.	2	—
18. Վէպիկներ և պատկերներ հ. Բ.	2	—
19. Արծիւ Վասպուրականի	—	70
20. Պարոյր Հայկազն	—	20
21. Ո՞վ էր մեղաւոր	—	20

ՀԵՏԶՀԵՏԷ ԼՈՅՍ ԿԸՏԵՍՆԵՆ ՐԱՖՖԻԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—

1. Վէպիկներ և պատկերներ հ. Գ.
2. Բանաստեղծութիւններ (տպուած և անտիպ) երկու հատոր.
2. Ճանապարհորդութիւններ, որոնց մի մասը տպուել է «Փորձի» և «Մշակի» մէջ, իսկ միւս մասն անտիպ է։
3. Ազգային համառօտ պատմութիւն՝ Հայկից մինչև Լևոն Զ.
4. Ընդհանուր պատմութիւն.
5. Նամակներ.
6. Սալբի (անտիպ աշխատութիւն) երեք հատոր.
7. Հրապարակախօսութիւններ.
8. Քննադատութիւններ։

0014564
ՀՀ Ազգային գրադարան
NL0014564

544

2013